



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




2680

Foot of  
Hut Creek

85 1807  
A 43



2011




85

F-43

Այր.

ՍԻՆՎԻՑ ԲԵՆԵԴԻՔՏ


Բ Ա Ն Տ Ք Ի Մ



ԹԱՐԴՄԱՆԵԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս.ՐԱՄԵԱՆ

1867

2003

Handwritten signature

1001  
1976





ՅՍՈՒԱԶՍԲՍԷ

Թ Ա Ր Գ Մ Յ Ն Ձ Ի Ն



Դարուս Եւրոպական մասենազրաց դասուն մէջ նշանաւոր սեղ մը բռնած է Սիլվիօ Բէլլիքօ Իսալացին՝ իր այս ընտիր գործովը :

Հայրենասիրութեան կենդանի նահատակ, իր կենաց ամենէն գեղեցիկ օրերուն եւ նոր սկսած գրագիտական համբաւոյ մը փառաւոր յոյսերուն մէջէն յանկարծ յափըշտակուելով՝ սասնամեայ դժնդակ բանտարկութեամբ կը տառապի, եւ իր այս նրկարատեւ չարչարանաց պատճառով կը գրէ՝ գողտրիկ բայց վսեմ պարզութեամբ, առանց տրտման մը բերնէն հանելու իր դատապարտողացը դէմ, առանց իր դահիճներն անիծելու եւ առանց վրէժխնդրութեան զգացում մը սրտին մէջ տածելու : Ընդհակառակն, կրած անըմբերելի տառապանքը սրտին բարոյական կրթութեանը ծառայեցնելով, կրօնի ու փիլիսոփայութեան մէջ կը գտնէ իր մխիթարութիւնը, եւ անանկ սրանչելի

28223 - 4.2

համբերատարութեան ու անյիշատակութեան օրինակ մը  
կրնձայէ, որուն նմանը քրիստոնէութեան առջի դարերուն  
մէջ միայն տեսնուած է:

Այսպիսի ընտիր գիրք մը՝ որ Եւրոպական ամեն լեզուներու  
թարգմանուած է, եւ ամեն տարի միլիոնաւոր օրինակ  
կը սպուի, մինչեւ հիմայ շատոնց պէտք էր մեր լեզուին ալ  
թարգմանուած ըլլալ: Այս պակասը մեր փորձեցիներ լցը-  
նել՝ ընթերցասէր ազգայնոց դոյզն ծառայութիւն մը մա-  
տուցանելու բաղձանքով. եւ կը յուսանք որ մեր այս բաղ-  
ձանքը ներելի կրնէ մեր թարգմանութեան թերութիւնները,  
եթէ ներուելու չափ թեթեւ դատուելու՝ բաղդն ունենան  
Ազգիս գրագիտաց առջեւ:




11341-57



Այս յիշատակագիրն արդեօք ես իմ վրաս խօսելու՞ ունայն  
քաղծանքո՞վ մը գրեցի: Կը յուսամ որ այնպէս չէ. եւ  
ո՛րչափ որ մարդ մը կրնայ ինքզինք դասել, կհաւատամ որ  
աւելի ազնիւ նպատակ մ'ունեցած եմ. այն է դժբաղդին  
օգնութիւն ընել՝ կրած վիշտերս եւ ամենամեծ դժբաղդու-  
թեանց մէջ անգամ գտած մխիթարութիւններս անոր ցուց-  
նելով. — Վկայել որ իմ երկար տառապանացս մէջ՝ մարդ-  
կութիւնը սովորաբար ցոյց տուածին չափ անխաւ, նե-  
րողամտութեան անարժան, եւ վեհ հոգիներէ զուրկ չգտայ.  
— հրաւիրել ազնիւ սիրտեր որ չասեն զմարդիկ՝ այլ սիրեն,  
բայց անհաշտ ատելութեամբ հալածեն անարգ ստախօսու-  
թիւնը, վատարտութիւնը, նենգաւորութիւնը, մէկ խօս-  
քով որ եւ է բարոյական վատթարութիւնները. — կրկնել  
այս ծանօթ՝ բայց յաճախ մոռցուած նշմարտութիւնը. «Կը-  
րօնքն ու փիլիսոփայութիւնը զօրաւոր կամք եւ հանդարտ  
դատողութիւն կը պահանջեն մեզնէ. առանց այս երկու  
պայմաններուն՝ ոչ արդարութիւն կրնայ ըլլալ, ոչ արժա-  
նապատուութիւն եւ ոչ հաստատուն սկզբունք: »





ՍԻԼՎԻՍ ԲԵՆԵԴԻՔՏ

Բ Ա Ն Տ Ք Ի Մ

Գ Լ Ո Ւ Թ Ա

1820 հոկտեմբեր 15 ուրբաթ օրը Միլանի մէջ բռնուեցայ ու Սանթա Մարկէրիթա տարուեցայ: Աէս օրը երեք ժամ անցած էր: Երկար հարցաքննութիւն մ'ըրին ինձ այն օրը մինչև իրիկուն եւ ուրիշ օրեր ալ: Բայց ասոր վրայօք բան մը չսխախտի ըսեմ, սիրուհիէն զրկանք կրած տարփաւորի մը պէս՝ որ աղնուարար քէն կը պահէ անոր դէմ, ես ալ քաղաքականութիւնն ուր որ է հոն կը թողում եւ ուրիշ բանի վրայ կը խօսիմ:

Այն ճախող ուրբաթին իրիկունը ժամը ին-

նին\* ոստիկանութեան դիւանադպիրը զիս բանտապետին յանձնեց . նա ալ ինձ յատկացեալ սենեակը զիս տանելով քաղաքավարութեամբ առաջարկեց որ ժամացոյցս, ստակս և գրականիս մէջ ինչ որ ունէի իրեն յանձնեմ՝ ժամանակին նորէն ինձ տրուելու պայմանաւ : Յետոյ յարգանօք բարի զիշեր մաղթեց ինձ :

« Աեցի , սիրելիս , ըսի , ես այսօր ճաշ չեմ ըրած . քիչ մ'ուտելիք քերել տուէք ինձ :

— Հիմա . պանդոկն հոս մօտ է , և պիտի տեսնէք , պարոն , ինչ պատուական զինի :

— Գինի<sup>o</sup> , չեմ խմեր :

Այս պատասխանիս վրայ Սինեօր Անճիօլինօ\*\* ապշեցաւ ու երեսս նայեցաւ յուսալով թէ կատակ կրնէի : Բանտապետները որ զինետուն կը բռնեն՝ զինի չխմող բանտարկեալները մահու չափ կատեն :

— Ստուգիւ չեմ խմեր :

— Կը ցաւիմ վրանիդ . միայնութիւնը ձեզ կրկնապատիկ պիտի վշտացնէ . . . :

Նւ տեսնելով որ մտքիս վրայ հաստատ եմ , դուրս ելաւ : Աէս ժամ չանցած՝ ճաշս եկաւ : Քանի մը պատառ կերայ , գաւաթ մը ջուր խրմեցի , և զիս մինակ թողուցին :

\* Ըստ Եւրոպացւոց .

\*\* Բանտապետին անունն է .

Սենեակս գետնին հառասար էր և բակին վրայ  
կը նայէր : Մէկ քովս բանտ , միւս քովս բանտ ,  
վրաս բանտ , դիմացս բանտ : Պատուհանին վրայ  
կը թնած՝ քիչ մը ժամանակ պահապաններուն  
երթեւեկը և բանտարկելոց ոմանց կատաղի եր-  
գերը մտիկ ըրի :

Ար մտածէի . — Ասկէց դար մ'առաջ այս տեղ  
կուսանաց վանք էր . հոս բնակող սուրբ և ապաշ-  
խարող կուսանք կըրնային երբէք երևակայել թէ  
իրենց խուցերն այս օրուան օրս ոչ թէ կանա-  
ցի հեծու թիւններով ու սաղմոսերգութիւններով  
պիտի հնչէին , այլ հայհոյութիւններով ու ամօ-  
թալի երգերով , և թէ ամեն տեսակ մարդիկ պի-  
տի պարունակէին՝ շատը շղթայի կամ գլխատու-  
թեան սահմանեալ . Ասկէց դար մ'ետքն ալ ո՛վ  
զիտէ ո՛վ պիտի բնակի այս խուցերուն մէջ : Ո՛վ  
արագասահութիւն ժամանակի . ո՛վ մշտնջենա-  
ւոր շարժականութիւն իրաց : Աեզ նկատողը կըր-  
նայ թաղծիլ եթէ բազդն իրեն ժպտելէ դադրի ,  
եթէ բանտի մը մէջ թաղուած է , եթէ կախա-  
ղան ելնելու վտանգի մէջ է : Նրէկ աշխարհի ա-  
մենէն երջանիկ մահկանացուներէն մէկն էի ես .  
այսօր՝ զիս կենաց կապող քաղցրութիւններէն  
մէկն ալ չունիմ . ոչ ազատութիւն ունիմ , ոչ  
կարեկից բարեկամներ և ոչ յոյս : Այո՛ , անխել-  
քութիւն է յուսալը . ես ասկէց չպիտի դուրս ել-  
նեմ՝ բայց եթէ առաւել սոսկալի բանտերու

մէջ ձգուելու կամ գահնի ձեռքը մատնուելու հա-  
մար: Աւրեմն մահուանս հետևեալ օրը ևս պալա-  
տի մը մէջ վախճանած և փառաւոր յուզարկաւո-  
րու թեամբ գերեզման տարուած մարդէ մը տար-  
բերութիւն չունիմ: —

Ժամանակի փախուստին վրայ ըրած այս մը-  
տածութիւններս՝ սիրտս կը զօրացընէին: Բայց  
երբոր միտքս եկան հայրս, մայրս, երկու եղ-  
բարքս, քոյրերս, և ուրիշ ընտանիք մը զոր  
խմինիս պէս կը սիրէի, փիլիսոփայական խոր-  
հրդածութիւնները չկրցան ուժ ունենալ վրաս:  
Սիրտս ելաւ և տղու մը պէս լացի:

---

Ք Ա Ո Ւ Ս Բ .

---

Երեք ամիս առաջ Թօրինօ գացեր, և բազմամ-  
եայ բաժանումէ մ'ետեւ նարէն տեսեր էի սիրելի  
ձնոզքս, եղբայրներէս մէկը և երկու քոյրերս:  
Մեր ընտանիքը միշտ շատ կը սիրէին զիրար:  
Զաւակ մը չկայ որ իր հօրմէն ինձմէ աւելի բարիք  
տեսած ըլլայ:

Ա՛հ, այն պատկառելի ձերուներէն այս անգամ  
տեսած ատենս ո՛րչափ սիրտս ելաւ՝ երբ երեւա-  
կայածէս աւելի ձերացած գտայ զանոնք: Ա՛ր-



չափի կուզէի այն ժամանակը որ մէկ մ'ալ չթո-  
 դում զանոնք և իմ ամեն փոյթս անոնց ծերութիւնն  
 սփոփելու նուիրեմ : Ո՛րչափ դժուարս կուզար  
 երբ Քօրինո կեցած մէկ քանի օրերուս միջոցին՝  
 պարտականութիւններ կատարելու համար հայ-  
 րենի յարկէն կը հեռանայի , որով խիստ քիչ  
 ժամանակ կը մնար ամենասիրելի ծնողացս հետ  
 կենակցելու : Անդ՛ մայրս դառն տխրութեամբ  
 մը կըրսէր . « Ո՛հ , մեր Սիլվիօն մեզ տեսնելու  
 համար եկած չէ Քօրինո » : Այն առաւօտուն որ  
 Քօրինօէն Միլան պիտի վերադառնայի , բաժա-  
 նումնիս խիստ տրտմազին եղաւ : Հայրս կատր  
 նասաւ ու մղոն մը տեղ ինձ ընկերացաւ . ետքը  
 մինակ ետ դարձաւ : Ետևս կը դառնայի զինքը  
 տեսնելու համար . կուչայի և ինձ տուած մատնին  
 կը համբուրէի : Այն աստիճան սաստիկ տրտ-  
 մութիւն երբէք զգացած չունէի ծնողքէս հեռա-  
 ցած ատենս : Առանց հաւատալու նախազգացմանց ,  
 կը զարմանայի որ տրտմութեանս չէի կրնար  
 յաղթել , և սոսկալով կըրսէի . « Ի՞նչ է այս կարգէ  
 դուրս անձկութեանս պատճառը » : Ար թուէր  
 ինձ թէ սպազայ մեծ դժբաղդութիւն մը կ'զգայի :  
 Հիմա բանտին մէջ կը յիշէի այն զարհուրան-  
 քըն ու անձկութիւնը : Ար յիշէի երեք ամիս ա-  
 ռաջ ծնողացս ինձ ըսած ամենէն մանր խօսքերը :  
 Մօրս այն տրտունջը թէ՛ « Ո՛հ , մեր Սիլվիօն  
 մեզ տեսնելու համար եկած չէ Քօրինո՛ » կը

ծանրանար սրտիս վրայ : Ինքզինքս կը մեղադրէի որ հազարապատիկ աւելի զորով չեմ ցուցըցած անոնց : Զիրենք ո՛րչափ կը սիրեմ , և ո՛րչափ պաղու թեամբ զբուցեցի այս խօսքը իրենց : Զիրենք յաւիտեան չպիտի տեսնէի , եւ իրենց դէմքերն յագենալու չափ չը նկատեցի , և սիրոյս նշանները յայտնելու այնչափ ժխատութիւն ըրի : — Այս մտածութիւնները կը տանջէին հոգիս :

Պատուհանը փակեցի , և ժամ մը պտրտեցայ սենեկիս մէջ՝ կարծելով թէ զիշերն իբուն չը պիտի հանգչէի : Յետոյ պառկեցայ ու խոնջութենէս քունս տարաւ :

### Պ Լ Ո Ռ Խ Պ

Բանտի մէջ առաջին զիշերն արթննալը սոսկալի բան է : Ըլլալիք բա՛ն է , կըսէի ես ինձ , ուր ըլլալս յիշելով , ըլլալիք բա՛ն է : Մ՞ս հոս : Մրազ չէ՞ արդեօք : Բայց վերջապէս՝ երէկ էր որ բռնուեցայ , երէկ էր որ այն երկար հարցաքննութիւնն ինձ եղաւ , որ վաղն ալ պիտի շա-

բունակուի . եւ մինչեւ ե՞րբ . մարդ չգիտէ : Նրէկ  
իրիկուն էր ուրեմն որ ննջելէս առաջ այնչափ  
լացի՝ ծնողքս միտքս բերելով : »

Հանգիատը , խորին լռութիւնը , կարճ քունը՝  
մտքիս զօրութիւնը կազդուրելով տրտմութեանս  
ուժն ալ հարիւրապատիկ աւելցուցած կերեւէին :  
Միտքս զբաղեցնող ուրիշ բան չգտնուելով , ան-  
հաւատալի ազդուութեամբ մ'երեւակայութեա-  
նըս առջև կը նկարուէր իմ ամեն սիրելիներուս  
մանաւանդ հօրս և մօրս զգալիք դառն ցաւը՝ երբ  
իմ բանտարկութիւնս իմանային :

Հիմայ դեռ հանգիատ կը ննջեն . կըսէի ես  
ինձ , կամ թերևս նստեր զորովանօք զիս կմտա-  
ծեն՝ առանց ուր ըլլալս կասկածելու : Նրանի՛  
թէ դժբաղդութեանս լուրը թօրինօ չհասած՝  
Աստուած վերցնէր զանոնք աշխարհէս : Ա՞յ  
պիտի զօրութիւն տայ անոնց՝ այս հարուածիս  
դիմանալու : »

Ներսէս ձայն մը զիտես թէ կը պատասխանէր .  
« Նա՛ զոր ամեն վշտացեալներն օգնութեան կը  
կոչեն , նա՛ զոր կը սիրեն և իրենց սրտին մէջ կը զ-  
գան , նա՛ որ զօրութիւն կուտար մօր մ'իր  
որդւոյն ետեւէն Գողգոթա երթալու և անոր  
խաչին տակը կենալու , նա՛ որ դժբաղդնե-  
րուն բարեկամն է , մահկանացուաց բարեկա-  
մըն է : »

Այս առաջին վայրկեանն եղաւ ուր կրօնը

արտիս յաղթեց. այս բարիքը որդիական սիրոյս  
արդիւնքն էր :

Մինչև այն ժամանակ՝ առանց թշնամի ըլլա-  
յու կրօնքի՝ քիչ և գէշ կը հետևէի անոր. Սյն հա-  
սարակ առարկու թիւնները՝ որ կրօնի դէմ մար-  
տընչողներուն սոխորական զէնքն են՝ մեծ կշիռ  
մը չունէին իմ աչքիս, բայց հազար կերպ սո-  
փեատակա նտարակոյսներ հաւատքս կը տկարա-  
ցընէին. Սրդէն երկար ժամանակէ ի վեր Աս-  
տուծոյ գոյութեանը վրայ երկմտելէ դադրած  
էի, և անդադար կըսէի մտօքս որ եթէ Աստուած  
իցայ, անոր արդարութեան հարկաւոր հետեւան-  
քըն է որ այս անիրաւ աշխարհիս մէջ տառապող  
մարդուն համար հարկաւ ուրիշ կեանք մը պիտի  
ըլլայ. ասկէ բնականաբար կը ծագի այն երկ-  
րորդ կեանքին բարութեանցը բազմալու բա-  
ցարձակ պատճառը. ասկէ կը ծագի Աստուծոյ  
և ընկերին սիրոյն վրայ հիմնեալ բարեպաշտու-  
թիւն մը և վեհանձնական զոհերով ինքզինք ազ-  
նուացընելու անընդհատ պէտքը : Սրդէն երկար  
ժամանակէ ի վեր ասոնք կը յեղյեղէի մտացս  
մէջ և կը յաւելցնէի. Ք՞նչ է քրիստոնէութիւնը՝  
եթէ ոչ մշտնջենաւոր ձգում մը ի կատարելու-  
թիւն. և կը զարմանայի որ քրիստոնէութեան  
էութիւնն այսպէս անարատ, այսպէս փիլիսո-  
փայական և այսպէս անմարտընչելի կերպով  
յայտնուելէ ետեւ, ժամանակ մը զայ ուր փիլի-

սովորաբար թիւնը համարձակի ըսելու թէ «այսուհետեւ ես անոր տեղը պիտի անցնիմ: — Եւ ի՞նչպէս պիտի անցնիս, մոլութիւն սովրեցրնելով. անշուշտ ոչ. այլ առաքինութիւն ուսուցանելով: Ուրեմն Աստուծոյ և ընկերին սէրը պիտի սովրեցնես, ուրեմն ճշդիւ քրիստոնէութեան սովրեցուցածը պիտի սովրեցրնես.»

Թէպէտ և այս էր իմ զգացումս շատ տարիներէ ի վեր, այսու ամենայնիւ եզրակացրնելէ կը խորշէի: Արդարախոհ եղիք ուրեմն, քրիստոնեայ եղիք. ալ մի գայթակղիք զեղծումներէ. ալ մի գործածեր չարամտութիւնդ եկեղեցւոյ վարդապետութեան մէկ քանի դժուարհասկընալի կէտերուն վրայ, վասն զի զլիսաւոր կէտն այս է եւ ասկէ աւելի դրական բան մը չկայ. « սիրէ զԱստուած և ընկերդ: »

Այս եզրակացութիւնն հանելը վերջապէս բանատին մէջ որոշեցի, եւ ըրի: Այսու ամենայնիւ կը վարանէի մտածելով թէ հիմայ առաջուանէն աւելի կրօնասէր ըլլալս իմացողներն իրաւունք կը գտնեն՝ զիս կեղծ բարեպաշտ և դժբաղդութեամբ նուաստացեալ մարդ մը համարելու: Բայց զգալով որ ես ոչ կեղծաւոր էի և ոչ նուաստացեալ, միտքս դրի որ ալ բանի տեղ չդնեմ այս կերպ կշտամբութիւնները, եւ առաջադրեցի քրիստոնեայ ըլլալ և հրատարակել զիս այնուհետեւ:

## Պ Լ Ո Ւ Խ Պ

Այս առաջադրութեանս վրայ ժամանակ անցնելէ ետեւ կրցայ անխախտ կենալ, բայց բանտարկութեանս առաջին զիշերն սկսայ մըտածել ասոր վրայ և վերոյիշեալ որոշումն ընել: Առառան դէմ զաղափարներս առաւել հանդարտ էին և զարմացայ այս բանին: Տակաւին ծնողացս և ուրիշ յսիրելիներուս վրայ կը խորհէի, բայց անոնց հոգւոյն զօրութեանը վրայ ալ չէի յուսահատեր, և ուրիշ սխալագաներու մէջ անոնց վրայ գտած վեհանձն զգացումներս միտքս բերելով կը մխիթարուէի:

Ինչո՞ւ համար քիչ մ'առաջ այնչափ խռովեր էի՝ անոնց կրելիք մտատանջութիւնը մտածելով, և հիմա այսչափ վստահութիւն կ'ունենամ անոնց արիութեանը վրայ: Այսպիւրի փոփոխութիւն մը հրահրէր արդեօք, կամ Աստուծոյ նոր հաւատալուս բնական արգասի՞քն էր:— Հրաշք կամ ոչ, ինչպէս կուզեն այնպէս թող կոչեն կրօնից վսեմ և ստոյգ բարերարութիւնը:

Աէս զիշերին երկու սխալապան զիս նայելու եկեր ու խիստ տխուր գտեր էին: Առաւօտուն նորէն եկան ու զիս հանդարտ և զուարթ գտան:

«Այս գիշեր, պարսն, քարրի դէմք ունէիք, ըստ Թիրօլա\* , հիմա բոլորովին ուրիշ կը տեսնեմ ձեզ և ուրախ եմ: Այդ նշան մ'է որ դուք տաղակ չէք: Ներեցէք այս խօսքիս . վասն զի այն տեսակ մարդիկ (եւ հին ըլլալով այս արհեստիս մէջ՝ դիտողութիւններս կրնան կշիռ ունենալ) իրենց քանտարկութեան երկրորդ օրն առաւել կը կատարին: Ընչախոտ կը քաշէ՞ք . — Սուլորութիւն չունիմ , բայց չեմ մերժեր ձեր հրամայուցածը : Իսկ ձեր ըրած դիտողութեանը զաւով , ներեցէք ինձ ըսել որ ձեզ պէս խելացի երևոյթ ունեցող մարդու խօսք չէ : Նի՞ժէ ես այս առաւօտ գիշերուան պէս քարրի դէմք չունիմ , այս փոփոխութիւնս անհոգութեան կամ մօտաւոր ազատութիւն մը երազելու և ինքզինքս յուսով խարելու նշան մը չկրնամ համարուիլ :

— Թերևս կը հաւատայի ատոր , պարսն, ե՛թէ դուք ուրիշ պատճառներու համար քանտարկուած ըլլայիք: Բայց տէրութեան զործերու համար՝ այս օրուան օրս հնարաւոր չէ մտածել թէ ձեր քանտարկութիւնը մէկէն ի մէկ կրնայ ըննալ : և դուք ալ այդպիսի պատիր յուսով մը խարուելու չափ պարզամիտ չէք: Ներեցէք , ընչախոտ մ'ալ կը քաշէ՞ք :

— Տուէք: Բայց ինչպէս այդպիսի զուարթ դէմք

11341-57

\* Պահագաններին մեկուս տեսնելը



մը կրնայ ունենալ մարդ մը որ յարածամ դըժ-  
բազդներու մէջ կապրի :

— Պիտի կարծէք անշուշտ թէ ուրիշի վշտացն  
անզգայ ըլլալէ յառաջ կուգայ . շիտակն ըսելով՝  
ես ալ հաստատու թեամբ չեմ գիտեր . բայց կը  
հաւատամ ձեզ թէ շատ անգամ սիրտս կը կտրտի  
երբ որ մէկուն լալը կը տեսնեմ . ուստի երբեմն ես  
զիս զուարթ կը ձևացընեմ որպէս զի խեղճ բան-  
տարկեալներն ալ ծիծաղեցընեմ :

— Բարեկամ , միտքս խորհուրդ մը կուգայ որ  
եկած չէր երբէք . այն է թէ մարդ մը կրնայ  
բանտապանի արհեստը գործել ու խիստ բարի  
մարդ ըլլալ :

— Արհեստը բան մը չընէր , պարոն . այն կա-  
մարէն անդին՝ որ բակին միւս ծայրը կը տեսնէք ,  
ուրիշ բակ մը և ուրիշ բանտեր կան՝ ամենն ալ  
կանանց յատկացեալ : Հոն բանտարկեալ կանայք  
. . . դիւրաւ կը հասկընար . . . անտակ կիներ  
են : Արդ , պարոն , մէջերնին այնպիսինէ՞ր կան  
որ սրտի կողմանէ հրեշտակներ են . և եթէ դուք  
բանտապան ըլլայիք . . .

— Ն<sup>օ</sup>ս . » և խնդացի բարձրաձայն :

Թիրօլա շիտ թեցաւ մնաց և խօսքը չըլմնցուց .  
Թերես կը մտածէր որ եթէ ես բանտապան ըլ-  
լայի՞ դժուար կըլլար ինձ այն թշուառ կանանց  
մէկուն վրայ սէր չձգել :

Հարցուց թէ ինչ կուզէի նախաճաշիս համար :



Յետոյ դուրս ելաւ և քանի մը վայրկեան ետքը  
խահուէ բերաւ :

Ուշադրութեամբ երեւը կը նայէի խորամանկ  
ժպիտով մը որ ըսել կուզէր . « Ինձմէ տոմսակ մը  
կը տանիք ուրիշ տարաբաղդ բանտարկեալի մը ,  
իմ Բիէրօ բարեկամիս : » Թիրօլա ալ ուրիշ ծպի-  
տով մը պատասխանեց ինձ , որ կը նշանակէր .  
« Ոչ , պարոն , և եթէ ընկերներէս մէկուն այդ-  
պիսի բան մ'առաջարկէք և նա ալ հաճի , զգու-  
շացէք որ ձեզ հմատնէ :

Հաւաստի չեմ բոլորովին իրարու միտք հաս-  
կըցած ըլլալնուս վրայ : Այս միայն զիտեմ որ  
տասն անգամ պատրաստուեցայ կտոր մը թուղթ  
և մատիտ մ'իրմէ խնդրելու , և համարձակեցայ  
վասն զի աչուրներուն մէջ բան մը կար որ կը  
թուէր թէ ազդարարութիւն կընէր ինձ' մէկու  
մը հիստանիլ , մանաւանդ իրմէ ուրիշի բնա-  
ւերէք :

## Գ Լ Ո Ւ Խ Ե .

Եթէ Թիրօլա ցուցըցած բարեւրտութեանը  
հետ այնպիսի նենգաւոր նայուածք մը չունենար ,  
եթէ իր գիմաց գծագրութիւնն առաւել ազնուա-  
կերպ եղած ըլլար , անշուշտ կը համարձակէի  
զինքը գեսպան ընել ինձ , և թերևս տոմսակ մը

կը զրկէի բարեկամիս, որ յարմար ժամանակին ձեռքը հասնելով՝ կարող կըլլար իր ըրած մէկ անխտհեմու թիւնը դարմանելու, և թերևս կրնար ազատել, չէ թէ զինքը, որովհետեւ արդէն խեղճը չափազանց բռնուած էր, այլ ուրիշ շատ անձինք, ինչպէս նաև զիս:

Բայց համբերութիւն: Ասանկ պիտի ըլլայ Եղեր:

Ձիս կանչեցին հարցաքննութիւնս շարունակելու, որ այն օրը մինչև իրիկուն և ուրիշ քանի մը օրեր տակց՝ միայն ճաշի ժամանակները դուրս հանելով:

Այս հարցաքննութեան ժամանակ՝ օրերը շուտով կանցնէին ինձ համար. այնչափ միտքս զբաղած էր անհատնում պատասխաններ գտնելու զանազան հարցմանց. ճաշերուս ժամանակն ու իրիկուններն ալ ինձ հարցում բաներուն և տում յառաջաաններուս վրայ կը մտածէի, ինչպէս նաև այն ամեն կէտերուն վրայ որ հաւանականաբար տակաւին պիտի հարցուէին ինձ:

Առաջին շաբթուն վերջը ձախտրդ դէպք մը պատահեցաւ որ զիս շատ վշտացուց: Անդճ Բիէրօ բարեկամս՝ վախաքելով ինձ պէս որ հաղորդակցութիւն մը մէջերնիս հաստատէ, ստմասկ մը զրեբ ու ինձ զրկեր էր, ոչ թէ պահապաններուն մէկուն ձեռօք, այլ դժբաղդ բան-

տարկեալի մը՝ որ մեր սենեակներուն մէջ  
 ծառայելու կուգար պահապաններուն հետ :  
 Վաթսուն եօթանասուն տարեկան մարդ մ'էր՝  
 չեմ գիտեր քանի տախ քանտարկութեան դա-  
 տապարտեալ :

Վրաս գտնուած գնտասեղով մը մատներուս  
 մէկը ծակեցի, արիւնովս քանի մը տող պատաս-  
 խան գրեցի և այն տոմսակը բերող մարդուն  
 տուի : Դժբաղդաբար խեղճը դիտուելով՝ բռնը-  
 վեցաւ, տոմսակը վրայէն գտնուեցաւ, և եթէ  
 չեմ սխալիր՝ չարաչար ծեծ կերաւ : Կալու  
 ազազակ մը լսեցի և ինձ այնպէս եկաւ որ այն  
 դժբաղդ ծերունիին ձայնն էր. ալ անկէ ետե  
 մէկ մ'ալ չտեսայ զայն :

Ատեանը կանչուելով՝ սարսափեցայ երբ ինձ  
 ցուցրցին զրաձ տոմսակս, և գոհութիւն Աս-  
 տուծոյ որ մէջը մեզ համար վտանգաւոր բան մը  
 չկար, այլ պարզ ողջունի պէս բան մ'էր :  
 Հարցուցին ինձ թէ ինչո՞վ հաներ էի արիւնս .  
 գնտասեղս առին և ծիծաղեցան վրանիս որ  
 սասանկ ինքզինքնիս ձեռք տուինք : Քայց ես,  
 նն, չէի ծիծաղեր. աչքիս առջևն էր միշտ ծեր  
 թղթարերը : Յօժարութեամբ յանձն կառնուի  
 պատժուիլ անոր տեղ, և երբ անոր լալուն  
 ձայնը լսել կարծեցի, սիրտս փլզկեցաւ :

Քանի մ'անգամ փուռ տեղը լուր հարցուցի  
 անոր համար բանտապետին և պահապաննե-

բուն : Գլուխնին թոթալելով կըսէին . « Շատ  
 ծանր եղաւ անոր . . . ալ մէկ մ'ալ չկրնար  
 ընել . . . հիմա քիչ մ'առաւել հանգիստ է : » Ասկէց  
 աւելի բան մը չէին հասկըցներ :

Արդեօք ըսել կուզէին թէ ողորմելին նեղ  
 բանտի մը մէջ արգիլուած էր . կամ թէ գա-  
 ւազանին տակը կամ կերած ծեծին ցաւերուն  
 չդիմանալով մեռէր էր :

Օր մ'ինձ այնպէս թուեցաւ թէ բակին անդիի  
 կողմը կամարին ներքե տեսայ զայն կրնակը  
 փայտ բեռցած : Սիրտս թնտաց' որպէս թէ  
 եզրայրս էր տեսածս :



## Գ Լ Ո Ի Խ Զ .

Երբոր հարցաքննութեանս տառապանքը վեր-  
 ջացաւ և օրերս զրաւող զրազմունք մը չմնաց,  
 այն ժամանակն տաանձնութեան ծանրութիւնը  
 դառնապէս զգացի :

Թէպէտ թոյլ տրուեցաւ ինձ Աատուածա-  
 շունչ մը և Տանթէ մը քովս ունենալու , և  
 բանտապետն ալ հանձեցաւ որ ուզած դիրքս

առնում իր գրատունէն, որուն մէջ Սքուտէրիի  
 ու Բաճճիի քանի մը վիպասանութիւններէն և  
 ուրիշ քանի մ'առաւել անպիտան զիրքերէ զատ  
 բան չկար, այսու ամենայնիւ միտքըս չափա-  
 զանց յուզեալ ըլլալուն՝ չէի կրնար որ և է  
 զիրք մ'ուշադրութեամբ կարդալ: Սմեն օր  
 Տանթէի մէկ երգը գոց կընէի. բայց այս վար-  
 ժութիւնս այնչափ մեքենայաբար էր, որ ըրած  
 ատենս՝ առաւել տարաբազդութեանըս վրայ կը  
 մտածէի՝ քան թէ երգին տողերուն վրայ:  
 Նոյնը կըլլար նաև ուրիշ զրքեր կարդացած  
 ատենս ալ՝ իրաց առեալ Սուրբ Գրոց մէկ  
 քանի հատուածները: Այն երկնային զիրքը՝ որ  
 միշտ շատ սիրած էի ինքզինքս անհաւատ  
 կարծած ժամանակս ալ, աւելի ևս յարգութեամբ  
 կը կարդայի հիմա: Բայց դարձեալ՝ յօժարա-  
 մըսութեանս հակառակ՝ շատ անգամ կը պատա-  
 հէր որ անմտադրութեամբ և առանց հասկընալու  
 կը կարդայի: Քիչ քիչ կարող եղայ աւելի  
 խորին մտածել անոր վրայ և օր քան զօր  
 առաւել համ առնուլ:

Այս ընթերցումն երբէք կոյր կրօնասիրու-  
 թեան հակում մը չաւելցուց վրաս, այն սխալ  
 հասկըցուած կրօնասիրութիւնը կուզեմ ըսել որ  
 կարճամիտ կամ մոլեռանդ կընէ մարդը: Ընդ  
 հակառակն ինձ կը սովորեցընէր սիրել զԱստուած  
 և զմարդիկ, արդարութեան ևս քան զևս յաղ-

Թանակելուն փափաքիլ և մուլութիւնը ատել՝  
միանգամայն ներելով չարերունս Քրիստոնէութիւնը՝ փոխանակ հեղձուցանելու այն բարի սկզբունքները որ փիլիսոփայութիւնը կրնար ծնուցած ըլլալ սրտիս մէջ, ընդ հակառակն անոնց ուժ կուտար և կը զօրացընէր՝ առաւել վսեմ, առաւել զօրաւոր ապացոյցներով:

Յրին մէկը կարդալով թէ անդադար աղօթք ընել պէտք է, և եշմարիտ աղօթքն ալ հեթանոսաց նման շատխօսութիւն ընելու վրայ չկայանար, այլ պարզութեամբ զՍաստուած պաշտելու՝ թէ՛ բանիւ և թէ՛ գործով, և ջանալու որ թէ՛ խօսքերնիս և թէ՛ գործերնիս անոր սուրբ կամաց կատարումն ըլլան, միտքըս դրի այն մշտամուռնչ աղօթքը սրտի մըտօք ի գործ դնել, այսինքն մտքէս շանցունել այնպիսի խորհուրդ մը որ Սաստուծոյ կամացը հպատակելու բաղձաւքով վառեալ չըլլայ:

Ես միշտ համառօտ մաղթանքներն ընարած եմ աղօթելու ատենս, չէ՛ թէ երկար աղօթքներն արհամարհելուս համար, (ընդ հակառակն խիստ օգտաւէտ կը համարիմ զանոնք, և անհատից տրամադրութեանը համեմատ՝ աստուածպաշտութեան վրայ անոնց ուշադրութիւնը հաստատ պահելու համար քիչ կամ շատ անհրաժեշտ) այլ կը տեսնեմ որ երկար աղօթքներ ընելու յարմար չեմ՝ առանց մտադրութիւնս կորսնցը-

նե լու և առանց աստուածայաշատութիւնը մտնալու :

Ձիս շարունակաբար Աստուծոյ առջև դնելու ու շաղրութիւնս՝ փոխանակ մըտքիս համար ձանձրալի աշխատութիւն մը և երկիւղի առիթ ըլլալու՝ քաղցր բան մը կերակր ինձ : Մտածելով միշտ թէ Աստուած քովերնիս է, ի մեզ է, կամ մանաւանդ մեք ի նմա եմք, միայնութեան սոսկումն օր քան զօր կը թե թեանար ինձ համար : « Ամենալաւ ընկեր մը չունիմ մի քով : » կըսէի ես ինձ, և սիրտս կը հանդարտեցընէի, կը մրմնջէի, ու կը սուլէի բերկրութեամբ և խանդադատանօք :

— Մի թէ, կըսէի ես ինձ, շէր կրնար տենդ մը գալ վրաս ու զիս գերեզման դնել : Բարեկամներս, մահս ողբալէ ետև՝ քիչ քիչ զօրութիւն պիտի գտնէին զիս այլ ևս չտեսնելնուն համբերելու : Արդ գերեզմանին տեղ բանտ մը զիս կլնեց • սէտք է հաւատամ թէ Աստուած նոյն զօրութիւնը չպիտի սարգնէ անոնց : —

Սիրտս ջերմեռանդ մաղթանքներ կընէր անոնց համար՝ երբեմն արտասուախառն • բայց այն ողբերն ալ խառն էին քաղցրութեամբ : Հաստատ վստահութիւն ունէի որ Աստուած ուժ կուտար անոնց՝ ինչպէս ինձ : Սյս վստահութիւնս սուտ չեղաւ :

## Գ Լ Ո Ւ Խ Է .

Ազատ ապրիլը բանտի մէջ ապրելէն շատ  
 լաւ է, ասոր ո՞վ կը տարակուսի : Եւ սակայն  
 բանտարգելութեան թշուառութիւններուն մէջ  
 անգամ, երբոր մարդ մը մտածէ թէ Աստուած  
 հոն ներկայ է, թէ աշխարհիս ուրախութիւննե-  
 րը վազանցուկ են, թէ ճշմարիտ երջանկու-  
 թիւնը խղճմտանքին մէջ է և ոչ արտաքին  
 առարկայներու մէջ : Երբոր կըսեմ, մտածէ  
 ասոնք, բերկրութեամբ ապրելու քաղցրութիւն  
 մը կրնայ զգալ : Դեռ ամիս մը չանցած՝ բռնե-  
 լիք ընթացքս որոշեր էի, և թէ ոչ կատարեալ՝  
 գոնէ պատշաճ համբերատարութեամբ : Հասկը-  
 ցայ որ ուրիշը մատնելով ինքզինքս ազատելու  
 վատութիւնը յանձն չառնելով՝ կառափնարանէ  
 կամ երկար բանտարգելութենէ զատ ուրիշ բան  
 չունէի սպասելիք : Հարկ էր համբերութեամբ  
 կրել : — Պիտի ապրիմ քանի որ կենաց շունչ մը  
 ձգուի ինձ, կըսէի մտօքս, և երբոր զայն ալ քա-  
 շեն հանեն ինձմէ, ամեն հիւանդներուն ըրածը  
 կընեմ երբոր վերջին վայրկեանը կը հասնի,  
 տյսինքն կը մեռնիմ : —



Ինքզինքս կը վարժեցընէի ոչ մէկ բանէ մը  
 զանգատ չընելու և ամեն հնար եղած բերկրու-  
 թիւնները սրտիս տալու: Սիրելի և սովորական  
 զբաղմունքս էր մի սու մի թուել այն բարիքները  
 որ կենացս օրերը գեղազարդեր էին. բարի  
 հայր մը, գորովասիրտ մայր մը, ազնիւ քոյրեր  
 ու եղբայրներ. այս կամ այն բարեկամներս,  
 լաւ կրթութիւն մը, գրականութեան սէրս, և  
 այլն: Ո՞վ ինձմէ աւելի երջանկու թեամբ լցուած  
 էր: Ինչո՞ւ փառք չտամ Աստուծոյ ասոր համար,  
 թէ և հիմա բարօրութիւնս խռոված է ճախոր-  
 դութեամբ: Երբեմն այս թուումն ըրած ատենս  
 սիրտս կը շարժէր և վայրկեան մը կուլայի-  
 բայց քաջալերութիւնն ու զուարթութիւնը  
 շուտով կը վերահաստատուէին սրտիս մէջ:

Բանտարկութեանս առջի օրերէն նոր բարեկամ  
 մը գտեր էի: Ոչ բանտապետն էր այն և ոչ  
 պահապաններէն կամ դատաստանիս քննու-  
 թիւններն ընելու պաշտօն ունեցող անձերէն  
 մէկը: Սակայն խօսքս մարդկեղէն արարածի մը  
 վրայ է: Ո՞վ էր այս բարեկամը: — Հինգ վոց  
 տարեկան խուլ-համր տղայ մը: Հայրն ու մայրը  
 չարագործներ ըլլալով՝ օրէնքը պատուհասեր էր  
 զանոնք: Աեղճ որքն ուրիշ նոյն վիճակի շատ  
 տղայոց հետ ոստիկանութեան վրայ մնացեր էր:  
 Ասոնք ամենն ալ բանտիս դիմացը սենեակ մը կը  
 բնակէին, և օրը քանի մ'անգամ այն սենեակին

դուռը բացուելով դուրս կը հանուէին որպէս զի  
քիչ մ'օդ առնուն բակին մէջ :

Սուլ-համրը սլատուհանիս տակը կուզար, կը  
ծիծաղէր և նշանացի խօսքեր կընէր ինձ. և ս  
ալ մեծ կտոր մը հաց կը նետէի անոր. կտունուր  
զայն ուրախութեամբ ցատկաւ լով, կը վազէր  
ընկերներուն քով, և ամենուն ալ տալէ ևտե՛  
կուզար իր ձեռքը մնացած բաժինն ալ սլատու-  
հանիս մօտ կուտէր՝ զեղեցիկ աչքերուն ժպտովն  
իր շնորհակալութիւնն ինձ յայտնելով :


Միւս աղայքը հեռուէն կը նայէին ինձ, բայց  
չէին համարձակեր մօտենալու : Բակ խուլ համրը  
զերմ համակրութիւն մ'ունէր վրաս, որուն  
շարժառիթը միայն շահը չէր : Նրբեմն իրեն հաց  
նետած ժամանակս կը վարանէր թէ ինչ ընէ, և  
նշանացի կը հասկըցընէր ինձ թէ ընկերները  
կուշտ էին և չէին կրնար ուտել : Նթէ տեսնէր  
որ սահապան մը կուզար սենեակս, հացն անոր  
կուտար որ ինձ ևտ տայ : Թէպէտ ինձմէ բան  
մը չէր յուսար այն ժամանակը, բայց դարձեալ  
զմայլիկի շնորհքով մը կը խաղար սլատուհանիս  
տաշն, և ուրախ կըլլար իրեն նայելուս վրայ :  
Անգամ մը սահապաններէն մէկը թող տուաւ  
որ այս աղան բանտս մտնէ : Ներս մտնելուն  
պէս վազեց ծունկերուս փաթթուեցաւ ուրա-  
խութեամբ աղաղակելով : Գրկեցի զինքը և  
չեմ կրնար ըսել սրպիսի հրճուանօք զիս զգուեց :

Ո՛րչափ սէր կար այն փորրիկ տղուն արտին մէջ :  
 Ո՛րչափ կուզէի կարող ըլլալ զայն դաստիարակել  
 տալու և գտնուած անարգ վիճակէն ազատելու :

Չկրցայ երբէք զխնայ անոր անունը . ինք  
 ալ չէր զխտեր թէ ունէ՞ր անուն մը : Միշտ զը-  
 ւարթ էր, և երբէք չտեսայ անոր լայր . բայց  
 անգամ մը չեմ զխտեր ինչո՞ւ համար բանտապետէն  
 ծեծ ուտելով լացաւ : Չարմանալի բան : Անանկ  
 տեղ մ'ապրիլը յետին տարաբազդութիւն կը  
 թուի . և սակայն այս տղան ստուգիւ այնչափ  
 երջանիկ էր՝ որչափ կրնար ըլլալ իշխանի  
 զաւակ մ'այն հասակին մէջ : Այս մտածութիւնն  
 ընելով կը հասկնայի թէ մարդ մը կրնայ իր  
 մտաց արամաղրութիւնը տեղերուն ազդեցու-  
 թենէն ազատել : Աստափարեւնք երևակայու-  
 թիւնիս, և զրեթէ ամեն տեղ զո՞ն կըլլանք .  
 Օրը շուտով կանցնի, և երբոր իրիկուն ամարդ  
 մ'անկողին կը մըտնէ առանց անօթի ըլլալու  
 և առանց սուր դաւեր զգալու, ինչ փոյթ եթէ  
 այն անկողինը բանտի մը պատերէ կամ տան  
 մը կամ պալատի մը գեղանկար որմերէ շրջա-  
 պատեալ ըլլայ :

Աստարեւն զմտածութիւն : Բայց երևակայու-  
 թիւնս ինչպէս կաստափարելու էր : Ստոր կը  
 կըթէի ինքզինքս, և երբեմն կը կարծէի թէ  
 խիստ լու կը յաջողէի . բայց երբեմն ալ ե-  
 ր'ակայութիւնս բռնաւ որարար կը յաղթէր . այն

ժամանակ ես ինձմէ դժգոհ ըլլալով՝ տկարութեանս վրայ ապշած կը մնայի :



### Պ Լ Ո Ւ Խ Ը .



Տարտրտղղութեանս մէջ տակաւին երջանիկ եմ ես, կըսէի, որ ինձ արուած բանտը գետնի հասասար է ե այս բակին վրայ կը նայի, ուր ինձմէ չորս քայլ հեռու այս սիրուն տղան կուգայ, որուն հետ նշանացի խօսակցիլն այնչափ քաղցր է ինձ: Բ՛նչ սքանչելի է մարդուս խնայակա՛նութիւնը: Բ՛նչ բաներ կըսէինք իրարու, ան ու ես, նայուածքի ու դէմքի հազարումէկ կերպ նշաններու օգնութեամբ: Բ՛նչպէս վայելուչ կերպով կը կազմէ իր շարժումները երբոր կը ժպտիմ իրեն: Բ՛նչպէս զանոնք կուղղէ երբ կը նշմարէ որ հաճոյ չեն ըլլար ինձ: Բ՛նչպէս կը հասկընայ որ կը սիրեմ զինքը՝ երբոր իր ընկերներուն մէկը կը զգուէ կամ իր կերածէն անոր ալ կուտայ: Մէկը չկրնար մտքէն անցունել թէ ես պատուհանէս կրնամ կերպով մը այս խեղճ փոք-

րիկ արարածը կրթել: Նշաններուն համր վար-  
 ժութիւնը յանախ կրկնելով՝ մեր գաղափար-  
 ներն իրարու հաղորդելու միջոցները պիտի  
 կատարելագործենք: Ա՛րչափ աւելի զգայ թէ  
 ինձ հետ խօսակցելովը կը կրթուի և բարքն  
 օրէ օր կազնուանայ, այնչափ աւելի սէր պիտի  
 տայ ինձ: Ես իրեն համար խելքի ու բարեւր-  
 տութեան հոգի մը պիտի ըլլամ. ինք պիտի  
 սովորի իր վիշտերը բեկրութիւնները և յոյսերն  
 ինձ աւանդել, ևս ալ պիտի ջանամ զայն մխի-  
 թարելու, սիրտը ազնուացնելու և իր ամեն  
 ընթացքն ուղղելու: Ա՛յ գիտէ թէ իմ վիճակս  
 ամսէ ամիս անատոյգ պահելով զիս հոս չպիտի  
 թողուն որ ծերանամ: Ա՛յ գիտէ թէ այս տղան  
 աչքիս առջև մեծնալով՝ այս տանս մէջ պաշտօնի  
 մը չպիտի գործածուի: Յուցըցած յաջողակու-  
 թեամբը չկրնամ մինչև . . . բայց աւանգ, շատ  
 շատ ըլլալիքը լաւ պահապան մը կամ անոր պէս  
 քան մ'է: Սակայն դարձեալ բարի գործ մ'ըրած  
 չեմ ըլլար՝ եթէ պարկեշտ մարդոց և ինքն իրեն  
 հանոց ըլլալու բաղձանք մ'իրեն ազդելու և վեհ  
 զգացմանց ունակութիւն տալու նպաստած ըլլամ:

Այս միայնախօսութիւնը խիստ բնական էր:

Ես միշտ շատ հակում ունեցած եմ տղայոց, և  
 դաստիարակի պարտականութիւնները վսեմ կե-  
 րեւէին ինձ: Քանի մը տարիէ ի վեր այս պաշտօնը  
 կը կատարէի ձաքօմօի և ձուլիօ Բօրբօի քով:

և բնութիւնն ալ գեղեցիկ յոյսեր տուող պատանիներ՝  
զորս բուն իմ զաւակացս պէս կը սիրէի և միշտ  
ալ պիտի սիրեմ, Գիտէ Սատուած թէ քանի քա-  
նի անգամ բանտին մէջ անոնց վրայ խորհած  
եմ: Արչափ կը ցաւէի որ անո՞ց դասախարակու-  
թիւնը չկրցայ զլուխ հանել: Արչափ սրտեռանդ  
մազթանքներ կընէի որ նոր վարժապետ մը  
գտնէին ինձ համար զիրենք սիրող:

Նրբեմն կը գոչէի. «Ն՞չ անարգ այլափոխու-  
թիւն. փոխանակ ձաքօսօի և ձուլիօի, զորս  
բնութիւնն ու բազմն իրենց ամենապայծառ ճիր-  
քերով լցուցած են, հիմա աշակերտ ունիմ ինձ  
խեղճ փոքրիկ խուլ-համր մը, ցնցոտազգեսց  
և գոզի զաւակ . . . որ շատ շատ բանափ պահա-  
պան մը պիտի ըլլայ, որ քիչ մ'աւելի անհա-  
մեատ լեզուով կալանատոր կը կոչուի:

Այս մտածութիւնը զիս կամչցընէր, կը ճնշէր:  
Բայց երբ իմ փոքրիկ խուլ-համրիս ձայնը կը  
լսէի, սիրտս կը թնտար ինչպէս հօր մը սիրտն  
իր որդւոջն ձայնէն, Նւ այն ձայնը և անոր տեսքը  
կը նիարատէին մտքիս մէջէն զայնարհամարնելու  
գաղափարները: — Ն՞չ յանցանք ունի այս խեղճ  
սղան՝ և թէ խեղանդամ է, ցնցոտիներով ծած-  
կուած է և գոզերու որդի է: Մարդկային հոգի  
մ'անմեղութեան հասակի մէջ միշտ պատ-  
կառելի է: — Այսպէս կըսէի և օր քան զօր առա-  
ւել զորովասրտութեամբ կը նայէի անոր. կը

Թուէր ինձ թէ օրէ օր խելքը կաճէր և ես ալ օրէ օր կը հաստատուէի անոր բարեբարոյութիւնը զարգացընելու քաղցր խորհրդիս վրայ . և ամեն հաւանականութիւնները միտքս բերելով կը խորհէի թէ օր մը թերևս կելնեմ բանտէն և այն ժամանակ կարող կըլլամ այս տղան խուլ-համերց դպրոցը դնել և այնպէս կալանաւորի արհեստէն լաւագոյն ապագայի մը համբայ բանալ իրեն :

Նրբոր այսպէս բերկրութեամբ անոր երջանկութեանը կ'զբաղէի, երկու պահապան եկան օր մը զիս սենեակէս դուրս հանելու :

«Ձեր բնակարանը պիտի փոխուի, Պարոն :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Մեզ հրաման եղած է ձեզ ուրիշ սենեակ փոխադրել :

— Ինչո՞ւ համար :

— Ուրիշ աւելի կարեւոր թոչուն մը բռնուած է, և այս վանդակը լաւագոյնն ըլլալով . . . կը հասկընձր . . . :

— Կատարելապէս, այս սենեակը նոր եկողներուն առաջին իջևանն է եղեր » :

Նւ առին զիս բակին միւս կողմը տարին . բայց աւանդ, նոր սենեակս գետնի վրայ չէր . ալ չէի կրնար խուլ-համրիս հետ խօսակցիլ : Բակէն անցած ատենս տեսայ այն սիրելի տղան, գետինը նստած, զարմանքի մէջ, տխուր . հասկը-

ցաւ որ զիս կը կորսնցընէր : Յատկեց ոտք ելաւ  
 և առջևս վազեց : Պահապանները վռնտել կուզէ-  
 ին զայն, բայց ես զրկեցի զինքը, և առանց իր  
 աղտեղութեանը նայելու՝ համբուրեցի գորովա-  
 նօք. ետքը, պէ՞տք է արդեօք խոստովանիլ,  
 արտասուալից աչօք զատուեցայ անկէ :

Գ Լ Ո Ի Թ Թ .

Մէզն սիրտս, դու որ այդչափ դիւրութեամբ  
 և եռանդով կը սիրես, սրչափ բաժանումներու  
 արդէն դատասպարտուեցար : Այս բաժանումն ալ  
 ստուգիւ միւսներէն նուազ վշտալի չեղաւ, և այս  
 վիշտն առաւել զգալի եղաւ ինձ, որովհետև նոր  
 բնակարանս խիստ տխուր էր : Գծուծ սենեակ մը,  
 մութ, աղտեղի, միակ պատուհանով, որուն  
 ապակիներուն տեղ թուղթ դրուած էր, սրա-  
 տերն ամօթալի նկարներով ծածկուած, և այն-  
 պիսի գունով մը . . . որուն անունը տալու չեմ  
 համարձակիր : Չներկուած կողմերն ալ արձա-  
 նագրութիւններ կային : Շատերը դժբաղդ բան-



տարիկեալներու լոկ անուններ մականուններ  
կամ անոնց հայրենեաց անուներն էին՝ իրենց  
բանտարկութեան սե օրին թուականովը : Շա-  
տերն ալ բացազանչութիւններ էին սուտ բարե-  
կամներու դէմ, նոյն իսկ զրոզին դէմ, կնոջ մը  
դէմ, դատաւորին դէմ, և այլն : Ոմանք համա-  
ռօտ կենսագրութիւններ էին : Մէկ քանին տն-  
բարոյական վճիռներս Ս.սոնց մէջ Բասկալին այս  
խօսքերը կային .

«Անոնք որ կրօնի դէմ կը մարտնչին, ստաջ  
զոնէ թող հասկընան թէ ինչ կրօնք է այն : Եթէ  
կրօնքը պարծէր թէ Աստուծոյ վրայ յատակ տեսու-  
թիւն մ'ունի և անսքող կերպով զայն ստացած է,  
անոր հերքում եղած կըլլար երբոր ըսուէր թէ աշ-  
խարհի վեջ բան վը չտեսնուիր որ զայն այնպէս բա-  
ցայնայն կերպով ցուցնին : Բայց որովհետեւ կըսէ ընդ-  
հակառակն թէ մարդիկ խաւարի մէջ են և Աստուծ-  
մէ հեռացած են, թէ Աստուած ինքզինք տնոնց  
ծանօթութեանէն ծածկած է, և թէ ինքզինքն իսկ  
այնպէս կը կոչէ Ս. զրոց մէջ՝ Աստուած անծանօթ-  
եմ եւ ըսելով . . . ինչ օգուտ կրնան քաղել, երբոր  
ըստ իրենց խոստովանութեան ճշմարտութիւնը  
փնտռելու անհոգութիւններնուն մէջ կը պօռան  
թէ զայն իրենց ցուցընող բան մը չկայ »

Տակն ալ նոյն հեղինակին այս խօսքերը կային .

« Հոս խնդիրն օտար անձի մը թէ թէ չահուն  
վրայ չէ, այլ մեր վրայ և մեր բոլորին վրայ է »

Հոգւոյ անմահութիւնն այնչափ կարևոր բան է մեզ համար և այնչափ խորին մերձատրութիւն մ'ունի մեզ, որ անոր ինչ ըլլալը զիտնալու անհոգութիւն ընողն ամեն զգացում կորուսած ըլլալու է : »

Ուրիշ մ'ալ այս խօսքերը զրեւ էր .

« Կօրնեմ բանտը՝ որ մարդոց ապաշնորհութիւնը, իմ թշուառութիւնս և Աստուծոյ բարութիւնը ճանչցուց ինձ » :

Այս խոնարհութեան խօսքերուն քով ամբարտաւան անէծքներ կը տեսնուէր ինքզինք անաստուած հրատարակող մարդէ մը զրուած, որ Աստուծոյ դէմ կապատամբէր՝ որպէս թէ քիչ մը վերը զայն ուրացած ըլլալը մոռցեր էր :

Էջ մը հայհոյութիւններէ ետև՝ ուրիշ էջ մ'ալ թշնամանք կար վաստախրճներուն դէմ (այսպէս կը կոչէր այն անձիքը) զորս բանտարգելութեան դժբաղդութիւնը կրօնասէր կընէ :

Այս քարուականքը սրահապաններէն մէկուն ցուցընելով՝ հարցուցի թէ որո՞ւ գրածն էին : —

« Գոհ եմ այդ արձանագրութիւնը գտնելէդ, ըսաւ . այնչափ շատ կան որ փնտտելու գտնելու մամանակ չունին : »

Ն. առանց ուրիշ բան մ'ըսելու՝ սկսաւ ստոր դանակով քերթել, որպէս զի այն զրուածը ջնջէ :

« Ինչո՞ւ կարէք, ըսի իրեն :

— Վասն զի ասոնք գրող չուսուականը՝ որ զիտմամբ մարդասպանութիւն ըրած ըլլալուն համար ի մահ դատասպարտուեցաւ, ետքը զըզջացաւ ու ինձ աղաչեց որ ասոնք ջնջեմ ։

— Սատուած ներէ իրեն, ըսի ։ Ի՞նչ սպանութիւն էր ըրածը ։

— Իր մէկ թշնամին չկրնալ սպաննելով, վրէժ առնելու համար անոր զաւակն սպաննէր էր, աննման զեղեցիկ տղայ մը ։

Սոսկումէս դողացի ։ Վայրագու թիւնը կըրնայ մինչև հոն հասնիլ ։ Եւ այսպիսի հրէշ մը՝ մարդկային ամեն տկարութիւններէ ազատ մարդու մը պէս թշնամանիչ բերա՛ն կը բանեցընէր ։ Անմե՛ղ մը սպաննել, խեղճ տղե՛կ մը խողխողել ։

---

Ք Լ Ո Ւ Ե . Ժ

---

Նոր սենեակիս մէջ՝ որ խիստ մութ և զազիւր էր, զուրկ իմ սիրուն փոքրիկ համբիս ընկերութենէն, տրամութիւնը զիս կընկճէր ։ Ժամերով կը կանգնէի սլատուհանիս առջև՝ որ ճեմելիքի մը վրայ կը նայէր, և ճեմելիքին անդիի կողմն ալ

առաջին սենեակիս պատուհանն ու առջևի բակին  
ծայրը կը տեսնուէր :

— Ո՞վ դրուէր էր իմ տեղս : Մարդ մը կը տես-  
նէի հոն՝ որ անդադար և շուտ շուտ կը պտըտէր  
սաստիկ մտայուզու թեամբ տազնապեալ անձի  
մը պէս : Նրկու երեք օր ետքը տեսայ որ զրիչ  
թուղթ և այլն տուէր էին անոր, և ալ այնու-  
հետեւ բոլոր օրը սեղանին առջև նստած էր :

Վերջապէս ճանչեցի զայն՝ երբոր պահապանին  
հետ սենեակէն ելեր ու դատաստանական քննու-  
թեանց ներկայանալու կերթար. Սելքիոր ճօ-  
յան էր :

Սիրտս ճմլեցաւ : Դո՛ւն ալ հոս, մե՛ծ քաղաքացի :  
(Ան ինձմէ աւելի բազդաւոր եղաւ. քանի մ'ա-  
միս բանտարկու թենէ ետեւ արձակուեցաւ ։)

Ամեն բարի արարածներու տեսքը զիս կը մխի-  
թարէ, ինձ սէր կազդէ, ինձ խորհրդածել կու-  
տայ : Ո՛հ, խորհիլն ու սիրելը մե՛ծ բարիք մ'են :  
Յօժարութեամբ կեանքս կուտայի ճօյան բանտէն  
ազատելու համար, և սակայն անոր տեսքը զիս  
կ'ախտիէր :

Նրկար ժամանակ անոր նայելէս ետեւ, իր  
շարժումներէն մտքին հանդարտութեանը կամ  
անհանգստութեանը վրայ կարծիքական դատո-  
ղութիւններ և իրեն համար բարեմաղթութիւն-  
ներ ընելէս ետեւ, վրաս աւելի զօրութիւն մը  
աւելի ընդարձակ զազափարներ և ինքզինքէս ա-

ևելի գոհութիւն կ'զգայի, որովհետև մարդկեզէն սիրելի արարածի մը ներկայութիւնը բաւական է միայնութիւնն սփոփելու: Այս բարիքն ըրին ինձ նախ խեղճ խուլ-համր մը, հիմա ալ մեծ տաղանդի տէր մարդու մը ներկայութիւնը, թէպէտ և զինքը հեռուէն կը տեսնէի:

Պահապաններէն մէկն անշուշտ անոր իմացուցեր էր իմ ուր ըլլալս: Առաւօտ մը պատուհանը բանալուն՝ թաշկինակն երեքոց զիս ողջունելու համար: Ես ալ նոյն նշանով պատասխանեցի իրեն: Ո՛հ, ինչպիսի բերկրութեամբ սիրտս լեցուեցաւ այն վայրկենին: Ար թուէր թէ հեռաւորութեան միջոցը վերցեր էր և երկուքս իմիասին էինք: Սիրուհին տեսնող տարփաւորի մը պէս սիրտս կը բարախէր: Ձեռքով ու շարժումներով կը խօսէինք իրարու հետ՝ առանց իրար հասկընալու, բայց այնպիսի շուտափութութեամբ որ զիտես թէ իրարու միտք կը հասկընայինք, կամ մանաւանդ ստուգիւ կը հասկընայինք իրար: Այն շարժումները մեր սրտին բոլոր զգացումները կը նշանակէին, և երկուքս ալ իրարու զգացմանց քաջածանօթ էինք:

Այն բարեկամական ողջոյններէն ինչ միսի թարութիւններ չպիտի գտնէի ապագային մէջ: Ապագան եկաւ, բայց այն ողջոյնները չնորոգեցան: Ամեն անգամ որ ճօյա իր պատուհանը կը տեսնէի, թաշկինակս կ'երեքցընէի, բայց ընդու-

նայն : Պահապաններն ըսին ինձ թէ այնպէս ձեռ-  
քովու շարժումներով հետս խօսակցիլն արգիլուեց  
էր իրեն : Այսու ամենայնիւ յաճախ կը նայէր  
ինձ , ես ալ նոյնպէս անոր կը նայէի . և մեր  
նայումսքը տակաւին հազար բան կը հասկըցը-  
նէր իրարու :



### Գ Լ Ո Ւ Ի Խ Ժ Ա .

Պատուհանիս առջևի ճեմելիքին մէջ , որ զը-  
րեթէ բանտիս հետ հարթ հաւասար էր , առա-  
ւօտէն մինչև իրիկուն ուրիշ բանտարկեալներ  
կանցնէին կը դառնային մէկ մէկ պահապաննե-  
րու հետ : Ասոնք հարցափորձի կերթային կամ  
ետ կը դառնային : Շատն ստորին աստիճանի  
մարդիկ էին : Բայց մէջերնին մէկ բանի ալ տե-  
սայ որ աւելի բարձր վիճակէ անձինք կերե-  
տին : Թէպէտ այնչափ շուտ կանցնէին որ խիտ  
հարեանցի կը տեսնէի դանոնք , այսու ամենայ-  
նիւ ուշադրութիւնս կը գրաւէին և ամենն ալ  
քիչ շատ գուլթս կը շարժէին : Առջի օրերն այս

տխուր տեսարանը արամութիւնս կաւելցընէր ,  
բայց բիշ բիշ վարժուեցայ , և վերջապէս միայնու-  
թեանս սոսկումը նուազեցընելու ալ նպաստեց :

Նմանապէս շատ ալ բանտարկեալ կանայք  
կանցնէին սենեակիս առջևէն : Ճեմելիքին մօտ  
կամարայարկ ճանրու մը միւս կողմը բակ մը  
կար , հոն էր կանանց բանտն և զաղղիական  
ախաբիւ վարակելոց հիւանդանոցը : Բարակ պատ  
մը միայն իմ սենեակս բանտարկեալ կանանց  
սենեակներուն մէկէն կը զատէր : Շատ անգամ  
այս թշուառներն ականջս կը խուլցընէին իրենց  
երգերովը և երբեմն ալ կռիւներովը : Նրկուները  
երբոր ժամանակն անցնէր և դուրսի ճայները  
զազրէին , ասոնց խօսակցութիւնները կը լսէի :

Սթէ ուզէի՝ կրնայի ես ալ խօսակցիլ հետեր-  
նին . բայց զգուշացայ , չեմ գիտեր ինչո՞ւ համար .  
վեհերոտութեամբ թէ մեծամտութեամբ , կամ  
այնպիսի վատ վիճակի մէջ զանուող կանանց հետ  
բարեկամանալու խոհական երկիւղով : Ար կար-  
ծեմ թէ այս երեք պատճառներն ալ միանգամայն  
ունէի : Աինը քանի որ իր պարտուպատշաճ դիր-  
քին մէջ է՝ վսեմ արարած մ'է : Զայն տեսնելը ,  
լսելը , հետը խօսիլը՝ ազնիւ խորհուրդներով հո-  
ղիս կը լցընէ . բայց երբոր նուաստացեալ և ար-  
համարհելի վիճակի մէջ է , զիս կը խռովէ , կը  
վշտացընէ և սրաբա բանաստեղծական աշխոյժը  
կը մարէ :

Նւ սակայն . . . (այս սահմանաւորիչ պայմաններն անհրաժեշտ են մարդս նկարագրելու համար՝ որ խիստ խրթին էակ մ'է) այս կանանց ձայներուն մէջ քաղցր ձայներ կային, և այն ձայները՝ ինչո՞ւ չըսեմ՝ սիրելի էին ինձ : Մէկը մանուշակ միւսներէն անուշ էր. անոնցմէ բիշ կը լըսուէր, և բնաւ գռեհիկ մտածութիւններ չէր արտաբերեր : Շատ ալ չէր երգեր, եթէ երգելու ալ ըլլար՝ շատ անգամ այս սրտաշարժ տողերն էին .

« Ո՛վ պիտի ետ դարձունէ թշուառին իր երջանկութիւնը : »

Երբեմն աղօթքներ կերգէր : Ընկերներն ալ ձայնակից կըլլային անոր, բայց ես կրնայի որոշել Մագդաղինէին ձայնը միւսներէն՝ որք զիտես թէ դիտմամբ անոր ձայնը խափանել կը ջանային :

Այո՛, այս դժբաղդ կնոջ անունը Մագդաղինէ էր :

Երբոր ընկերներն իրենց ցաւերը կը պատմէին, նա կը մեղքընար զանոնք հեծեծելով, և միշտ կըսէր. « Մի վհատիր, սիրելիս, Տէրը ոչ մէկ մարդ մ'երեսի վրայ չձգեր : »

Ո՛վ կրնար զիս արգելուլ որ զայն գեղեցիկ չերևակայէի, աւելի դժբաղդ՝ քան թէ յանցաւոր, առաքինութեան համար ծնած և առաքինութեան դառնալու կարող՝ եթէ խոտորած ալ



էր առաքինութենէ: Ո՞վ կրնայ զիս մեղադրել եթէ սիրտս կը շարժէր անոր ճայնէն, եթէ ակնածութեամբ մտիկ կրնէի անոր ճայնը, եթէ մասնաւոր ջերմեռանդութեամբ մը կազօթէի անոր համար:

Անմեղութիւնը պատուական է, բայց ո՞րչափ պատուական է զզջումն ալ: Մարդկանց ամենարարին՝ մարդացեալն Սատուած՝ մեղաւոր կանանց վրայ զորովագութ աչօք չէ՞ր նայեր, անոնց ապաշաւը չէ՞ր յարգեր, և զանոնք իր ամենէն սիրելի հոգիներուն կարգը չէ՞ր դասեր: Ինչո՞ւ համար ուրեմն վատ վիճակի մէջ ինկած կինն արհամարհենք:

Այսպէս խորհրդածելով հարիւր անգամ մը տարերեցի ճայնս հանել և եզրայրական սիրոյ յայտարարութիւն մ'ընել Մազդազինէին: Անգամ մ'անոր անուան առաջին վանկն արդէն արտասաներ էի « Մազդ . . . » բայց զարմանալի բան սիրտս կը բարախէր տասնևհինգ տարեկան տարփաւորի մը սրտին պէս, և սակայն երեսուն և մէկ տարեկան էի, և տղոց պէս սիրտս թեթեալ բաներէ խռովելու ժամանակն անցած էր:

Զկրցայ անկէց առելի արտասանել. նորէն կ'սկսէի « Մազդ . . . Մազդ . . . » բայց ամեն ջանք անօգուտ եղաւ: Ինքզինքս ծիծաղելի կը զտնէի և բարկութեամբ « Մաթթօ \* և ոչ Մազդ » կը կոչէի:

(\*) Իտալերէն խենդ կամ յիմար:

Գ Լ Ո Ւ Խ Թ Ժ Բ .



Այսպէս լինցաւ իմ վիպասանութիւնս այս թշուառ կնոջ հետ: Այս կայ որ քանի մը շաբաթ քաղցր զգացումներով սիրտս շարժելու պատճառ եղաւ: Շատ անգամ տխուր էի, և անոր ձայնը զուարթութիւն կուտար ինձ: Շատ անգամ ալ մարդոց ցածութեանն ու ապաշնորհութեանը վրայ խորհելով կը բարկանայի վրանին և բոլոր աշխարհ կատէի, բայց Մագդաղինէի ձայնը զիս կարեկցութեան ու ներողամտութեան կը բերէր:

— Աստուած տար որ ծանր պատժոյ մը չդատապարտուէիր, ո՞վ անձանօթ մեղաւորունի. կամ ինչ պատժոյ ալ որ դատապարտուիս՝ կարենաս անկէց օգուտ քաղելով ազնիւ զգացմանց դառնալ և Տէրոջը սիրելի կերպով ապրիլ ու մեռնիլ: Նրանի՛ թէ քեզ ճանչողներուն ամենն ալ քեզ մեղքընան ու յարգեն ինձ պէս՝ որ քեզ չէի ճանչեր: Նրանի՛ թէ ամեն քեզ տեսնողներուն համբերութիւն քաղցրութիւն սուաքինութիւն և Աստուծոյ վրայ վստահութիւն ազդես, ինչպէս որ ինձ ազդեցիր, ինձ՝ որ առանց տեսնելու քեզ

կը սիրէի: Յրեւակայութիւնս կարելի է խաբուեցաւ՝ քեզ զեղեցիկ կին մը կարծելով, բայց քու սիրտդ՝ անտարակոյս եմ որ զեղեցիկ էր: Քու ընկերներդ կոպտութեամբ և գոհկարար կը խօսէին, բայց դու պարկեշտութեամբ եւ շնորհքով: Անոնք կը հայհոյէին Աստուծոյ դէմ, դու կ'օրհնէիր: Անոնք կռիւ կընէին իրարու հետ, դու կը խաղաղէիր զանոնք: Յիշէ՛ մէկը քեզ անպատուութեան ճամբէն հանելու համար ձեռք երկընցուց քեզ, եթէ կրցաւ ազնուարար քեզ բարիք մ'ընել, եթէ քու արտասուքդ սրբեց, ամեն միսիթարութիւններ անձրեւի պէս տեղան անոր վրայ, անոր որդւոց և թոռանցը վրայ: —

Սենեակիս մէկ քովն ալ ուրիշ բանտ մը կար որուն մէջ քանի մը մարդիկ կը բնակէին: Ասոնց ալ խօսակցութիւնները կը լսէի: Մէջերնէն մէկը միւսներուն վրայ իշխանութիւն կը բանեցընէր, ոչ թէ անոնցմէ բարձր վիճակէ ըլլալուն համար, այլ առտել ճոռտմարան և յանդուգն ըլլալուն համար, Այս մարդը՝ ինչպէս կըսեն՝ ինքզինքը վարդապետի տեղ դրած էր: Ար վիճէր, իրեն դէմ խօսողները կը լռեցընէր իր հրամայական ձայնովն ու ազդու խօսքովը, և վճարար կը սովորեցընէր անոնց ինչ որ պէտք էր խորհէին ու զգային: Անոնք ալ քիչ մը դէմ կենալէ ետեւ՝ վերջապէս անոր իրաւունք կուտային ամեն բանի մէջ:

Այս թշուառներուն մէջ մէկը չկար որ բանտին տաղտուկը մեղմացընելու կարող ըլլար սարկեշտ զգացումներ յայտնելով, քիչ մը կրօնք և ուր ցուցընելով:

Սուսերին զլուխը զիս ողջունեց, ևս ալ փոխադարձաբար ողջունեցի զինքը: Հարցուց ինձ թէ ինչպէս կը տանէի այս անիծեալ վիճակը: Պատասխան տուի թէ վիճակ մը՝ որչափ և տխուր ըլլայ՝ անիծեալ չէր ինձ համար, և թէ մինչեւ ի մահ պէտք էր խորհելու և սիրելու բերկրանքը փնտուել:

— Բացատրէ ըսածդ, Պարոն, բացատրէ:

— Բացատրեցի, բայց հասկըցող չեղաւ: Սէրբոր Կարտարիսօսական վարպետ նախագգուշութիւններով համարձակեցայ Մազդազինէին ձայնէն զգացած խանդադատանքս օրինակ բերել, խօսակիցս բարձր ծիծաղ մ'արձակեց:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, գոչեցին ընկերները:

— Սմբարիշտն սկսաւ ծամածռելով հեզնել իմ խօսքերս, և ընկերներն ալ միաձայն ծիծաղեցան՝ կատարեալ անմիտ մը զիս համարելով:

Բանտն ալ աշխարհի պէս է: Անոնք որ իրենց իմաստութիւնը նեղանալու զանգատելու հայնոյելու վրայ կը դնեն, յիմարութիւն կը համարին կարեկցութիւնը սէրը մտաց ազնիւ մխիթարութիւնները, վերջապէս ինչ որ մարդկութեան և անոր երկնաւոր արարչին պատիւ կը բերէ:

## Գ Լ Ո Ւ Խ Խ Ժ Գ .

Թողուցի զանոնք որ ծիծաղին , և վանկ մ'ան-  
գամ պատասխան չտուի : Նրկու երեք անգամ  
խօսիլ ուզեցին հետս , ես մունջ կեցայ :

— Այ մեկ մ'ալ պատուհանը չպիտի ելլէ , ը-  
սին : — Գացեր է : — Մագղաղինէին հառաչան-  
քը մտիկ կընէ : — Մեր ծիծաղները զինքը վի-  
րաւորած ըլլալու են :

Քիչ մ'ատեն այսպէս խօսքեր ըրին . վերջա-  
պէս զխաւորնին սաստելով լռեցուց վրաս մըռ-  
մըռացողները :

« Լռեցէք , տխմարնե՛ր , ըսածնիդ չէք գիտեր ,  
ըսաւ . գրացինիս ձեր կարծածին չափ էչ չէ :  
Գուք կարող չէք բանի մը վրայ խորհրդածել :  
Նս կը ծաղրաբանեմ , բայց ետքը կը խորհիմ :  
Ամեն չար սրիկաները կրնան մեզ պէս կատա-  
ղութիւն բանեցընել : Քիչ մ'աւելի հանդարտ զը-  
ւարթութիւն , քիչ մ'աւելի գութ , քիչ մ'աւելի  
հաւատք երկնից բարերարութեանը վրայ , ա-  
ստոնք ամենքը՝ անկեղծարար խօսելով՝ ինչ  
կը նշանակեն ձեր խելքովը :

— Հիմա որ ես ալ կը խորհիմ ասոնց վրայ ,  
ըսաւ մէջերնէն մէկը , կը կարծեմ որ ասոնցմով  
մէկ մարդ մը քիչ մը պակաս սրիկայ կըլլայ :

— Աեցցես , պոռաց զլխաւորն Ստէնտորի (\*)  
ձայնով . այս անգամ քիչ մը համարում ունե-  
նալ կ'սկսիմ քու խոշոր զլխուդ վրայ : »

Թէպէտ ինձ պատիւ մը չէր այս մարդիկներէն  
քիչ մը պակաս սրիկայ համարուիլս , այսու ա-  
մենայնիւ ուրախութիւն մ'զգացի երբ տեսայ  
այս թշուառները որ վերջապէս կը հասկընային  
գորովանաց զգացումներ մշակելու կարեւորու-  
թիւնը :

Այն ժամանակ պատուհանին փեղկը շարժեցի  
որպէս թէ պատուհանը կելնէի : Նրացիներու  
զլխաւորը զիս կանչեց , ես ալ պատասխան տուի  
յուսալով որ ինձ պէս բարոյական խօսելու կը  
հաճէր : Բայց կը սխալէի : Հասարակ միտքերը կը  
փախչին լուրջ խորհրդածութիւններէ : Սթէ մեծ  
ճշմարտութիւն մ'աչքերնուն փայլի , կարող են  
վայրկեան մ'անոր վրայ զմայլիլ . բայց քիչ մը  
ետքը աչքերնին անկէ կը դարձընեն , և ինք-  
զինքնին խմաստուն ցուցընելու համար զայն

(\*) Տրովադայի պաշարմանը զացող յոյն պատերազմողնե-  
րուն մէկն էր , որուն համար կըսեն թէ 50 մարդու ձայնի չափ  
գորաւոր ձայն մ'ունէր : Ծան. Թարգմ.

Երկրայութեան տակ կը ձգեն՝ ու վրան կը ծաղ-  
րարանեն :

Ետքը հարցուց ինձ թէ պարտքի համար բան-  
տը դրուած էի :

« Ոչ :

— Թերեւս գողութեան համար ամբաստան-  
ուած ես . . . : Զուր տեղը կուզեմ ըսել, կը հաս-  
կրնաս ա՛ն :

— Ուրիշ բանի համար ամբաստանուած եմ :

— Տարիական գործերու համար :

— Ոչ :

— Մարդասպանութեան համար :

— Ոչ :

— Քառաօճարիութեան համար :

— Ըշղիւ ատոր համար :

— Եւ ինչ են աս Քառաօճարիները (\*):

— Ես ալ ազէկմը չեմ գիտեր որ քեզ հասկը-  
ցրնեմ :

Պահապաններէն մէկը բարկութեամբ խօսակ-

(\* ) Քառաօճարի . բառական նշանակումեամբ ամխագործ :  
Քաղաքական ծածուկ ընկերութիւն մ'էր՝ իննեւտասներորդ  
դարու սկիզբներն Իտալիոյ նոր հասարակապետութեանց կոր-  
ծանումէն ետե կազմուած : Եպատակն էր օտարազգիներն  
Իտալիայէն վռնտել և հասարակապետական կառավարութիւն  
մը հաստատել :

ցութիւննիս կտրեց, և ամեն թշնամանք դրացիներուս զլիսուն տեղալէ և տե, դարձաւ ինձ, և տիրոջ մը քան թէ կարանաւորի ծանրութեամբ ըսաւ. « Ամօթ է ձեզ, Պարոն, ատանկ ամեն տեսակ մարդոց հետ խօսակցելու խոնարհիլ: Գիտէք որ այս մարդիկը զոգ են: »

Ամչցայ. և տքն ալ ամչնալուս վրայ ամչցայ. ինձ թուեցաւ որ ամբի բարեւորութիւն քան թէ յանցանք էր ամեն տեսակ թշուառներո հետ խօսակցելու զիջանիլը:



## Ք Լ Ո Ի Խ Ժ Գ.

Հետեւեալ առաւօտուն պատուհանը ելայ Մելքի որ ձօյան տեսներու, բայց աւազակներուն հետ չխօսեցայ: Միայն իրենց ողջունին պատասխանելով, ըսի թէ իրենց հետ խօսիլն արգիլեալ էր ինձ:



Գատաատանատան դիւանադպիրը՝ որ զիս հար-  
ցաքններ էր՝ և կաւ խորհրդարար իմացուց ինձ թէ  
բերկրառիթ այցելու թիւն մը պիտի ըլլար ինձ .  
և երբոր զիս բաւականապէս պատրաստած կար-  
ծեց, « Չերկրցունեմ, հայրդ է և կողք, ըսաւ,  
հանկեցիք հետս գալու : »

Առջեւ ինկաւ, վար իջանք դիւանատունը :  
Սիրտս կը բարասէր ուրախութենէս ու գորո-  
վանքէս, և կը ջանայի զուարթ գէմք մը ցուցը-  
նելու, որպէս զի խեղճ հօրս սիրտը հանդարտե-  
ցրնեմ :

Երբոր բանտարկուիլս լսեր էր, յուսացեր էր  
որ թեթև կասկածներէ յառաջ և կամ բան մ'էր և  
շուտով կելնէի բանտէն : Բայց տեսնելով որ բան-  
տարկութիւնս կերկարէր, Միլան և կ'եր էր ազա-  
տութիւնս հայցելու : Աստրիոյ կառավարութենէն  
Գծրանդ պատրանք հայրական սիրոյ : Չէր կըր-  
նար հաւատալ որ օրինաց խտտութիւնը վրաս բե-  
րելու չափ յանգուզն կընայի ըլլալ, և հետը խօսե-  
լուս տակն երեսանց յայտնած զուարթութիւնս  
ալ զինքն այնպէս համոզեց թէ ընաւ վախճալու  
բան մը չունէի :

Մեզ շնորհուած կարեւ տեսակցութիւնը սիրտս  
այնչափ շարժեց որ անհնար է նկարագրել, մանա-  
ւանդ զի կը ջանայի սրտայուզութեանս երեսոյ թ-  
ները զսպել : Այս ջանքս տեսիլի դժուարին ե-  
ղաւ իրարմէ բաժնուած ժամանակնիս :

Իտալիոյ գտնուած պարագաներուն նայելով հաստատութեամբ կը հաւատայի թէ Աստրիա կարգէ զուրս խստութիւն մը պիտի բանեցնէ՝ ահաւոր օրինակ մը տալու համար, և ես ալ մահուան կամ երկար բանտարկութեան պիտի դատապարտուիմ։ Այս համոզումը հօրմէս պահե՛լ մօտաւոր ազատութեան մը յոյսեր տալով զայն խաբե՛լ, զինքը ողջագուրած ժամանակս, մօրս եղբարցս և քերցս վրայ խօսած ատենս, զորս աշխարհի վրայ մէկ մ'ալ տեսնելու յոյս չունէի, աչքէս արտասուք չը թափե՛լ, հանդարտ ձայնով զայն ազաչել որ եթէ կրնայ՝ զիս նորէն տեսնելու գնայ, երբէք այսպիսի բռնութիւն մը ինքզինքիս ըրած չէի բոլոր կենացս մէջ։

Հայրս մեկնեցաւ ինձմէ՝ բոլորովին մխիթարուած, ես ալ բանտս դարձայ սիրտս ցաւով լրցուած։ Ինքզինքս միմեակ տեսնելուս պէս՝ յուսացի որ համարձակ լալով կրնամ ինքզինքս ափսփել։ Այս ափսփանքը չկրցի ձեռք բերել։ Կը հեծկլտայի, բայց չէի կրնար կաթիլ մ'արտասուք թափել։ Մանր կսկիծներու մէջ՝ չկրնալ լալը թշուառութեանց ամենէն անգութն է, և քանի քանի անգամ ասոր փորձը կրած եմ։

Հրատապ տենդ մը զիս բռնեց դժնդակ գլխացաւով մը։ Բոլոր օրը դգալ մը թան չկրցայ խմել։ « Աստուած տա՛ր որ այս հիւանդութիւնս մահացու ըլլար և չարչարանքս կարճեցընէր » կըսէի։

Վատ և անխելք ազօթք: Աստուած չընդունեց  
 դայն, և հիմա փառք կուտամ իրեն: Փառք կու-  
 տամ՝ ոչ միայն անոր համար որ տասն տարի  
 բանտարկութենէ ետև սիրելի ընտանիքս տեսայ  
 և կրնամ ինքզինքս երջանիկ կոչէլ, այլ և անոր  
 համար որ տառապանքը մարդս կազնուացընէ,  
 և կը յուսամ որ ինձ ալ անօգուտ չեղաւ:



### Գ Լ Ա Ռ Խ Ժ Ե .



Նրկու օր ետքը հայրս նորէն եկաւ Այն գիշերը  
 հանգիատ քնացեր էի և տենդ չունէի: Նորէն ան-  
 հող և ուրախ դէմք մը կեղծեցի, այնպէս որ մե-  
 կը չկրցաւ նշմարել այն սաստիկ տառապանքը  
 որ սիրտս կրեր էր և տակաւին կը կրէր:

Եկր յուսամ, ըսաւ հայրս, թէ քիչ օրէն Թուրի-  
 նօ կը դառնաս: Սրդէն պատրաստեցինք սենեա-  
 կըդ, և անձկութեամբ քեզ կ'սպասենք: Պաշտօ-  
 նիս սխարտաորութիւնները զիս Թուրինօ դառ-

նալու կը հարկադրեն : Չանա, կաղաչեմ, ջանա  
որ շուտով հոն հասնիս :

Իր գորովայլից և տրտում բարեկամութիւնը  
սիրտս կը խռչտանգէր, կեղծաւորութիւնը որ-  
դիական սիրոյ հարկ մը կը թուէր ինձ, և սակայն  
խղճիս ալ կը դաշէր : Առեւի ալմանաւոր ջէր ըլ-  
լար հօրս և ինձ՝ և թէ ըսէի տնոր . — Քերես մէկ  
մ՝ ալ իրար չպիտի տեսնենք այս աշխարհիս մէջ :  
Բաժնուինք իրարմէ, արիարար՝ առանց տրտնե-  
լուջ, առանց հեծելու, և հայրական օրհնութիւ-  
նըդ ընդունիմ զլխուս վրայ : —

Այս խօսքերն հազարապատիկ նախամեծար  
կը դասէի կեղծիքէն . բայց կը նայէի այն սլա-  
կառելի ծերունիին աչքերուն, երեսին խորշոմ-  
ներուն, աղերէկ մազերուն, և ինձ կը թուէր թէ  
այնպիսի յուսահատական գոյժեր լսելու չէր կըր-  
նար դիմանալ դժբաղդ մարդը :

Սէ և թէ զինքը խարել չուզելուս համար յուս-  
հատութեան մէջ իյնար, թերես մարէ՛ր, թերես  
(սոսկայի մտածութիւն) յանկարծաման թեւե-  
րուս մէջ իյնար :

Աստի չկրցայ ճշմարիտն ըսել տնոր, և ոչ իսկ  
նշմարել տալ : Առերևոյթ գուարթութիւնս բո-  
լորովին խարեց զինքը : Առանց տրտասուելու  
բաժնուցանք իրարմէ : Բայց երբոր բանտս զար-  
ձայ, առաջին անգամուն պէս կամ տեւի սար-  
սափելի կերպով սիրտս ճմլիլ սկսու : Պա-

բայ տեղը արտասուքն օգնու թեան կանչեցի :  
 Երկար կապանաց սուկումն բուն համբերել,  
 չարչարանաց համբերել, կարողու թենէս վեր բան  
 մը չէր : Բայց հօրս մօրս եղբարցս քերցս ըզ-  
 գալիք անգու թ կսկիծին համբերելու՝ բոլոր կա-  
 րողութիւնս բաւական չէր :

Այն ժամանակ ինկայ զետինը երկրպագութիւն  
 ըրի այնպիսի ջերմեռանդութեամբ մը՝ որուն նը-  
 մանը երբէք ունեցած չէի, և այս աղօթքն ըսի .


« Սատուած իմ, քու ձեռքէդ ամեն բան  
 կընդունիմ . բայց բաւական զօրութիւն տուր  
 այն սրտերուն որոց պէտք էի ես, որպէս զի կա-  
 րող ըլլան ինձմէ անցնելու, և անոնցմէ ոչ մէ-  
 կուն կեանքն օր մ'անգամ չը կարծրնայ այս  
 պատճառաւ : »

Ո՛վ բարերարութեան աղօթից : Քանի մը  
 ժամ շարունակ միտքս առ Սատուած բարձրա-  
 ցուցի, և յայս կուէլնար քանի որ Սատուծոյ  
 բարութեանը վրայ կը մտածէի, քանի որ մարդ-  
 կային հոգւոյն մեծութեանը վրայ կը մտածէի,  
 երբոր իր անձնասիրութիւնը մէկդի թողլով՝  
 անհուն իմաստութեան կամքէն ուրիշ կամք  
 չունենալու կը ջանայ :

Այն, կրնայ ըլլալ այս : Այն, այս է մար-  
 դուն պարտականութիւնը : Բանականութիւնը  
 որ Սատուծոյ ձայնն է, բանականութիւնը  
 կըսէ մեզ թէ ամեն բան զոհել պէտք է ա-

առաքինութեան . և միթէ ցաւագին պարագա-  
ներու մէջ՝ առաքինութեան Աղբիւրին կամացը  
դէմ մաքառիլը՝ առաքինութեան պարտական  
եղած զոհերնիս կատարել կըլլայ :

Երբոր կախաղանը կամ ուրիշ որ և իցէ  
մարտիրոսութիւն մ'անհրաժեշտ է , վատարար  
զողալ և Տէրն օրհնելով համարձակ մեռնելու  
չերթալը՝ ողբալի ցածութեան ու տգիտութեան  
ապացոյց տալ է : Եւ մեք պէտք է հանինք ոչ  
միայն մեր մահուանը , այլ և մեր սիրելիներուն  
վշտակրութեանը : Մեզ ներելի եղածն է խընդ-  
րել միայն Աստուծակ որ անսնց կսկիծը թեթե-  
ցընէ և ամենուն օգնութեան հասնի : Այսպիսի  
աղօթք մը միշտ լսելի կըլլայ :



## Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Քանի մ'օր անցաւ և ես նոյն վիճակին մէջ  
էի , այսինքն՝ քաղցր տխրութեան մը մէջ՝  
լի հանդարտութեամբ և աստուածապաշտա-  
կան մտածութիւններով : Աը թուէր ինձ թէ

ամեն տկարու թեան յաղթեր էի և ալ այնու-  
հետև ոչ մէկ անհանգստութիւն մը չէր կրնար  
սրտիս տիրել, Յիմար պատրանք: Մարդս միշտ  
պէտք է որ ամենակատարեալ հաստատամտու-  
թեան նկրտի, բայց այս աշխարհիս մէջ չըկըր-  
նար հասնիլ անոր: Ա՞՞վ կրցաւ զիս նորէն վըր-  
դովել: Գծբաղդ բարեկամի մը տեսքը, խեղճ  
Բիէրօիս տեսքը, որ ինձմէ քանի մը քայլ  
հեռուէն անցաւ ճեմելիքին մէջ՝ երբոր ևս պա-  
տուհանն էի: Եր սենեակէն հաներ՝ եղևոնա-  
ւորաց բանար կը տանէին:

Ա՛յնչափ շուտով անցան ինքն և հետի մար-  
դիկը, որ հազիւ ժամանակ ունեցայ զինքը  
ճանչնելու և բարեկամական ողջոյն մ'առնուլ  
տալու:

Սէղճ երիտասարդ: Ծաղիկ հասակի մէջ,  
այնպիսի հանճարով մը բարեմասնեալ՝ որ խիստ  
բարձր յոյսեր կուտար, պարկեշտ փափուկ և  
սիրող բնաւորութեան մը տէր, կեանքը փա-  
ռաւորապէս վայելելու համար ստեղծուած,  
քաղաքական գործերու համար բա՛նար ձգուիլ  
այնպիսի ժամանակ մը՝ ուր անհնար էր օրինաց  
ամենածանր պատուհաներէն ինքզինք ա-  
զատել:

Ա՛յնպիսի կարեկցութիւն մ'զգացի անոր  
վրայ, այնպիսի կսկիծ մ'զգացի զայն չկրնալ  
ազատելուս կամ գոնէ ներկայութեամբս ու

խօսքերովս չկրնալ միտիթարելուս համար ,  
որ հանգստութիւնս բուրբովին կորուսի : Քի-  
տէի սրչափ կը սիրէր իր մայրը քոյրերը  
քեռայրը քեռորդիները , սրչափ կը ջանար  
անոնց երջանկութեանը նպաստելու , սրչափ  
սիրելի էր իր այն ամեն սիրոյ առարկայներուն  
Ար հասկընայի սրչափ դառն ըլլալու էր անոնց  
ամեն մէկուն կակիծն այսպիսի մեծ դժբաղ-  
դութեան մը մէջ : Զգացած անհնարին թաղ-  
ծութիւնս չեմ կրնար խօսքով բացատրել . և  
այս վիճակս այնչափ երկար տևեց որ սրտիս  
անդորրութիւնս գտնելէն յախտեան յուսակը-  
տութիւնս կըլլայի :


Սյս երկխոս ալ պատրանք մ'էր : Ա՛յ  
վշտակիրը , որ ինքզինքնիդ անտառ ստակալի  
և միշտ անկցուն տրամու թեան մը որս եղած  
կը կարծէր , համբերեցէք բիչ մը և սխալել-  
նիդ կը հասկընար : Աչ ամենակատարեալ սրբ-  
տի անդորրութիւնն և ոչ ամենարուտն սրտա-  
յուզութիւնը չեն կրնար միշտ տևել : Սյս  
հշմարտութեան համոզուիլ պէտք է , որպէս  
զի երջանկութեան ժամանակ չմեծամտինք  
և ճախորդութեան ժամանակ ալ չնուսաստ-  
նանք :

Սյս երկար յուսարեկութեան յաջորդեցին  
տկարութիւն և անզգայութիւն , բայց անզգայ-  
ութիւնն ալ տևողական չէ , և վախճայ որ



այսուհետև անդադար այս երկու ծայրայեղութիւններուն մէջ պիտի տատանէի : Այսպիսի ապագայի մը զազաւիարը զիս զարհուրեցուց, և այս անգամ ալ նորէն ազօթքի դիմեցի :

Մնորեցի Աստուծակ որ օգնէ խեղճ Բիւրօսիս՝ ինչպէս ինձ, օգնէ անոր ընտանեացը՝ ինչպէս իմինիս : Այս խնդրուածքը քանի մ'անգամ կըրկնելով՝ կըրցայ սառցիւ սիրտս հանդարտեցընել :



## Գ Լ ՈՒՆ Ժ Ե .

Բայց երբոր միաջո խաղաղեր էր, կրած յուսահատութիւնս կը յիշէի և տկարութեանքս վրայ զրգուելով՝ ինքզինքս անկից բժշկելու նարը կը փնտռէի, Ասոր համար այս հնարքը մտածեցի : Ամեն ատուօտ, ինձ առաջին զբաղմունք ըրի, Ստեղծողին համարօտ փառարանութիւն մը մատուցանելէ ևտև, խնամով և քաջութեամբ յիշել սիրտս խառնելիք

ամեն հնարաւոր դէպքերը : Ամեն մէկ ենթադրութեան վրայ միտքս կը հաստատէի և ինքզինքս անոր կը պատրաստէի : — Ամենէն սիրելի անձանց այցելութենէն սկսեալ մինչև դահլիճն այցելութիւնը մի առ մի երևակայութեանս առջև կը բերէի : Այս տխուր վարժութիւնը քանի մ'օր անտանելի երևցաւ ինձ . բայց յարատևութեամբ շարունակեցի, և շատ չանցաւ զո՛ր եղայ :

1821 տարւոյն առաջին օրը Լուիսի կոմսն հրաման ստացեր էր գալու զիս տեսնելու : Մէջերնիս եղած գողտր և սերտ բարեկամութիւնը, իրարու շատ բաներ խօսելու պէտքերնիս, ատենադպրի մը ներկայութենէն սրտերնիս իրարու բանալու արգելքը, մէկ տեղ գտնուելու համար շնորհուած ժամանակին կարճութիւնը, զիս տազնապեցրնող չարաշշուկ նախազգացութիւնները, սիրտերնիս հանդարտ երևցընելու համար երկուքիս ալ ըրած ճիգերը, ասոնք ամենը կը թուէր թէ սարսափելի կերպով սիրտս տակն ի վրայ պիտի ընէին : Նրբոր այն պատուական բարեկամս բաժնուեցաւ ինձմէ, ինքզինքս հանգիստ գտայ . խանդազատեր էի, բայց հանդարտ էի :

Այսչափ օգտակար բան է բուն սրտայուզութեանց դէմ ինքզինք նախապատրաստելը :

Անխառով խաղաղութեան մը հասնելու ա-

աաջադրու թեանս շարժառիթը՝ դժբազդու-  
 թիւնս թե թեցընելու բաղձանքէն աւելի սըր-  
 տատանջու թիւնն ինձ գծուծ եւ մարդոց ա-  
 նարժան երեկոյն էր : Յուզեալ միտք մը չկըր-  
 նար խորհրդածել . մինչև անգամ կը պատահի  
 որ գաղափարներուն չափազանցութենէն յա-  
 աջ եկած մտաւորական անկարգութեան մէջ՝  
 մարդ՝ առանց իր ուզելուն՝ անխելք կատարի  
 և ապիրատ տրամաբանութեան մը կանոններ  
 կ'ստեղծէ իրեն համար : Ասանկ վիճակ մը հա-  
 կառակ է՝ թէ փիլիսոփայութեան և թէ քը-  
 րիստոնէական զգացմանց :

Սթէ ես քարոզիչ ըլլայի, սրտատանջու-  
 թիւնը հալածելու հարկը յաճախ կը քարոզէի :  
 Մարդ մ'այս պայմանով միայն կրնայ բարի  
 ըլլալ : Արչափ խաղաղ էր իր անձին և այլոց  
 հետ Այն՝ որուն պէտք է ամենքս ալ նմա-  
 նինք : Չկայ հոգւոյ մեծութիւն, չկայ արդա-  
 րութիւն՝ առանց գաղափարներու չափաւո-  
 րութեան, առանց այնպիսի միտք մ'ունե-  
 նալու՝ որ այս կարճատև կենաց դիպուած-  
 ներուն վրայ աւելի ժպտելու տրամադրեալ  
 ըլլայ՝ քան զայրանալու : Բարկութիւնն այն  
 դժուարադէպ առթին մէջ միայն քիչ մ'ար-  
 ժէք ունի, ուր կը յուսացուի թէ կրնայ ան-  
 զգամ մարդ մը խոնարհեցընելու և անօրէնու-  
 թեան ճամբէն հանելու ծառայել :

Քերևա իմ գիտցածներէս տարբեր և նուազ  
 դատապարտելի բարկութիւններ ալ ըլլան և  
 Բայց իմ վրայ մինչև այն ժամանակը տիրող  
 զայրոյթը լոկ վշտակրութեան մ'արգասիք  
 չէր ։ Շատ ատելութիւն կը խառնուէր միշտ  
 հետը , բազում փափաք անիծելու , և մարդկային  
 ընկերութիւնը և այս կամ այն անձերը գար-  
 շելի գոյներով նկարելու ։ Այս բանը համարա-  
 բակ ախտ մ'է աշխարհիս մէջ ։ Մարդիկ ուրիշ-  
 ներն ատելնուն համար իրենք զիրենք լուա-  
 գոյն կը կարծեն ։ Ար թուի թէ ամեն բարե-  
 կամներ իրարու ահանջն ի վար այսպէս կըսեն ,  
 « Միայն իրար սիրենք մեր մէջը , և բարձրա-  
 ձայն գոչենք թէ մեզնէ դուրս մնացած բոլոր մար-  
 դիկը սինլըսր խուժան մ'են» Աթէ այսպէս ընելու  
 ըլլանք , մեզ կիսատառածներու տեղ կը դնեն ։  
 Զարմանալի բան է որ մարդիկ այսպէս կատա-  
 դութեան մէջ ապրելէ այնչափ հաճոյք զգան ։  
 Աերպ մը գիւցազնութիւն կը բանեցնեն այս  
 վարմունքիս մէջ ։ Աթէ այն անձը՝ որուն վրայ  
 երէկ բիւր անէծք կը տեղային՝ մեռնելու ըլլայ ,  
 խեղոյն ուրիշ մը կը փնտռեն անոր տեղ ։ Ա՞վ անի-  
 ծեմ այսօր ։ Ա՞վ նշուակ ըլլայ իմ ատելութեանս  
 Սա հրէշը . . . ։ Ա՞վ ուրախութեանս , տնա գտայ ։  
 Յիէք , բարեկամք , բզբտենք զայն ։

Այսպէս կերթայ աշխարհս , և առանց զինքը  
 վիրաւորելու կրնամ ըսել թէ գէշ կերթայ ։

## Պ Ա Ռ Ի Խ Ժ Ը .

Գրուած ստակալի սենեակէս տրտունջս շատ ա-  
նիրաւ չէր : Բարեբաղդարար լուազոյն սենեակ-  
մը սլարսգտելով՝ զայն ինձ տալու անակնկալ ա-  
ւետիար բերին ինձ :

Այս լաւրին վրայ պէտք չէր որ զմայլէի : — Շի-  
տակն ըսելով, չկրցայ առանց տրտմելու Մազ-  
դազինէն միտքս բերել : Ի՞նչ տղայամտութիւն :  
Միշտ մէկ բանի մը յարիչ, և այն ալ առանց  
ճաստատուն պատեառներու : Այն զէշ սենեակէն  
դուքս ելած տաւնս՝ վերջին անգամ մը դարձայ  
նայեցայ այն սլատին՝ որուն կը կըթնէի, մինչ-  
դեռ անոր ետևի կողմն ալ՝ թերևս քանի մը մատ-  
նաչտօի անդին՝ դժբաղդ մեղաւորութիւն կը կըրթ-  
նէր : Կուզէի անգամ մ' ալ լսել սա երկու սրտա-  
շարժ տողերը :

« Ո՛վ պիտի ետ դարձունէ թշուառին իր եր-  
ջանկու թիւնը : »

Աւնայն բաղձանք : Անտ նոր բաժանում մ' ալ իմ  
թշուառ կենացս մէջ : Զեմ ուզեր երկար խօսք

ընել ասոր վրայ, որպէս զի վրաս չխնդացնեմ՝  
բայց կեղծաւորութիւն ըրած կըլլայի եթէ չխօս-  
տովանէի թէ այս բաժանումը զիս քանի մ'օր  
ախրեցուց :

Գայած ժամանակս մնաք բարով ըսի իմ դրա-  
ցի խեղճ գողերէն երկուքին որ պատուհանն ելած  
էին : Պետք հոն չէր, բայց ընկերներէն իմանա-  
լով ան ալ պատուհանը ելաւ ու գիտ ողջունեց :  
Յետոյ սկսաւ երգել. « Ո՛վ պիտի ետ դարձունէ  
թշուառին » : Ասով զիս ծաղրե՞լ կուզեր արդեօք :  
— Գրաւ կը դնեմ որ այս հարցումը յիսուն հոգիի  
ընեմ՝ քառսուն և ինը « Այն » կը պատասխանեն :  
Սակայն ես կըյօժարիմ հաւատալու թէ բարեմիտ  
աստանան ինձ հաճոյ բան մ'ընել կուզէր անով :  
Գոնէ ես այսպէս մեկնեցի զայն, և վերջին նայ-  
ումած քով մը շնորհակալութիւնս յայտնեցի անոր :  
Ան ալ ձեռքը պատուհանին վանդակասիւներէն  
դուրս երկնցընելով՝ գլխարկը կերերցընէր ու  
նշան կընէր ինձ. բայց ես դարձայ սանդուղքն ի-  
վար իջնելու :

Նրբոր բակը մտայ, քաղցր մխիթարութիւն  
մ'զգացի : Պուլ—համբոս ճեմելիքին տակն էր :  
Զիս տեսաւ, ճանչեց, և կուզէր դիմացս վազել :  
Բանտապետին կիներ՝ չեմ գիտեր ինչ պատճառաւ՝  
զայն օձիքէն բռնեց ու դռնէն ներս վռնտեց :  
Շատ դժարս եկաւ զայն չկրնալ համբուրելուս  
վրայ, բայց ինձ դիմելու համար ցատկըտելը

սիրտս բերկրագին խանդադատանքով մը շար-  
ժեց : Այսչափ անուշ բան է սիրուիլը :

Այն օրը մեծ արկածներու օր մ'էր : Անկէց եր-  
կու քայլ անդին առաջին սենեակիս պատուհա-  
նին առջև հասայ, ուր Մելքիօր ճօյա կը նրս-  
տէր :

— « Ողջոյն, Մելքիօր, ըսի անցած ժամանակս :  
Գլուխը վեր առաւ, և դէպ ինձ վազելով՝ ողջոյն,  
Սիլվիօ, պատասխանեց : »

Աւա՛ղ, թոյլ չարուեցաւ ինձ վայրկեան մը հոն  
կանգ առնուլ : Գարձայ մեծ դրան տակը, փոքր  
սանդուղքէ մը վեր ելայ, և զիս փոքրիկ սենեակ  
մը դրին, որ ճօյայի սենեակին վրան էր, և բա-  
ւական մարուր էր :

Երբոր անկողինս հոն բերուեցաւ և պահապան-  
ները զիս մինակ թողուցին, առաջին գործս ե-  
ղաւ պատերն աչքէ անցունել : Համառօտ ծանօ-  
թու թիւններ կային գրուած, ոմանք մատիատով,  
ոմանք անուխով, ոմանք ալ սրածայր նիւթե-  
րով : Երկու տուն գեղեցիկ ստանաւոր երգ մը  
գտայ Գաղիերէն լեզուաւ որ գոց չընելուս վրայ  
կը ցաւիմ հիմա : Երկուքին ներքև ալ Դուխս նոր-  
ւանճիտյ ստորագրութիւնը գրուած էր : Սկսայ  
այն ստանաւորները երգել՝ խեղճ Մագդաղինէիս  
եղանակը կրցածիս չափ անոնց յարմարցընելով :  
Աւ ահա յանկարծ մօտէս ձայն մը նոյն տողերն  
սկսաւ երգել ուրիշ եղանակաւ մը : Երբոր լմըն-

ցուց , « կեցցե՛ս » գոչեցի : Բրայիս ողջունեց զիս  
հարցընելով թէ զազղիացի էի :

« Աչ , խաւացի եմ , և անունս Սիլվիօ Բելլիբօ  
է :

— Զրանչեաքա սա Ռիւիենիին հեղինակը :

— Այո՛ , նոյն իսկ : »

Ասոր վրայ՝ պատուասիրական շողորորթ գո-  
վեստ մը և բանասիրելու թեանս վրայ ալ սովորա-  
կան ցաւակցութեան խօսքեր ըրաւ ինձ :

Հարցուց թէ Բապիտոյ ո՞ր մասին մէջ ծնած էի :

« Բիւնօնի թէի Սալուճճա քաղաքը , ըսի : »

Հոս նորէն յարգանաց խօսքեր Բիւնօնի թեցուց  
բնասորութեանն ու մտքին վրայ և մասնաւոր գո-  
վեստ Սալուճճացի մեծահանճար մարդոց և յատ-  
կապէս Պօտինիի վրայ :

Այս գովեստները կարեւ և իրախուկ էին՝ ինչ-  
պէս որ կը վայլէ բարեկիրթ մարդու մը :

« Ինձ ալ ներեցէք , Պարոն , ըսի , հարցընել  
ձեզ թէ դո՞ք ով էք : »

— Այն որ ձեր քիչ մը առաջ երգած համառօտ  
երգը յօրինած է :

— Ի՛նչ կըսէք . այս պատին վրայ գրուած եր-  
կու գեղեցիկ ոտանասորները ձերն են :

— Այո՛ , Պարոն :

— Աւրեմն դուք . . . .

— Տարաբաղդիկ Նորմանտիոյ դո՛ւքսն եմ : »



## Գ Լ Ո Ւ Խ . Ժ Թ

—

Այս միջոցին բանտապետը մեր պատուհաններուն տակէն անցնելով՝ հրամայեց մեզ որ լուենք :

— Ի՞նչ տարաբաղդիկ Նորմանտիոյ դուքս է այս, կըսէի ես ինքնին մտածելով : Այս անունը զազգիոյ Լուդովիկոս ԺԶերորդ թագաւորին որդւոյն տրուած պատուանունը չէ՞ր մի, բայց այն խեղճ տղան մեռած է և հնար չէ երկրայիլ աւսոր վրայ : Աւրեմն իմ դրացիս այն յիմարներէն մէկն է որք զայն դեռ ողջ կարծեցընելու ելան : —

Արդէն քանի մ'անձեր ինքզինքնին Լուդովիկոս ԺԶերորդ ձեացուցին, բայց խաբէութիւննին յայտնուեցաւ . ի՞նչպէս կարելի է ասոր ալ հաւատալ : —

Թէպէտ և կը ջանայի երկրայութեան մէջ մնալ, այսու ամենայնիւ անյարգիւն լի անհաւանութիւն մը միշտ կը յաղթէր մտացս մէջ, և մինչև ցայսօր ալ շարունակ տիրած է մտքիս :

Սակայն որոշեցի որ խեղճը չվիրաւորեմ՝ որչափ  
 և գրարանութիւններ պատմելու ըլլայ ինձ :

Քիչ մը ետքը նորէն սկսաւ երգել և նորէն  
 խօսակցիլ սկսանք :

Իր անձին վրայ հարցում ընելու՝ պատաս-  
 խանեց թէ ինքն ստուգիւ Լուդովիկոս Ժէրորդն  
 էր, և սկսաւ չարաչար կշտամբել իր հօրեղբայր  
 Լուդովիկոս Ժէրորդը՝ որ իր իրաւունքը յափըշ-  
 տակեր էր :

— Բայց այդ իրաւունքդ ինչպէս չքալեցուցիր  
 Պուրպոնեաներուն Գաղղիոյ մէջ վերահաստատ-  
 ուած ժամանակը :

— Այն ժամանակը ես Պուլոնիա մնալու հար-  
 կադրուէր էի ծանր հիւանդութեամբ մը : Առող-  
 ջանալուս պէս՝ մեծ տէրութեանց ներկայացայ,  
 բայց եղածն եղած էր : Հօրեղբայրս վատութեամբ  
 չուզեց զիս հանչել, քոյրս ալ անոր հետ մէկ ե-  
 զաւ զիս ոտքի տակ առնելու : Միայն բարեսիրտ  
 Քօնտէի իշխանը թեւատարած ընդունեց զիս,  
 բայց անոր բարեկամութիւնը կարող չէր բան  
 մ'ընելու : Իրիկուն մը Փարիզի փողոցներուն մէջ  
 սիկարեաններ դաշոյններով վրաս յարձակեցան,  
 և հրաշիւք ազատեցայ ձեռու ընուն : Ժամանակ  
 որ նորմանախոյ մէջ թափառելէ ետև՝ Բուալիա  
 եկայ ու Մօտէնա նստայ : Հոնկէց նամակ նամա-  
 կի վրայ գրելով Ներոպայի թագաւորներուն, և  
 մասնաւորապէս Աղէքսանդր կայսեր որ խիստ

սիրայիր կերպով կը պատասխանէր ինձ, իրաւունքս ձեռք բերելու բոլոր յոյսս չէի կորսնցուցած, կամ գոնէ՛ եթէ քաղաքականութիւնն իմ իրաւունքս Գաղղիոյ գահին զոհել պահանջէր, պատշաճ հրիտակ մը ձեռք բերել կը յուսայի : Գայց զիս բռնեցին, Մօտէնայի դքսութեան սահմանագրութիւն տարին և Աւստրիոյ կառավարութեան ձեռքը մատնեցին : Ահա ութ ամիս է որ հոս թաղուած եմ, և Աստուած զիտէ ե՛րբ պիտի դուրս ելնեմ :

Այս խօսքերուն հաւասար շրնծայեցի, բայց հոն թաղուած ըլլալը ճշմարտութիւն մ'էր և խորին կարեկցութիւն մ'ազդեց ինձ :

Ազաչեցի որ իր կենաց համառօտ պատմութիւնն ընէ ինձ : Մի ըստ միտջէ պատմեց այն ամեն մասնաւոր անցքերը՝ որ արդէն զիտէի Լուդովիկոս ժեշտորդին վրայ • վատ կոշկակար Սիմօնին հետ դրուիլը, իր դժբաղդ մօրը Մարիամ Անթօանէթ թագուհւոյն վարուցը դէմ նիւթուած սոսկալի զրպարտութեան մը համար իրմէ վկայութիւն առնուիլը, և այլն և այլն : Վերջապէս անելցուց թէ զիշէր մը եկան զինքը բանտէն վերցուցին, իր տեղը Մաթիւրէն անուամբ ապուշտղայ մը դնելով զինքը փախուցին : Քառաձիկառք մը կ'սպասէր փողոցը, ձիերուն մէկը փայտաշէն մեքենայ մ'էր, զինքն անոր մէջ պահեցին : Յաջողութեամբ մինչև Ռէն հասան, և սահ-

մանն անցնելուն պէս' . . . զօրապետը ( անունն ըսաւ' բայց միտքէս ելած է) որ զինքը ազատէր էր' ժամանակ մ'իրեն դաստիարակութիւն ու հայրութիւն ըրաւ, ետքը զինքը Ամերիկա դրկեց համ տարաւ: Հոն' այս գահազուրկ պատանի թագաւորը բազմին հազար կերպ յեղականութեանցը ենթակայ եղաւ. անապատներուն մէջ անօթութիւն քաշեց, դինուոր եղաւ, Արեգիլիայի թագաւորին արքունեաց մէջ պատուով և երջանիկ ապրեցաւ. յետոյ զրպարտուեցաւ, հարածեցաւ, փախչելու հարկադրեցաւ, Նաբոլէոնի թագաւորութեան վերջին ժամանակները Ներսայա դարձաւ, Նաբոլիի մէջ բանտարկուեցաւ: Յովակիմ Միւրայէն (որ այն ժամանակը Նաբոլիի թագաւոր էր). ետքը երբոր ազատեցաւ ու Գաղիոյ գահը պիտի խնդրէր, Առլոնիայի մէջ այն աղետալի հիւանդութենէն բանուեցաւ, որուն միջոցին Լուդովիկոս Փէրորդ Գաղղիոյ թագաւոր պատկուեցաւ:

## Գ Լ Ո Ւ Ս Ի .

—

Այս վեպն այնպէս հաւասարի կերպով մը կը պատմէր որ մարդ կը հիանար: Չէի կրնար հաւատալ, բայց կ'զմայլէի: Գաղղիոյ յեղափոխութեան ամեն անցքերուն քաջ ծանօթութիւնունէր, բնական ճարտասանութեամբ մը կը խօսէր անոնց վրայ, և ամեն առթիւ մանր հետաքրքրական պատմութիւններ մէջ կը բերէր: Ստուած քին մէջ գինուորական տե մը կար, բայց զուրկ չէր բարեկիրթ ընկերութեանց մէջ սովորական եղած վայելչութեանէն:

«Ներեցէք, ըսի, որ առանց արարողութեան վարուիմ ձեզի հետ և պատուանուններով ձեզ չկոչեմ: — Նս ալ ատանկ կը ժամաքիմ, ըսաւ: Արած ճախորդութիւններս գոնէ սնտախոտութեանց վրայ ծիծաղիլ սովրեցուցին ինձ: Հաւատացէք որ առաւել պատիւ կը համարիմ ինձ մարդ ըլլալ' քան թէ թագաւոր: »

Առաւօտ և իրիկուն երկարօրէն կը խօսակցե-  
ինք . և թէպէտ զիտէի որ կատակերգութիւն  
մ'էր խաղացածը , այսու ամենայնիւ իր սիրտը  
բարի աննենգ և առաքինութեան յօծարամէտ  
կերևէր ինձ : Քանի քանի անգամ մտարեքցի  
ըսել իրեն . « Ներեցէք , կուզէի հաւատալ թէ  
զուք Նուզովիկոս Փէրօրդն էք , բայց անկեղծու-  
թեամբ կը խոստովանիմ թէ միտքս հակառակին  
համոզուած է . եկէք անկեղծարար հրաժարեցէք  
այդ կեղծիքէն : » Սւ մտօքս զեղեցիկ ճատ մը կը  
պատրաստէի ամեն կերպ ստութեանց՝ մինչև  
անգամ խիստ անմեղ երևցածներուն ունայնու-  
թեանը վրայ :


Բայց օրէ օր կըյապաղէի՝ սպասելով որ մտեր-  
մութիւննիս տակաւին քանի մ' աստիճան ա-  
ւելնայ , և երբէք չհամարձակեցայ դիտաւորու-  
թիւնս ի գործ դնել :

Նրբ կը խորհիմ այս երկչոտութեանս վրայ , եր ,  
բեմն զայն կարդարացընեմ՝ մարդավար ըլլալու  
հարկով , սիրտ չկտարելու պարկեշտ երկիւզով ,  
ինչ զիտնամ : Բայց այս արդարացումը զիս գոհ  
չընէր , և չեմ կրնար չխոստովանիլ որ առաւել  
գոհ պիտի ըլլայի ես ինձմէ՝ եթէ մտքիս մէջ  
պատրաստած զեղեցիկ ճառս կոկորդիս մէջ մնա-  
ցած չըլլար : Սուտիմը հաւատալ ձեւացընելը վա-  
տարտութիւն է , և կարծեմ որ մէկ մ'ալ չեմ  
ընէր :

Այն , վատասրտութիւնն : Անշուշտ սրչափի վա-  
 փուկ յառաջարաններով բարեքենք , ծանր է ը-  
 սել մէկու մը թէ « Չեմ հաւատար խօսքիդ » :  
 Պիտի նեղանայ . իր բարեկամութեան բերկրու-  
 թիւնը պիտի կորսնցընենք . թերևս թշնամանք  
 ալ պիտի տեղայ գլխունուս : Բայց ինչ որ ալ կոր-  
 սընցընենք , այս վարմունքը կեղծաւորութենէն  
 պատուաւոր է : Եւ թերևս մեզ նախատող թըշ-  
 ուառականը տեսնելով որ իր սուտը չենք կլներ'  
 վերջապէս մտքովն իրաւունք կուտայ մեր ան-  
 կեղծութեանը , և խորհրդածելով ըրածին վրայ  
 կը զղջայ :

Պահապաններն հակամէտ էին հաւատալու թէ  
 ստուգիւ Նուդովիկոս Փէրորդն էր , և արդէն շատ  
 բազդի փոփոխութիւններ տեսած ըլլալով , կը  
 յուսային որ օր մը կրնար Գաղղիոյ գահը ելնել ,  
 և այն ժամանակ իրենց ծառայական անձնուի-  
 րութիւնը յիշել : Արդարև զայն փախցընելու  
 չէին նպաստեր , բայց ուրիշ ամեն բաղձանացն  
 ակնածութեամբ կը ծառայէին :

Այս ակնածութեան շնորհիւ պատիւ ունեցայ  
 այս մեծ անձը տեսնելու , 40—43 տարեկան մի-  
 ջահասակ և գէր մարդ մ'էր , և բոլորովին պուր-  
 պանեան դէմք մ'ունէր : Այս պատահական նը-  
 մանութիւնն է թերևս որ այս տխուր դերը խա-  
 դալու թելադրեր էր զայն :



## Ք Լ Ա Ի Խ Ի Ա .

Պէտք է որ մարդկային յարգանաց անարժան մէկ ուրիշ գործս ալ խոստովանիմ : Արացիս անաստուած չէր , մինչեւ անգամ երբեմն կըրօնական զգացմանց վրայ ալ կը խօսէր՝ իբրեւ այնպիսի մարդ մը՝ որ անոնց յարգը կը ճանչէր և օտար չէր անոնցմէ . այսու ամենայնիւ շատ մը կանխակալ անիրաւ կարծիքներ ունէր Քրիստոնէութեան դէմ , որուն ճշմարիտ էութիւնն ոհողին նկատելէ աւելի՝ զեղծումները կը նըկատէր : Այն հարեանցի փիլիսոփայութիւնը՝ որ Պաղղիոյ մէջ յեղափոխութենէն առաջ և ետքը մտքերը գրաւեր էր՝ այս մարդն ալ շլացուցեր էր : Կը կարծէր թէ մարդ մը՝ Աւետարանի կըրօնքին չհետևելով՝ աւելի սրբութեամբ կրնար զԱստուած սրաշտել : Առանց խորին ծանօթութիւն մ'ունենալու Քօնստիլեաքի և Քրասիի , զանոնք կը յարգէր իբրև մեծ փիլիսոփայներ , և կերևակայէր թէ վերջինը բնագանցութեան ամեն հնարաւոր խնդիրները լուծեր էր :



Յս' որ աւելի յառաջ վարած էի փիլիսոփայութեան ուսումս, որ փորձառական վարդապետութեան տկարութիւնը կը զգայի, որ քննադատութեան անհեթեթ օխալները կը նանչէի, որոց օգնութեամբ Աօլթէնի դարը Քրիստոնէութիւնը բամբասել ուզեր էր, ես' որ կարգացեր էի Աէնէ և ուրիշ մեծ մատենագիրներ որ այն սուտ քննադատութեան դիմակը վար առին, ես' որ համոզուած էի թէ մարդ մը բանաւորապէս չկրնար զՍատուած ընդունիլ' և Սաւատրանը մերժել, ես' որ ցած բան մը կը համարէի հակաքրիստոնէական կարծեաց հոսանքին տեղի տալ, և չկրնալ բարձրանալ մինչև նանչելու թէ Ասթողիկէ հաւատքը' երբոր ծաղրածութեան չառնուի, պարզ և վսեմ է, արդ' ես' այս համոզումս մարդկային ակնածութեան զոհելու ցածութիւնն ունեցայ: Նրացիիս ծաղրարանութիւնները զիս կը շփոթեցընէին' թէ և անոնց թեթեւութիւնը լաւ կը հասկընայի: Աւատի ծածկեցի հաւատքս, վարանեցայ, հարցուցի ես ինձ թէ հարկ էր կամ ոչ' դէմ իս օսիլ անոր. ըսի թէ անօգուտ էր, և ինքզինքս ասով արդարացած համարել ուզեցի:

Աստուծիւն, վատուծիւն: Նոնչ փոյթ է յարգ գտած կարծիքներուն զոռոզութիւնն ու նամարտակութիւնը' երբոր հիմ չունին: Եւ մարիտ է որ անժամ և անխորհուրդ նախանձաւորութիւնն աւելի կրնար զրգուել չհաւատացողը. բայց ներ-

քին համոզմամբ կարեւոր նշմարաւթիւն նանչ-  
ցուած բան մ' անկեղծարար եւ միանգամայն  
համեատութեամբ խոստովանիլն անհրաժեշտ  
պարտք մ' է, թէ և հաւանութիւն չգտնելէ զատ'  
ծաղու ալ հանդէպելու ըլլայ: Ասանկ ազնուական  
խոստովանութիւն մը միշտ կրնայ ըլլալ' ա-  
ռանց ձախողարար քարոզչի մը դէմք առնելու:

Այն, կարեւոր նշմարաւթիւն մը խոստովա-  
նիլն ամեն ժամանակ պարտք մ' է. վասն զի թէ  
և անմիջապէս նանչուիլը չյուսացուի, գոնէ կըր-  
նայ միտքերն այն կերպով պատրաստել, որ օր  
մ' անոնց դատումն առաւել անկողմնապահ ընէ,  
և հետեարար լուսոյ յազթու թիւնն ապահովէ:



## Ք Լ Ո Ւ Խ Ի Ք .



Սենեակիս մէջ ամիս մ' և քանի մ' օր մնացի .  
1821 յետրուար 18էն 19 լուսնալու գիշերը'  
փակաղակներուն ու բանալիներուն շառաչիւնէն  
արթնցայ, և տեսայ որ քանի մը մարդիկ մտան

սենեակս լապտերով մը: Մէկէն ի մէկ այնպէս  
թուեցաւ ինձ թէ զիս խողխողելու հուզային և  
Բայց երբոր անհանգիստ սրտով անոնց գէմքը կը  
նկատէի, Պ . . . կոմսը քաղաքավարութեամբ քո-  
վրս եկաւ և ազաչեց որ շուտով հագուիմ ու եր-  
թանք:

Այս անակնկալ լուրը զիս ապշեցուց և յիմա-  
րարար յուսացի որ զիս Բիէմոնթէի սահմանա-  
զլուխը պիտի տանէին: Հնարաւոր էր որ այն-  
չափ մեծ փոթորիկ մ'այսպէս փարատէր: Իմ  
քաղցրիկ ազատութիւնս պիտի գտնէի: Սիրելի  
ճնողքս, եզրայրներս, քոյրերս պիտի տեսնէի:

Այս պատիր մտածութիւնները վայրկեան մը  
սիրտս յուզեցին: Շտապով հագուեցայ և ուղե-  
կիցներուս ետևէն գացի՝ առանց խի վերջին մնաք  
բարով մ'ըսելու դրացիիս: Թուեցաւ ինձ թէ  
ձայնը լսեցի, և ցաւեցայ որ չկրցայ պատասխա-  
նել:

« Ու՞ր կերթամք, ըսի կոմսին, երբոր կառք  
կը նստէինք անոր և սլահասլան զինւորաց պաշ-  
տօնակալի մը հետ:

— Ձեմ կրնար ըսել ձեզ մինչև որ Միլանէն  
մղոն մը հեռանանք: »

Տեսայ որ կառքը Աէրչէլինայի դրան կողմը  
շէր երթար, և յոյսերս մարեցան:

Նուեցի: Այն զիշերը խիստ զուարթագեղ էր,  
և լուսնի սլայծառ լոյս մը կար: Աը նայէի այն

սիրական փողոցներուն որոց մէջ այնչափ տարիներ զոհ և երջանիկ պարտէր էի: Ար նայէի տուներուն, եկեղեցիներուն: Ամենն ալ հազարու մէկ հանոյալան յիշատակներ միտքս կը ձգէին:

Ո՛վ հեմալիք Արևելեան դրան, ս՛վ պարտեզք հասարակաց. որոց մէջ այնչափ պարտէր էի Չոքոբօի հետ, Մօնթիի հետ, Լօուիլիքօ տի Արեմէի հետ, Բիէթրօ Պօրսիէթրիի հետ, Բօրրօի և որդւոցը հետ, ուրիշ այնչափ սիրելի անձանց հետ, կենսալի և յուսապատար խօսակցութիւններ ընելով: Ո՛հ, երբոր կըսէի մտքէս թէ ձեզ վերջին անգամ տեսնելիս էր, երբոր ձեր շուտ շուտ աչքիս առջեկն հեռանալը կը տեսնէի, կզգայի որ ձեզ սիրած էի և տակաւին կը սիրէի: Երբոր քաղաքին դռնէն դուրս ելանք, փեղոյրս աչքիս վրայ քաշելով լացի՝ առանց քովիններս զիս տեսնելու:

Երբոր մզոնէն աւելի հեռացանք Միլանէն, «Վարժեմ Վէրոնա կերթանք» ըսի Պ. . . կոմսին:

— Աւելի հեռու, պատասխանեց. Վենետիկ կերթանք, ուր ձեզ յատուկ յանձնաժողովի մը պիտի յանձնեմ: »

Վերջուպէս շարունակ երթալով՝ փետրուար 20ին Վենետիկ հասանք:

Առջի տարւոյն սեպտեմբեր ամսոյն մէջ՝ բանտարկութենէս ամիս մ'առաջ՝ Վենետիկ էի, և քաղմաթիս ընկերներով ուրախ հաշ մ'ըրեր էի Լաւնայի պանդոկը: Չարմանալի բան: Առման ու

պահապան գինուորրը զիս ուզղակի նայն պանդոկը  
տարին :

Պանդոկին սպասուորրը դող ելաւ զիս տեսնե-  
լով՝ երբ նշմարեց որ գորականներու ձեռք էի ,  
թէպէտ պահապան գինուորն ու իր երկու արբան-  
եակներն ինքզինքնին իմ ծառայներս կարծեցնե-  
լու համար ծպտեալ էին :

Սյս հանգիպման վրայ ուրախացայ՝ անտարա-  
կոյս ըլլալով որ սպասուորն իմ հոն ըլլալս շատ  
մարդոց կիմացընէր :

Ճաշ ըրինք , յետոյ զիս առին Տօթին պալատը  
տարին , ուր հիմա դատաստանական ատեանը կը  
նստի : Բնօրրուաթիներուն սիրելի կամարա-  
կապներէն ու Տլօրիանի սրճարանին առջևէն  
անցայ , ուր նախնիթաց զարնան ժամանակը զե-  
զազուարճ երեկոյներ անցուցեր էի : Ծանօթնե-  
րէս մէկն ալ չտեսայ :

Նաքը . . . Բիսածձէթթայէն ( փոքր հրապա-  
րակ էն ) անցանք : Նայն հրապարակին վրայ նա-  
խընթաց սեպտեմբեր ամսոյն մէջ մուրացկան մը  
սա զարմանալի խօսքն ըսեր էր ինձ . « Աը տես-  
նեմ , Պարոն , որ դուք օտարական էք , բայց չեմ  
հասկընար թէ ինչո՞ւ համար ձեր ազնուութիւնը՝  
ինչպէս նաև ամեն օտարականք՝ այնչափ կ'զմայ-  
լին այս հրապարակէն : Սյս տեղն աղեսալի վայր  
մ'է ինձ համար՝ և ես տո հարկի միայն կանցնիմ  
հոսկէ :

Հոս ձեզ արկած մը սլատահած է արդեօք :


— Այո՛ , պարոն , սարսափելի արկած մը , և միայն ինձ չէ : Աստուած պահէ քեզ այնպիսի արկածէ : »

Եւ շուտով հեռացաւ քովէս :

Հիմա կրկին այն տեղէն անցած ժամանակս անհնար էր որ մուրացկանին խօսքը միտքս չըգար : Նոյն հրապարակին վրայ էր որ հետևեալ տարին կատափնարանը ելայ՝ մահուանս վճիռը և այն վճռոյն հնգետասանամեայ խիստ քանսարգելութեան փոխարկիլը լսելու :

Նթէ գլուխս քիչ մ'աւելորդապաշտ գազափարներով շփոթած ըլլար , մեծ համարում պիտի ունենայի այն մուրացկանին վրայ՝ որ այնպէս ազդու կերպով գուշակեր էր թէ այն տեղն աղիքսալի վայր մ'էր : Այս իրողութիւնն անսովոր դէպք մ'ըլլալուն համար միայն կը յիշեմ :

Պալատը ելանք , Պ . . . կոմսը դատաւորներուն խօսեցաւ ու զիս բանտապետին ձեռքը յանձնեց . յետոյ կարեկից համբոյրներով բաժնուեցաւ ինձմէ :



## ՔՂ ՈՒ Խ Ի Ք .

Քանտապետն առջև ինկաւ ու ես լռութեամբ  
 ետևէն գացի : Քանի մը նրբաշաւիղներէ և քա-  
 նի մ'ալ սրահներէ անցնելէ ետև՝ փոքր սանդու-  
 ղէ մը վեր Ասպարներ ըսուած տեղն ելանք, որ  
 Վենետիկի հասարակապետութեան ժամանակէն  
 'ի վեր քաղաքական յանցաւորաց յատկացեալ  
 հռչակաւոր արգելանոց մ'էր : Հոն բանտապետն  
 անունս տուամարի մը մէջ արձանագրեց ու ինձ  
 յատկացեալ սենեակի մը մէջ զիս փակեց : Տոժի  
 պալատին այս վերին մասը՝ բոլորովին կասպարով  
 ծածկուած ըլլալուն համար՝ Ասպարներ կը կոչեն :

Սենեակս մեծ սլատուհան մ'ունէր երկաթեայ  
 հաստ վանդակասիւներով, և Ս. Մարկոսի եկեղե-  
 ցոյն յարկին վրայ կը նայէր, որ նոյնպէս կասպա-  
 րով ծածկուած էր : Նկեղեցիէն անդին հրապա-  
 րակին հեռաւոր ծայրը կը տեսնէի, և ամեն  
 կողմ անթիւ գմբեթներ ու զանգակատուներ : Ս.  
 Մարկոսի հոյաշէն զանգակատունը եկեղեցւոյն  
 երկայնութեանը չափ հեռու էր ինձմէ, և կատա-

րը զանուող մարդոց խօսիլը կը լսէի՝ եւրբոր  
 ձայներնին բիչ մ'ամուր հանէին : Յիւզեցուոյն  
 ձախ կողմն ալ՝ պարտախն մեծ բակին մէկ մասը  
 և մուտքերէն մէկը կը տեսնուէր : Բակին այս  
 մասին մէջ հասարակաց ջրհոր մը կար՝ ուր ան-  
 դադար մարդիկ կուգային ջուր քաշելու : Բայց  
 իմ բանաստ այնչափ բարձր էր, որ վարի մարդիկը  
 մանր ազայք կերեւէին ինձ, և ձայներնին ալ մի-  
 այն ե թէ պոռային՝ կրնայի լսել : Մնաց որ հոս  
 Միլանի բանուերէն աւելի առանձնու թեան մէջ  
 կը գտնուէի :

Բատուատանական հարցափորձս յատուկ յանձ-  
 նաժողովիմը յանձնուած էր : Այս հարցափորձին  
 հողերն առաջին օրերը մեծ տխրութիւն մ'ինձ  
 պատճառեցին, որ առաւելագոյն առանձնու թեան  
 մը դժնդակ զգացումովն աւելի կը ծանրանար  
 անշուշտ : Սակեց զատ, ընտանիքէս աւելի հե-  
 աացած էի, և ամենեին լուր չէի ստանար ա-  
 նոնց վրայ : Տեսած նոր դէմքերս հակակիւր չէին  
 ինձ, բայց այնպիսի ծանրութիւն մը կը ցուցը-  
 նէին որ գրե թէ ահարկութեան կը հասնէր : Համ-  
 բար չափազանց մեծ ցուցած ըլլալով Միլանցեոց  
 և Բատուիոյ միւս մասերուն ազատութեան համար  
 ըրած դաւադրութիւնները, կը թուէր թէ զիս այն  
 խըրրութանց ամենէն մեղապարտ շարժիչնե-  
 րէն մէկը կը համարէին : Գրագիտական փոր-  
 ցիկ համբաւս ծանօթ էր բանաստղետին, կնոջը :



աղջկանը, երկու որդուցը, և մինչև երկու սլահա-  
սլաններուն, որք ամենն ալ թերևս ողբերգու թեան  
մը հեղինակը կախարդի պէս բան մը կը կար-  
ծէին :

Լուրջ, կասկածոտ, և պատմու թիւնս մանրա-  
մասնաբար ինձմէ իմանալու հետաքրքիր էին .  
բայց մեծ տկնածու թեամբ կը վարուէին հետս :

Առաջին օրերն անցնելէ ետե ամենն ալ ըն-  
տելացան և տեսայ որ բարի մարդիկ էին : Ամե-  
նէն աւելի կինը բանտապանի վարժունք և բնա-  
ւորութիւն ցոյց կուտար : Քառսուն տարեկանի  
մօտ էր, դէմքն ու խօսուածքը խիստ չոր, և  
կը թուէր թէ իր զակրներէն զատ ուրիշի հա-  
մար բարեսրտութիւն ունենալու կարող չէր :

Սովորու թիւն ունէր առաւօտները և իրիկուան  
ճաշէն ետե ինձ խահուէ բերելու, ջուր, կտա-  
ւիք, և սյն բերելու : Սովորաբար հետը կու-  
գային աղջիկը՝ որ տասն և հինգ տարեկան կար,  
և առանց զեղեցիկ ըլլալու՝ սրտագրաւ նայուածք  
մ'ունէր. նոյնպէս երկու մանչ աղայքը, մէկը տաս-  
ներեք տարեկան, միւսը տասն : Նորք մօրերնուն  
հետ կը մեկնէին, և սենեակիս դուռը գոցելու  
տուն՝ այս երեք մանկամարդ դէմքերը մեզմով  
ետենին կը դառնային ու ինձ կը նայէին : Քան-  
տապեար՝ զիս հարցափորձի յանձնաժողովին  
տանելու համար միայն կուգար : Պահասրանները  
քիչ անգամ կուգային սենեակս, որովհետեւ իրենց

յանձնուած էր վարի դատիկոնի ոստիկանութեան բանտերուն հսկողութիւնը, որոց մէջ ջատ գողեր կը գտնուէին միշտ :

Այս պահապաններէն մէկը եօթանասուն տարին անցուցած ծերունի մ'էր, բայց զանազան բանտերուն սանդուղներն անդադար իջնել ելնելու տարժանելի արհեստին դեռ յարմար էր : Միւսը քսաննչորս քսաննեօնգ տարեկան երիտասարդ մ'էր, աւելի յօծարամիտ իր սիրահարութիւնները պատմելու՝ քան իր սլաշտօնը կատարելու :



### Ք Ա Ո Ւ Խ Ի Ք .

Ո՛հ, այն, տէրութեան դէմ ոճրագործութեամբ ամաստանեալ մարդու մը դատաստանին սրտատանջութիւնները սոսկալի են, Ո՛րչափ կը վախնայ մարդ որ ուրիշներու վնաս չտայ : Ո՛րչափ կը տաղնապի մաքառելու խել մ'ամբաստանու-

Թեանց և խել մը կասկածներու դէմ . սրչափ  
կը մեծնայ գտանգը՝ երբոր ամբաստանութեան  
պատճառ տուող դէպքերն օր քան զօր տելի գէշ  
կերպով կընճռտին , եթէ դատաստանը շուտ  
չմննայ , եթէ հետզհետէ ուրիշ մարդիկ բռնը-  
ւին , եթէ նորանոր անխոհմութիւններ երևան  
ելնեն՝ ոչ միայն անձանօթ մարդոց՝ այլ և նոյնիակ  
ընկերութեան անդամ եղող անձանց կողմանէ :

Ես միտքս դրի որ քաղաքականութեան վրայ  
չխօսիմ . ուրեմն պէտք է որ այս դատաստանին  
վերաբերեալ պատմութիւնները մէկ կողմ ձգեմ :  
Այս կըսեմ միայն թէ շատ անգամ երկար ժա-  
մեր հարցափորձի մէջ անցունելէս ետե՛ւ այն աս-  
տիճան զլուխս տարցած , այն աստիճան զայրա-  
ցած կը դառնայի սենեակս , որ եթէ կրօնի ճայ-  
նը և սիրելի ծնողացս յիշատակը զիս չբռնէին՝  
ինքզինքս կ'սպաննէի :

Այն սրտի անդորրութիւնը որ Միլանի բան-  
տըն եղած ժամանակս ինձ սովորոյթ ըրած կը  
կարծէի , բոլորովին կորսուեր էր : Քանի մ'օրի  
չափ յոյսս կտրեցի զայն նորէն գտնելէ , և այն  
քանի մ'օրերը դժոխային օրեր եղան ինձ : Աղօ-  
թելէ դադրեցայ . Աստուծոյ արդարութեանը վը-  
րայ երկրայեցայ . մարդիկ ու տիեզերքն անիծեցի ,  
և առաքինութեան անօգուտ ըլլալուն վրայ ա-  
մեն հնարաւոր խմաստակութիւնները նորէն  
մտքիս մէջ յեղյեղեցի :

Տարարազդ և զայրացեալ մարդը սարսափելի  
 ճարտարմտութիւն մը կունենայ իր նմանները և  
 նոյն իսկ Սրարիչը զրպարտելու, Բարկութիւնն  
 առ հասարակ կարծուածէն շատ աւելի անխիղճ  
 է, շատ աւելի եղեռնագործ է, Եւ որովհետեւ  
 մարդ մը չկրնար ամբողջ շարաթներ առաւտէն  
 մինչև իրիկուն շարունակ մտնել, և ըստ որում  
 մարդուս հոգին ամենակատարի մոլեգնութեամբ  
 յուզուելէ ետև հանգստի միջոցներ կունենայ, այն  
 միջոցներն ալ սովորաբար մտքին բարոյական  
 անկարգութեան տպաւորութիւնը կը զգան, Այն  
 միջոցին մարդ ինքզինք անդորրացած կը կարծէ,  
 բայց նենգաւոր և ամբարիշտ անդորրութիւն մ'է  
 այն, անգութ և առանց ազնուութեան վայրենի  
 ծիծաղ մը, անկարգութեան արբեցութեան և  
 հայհոյանաց սէր մը:

Այս վիճակին մէջ եղած ատենա ժամերով կեր-  
 գէի այն կերպ զուարթութեամբ մը՝ որ բոլորո-  
 վին ամուլ էր բարի զգացումներէ, սենեակս  
 ով որ մտնէր՝ կը ծաղրաբանէի հետը, և կը  
 ջանայի ամեն բան գռեհիկ փիլիսոփայու-  
 թեամբ՝ շնականներու (\*) փիլիսոփայութեամբ  
 նկատել:

---

(\*) Հին ժամանակի Յոյն փիլիսոփաներու աղանդ մ'էր, և  
 շուր կամ շնականք կը կոչուէին, որովհետև շան պէս անամօթ  
 էին և ընկերական ամեն մարդավարութիւնները կ'արհամար-

Այս ողբալի տենողը բիչ տնեց, վեց կամ եօթն  
օր :

Ս. Գիրքս փոշխով ծածկուեր էր : Բանտապե-  
տին տղոցմէն մէկը զիս շոյելով ըսաւ . «Ար տես-  
նեմ որ այդ անշան գիրքը չկարդալնէդ ի վեր այն-  
չափ տրտում չէք :»

— Քեզ այդպէ՞ս կը թուի» ըսի :

Եւ Ս. Գիրքը ձեռքս առնելով՝ փոշին սրբեցի  
թաշկինակովս . յետոյ ըստ դիպաց բանալով՝  
հետեւեալ հատուածը աչքիս հանդիպեցաւ .  
«Ասաց և առ աշակերտսն իւր . Ոչ է մարթ չգալ  
գայթակղութեան, բայց վնայ այնմիկ յոյր ձեռն  
գայցէ : Կաւ էր նմա՝ եթէ վէճ երկանաքար  
կախէր զպարանոցէ նորա և անկանէր ի ծով,  
քան թէ գայթակղեցուցանէր զմի ոք ի փոքրը  
կանցս յայսցանէ : »

Այս խօսքերուն պատահիլս խորին տպաւո-  
րութիւն մը ըրաւ ինձ, և շառագնեցայ մտածե-  
լով որ տղան Ս. Գրքիս փոշխով ծածկուած ըլ-

հէին: Կըսէին թէ մարդ մը չարագործութիւն ընելէ միայն պէտք  
է ամաչէ : Հանդերձի զարդարանքները, հարստութիւնը, ար-  
ուեստներն ու գիտութիւնները սաստիկ կատէին : Բոլոր հա-  
գուստնին սրտառատուն վերարկում էր, և բովանդակ գոյքեր-  
նին ալ մախաղ մ'և ցուպ մը : Անուանի Դիոգինէս փիլիսո-  
փան այս աղանդէն էր : Ծախ . Թարգմ .

լալէն նշմարեց որ զայն ալ չէի կարդար ,  
 և խորհեցաւ որ Աստուծոյ նկատմամբ աւելի  
 անսիրոյթ ըլլալովս՝ առաւել զուարթարարոյ  
 եղեր էի :

«Սեղկատանկ տղայ , ըսի իրեն բարեկամական  
 յանդիմանութեամբ մը և ցաւելով զինքը զայ-  
 թակղեցընելուս վրայ . այս անշահ զէրք չէ և  
 քանի մը օրէ ի վեր որ չեմ կարդար՝ աւելի գէշ  
 եմ : Նրբոր մայրդ քեզի թոյլ կուտայ վայրկեան  
 մը քովս կենալ , տխրութիւնս վանելու կտշխա-  
 տիմ . բայց եթէ գիտնայիր ո՛րչափ կը տիրէ  
 վրաս երբքը մինակ կը մնամ և մոլեգնարար  
 երգելս կը լսես » :



## Ք Լ Ո Ւ Խ Ի Ե .



Տղան դուրս ելեր էր , բերկրութիւն մը կ'զգայի  
 Ս . Գիրքս նորէն ձեռքս առնելուս և խոստովա-  
 նելուս վրայ թէ առանց անոր աւելի գէշ էի ես :  
 Ար թուէր ինձ թէ յանիրաւի թշնամանեալ

ազնիւ բարեկամի մը գոհացուցիչ հատուցում մ'ըրի և հաշտուեցայ հետը :

— Ձեզ թողուցեր էի, Աստուած իմ, գոչեցի, վատթարացե՛ր էի, կարծեր էի թէ իմ յուսակորոյս վիճակիս՝ շնական անամօթ ծիծաղ կը վայլէր : —

Այս խօսքերն անսպասե լի սրտայուզութեամբ մ'արտասանեցի, Ս. Քիրքն աթոռակիս վրայ դրի . ծնկան վրայ եկայ կարդալու համար, և ես՝ որ խիստ դժուարու կուլամ, արտաուք թափել սկսայ :

Այն արտաուքն հազարապատիկ քաղցր էր քան քիչ մը առջի վայրագ ու բախութիւնը : Նորէն կ'զգայի զԱստուած, կը սիրէի զայն . ինքզինքս ցած ցունելով զինքը նախատելուս վրայ կ'ապաշաւէի . և խօսք կուտայի որ ալ երբէք չզատուիմ իրմէ . . . ոչ երբէք :

Ո՛հ, անկեղծաբար կրօնի դառնալը սրչափ կը մխիթարէ ու կը բարձրացընէ մարդուս հոգին :

Վարդացի և լացի մէկ ժամէն աւելի . ետքը ելայ կանգնեցայ լի վստահութեամբ թէ Աստուած հետս էր և մոլորմանս ներեր էր : Այն ժամանակ խիստ փոքր բաներ երեցան ինձ դժբաղդութիւններս, դատաստանին տազնապնէրը, կառափնարանին հաւանականութիւնը : Ուրախ եղայ կրած տառապանացս վրայ, վասն

զի պարտաւորութիւն մը կատարելու առիթ մ'էր այն ինձ, վասն զի համբերութեամբ տառապելուով՝ Տէրոջը կը հնազանդէի:

Ս. Գիրքը, զոհութիւն Աստուծոյ, զիտէի կարգաւ: Այն ժամանակը չէր ուր զայն Առթէռի փրկուն քննողութեամբը կը դատէի՝ ծիծաղելով անոր ասացուածներուն վրայ, որք ոչ ծիծաղելի են և ոչ սխալ, բայց միայն երբոր ընթերցողը՝ կամ տգիտութեամբ և կամ չարամտութեամբ անոնց խմատին հասու չըլլայ: Բացայայտ կը տեսնէի թէ այս գիրքը քանի քանի իրաւամբ սրբութեան և հետեաբար ճշմարտութեան օրինագիրք մ'է, որչափ հակառակ է ողջամիտ փիլիսոփայութեան՝ այն դիւրագոյն ծութիւնը՝ որ քիչ մը սքի թերութիւններէ կը վիրատորի, և զեզեցկայարմար ձևեր շունեցող ամեն բան անգոսնելու գոռոզութեան կը նմանի, որչափ անտեղի բան է երևակայել թէ այսպիսի երկիւղածութեամբ պատուեալ զրոյց հաւաքածոյ մը կրնայ անվաւեր ծագում մ'ունենալ, որչափ անժխտելի է այս զրբին գերազանցութիւնը Աստուծոյ և Հնդկաց տառուածարանութենէն:

Շատ մարդիկ չարաչար գործածեցին զայն, և ուզեցին անիրաւութեան օրինագիրք մ'ընել, իրենց մեղապարտ կրից վաւերացուցիչ մ'ընել զայն, այս ճշմարտիտ է. բայց մեր միշտ ուր որ եմք՝ հոն եմք, ամեն բան չարի կրնայ գործած-



ուիլ . և արդեօք երբէ՞ն ի վեր լաւագոյն իրաց  
չարաչար գործածութիւնն իրաւունք կուտայ  
մեզ ըսելու թէ այն իրերն ինքնին գէշ են :

Քրիստոս ըսաւ թէ ամեն օրէնքներն ու մար-  
գարէնները , բոլոր սուրբ զիրքերը՝ զԱստուած և  
մարդիկ սիրելու պատուիրանին մէջ կը բովան-  
դակին : Նւ այսպիսի զիրք մը՝ ամեն դարերու  
պատկանաւոր և շմարտութիւն մը , Հոգւոյն սըր-  
բոյ յաւիտենապէս կենդանի խօսքը չըլլայ :

Այս խորհրդածութիւնները մտքիս մէջ արթն-  
նալով՝ նորէն որոշեցի որ մարդկային իրաց վը-  
րայ ունեցած ամեն մտածութիւններս , քաղա-  
քակրթութեան յառաջդիմութեանը վրայ ունե-  
ցած ամեն կարծիքներս , մարդասիրական հա-  
մոզումներս , հայրենեաց սէրս , մէկ խօսքով՝  
սրտիս ամեն զգացումները կրօնի ոգւոյն և  
պատուիրանացը համաձայնեցրնեմ :

Շնականութեան մէջ անցուցած քանի մը օրե-  
րըս զիս շատ աւերէ էին : Այս զեղծման ուղե-  
ցութիւնը երկար ժամանակ զգացի և մեծ աշխա-  
տութիւն քաշեցի անոր յաղթելու համար : Ամեն  
անգամ որ մարդ իր իմացականութիւնը նուա-  
տացրնելու , Աստուծոյ գործերը ծաղու դժոխա-  
յին խոշորացոյցովը դիտելու , և աղօթից բարե-  
բար վարժութենէն ետ կենալու փորձութեան  
տեղի կուտայ , իր բանազատութիւնը կը վնաս  
և նորանոր անկումներու տրամադրութիւն կ'ըս-

տանայ: Քանի մը շարաթ շարունակ բուն յար-  
ձակում կրեցի թերահաւատութեան զազախար-  
ներէ, և մտքիս բոլոր ուժը գործածեցի զանոնք  
վանելու:

---

Գ Լ Ո Ւ Խ Ի Ձ .

---

Երբոր այս ներքին կռիւները զաղրեցան և  
նորէն իմ ամեն կամքերուս մէջ Աստուած փա-  
ռաւորելու սովորութեանս մէջ զիս հաստատուած  
կարծեցի, բաւական ժամանակ անխռով խաղա-  
ղութիւն մը վայելեցի: Դատաստանական հար-  
ցափորձը՝ որ ամեն երկու կամ երեք օրն անգամ  
մը յանձնած ողորմէ ինձ կընէր, որչափ և դժնդակ  
ալ ըլլար, երկարատեւ մտատանջութիւններ չէր  
պատճառեր ինձ: Այս փափուկ և դժուար վիճա-  
կիս մէջ կը ջանայի որ պատուոյ և բարեկամու-  
թեան պարտուց դէմ բան մը չընեմ, և մնացածն  
Աստուծոյ կը յանձնէի:

Ամեն անակնկալ դէպք, ամեն սրտի վրդո-

վում և ամեն ենթադրելի ճախորդութիւն նախատեսելու օրրատօրէական վարժութիւնս Երզնութեամբ ի գործ դնել սկսայ, և այս վարժութիւնս նորէն խիստ օգտակար եղաւ ինձ:

Սակայն առանձնութիւնս աւելցաւ: Բանտապետին երկու որդիքը՝ որ սկիզբները երբևինս ընկերութիւն կրնէին ինձ՝ դպրոց զըրկուեցան, և այս սրտճառու տունը խիստ քիչ մնալով՝ ալ չէին զարգիս տեսնելու: Ասոնց մայրն ու քոյրն ալ՝ որ ազայրն հոն եղած ժամանակ շատ անգամ սենեակս կը կենային ու հետս կը խօսակցէին, հիմայ միայն խահուէ բերելու կուգային սենեակս, և շուտով ալ կը մեկնէին: Մայրերնուն համար շատ հոգ չէի ըներ, վասն զի կարեկցութիւն չէր ցուցըներ ինձ. բայց աղջիկը՝ թէպէտ և զեղեցիկ չէր, այսու ամենայնիւ նայուածքին ու խօսքերուն մէջ անուշութիւն մ'ունէր որ ինձ անհաճոյ չէր: Երբոր ինձ խահուէ կը բերէր ու «ես եփեցի» կըսէր, խիստ համով կուգար ինձ. երբոր «մայրս եփեց» կըսէր, լոկ տաք ջուր մ'էր:

Սյասկս մարդէ կարօտ մնալով, ուշադրութիւնըս քանի մը մրջիւններու տուի որ սրտուհանիս վրայ կուգային, և այնչափ առատօրէն կը կերակրէի զանոնք, որ զացին բիրաւոր ընկերներ բերին, և շատ չանցաւ սրտուհանս այս մանր կենդանիներով լցուեցաւ: Նմանապէս հոգ կը

տանէի զեղեցիկ սարդի մը՝ որ սենեակիս պատե-  
րէն մէկուն վրայ ոտայն կը գործէր : Ճանճեր  
ու մժեղներ կը կերցնէի անոր , և այնչափ ըն-  
տելացաւ ինձ , որ անկողնիս ու ձեռքիս վրայ  
կուգար ու իր որսը մատերուս մէջէն կտունուր :

Նրանի թէ միայն այս միջատներն ըլլային  
ինձ այցելութիւն ընողները : Նեո գարնան մէջ  
էինք և արդէն մժեղները զարհուրելի կերպով կը  
շատնային : Չմեռը չափազանց մեղմեղներ էր ,  
և մարտ ամսոյ մէջ քիչ մը հովեր փչելէ ետեւ  
տարերն հասան : Չեմ կրնար ըսել որչափ տար-  
ցաւ բնակած խցիկիս օդը : Նիրքը հարաւի դեմ,  
կապարեայ յարկի մը տակ , և պատուհանս ալ  
Ս . Մարկոսի յարկին վրայ նայելով , որ նոյնպէս  
կապարեայ էր և արևուն ջերմութիւնը սարսա-  
փելի կերպով կը ցոլացնէր , շնչառութիւնս կը  
զժարնար և կը խզզուէի : Սյսպիսի հրատապ ջեր-  
մութեան մը գաղափարն անգամ ունեցած չէի :  
Սյս անոզին տանջանքին վրայ կան ընային մժեղ-  
ներն ալ՝ այնչափ բազմութեամբ՝ որ քանի  
չարժէի և զանոնք ջարդել ուզէի՝ վրաս կը թա-  
փէին : Անկողինս , սեղանս , աթոռս , գլետինը ,  
պատերը , ձեղունը ծածկուած էին անոնցմէ , և  
օդին մէջ ալ անհամար բազմութիւն մը կար որ  
անպարկէ կելնէին կը մտնէին պատուհանէն դը-  
ժոխային բզզանքով : Սյս միջատներուն խայ-  
թումը ցաւազին է , և երբոր մէկն առաւօտէն

մինչև իրիկուն և իրիկունէն ալ մինչև առաւօտ այն խայթումները կընդունի և անոնց թիւը նուազեցընելու տաղտկալի և անդուլ զբաղման հարկադրեալ կըլլայ, ստուգիւ կը չարչարի թէ մարմնով և թէ մտօք :

Նրբոր այս պատահասին մեծութիւնը փորձովս նանչեցի, և բանտս փոխել տալու համար ըրած խնդիրս չընդունուեցաւ, ինքզինքս սպանելու խորհուրդներ ծագեցան մտքիս մէջ. երբեմն ալ կը վախնայի որ կը խենդեմ : Բայց, գոհութիւն Նրկնից, այս մտեգնութիւնները երկար չէին տեւեր, և կրօնքը զիս կը կազդուրէր. կը համոզէր զիս թէ մարդս սէտք է տառապի և արիութեամբ համբերէ. կերպ մը հեշտութիւն զգալ կուտար ինձ մինչև անգամ վշտակրութեան մէջ, և կը բերկրէի շքանելուս և ամեն բանի յազմելուս վրայ :

Արսէի. — Իրչափ աւելի ցաւագին ըլլայ կեանքս, այնչափ քիչ կըլլայ երկիւղս՝ եթէ այս ծաղիկ հասակիս մէջ ինքզինքս մահուան դատապարտուած տեսնեմ : Սռանց այս նախապարտաւորական չարչարանքներուն՝ թերևս վատարար կը մեռնիմ : Սակէց զատ, երջանկութեան արժանի ըլլալու համար բաւական առաքինութիւններ ունիմ, և ուր են : —

Ինքզինքս արդար խստութեամբ մը բննելով՝ կենացս բոլոր տարիներուն մէջ խիստ քիչ գործ

կը զանէի գովութեան արժանի. մնացածը յիմար  
կիրքեր, կռապարիշտ սէր, ամբարհաւան և  
սուտ առաքինութիւններ էին: — Ուրեմն տա-  
ապալէ, անարժան, կըսէի ես ինձ: Նթէ մար-  
դիկ և միջատները բարկութեամբ միայն և յա-  
նիրաւի քեզ սպանեն, Սատուծոյ արդարու-  
թեանը գործիք ճանչէ զանոնք և լռէ: —

---

Ք Ա Ո Ւ Թ Ի Է.

---

Մարդս ինքզինք խոնարհեցընելու և իր մե-  
զաւոր ըլլալը խոստովանելու համար սկէտք ու-  
նի մեծ ճիգեր ընելու: Ճշմարիտ չէ՞ որ մեք  
առ հասարակ մեր երիտասարդութիւնը սնա-  
փառութեան մէջ կը ծախենք. և փոխանակ մեր  
բոլոր ուժը գործածելու որ բարւոյն ասպարէզին  
մէջ յառաջ երթանք, զայն մեծ մասամբ մեզ  
ցածցընելու կը ծառայեցընենք: Կան բացառու-  
թիւններ, բայց կը խոստովանիմ որ իմ խեղճ ան-  
ճիւս չեն վերաբերիր. և ինձմէ դժգոհ ըլլալովս

ալ արժանիք մ'ունեցած չեմ ըլլար : Նրբոր ճշ-  
րագ մը կամ կանդեզ մը տեսնուի որ լոյսէն  
աւելի մութ կուտայ, մեծ անկեղծութիւն մը չէ  
ըսելը թէ պէտք եղածին պէս չլսաւիր :

Այն, առանց ինձ անարգանք բերելու, առանց  
կրօնամոլի խղճահարութեան, մտքի կատարեալ  
հանդարտութեամբ ինքզինքս նկատելով, զիս  
արժանի կը գտնէի Աստուծոյ պատուհասներուն  
Ներսէս ձայն մը կըսէր ինձ . « Այս պատիժներն  
արժանի են քեզ՝ եթէ ոչ այս գործիդ համար՝  
գտնէ այն գործիդ համար : Նրանի թէ ասոնք  
քեզ առ Այն տանելու ծառայեն, որ նոյն իսկ  
կատարելութիւն է, և որուն մարդիկ ըստ կարի  
նմանող ըլլալու կոչուած են »

Բարեւ . մինչ ևս ստիպուած էի Աստուծոյ դէմ  
գործած հազարաւոր անհաւատարմութիւններու  
համար զիս մեղապարտ խոստովանելու, ինչ  
իրաւամբ կրնայի տրանջել՝ եթէ մարդոցմէ ո-  
մանք ցած և ուրիշներ ալ չար կերեւէին ինձ, ե-  
թէ աշխարհի բարեբաստութիւններն ինձմէ  
յափշտակուած էին, եթէ բանտի մէջ պիտի  
մտնէի կամ բռնամահ մեռնէի :

Այս արդար և սրտազգած խորհրդածութիւն-  
ները մտքիս մէջ քանդակելու կը ջանայի . այս  
ընելէս ետև տեսայ որ ասոնց համաձայն ընթացք  
բռնել պէտք էր, այն ալ ուրիշ կերպով չէր կըր-  
նար ըլլալ՝ բայց եթէ Աստուծոյ արդար հրա-

մաննե ըն օրհնելով, զանոնք սիրելով, և անոնց հակառակ կամքերը սրախ մէջ խեղդելով :

Այս առաջադրու թե ան մէջ լու ևս ամբանալու համար՝ խսրհեցայ որ այսուհետե իմ ամեն զգացումսն ըստ ուշադրու թեամբ զրի առնելով զարգացընեմ : Աժբաղդարար, դասաստանական յանձնածողովը թէ պէտ թոյլտուութիւն ըրեր էր ինձ կազմամար և թուղթ ունենալու, բայց կը համրէր ինձ արուած թերթերը, որոնցմէ մէկը պատուել կամ կորսնեցընելը խստիւ արգիլած էր, և ինչ բանի գործածած ըլլալս պիտի բնեւէր հատկընար : Թուղթին տեղը լացընելու համար՝ սենեակիս մէջ գտնուած թանձրաշէն սեղանը ապակիով յըղկելու անմեղ հնարքը մտածեցի : Եւ այն սեղանին վրայ ամեն օր երկար մտածութիւններ զրեցի մարդկային պարտուց և մասնաւորապէս իմ պարտականութեանցս դրայ :

Զախարանցու թիւն ըրած չեմ ըլլար լսելով թէ այն գրադամբ անցուցած ժամերս երբեքն հեշտալի կը թուէին ինձ, թէ և սենեակիս անտանելի ջերմութիւնն ու մթեղներուն ջածագին խայթումածները շունչ առնուլ չէին տար ինձ : Մթեղներուն խայթումած քէն քիչ շատ ինքզինքն պահպանելու համար շատ խպտելի՛ տյն սատարիկ ջերմութեան հակառակ՝ զլուխս ու ոտքերս խանձարրելու, ձեռնոցով զրելու և դաստակներս



և բիզապոսներ լու, որպէս զի մեզու կենքը չկրնան  
թեւերուս մէջ մտնել :

Գրած մտածութիւններս մեծ մասամբ կենսա-  
գրական ձև մ'ունէին : Մանրամասնաբար կը  
պատմէի ամեն բարի կամ չար զգացումներն ու  
խորհրդները որ մանկութենէս ի վեր գոյացել  
էին սրտիս մէջ . կը վիճարանէի ևս ինձ հետ ,  
ամեն տարակուսելի խնդիրները լուծելու կաշ-  
խատէի , և ամեն մէկ բանի վրայ ունեցած բոլոր  
ծանօթութիւններս , բոլոր գաղափարներս կըր-  
ցածիս շափի կը շարագասէի :

Երբոր սեղանիս երեսը գրութեամբ կը լցուէր ,  
կրկին և կրկին կը կարդայի , ըրած մտածու-  
թեանցս վրայ վերստին կը մտածէի , և վերջա-  
պէս յանձն կառնուի՝ շատ անգամ ահամայ՝  
բոլոր գրածս ապակիով տաշել , որպէս զի կա-  
րող ըլլամ նորէն խորհրդածութիւններս սեղա-  
նին վրայ գրելու :

Սյապէս կը շարունակէի կենացս պատմու-  
թիւնը , զոր յաճախ կընդմիջէի ամեն կերպար-  
տուղութիւններով , բնազանցական շարոյթկան  
քաղաքական և կրօնական կէտեր վերլուծելով .  
և երբոր սեղանին երեսը լցուէր , նորէն քանի  
մ'անգամ կը կարդայի , յետոյ կը ջնջէի :

Բոլոր յիշած բաներուս ու գաղափարներուս  
վրայ ազատ հաւատարմութեամբ ևս ինձ հաշիւ  
տալու արգելք մ'ունենալ չուզելով , և հաւատա-

քննական այցելութիւններու և հետախուզութեանց հնարաւորութիւնը նախատեսելով, խեցքեկ ոճով մը կը գրէի, այսինքն զիրերը ետեւ առաջ դնելով ու բառերը կրճատելով, որուն քաջ վարժուած էի, Սակայն կասկած ըրածիս պէս այցելութիւն մը չեղաւ ինձ, և ոչ ոք մաքէն անցուց թէ իմ տխուր ժամանակս այսպէս լաւ կանցունէի: Նրբոր բանտապետին կամ ուրիշ որ և է մէկու մը գալ և դուռը բանալը կը լսէի, իսկոյն սեղանը լաթով մը կը ծածկէի, և կազամարն տօրինաւոր թղթոց տետրակը վրան կը դնէի:

— — — — —

### Ք Ա Ո Ւ Ս Ի Ը .

—

Այն տետրակին ալ ժամերուս մէկ քանին և երբեմն մինչև ամբողջ օր մը կամ զիշեր մը կը նուիրէի: Անոր մէջ գրածս ալ բանասիրական նիւթեր էին: Այն ժամանակ յօրինեցի *Էսթեր s'Էնկասսի*. Իճիևիս *s'Ասթի* բանաստեղծութիւնները, և *Թանկրեսա*, *Ռօզիշե*, *Էլիճի ու Վալսփրիսօ*, և *Ասկըօ* կոչուած երգերը: Ասոնցմէ զատ ողբերգութեանց և զանազան հեղինակութեանց ուրուագիծներ, որոց մէջ *Լոմպարտեան դաշնակ-*

ցութեան, և Քրիստոսափոր Քոլոմարոսի վրայ  
մասնաւոր հազներգութեանց նախագիծներ ալ  
կային:

Եւ որովհետեւ տեւորակը լիննալէն ետեւ ուրիշ  
մ'առնելու հրամանը գիւրութեամբ և շուտով  
չէի կրնար ստանալ, ուստի շարագրութեանցս  
նախագագափարը սեղանին վրայ կը գրէի, կամ  
անշահ թուղթերու վրայ՝ որոց մէջ չոր թուղ  
ուրիշ պատուղներ բերել կուտայի ինձ: Երբեմն ալ  
խրիկունս կերակուրս պահապաններուն մէկուն  
կուտայի հաւտացնելով զայն թէ ախորժակ չու-  
նէի, և այսպէս կը պարտաւորէի զայն քանի մը  
թերթ թուղթ ինձ ընծայ տալու: Սյս ալ այն  
ժամանակները կը պատահէր երբոր սեղանս գը-  
րութեամբ լցուած էր և դեռ չէի ուզեր տաշել:  
Ուստի յանձն կառնուի անօթի տուայտիլ, և  
թէպէտ ստակս բանտապետին քով պահեստի  
տրուած էր, սակայն բոլոր օրն անկէ ուտելիք  
չէի ուզեր վախնալով որ չըլլայ թէ հաշս պա-  
հապանին տուած ըլլալս կասկածէ և պահապանն  
ալ հասկընայ թէ զինքը խաբեր էի ախորժակ  
չունիմ ըսելով: Նրիկունն ինքզինքս կը կազդու-  
րէի թանձր խահուէ մը խմելով, և կազաչէի որ  
Սիօրա Մանձէ (բանտապետին ազգիկը) եփէ զայնս  
Երբոր կարող ըլլար Մանձէ մօրմէն զազտուկ  
եփելու, շափազանց թանձր կրնէր, այնպէս որ  
ստամոքսս պարտալ ըլլալուն՝ ջղային ցնցիւն մը

կուտար ինձ թէ, և առանց ցասի, և զիշերն ի բուն  
զիս արթուն կը բռնէր:

Այս քաղցր արբեցութեան վիճակին մէջ մտա-  
ւորական կարողութիւններս կրկնապատկած  
կ'զգայի. կը բանաստեղծէի, կ'իմաստասիրէի և  
մինչև առաւօտ կաղօթէի սքանչելի բերկրու-  
թեամբ: Բայց և որք յանկարծ սասաիկ տկարու-  
թիւն մը կուգար վրաս: Այն ժամանակ անկող-  
նիս վրայ կիյնայի, և որչափ որ մըժղուկները  
խնամով պատած խանձարու բներու մէջ մտնե-  
լով կը յաջողէին արխնա ծծելու, մէկ ևրկու ժամ  
խոր քուն կը ննջէի:

Այսպիսի զիշերները՝ որ անօթուց խմած խան-  
ութէն այնպէս ուժգին կը յուզուէին ու երևակա-  
յութեանս այնպիսի քաղցր աշխարհ ու խանդ  
մը տալով կանցնէին, խիստ հաճոյ և օգտակար  
թուելով ինձ, կը ջանայի որ յաճախ այնպիսի  
զիշերներ անցունեմ: Ասոր համար, թէ և պէտք  
մ'ալ չունենայի պահապանէն թուղթ ու զելու,  
չատ անգամ իրիկուան հաշիս ձեռք չէի դալցընէր,  
որպէս զի այն դիւթական ըմպելիին հրաշալի  
ազդեցութիւնը վայելեմ այն զիշերը: Բարեբանգի  
էի երբոր նպատակիս հասնէի: Շատ անգամ  
պատահեցաւ որ խանութէն գորովագութ Սանձէն  
չեփեց. այն ժամանակ անհամ ըմպելի մ'էր: Այս  
պատրանքը զիս քիչ մը կը դառնացընէր, փո-  
խանակ աշխարհութիւն մ'զգալու՝ կը թուլնայի:

կը յօրանջէի, անօթու թիւն կիմանայի և անկողնիս վրայ կիյնայի, բայց չէի կրնար ննջել:

Ետքը զանգատ կընէի այս բանիս համար Յանձէի, և կարեկից կըլլար ինձ: Օրին մէկը խատու թեամբ զինքը կշտամբեցի որպէս թէ ան էր զիս խարտղը, խեղճ ազգիկն սկսաւ լալ ու ըսաւ ինձ.

— «Պարոն, ևս կենացս մէջ մարդ խարած չեմ, և ամեն մարդ զիս խարերայ կը համարին:

— Ամէն մարդ, ուրեմն մինակ ևս չեմ այս լալը տուկ խանուէին համար զանգատողը:

— Այդ բնէլ չեմ ուզեր, Պարոն. ո՛ն, և թէ գիտնայիք . . . : Նթ է կարող ըլլայի խեղճ սիրտու ձեզ բանալու . . . :

— Բայց մի լաք այդպէս: Ի՞նչ վիշտ ունիք: Ներեցէք և թէ անիրաւ տեղը ձեզ յանդիմանեցի՞ք: Կը հաւատամ որ խանուէս գէշ ըլլալուն յանցանքը ձերը չէ:

— Ա՛հ, ատոր համար չէ որ կուլամ, Պարոն: Այս պատասխանէն ինքնասիրտ թիւնս քիչ մը վիրաւ որեցաւ. բայց ևս ժպտեցայ:

— Ուրեմն իմ ըրած յանդիմանու թիւններու առ թիւ դուք ուրիշ բանի համար կու լաք:


— Ստուգիւ այդպէս:

— Ո՞վ է ձեզ խարերայ համարողը:

— Տարիաւոր մը:

Այս խօսքն ըսած ատեն Երեսը կարմրեցաւ և միամիտ վստահու թեամբ մը կէս լուրջ և կէս

ճիծաղաշարժ հովուերգու թիւն մ' ինձ պատմեց  
որ սրտիս դպաւ :



Ք Ա Ո Ւ Խ Ի Ք .

Այն օրէն՝ չեմ գիտեր ինչու համար՝ այս ման-  
կամարդ աղջկան մտերիմն եղայ, և սկսաւ հետո  
երկար խօսակցիլ :

Արսէր ինձ. Պարոն, դուք այնչափ բարեւիրա  
էք որ ձեզ հօրս տեղ կը դնեմ :

— Խեղճ պատիւ մ' է այդ որ ինձ կընէք, ըսի  
ձեռքը ես հրելով : Ես հազիւ երսունու մէկ տարե-  
կան կամ, և դուք զիս հօրերնուդ տեղ կը դնէք :

— Աւրեմն, Պարոն, եղբօրս տեղ կը դնեմ :

Եւ ուժով մը ձեռքս բռնելով գորովանօք կը  
սեղմէր : Եւ այս ամենը կատարեալ անմեղու-  
թեամբ էր : Արսէի ես ինձ. « Աղէկ որ զեղեցիկ  
չէ, տպա թէ ոչ՝ այս անմեղ ընտանութիւնը  
կընար զիս շփոթել : »

Աւրիշ անգամ ալ կըսէի. « Աղէկ որ շատ  
փոքր է : Այս հասակի աղջկան մը սիրահարելու  
վտանգէն ազատ եմ : »

Սակայն երբեմն ալ սիրտս կը վրդովէր երբ կը նշմարէի որ առջի բերանը կարծածիս չափ տգեղ չէր. վասն զի կը հարկադրէի խոստովանիլ թէ մարմնոյն ձևն ու դէմքը անկանոն չէին :

« Եթէ այնչափ դեղնած չըլլար, և երեսը քանի մը կարմիր բիծեր չունենար, գեղեցիկ կրնար համարուիլ » կըսէի :

Այս ստոյգ է, որ անհնար է հրապոյր չգտնել առոյգ և գորովասիրտ մանկամարդի մը ներկայութեան նայուածքին ու խօսակցութեան մէջ : Ասկէց զատ, անոր բարեկամութիւնը գերելու համար բնաւ բան մ'ըրած չըլլալով՝ սիրելի եղեր էի իրեն իբրեւ հայր մը կամ իբրեւ եղբայր մը՝ որն որ ուզեմ : Ընչո՞ւ համար, Վասն զի Ծրանչեփա սա Ռիմիւնիս և Էռֆերիս կարդացեր է և իմ տաղաչափութիւններս զինքը շատ կը լացընեն եղեր, և վերջապէս վասն զի բանտը դրուեր եմ՝ առանց գողութիւն կամ վարդապալանութիւն ըրած ըլլալու :

Մէկ խօսքով, ես՝ որ Մագդաղինէին սէր տրեմր էի առանց զինքը տեսնելու, ինչպէս կրնայի անզգայ մնալ Վենեսկեցի վանկաւարդ քանսապալանութիւն եղբայրական խնամածութեանցը, սիրուն փաղաքշանոցը և եփած պատուական խահուէին :

Ստախօս եղած կըլլայի եթէ այս աղջկան չըտարփալուս պատճառն իմ խոհեմութիւնս համարէի Չտարփաղայ անոր՝ մի միայն այս պատ-

հառաւ որ ուրիշ տարիաւոր մ' ունէր որուն վրայ հոգի կուտար : Վայ էր ինձ' եթէ ուրիշ կերպ եղած ըլլար :

Սակայն եթէ սրտիս մէջ արթնցած զգացումը սէր ըսուածը չէր, կը խոստովանիմ որ անոր մօտ բան մ' էր : Ար փոփարէի որ երջանիկ ըլլար ու իր սիրած անձին հետ ամուսնանար, ամենին չէի նախանձիր, բնաւ մտքէս չէի անցունել թէ զիս իր սիրոյն նպատակ կրնար ընտրել : Բայց երբոր դրանս բացուիլը կը լսէի, սիրտս կը բարբախէր յուսալով որ Յանձէն էր եկողը, եթէ ան չէր՝ կը տրտմէի, իսկ եթէ ան էր՝ սիրտս աւելի ուժգին կը զարնէր և ուրախութեամբ կը խայտար :

Ծնողքն արդէն բարի համարում մ' ունենալով վրաս և զիտնալով ալ որ ազջիկնին ուրիշի մը մոլեգին սիրահարած էր, բնաւ հոգ չէին ընել որ կը թողուն որ միշտ ան կը բերէր անտուանի խահուէս և երբեմն իրիկուանն ալ :

Հրապուրիչ պարզամտութիւն ու քաղցրութիւն մ' ունէր : Արսէր ինձ. « Այսչափ կաթոգին սիրահարած եմ ուրիշի մը, և սակայն մեծ հաճութիւն կըզգամ ձեր քով կենակէս : Երբոր տարիածուս չեմ տեսնէր՝ հոսկէ զատ ուր որ ըլլամ՝ կը ձանձրանամ :

— Գիտէս, ինչո՞ւ համար :

— Չեմ զիտեր :



— Ես ըսեմք քեզ, անոր համար որ տարիաւորից  
վրայ խօսելու արգելք չեմ ըլլար քեզ:

— Շատ աղէկ, բայց կարծեմ որ կէս մ'ալ ձեզ  
յարգելու համար է ք:

Ան՛ղճ աղջիկ, այս անուշ թերու թիւնն ունէր  
որ միշտ ձեռքս կը բռնէր ու կը սեղմէր՝ առանց  
նշմարելու թէ անանկտի ինձ բերկրանք ու մի-  
անգամայն շիտ թու թիւն կը պատճառէր:

Գոհու թիւն Աստուծոյ, այս բարի արարածն  
յիշած ատենս խիղճս զիս չտանջեր:

---

### Ք Լ Ո Ւ Խ Լ .

Այս թերթերն աւելի զուարճալի կըլլային ե թէ  
Յանձէ սիրահարած ըլլար ինձ, կամ զոնէ ես  
անոր: Այսու ամենայնիւ այն պարզ համակրու-  
թեան կապը որ մեզ կապեր էր՝ տարիանքէն  
աւելի սիրելի էր ինձ: Եւ եթէ երբեմն վախնայի  
որ սիրաս մոլորելով այս գգացումն իր բնու թիւնը  
փոխէ, ծանրապէս կը արտակէի:

Անգամ մը, կասկածելով որ կրնար այս բանը  
պատահիլ, և զայն՝ չեմ զիտեր որպիսի զխթա-  
կան ազդեցութեամբ՝ առջի բերան և բնցածէն

բազմապատիկ առաւել զեղանի գտնելուս վրայ  
վշտագնելով, և իր բացակայութեան ժամանակն  
ունեցած տխրութեանս և ներկայութենէն զգա-  
ցած ուրախութեանս վրայ զարմանալով, երկու-  
օրի չափ ինքզինքս նեղսիրտ ցուցընել սկսայ,  
յուսալով որ հետս ունեցած ընտանութիւնը քիչ  
մը կորսնցընէ: Աղջկան համբերութիւնն ու գո-  
րովասարտութիւնն այս հնարքս ի դերև հանեց:  
Արմուկը պատուհանին կը կրթնցընէր ու լուս  
կանգնած ինձ կը նայէր: Յետոյ կըսէր.

«Պարոն, կերևի թէ իմ ընկերակցութենէս կը  
ձանձրանաք. սակայն, եթէ կարելի ըլլար՝ օրն  
ի բուն հոս կը կենայի. վասն զի կը տեսնեմ որ  
դուք զբաղանքի պէտք ունիք. . . Այդ նեղսր-  
տութիւնը միայնութեան բնական արդիւնքն է:  
Բայց փորձի համար քիչ մը խօսակցութիւն ըրէք՝  
և նեղսրտութիւնն իդ կը փարատի: Եթէ դուք  
չէք ուզեր խօսիլ՝ ես կը խօսիմ:

— Զեր տարփածուին վրայ, այնպէս չէ՞:

— Ա՛յ. միշտ անոր վրայ չէ. ես ուրիշ բանե-  
րու վրայ ալ կրնամ խօսիլ:»

Եւ կ'սկսէր իր ընտանեկան մանր շահուցը,  
մօրը խստութեանը, հօրը միամտութեանը, եղ-  
բայրներուն սատանութեանցը վրայ խօսիլ, և իր  
պատմութիւնները սլարզ ու շնորհալի էին: Բայց  
առանց ուշադրութիւն ընելու՝ վերջապէս խօս-  
քը նորէն իր սիրելի նիւթին վրայ կը դարձու-

նէր միշտ, այն է իր դժբազդ սիրոյն :

Իսկ ես կը շարունակէի նեղսրտութիւնս , յուսալով որ վերջապէս կը գժղմնի : Բայց անմտադրութեամբ մի ըսեմ թէ խորամանկութեամբ՝ չէր նշմարեր կամ չնշմարելու կը զարնէր . և վերջապէս ես ալ կը պարտաւորէի մեղմանալու, զուարթանալու, խանդաղատելու և իր քաղցր համբերութենէն շնորհակալ ըլլալու :

Մէկդի ձգեցի զինքը նեղացընելու ասլաշնորհ խորհուրդը, և քիչ քիչ երկիւղս փարատեցաւ : Եւ ստուգիւ սիրահարած չէի իրեն : Նրկարօրէն քննեցի իմ խղճահարութիւնս , և այս նիւթիս վրայ ունեցած մտածութիւններս գրի առի : Այս մանրախոյզ քննութիւնս օգտակար եղաւ ինձ :

Մարդիկ երբեմն ոչինչ բաները խրտուիլակ կընեն իրենց : Անոնցմէ չվախնալու համար՝ բաւական է առաւել ուշադրութեամբ և առաւել մօտէն նկատել զանոնք :

Եւ ինչ վնաս կար ինձ՝ անոր այցելութեանցը գորովալիբ անհանգստութեամբ փափաքելէ , անոնց քաղցրութիւնը հասկնալէ , ինձ համար ունեցած կարեկցութեանը վրայ զմայլելէ , անոր գթութեանը փոխարէն գթութիւն հաստուցանելէ , քանի որ մեր իրարու նկատմամբ ունեցած խորհուրդնիս մանկութեան ամենամաքուր խորհուրդներու պէս անմեղ էին , և քանի որ անոր իմ ձեռքս սեղմելն ու սիրալիբ աչօք

ինձ նայելը՝ թէ և քիչ մը զիս շփոթեցընէին՝  
 փրկաւէտ ակնածու թիւն մը կազդէին ինձ :

Իրիկուն մը՝ իր մէկ կրած մեծ վիշտն ինձ պատ-  
 մած ատեն՝ տարաբաղդ ազջիկը թեւերը պարա-  
 նոցիս վրայ ձգեց : Այս գրկախառնութեան մէջ  
 բնառ ամբարիշտ միտք մը չկար : Ազջիկ մ'աւելի  
 ակնածութեամբ չէր կրնար իր հօրը փաթթուիլ :

Սակայն այս բանը խորին տարաբու թիւն  
 մ'ըբտեւ երեւեղայութեանս վրայ : Յանախ միտ-  
 քըս կիյնար այն քաղցր փարու մը, և ալ չէի կըր-  
 նար այն ժամանակ ուրիշ բան մտածել :

Աւրիշ անգամ մ'ալ երբոր նոյն որդիական վրա-  
 տանութեան խանդին տեղի տուաւ, իսկոյն ինք-  
 զինքս ազատեցի անոր սիրուն բազկացը մէջէն՝  
 առանց զայն սրտիս վրայ սեղմելու, առանց  
 զինքը համբուրելու, և թոթովելով ըսի իրեն .

«Աաղաչեմ, Յանձէ, այդպէս մի փաթթուիր  
 ինձ. ադէկ բան չէ :»

Աւշադրութեամբ մ'երեւսս նայեցաւ, յետոյ  
 աչքը խոնարհեցուց ու կարմրեցաւ : — Անշուշտ  
 այս առաջին անգամն էր որ իր նկատմամբ տը-  
 կարութիւն մը գործելու ննարաւորութիւնը կը  
 կարդար սրտիս մէջ :

Այնուհետեւ ալ թէպէտ ինձ ընտանի ըլլալէ  
 չդադրեցաւ, բայց իր ընտանութիւնն առաւել  
 ակնածութեամբ էր, առաւել համաձայն էր իմ  
 բաղձանացս, և շնորհակալ եղայ իրմէ :

Ք Լ Ո Ւ Թ Լ Ս .

Աւրիշ մարդիկը տառապեցնող վշտաց վրայ  
 չեմ կրնար խօսիլ . բայց կենացս սկիզբէն ինձ  
 վիճակած վիշտերուն գալով՝ կը պարտաւորիմ  
 խտտովանելու թէ զանոնք լաւ մը քննելով՝  
 միշտ իմ օգտիս համար նախասահմանեալ գտայ .  
 — այն, մինչև անգամ այն դժոխքները ջերմու-  
 թիւնը որ գիտ կրնկեցր . մինչև իսկ այն մժղուկ-  
 ներուն լէգէտնները որ կուտաղի պատերազմ մը  
 կրնէին ինձ հետ : Հազար անգամ մտածեցի ա-  
 սոր վրայ : Սթէ այն անընդհատ վշտակրու թեան  
 վիճակին մէջ չըլլայի , կրնայի բաւական զգաս-  
 տութիւն ունենալ՝ յարածամ սպառնացող սիրոյ  
 նետերէն անխոցելի մնալու համար , որ դժուար  
 բաւ կրնար պատշաճ ակնածութեան մը սահ-  
 մաններուն մէջ բռնուիլ , մանաւանդ այնպիսի  
 զուարթարարոյ և փառաբուշ աղջկան մը քով :  
 Սթէ այնպիսի վիճակի մը մէջ ըլլալով՝ երբեմն  
 ետ ինձմէ կը դարհուրէի , քնչալէս պիտի կրնայի  
 երեակայութեանս արտուղութիւնները կառա-  
 վարել՝ և թէ քիչ շատ հանգիստ և զուարճու-  
 թեանց յարմար մթնոլորտի մը մէջ ըլլայի :

կը տեսէր : Բայց առաւել քաղցրէր ինձ տեսնել ,  
որ հետս խօսելովը սրտին վիշտերը կը փարա-  
տէին . իմ կարեկցութիւնս սիրելի էր իրեն .  
խրատներս զինքը կը զօրայնէին , և երբոր ա-  
ռարինու թեան ու Սատուծոյ վրայ կը ճառէինք՝  
սիրտը կը բորբոքէր :

«Նրբոր մէկ տեղ կրօնքի վրայ կը խօսինք ,  
կըսէր , աւելի յօժարութեամբ և աւելի ջերմե-  
ռանդութեամբ կ'աղօթեմ : »

Նրբեմն անտոյն ինքի թոյ մը վրայ խօսած ժամա-  
նակ՝ մէկէն կարճ կտրելով Ս . Քիրքը կառ-  
նուր , կը բանար , ըստ դիպաց կը համբուրէր մէկ  
հատուածը , և զայն թարգմանել ու մեկնել կու-  
տար ինձ : Յետոյ կըսէր .

«Կուզեմ որ ամէն անգամ այս հատուածը կար-  
դացած ժամանակնիդ մտքերնիդ բերէր որ ես  
համբուրած եմ զայն : »

Ճշմարիտը խօսելով , իր համբոյրներն ալ միշտ  
յարմար տեղերու չէին հանդիպեր , մանաւանդ  
երբոր Նրգ Նրգոցը բանար : Այն ժամանակ զինքը  
չչիկնեցնելու համար՝ լատիններէն չգիտնալէն օ-  
գուտ կը քաղէի , և զրքին սրբութիւնն ու Ման-  
ձէի անմեղութիւնը միանգամայն յարգելու կեր-  
պով կը մեկնէի . վասն զի երկուքն ալ խորին  
պատկառանք կազդէին ինձ : Ասանկ առիթնե-  
րու մէջ ամենեւին չէի ծիծաղիր :

Սակայն այս ալ երբեմն քիչ չէր շփոթեցնել

կը տեւէր : Բայց առաւել քաղցրէր ինձ տեսնել ,  
որ հետս խօսելովը սրտին վիշտերը կը փարա-  
տէին . իմ կարեկցութիւնս սիրելի էր իրեն .  
խրատներս զինքը կը զօրայնէին , և երբոր ա-  
ռաքինութեան ու Աստուծոյ վրայ կը ճառէինք՝  
սիրտը կը բորբոքէր :

« Երբոր մէկ տեղ կրօնքի վրայ կը խօսինք ,  
կըսէր , աւելի յօժարութեամբ և աւելի ջերմե-  
ռանդութեամբ կ'ազօթեմ : »


Երբեմն անտի նիւթոյ մը վրայ խօսած ժամա-  
նակ՝ մէկէն կարճ կտրելով Ս . Քիրքը կառ-  
նուր , կը բանար , ըստ դիպաց կը համբուրէր մէկ  
հատուածը , և զայն թարգմանել ու մեկնել կու-  
տար ինձ : Յետոյ կըսէր .

« Առզեմ որ ամէն անգամ այս հատուածը կար-  
դացած ժամանակնիդ մտքերնիդ բերէր որ ևս  
համբուրած եմ զայն : »

Ճշմարիտը խօսելով , իր համբոյրներն ալ միշտ  
յարմար տեղերու չէին հանդիպեր , մանաւանդ  
երբոր Երգ Երգոցը բանար : Այն ժամանակ զինքը  
չչիկնեցնելու համար՝ լատիններէն չգիտնալէն օ-  
գուտ կը քաղէի , և զրքին սրբութիւնն ու Տան-  
ձէի անմեղութիւնը միանգամայն յարգելու կեր-  
պով կը մեկնէի . վասն զի երկուքն ալ խորին  
պատկառանք կազդէին ինձ : Ասանկ առիթնե-  
րու մէջ ամենեւին չէի ծիծաղիր :

Սակայն այս ալ երբեմն քիչ չէր շփոթեցնէր

զիս՝ երբ որ իմ կեղծ մեկնութիւնս հասկընա-  
լով կազաչէր որ այն հատուածը բառ առ բառ  
թարգմանեմ, և չէր թողուր որ զազանարար  
ուրիշ նիւթոյ մ'անցնէի:



### Ք Լ Ո Ւ Ս Լ Բ.

Աշխարհիս մէջ տեսական բան չկայ: Ման-  
ծէ հիւանդացա: Հիւանդութեան առջի օրերը  
կուգար զիս տեսնելու և սատարի զլիսու ցաւէ մը  
կը գանգատէր: Վաւար և վշտակրու թեան պատ-  
ճառը չէր հասկըցնէր ինձ: Միայն բանի մը  
կշտամբանք կը թոթովէր իր տարիածունդէմ:

«Վատ մարդ է, կըսէր, բայց Աստուած նե-  
րէ իրեն»:

Զուր տեղ ազաչեցի իրեն որ սիրտն ինձ բա-  
նայ՝ ինչպէս որ սովորութիւն ունէր, և չկըր-  
ցայ հասկընալ թէ ինչ էր այն սատարան զին-  
քը վըշտագնողը:

«Վաղ առտու նորէն կուգամ» ըսաւ ինձ իրի-  
կուն մը: Բայց հետեւալ օրը խահուէն մայրը  
բերաւ. միւս օրերն ալ պահապանները բերին:  
Մանծէ ծանրապէս հիւանդցեր էր:



Պահապաններն այս մանկամարդ օրիորդին տարփանայցը վրայ այնպէս կասկածելի բաներ պատմեցին ինձ, որոնք մազերս ցցուեցուցին: Հըրապուրանք: — Բայց ասոնք թերևս զրպարտութիւն էին: Ճշմարիտը խօսելով հաւտացի, և սիրտս տակն ի վերայ եղաւ այս մեծ դժբաղդութեան վրայ: Սակայն կը սիրեմ հաւատալ թէ սուտ ըսին ինձ:

Ամիսէն աւելի հիւանդ պատկելէ ետև՝ խեղճ աղջիկը զեղ տարուեցաւ, և մէկ մ'ալ չտեսայ զինքը:

Չեմ կրնար ըսել որչափ հեծեցի այս կորուստիս վրայ: Ո՛հ, որչափ սոսկայի եղաւ այնուհետև միայնութիւնս: Ո՛հ, երբ կը մտածէի թէ այն բարի արարածը դժբաղդ պիտի ըլլար, այս մտածութիւնս անոր հեռացումէն հարիւրապատիկ աւելի դժնդակ էր ինձ: Իմ թշուառութեանցըս մէջ նա այնչափ մխիթարեր էր զիս իր քաղցրը կարեկցութեամբը, իսկ իմ կարեկցութիւնըս ամուլ էր անոր համար: Բայց անշուշտ համոզուած ըլլալու էր թէ ես կուլայի իր վրայ, իրեն մխիթարութիւն մը տալու համար ամեն անձնու իրութիւն կընէի և թէ հնար ըլլար, եւ չէի դադրիր երբէք զինքն օրհնել: Եւ իրեն բարօրութիւն մաղթելէ:

Ծանծէի ծամանակը, իր այցելութիւնները թէպէտ և խիստ կարճ էին, սակայն իմ անընդհատ խոկմանցս և մտաւորական լռին պարապ-

մանցս ձանձրալի միակերպութիւնը հանոյապէս  
ընդմիջելով, գաղափարներուս ուրիշ ընթացք  
մը տալով, ինձ քաղցր գորով մ'ազդելով՝ տա-  
րարազդութիւնս կը պննազարդէին և կեանքս  
կը կրկնապատկէին :

Այնուհետև բանտն ինձ համար գերեզման եղաւ :  
Քանի մը շարաթի չափ յետին տխրութեան մէջ  
ինկայ և գիր գրելու անգամ տխրութ չունեցայ :  
Սակայն այս տխրութիւնը ժամանակաւ զգացած  
յուսահատութեանս հետ բազդատելով հանդարտ  
էր : Արդեօք արդէն անբազդութեան հետ ընտե-  
շացեր էի . առաւել փիլիսոփայ, առաւել քրիս-  
տոնեայ եղեր էի . կամ թէ սենեկիս հրատապ  
ջերմութիւնը տրամութեանս ուժը կտորելու  
կարողութիւնս ունէր : Ա՛հ, ոչ : Տրամութեանս  
ուժը՝ կը յիշեմ որ սաստկապէս կ'զգայի սրտիս  
մէջ, մանաւանդ այս պատճառաւ անշուշտ, որ  
այլ կամք չունէի զայն աղաղակաւ և յուզմամբ  
դուրս շնչելու :

Արդարև, այս երկար վարժութիւնն արդէն  
առաւել կարող ըրեր էր զիս նոր վտայ դիմա-  
նալու և ինքզինքս Աստուծոյ կամացը յանձնե-  
լու : Այնչափ շատ ըսեր էի թէ տեսնելը վաստիքի  
է, որ վերջապէս ճայթելու կէտը հասած տըր-  
տունջներս իսկ զսպել սովեր էի, և մինչև անգամ  
կամայէի տրտնջելու մտարերութեանս վրայ :

Մտածութիւններս զրի առնելու սովորոյթը

շատ օգներ էր հոգիս զօրացընելու, անոր պատ-  
րանքը ցրելու և խորհրդածու թիւններու մեծ  
մասն այս եզրակացու թեանց մէջ ամփոփելու .

«Սատուած մը կայ. ուրեմն ինչ որ մեզ հասնի՝  
լաւագոյն վախճանի մը համար հրամայուած է .  
ուրեմն մարդու երկրի վրայ կրած տառապանքն  
իր բարւոյն համար են : »

Ծանծէի հետ ծանօթանալս ալ բարիք մ'էր  
ինձ համար . վասն զի բարքս մեզմացուցեր էր .  
Անոր զօրովալից քաջալերու թիւնները քանի  
մ'ամիս ուժ տուեր էին ինձ՝ բաղդէն վերագոյն  
այսինքն համբերատար ըլլալու, որուն ամեն  
մարդոց պարտականութիւնն ըլլալը կըզգայի .  
Այն քանի մ'ամսուան հաստատամտութիւնը զիս  
համբերատարութեան վարժեց :

Ծանծէ ընդ ամենը երկու անգամ զիս բար-  
կացած տեսաւ : Առաջինը՝ ինչպէս արդէն պատ-  
մած եմ՝ այն անշահ խահուէին պատճառաւ էր .  
երկրորդը հետևեալ առթիւ պատահեցաւ :

Ամեն երկու կամ երեք շաբաթն անգամ մը  
բանտապետը նամակ մը կը բերէր ինձ ընտանի-  
քէս . այն նամակը նախ յանձնած ողովին ձեռքէն  
կանցնէր ու շատ տեղերը սև մեջանով մ'աւրուած  
ինձ կը զրկուէր : Օր մը, փոխանակ քանի մը  
խօսք միայն աւրելու, բոլոր նամակը սոսկալի  
կերպով եղծուած էր, բացի «Սիրելի Սիշվիօ»  
խօսքէն՝ որ սկիզբն էր, և այս խօսքէն որ վեր-

զըն էր . « Անկեևս ալ իեզ արսանց կը հանրուրեմք » :

Այն աստիճան զայրացայ , որ Մանձէի առջև պռոչտեցի՝ անիծելով չարաչար . . . չեմ գիտեր զոմ : Եւ զն աղջիկը գլխաց վրաս , բայց միանգամայն զիս յանդիմանեց թէ սկզբանցս հակառակ կը վարուէի : Տեսայ որ իրաւունք ունէր , և ալ այնուհետև մէկը չանիծեցի :

Ք Ղ Ո Ւ Խ Ր Ղ Ք .

— Թր մը պանտալաններէն մէկը բանտ մտաւ զաղանիք մ'ունենայու ղէմքով և ըսաւ .

« Երբոր օրիորդ Մանձէ հոս էր . . . որովհետև ան կը բերէր ձեզ խահուէն . . . և երկար կը կենար ու կը խօսակցէր ձեզ հետ . . . և ես կը վախնայի , պարոն , որ այն գեռահասակ նենգաւորը ձեր ամեն զաղանիքը կը լրտեսէ . . . »

— Այն աղջիկն իմ ոչ մէկ զաղանիքս լրտեսած չէ , ըսի բարկու թեամբ . և ես ալ եթէ զաղանիք մ'ունենայի , այնչափ պարզամիտ չեմ որ բերնէս քաղել տայի : Շարունակեցէք խօսքերնիդ :

— Ներեցէք , պարոն , ըսել չեմ ուզեր որ դուք

պարզամիտ էր . բայց ես չէի վատահիւր օրիորդ  
Յանձէի : Իսկ ճիմա որովհետև մէկը չունիք որ  
գայ ձեզ հետ ընկերակցութիւն ընէ . . . կը յու-  
սամ . . . որ . . .

— Ի՞նչ . շուտ ըսէ նայիմ :

— Բայց նախ երդում ըրէք որ զիս չէք մատնելու :

— Օ՛ր ձեզ չմատնելու համար կրնամ երդուել .  
որովհետև կենացս մէջ մէկը մատնած չունիմ :

— Աւրեմն անկեղծութեամբ կըսէք թէ կերդ-  
նուք :

— Այն կերդում որ ձեզ չեմ մատնել , բայց  
անմիտ մարդ , գիտցիք որ մատնութիւն ընելու  
կարող մարդը՝ երդումն ալ կրնայ արել :

Նամակ մը հանեց գրտանէն ու ինձ առաւ դող-  
դողալով և աղաչեց որ կարդալէս ետև արատում  
անյայտ ընեմ :

« Կեցիք հոս , ըսի նամակը բանալով , կարդա-  
լուս պէս ձեր աչքին առջև կը շնջեմ :

— Բայց , Պարոն , պէտք է որ պատասխանը  
առք ինձ , և ես ալ չեմ կրնար սպասել : Աւտի  
պարտալով կարդացէք ու պատասխանը գրեցէք :  
Միայն թէ մէջերնիս նշան մը որոշեմք : Նթէ  
մէկու մը ոտնածայն ըսէք , դիտեցէք որ և թէ ես  
ըլլամ՝ « Սօսեայի ընէ ներս ունիս քո » երգին ե-

---

\* Վենետիկի գեղջկական աղաւաղ լեզուով երգ մը :

դանակը կերգեմ: Այն ժամանակ առանց երկիւղի կրտսք ամեն տեսակ թուղթեր վրանից պահել: Բայց եթէ այս երգը չլսէք, կը հասկըցուի որ ես չեմ եկողը, կամ հետո ուրիշ մարդ կայ: Այն ժամանակ թուղթ մի պահէք քովերնիդ, որովհետեւ կըլլայ որ խուզարկութիւն կը'են. ուստի շուտ մը պատուեցէք ու պատուհանեն դուրս նեւեցէք:

— Անհոգ եղիք. կը տեսնամ որ վարպետորդի էք. ես ալ նոյնպէս կըլլամ:

— Սակայն քիչ մը առաջ զիս անմիտ կոչեցիք:

— Իրաւունք ունիք զիս յանդիմանելու, ըսի ձեռքը սեղմելով: »

Քնաց և կարգացի բերած նամակը որ այս էր:

« Ես . . . (հոս նամակին հեղինակն իր անունը կուտար) ձեր վրայ զմայլողներէն մէկն եմ: Ձեր *Յրակնչեսեսու Տիւնիսին* ծայրէ ի ծայր գոց գիտեմ, Ձիս բանտարկեցին . . . (հոս իր բանտարկութեան պատճառն ու թուականը կը հասկըցնէք), և արեանս չեմ գիտեր որչափ լիպրան կուտամ որպէս զի ձեզ հետ կամ գտնէ ձերինին կից բանտի մը մէջ դրուելով՝ ձեզ հետ խօսակցելու բարեբաղդութիւնն ունենամ: Նրբոր խմացայ թրեմէրէլլօէն (այսպէս պիտի կոչենք մեր խորհրդակից պահապանը) ձեր բռնուիլը և պատճառը, սիրտս սաստիկ բաղձանքով մը վառեցիս ըսելու ձեզ թէ ոչ ոք ձեզ ինձմէ անլի կը

սիրէ : Ար հաճիք ընդունիլ հետևեալ առաջարկութիւնս . այն է՝ միայնութեան ծանրութիւնը փոխադարձաբար սփոփել թղթակցութեամբ : Պատուոյս վրայ խօսք կուտամ ձեզ թէ աշխարհիս մէջ մէկը չպիտի իմանայ ինձմէ այս բանը , և հաւատալի եմ որ կրնամ ձեզմէ ալ նոյն խորհրդապահութիւնը յուսալ՝ և թէ կընդունիք : — Եւ որպէս զի քիչ մը զիս ճանչէք , կենացս համառօտ սրատմութիւնը կը գրեմ ձեզ , և այլն : »

Այս նամակէն ետև համառօտ կենսագրութիւնս մը կար :

### Ք Ղ Ո Ի Խ Ղ Գ .

Քիչ մ'երևակայութիւն ունեցող ընթերցողի մը զիւրին է հասկընալ թէ այսպիսի նամակ մը ո՞ր աստիճան կ'երև քտրացընէր խեղճ բանտարկեալ մը , մանաւանդ զիւրընտել բնաւորութիւն և սիրող սիրտ ունեցող բանտարկեալ մը : Առաջին զգացումս և զաւրարեկամութիւն կտալել այս անձանօթին հետ , խանդաղատիլ անոր տարաբազմութեանցը , և շնորհակալ ըլլալ ինձ ցուցը-

ցած բարեկամութենէն : — « Այն գոչեցի , կըն-  
դունիմ առաջարկու թիւնդ , ազնիւ մարդ : Այն  
թէ իմ նամակնեքս ալ քեզ այնչափ մխիթարու-  
թիւն տային՝ որչափ քու կիներդ ինձ պիտի  
տան , և որչափ առաջին գրածդ արդէն տուաւ : »

Եւ մանկահասն ուրախութեամբ մը կրկին կըր-  
կին կարգացի այն նամակը , հարիւր անգամ  
օրհնեցի զայն գրողը , և ինձ այնպէս թուեցաւ որ  
անոր ամեն մէկ խօսքը փափուկ եւ ազնիւ սրտի  
մը յայտարարութիւն էին :

Արևը մարը կը մտնէր , և աղօթքիս ժամա-  
նակն էր : Ո՛հ , որչափ կ'զգայի զԱստուած : Ո՛ր-  
չափ փառք կուտայի իրեն որ մտքիս ու սրտիս  
կարողութիւնները շնուաղեցնելու նորանոր մի-  
ջոցներ կը գտնէր : Ո՛րչափ կը նորոգուէր ու կը  
զօրանար սիրտս անոր ամեն անգին պարզենե-  
րուն յիշատակովը :

Պատուհանիս վրայ կանգնած էի՝ թներս  
վանդակասիւններէն դուրս հանած ու ձեռքերս ի-  
րար կցած : Ս. Մարկոսի եկեղեցին պատուհա-  
նիս տակն էր . անթիւ ազատ ազաւնիներ իրար  
կը կտցէին , կը թռչտէին և այն կատարեայ յար-  
կին վրայ բոյն կը գնէին . մեծավայելուչ երկինք  
մը տարածուած էր ասղես . Վենետիկի մէկ մա-  
սը՝ որ քանտէս կերկէր , աչքիս տակն էր , և  
մարդկային ճայնեքու հեռաւոր շշուեզ մը մեղմով  
ականջիս կը զարնէր : Այն շարաշուք՝ բայց հիա-



նալի վայրէն կը խօսակցէի Անոր հետ՝ որուն աչքը միայն կրնար զիս տեսնել : Անոր կը յանձնէի հայրս մայրս և ամեն մէկ սիրելիներս . կը թուէր ինձ թէ պատասխան կուտար ինձ ըսելով . «Վատան եղիր իմ մարդասիրութեանս վրայ» . ես ալ կը գոչէի . «Այն, քու մարդասիրութեամբ վրայ կը դնեմ յոյսս : »

Աւստի տեցի աղօթքս խանդաղատեալ, մխիթարեալ, առանց բանի տեղ դնելու մժղուկներուն խայթումքը՝ որ այն միջոցին ընդունէր էի առանց արգիլելու :

Նոյն իրիկունը, երբոր երեակայութեանս խանդը բիշ բիշ հանդարտելով՝ մժղուկները նորէն անսասն լի ըլլալ սկսան, եղէմքս ու ձեռքերս փաթ թելու պէտքը նորէն կզգայի, յանկարծ գռնիկ և շար խորհուրդ մը միտքս եկաւ ու զիս դող հանեց . հալածել ուզեցի, բայց չկրցայ :

Թրէմէրէլլօ վատ կասկած մը նշմարել տուեր էր ինձ Օսամէի նկատմամբ, որպէս թէ իմ գաղտնիքս կը լրտեսէ եղեր, այն պարզ և անմեղ հոգին՝ որ քաղաքականութեան բնաւին տեղեկութիւն չունէր, և ունենալ ալ չէր ուզեր :

Անհնար էր ինձ կասկածիլ անկէ . բայց կը հարցընէի ես ինձ . «Կրնամ նոյն վատահուժիւնն ունենալ Թրէմէրէլլօի վրայ ալ : Սթէ այս չարանքին նողկալի մեքենայութեան մը գործիք


էր . եթէ բերած նամակը նոր բարեկամի մը ձեռքով ինձմէ կարեօր զաղտնիք որսալու համար չեմ գիտեր որմէ հնարուած կեղծիք մ'էր : Թերևս իսկ այն նամակը զբող բանտարկեալը բնաւին անգոյ է . — Թերևս տնօրոյ չէ , բայց նենգաւոր մ'է որ ինձմէ զաղտնիք իմանալ կուզէ , որպէս զի զանոնք յայտնելով իր ազատութիւնը ձեռք բերէ . — Թերևս ստուգիւ պատուաւ որ մարդ մ'է , այն , բայց այն ժամանակ նենգաւորը Թրէմէրէլլօն է , որ ամսականին յաւելուած մը շահելու համար երկուքս ալ մատնել կուզէ : »

Ո՛հ , սոսկալի բան մ'է այս , բայց աւանդ . քանտի մէջ տառապող մարդու մը խիստ բնական է ամեն կողմէ ատելու թիւն ու դաւաճանութիւն կասկածել :

Սյս կասկածները զիս կը տանջէին , կը վհաւտեցնէին : Ոչ . Ծանձէի վրայ երբէք կասկածունեցած չէի : Սակայն քանի որ Թրէմէրէլլօ անոր վրայօք այն խօսքն ըրաւ , միտքս չարչարութիւ սկսաւ կէս կասկածով մը՝ չէ թէ Ծանձէի վրայ , այլ զայն թող տուողներուն որ սենեակս գար : Արդեօք իրենց յօժար կամօքը կամ բարձրագոյն հրամանէ մը հարկապարհով՝ զիս լրտեսչութե պաշտօն յանձնած էին այն աղջկան : Սթէ օյսպէս է , իրենց նպատակին չկրցան հասնիլ :

Իսկ անձանօթին նամակին զալով ինչ ընելու է : Սոհեմութեան անունով պատուեալ երկիւ-

դին խիստ և ճղճիմ խրատներուն հետևիլ . նա-  
 մակը Էտ տալ Թրէմէրէլլօի ըսելով թէ «Չեմ ու-  
 զեր խաղաղութիւնս վտանգի մէջ ձգել : » — Բսկ  
 եթէ նենգութիւն մը չկայ , եթէ այս անձանօթն  
 ստուգիւ իմ բարեկամութեանս արժանի մարդ  
 մ'է , և կարծէ որես քիչ մը վտանգ աչքս առնում  
 անոր միայնութեան գառնութիւնը մեղմելու  
 համար : Ո՛վ չուսուական , թերևս մա՛ր քեզմէ  
 երկու քայլ միայն հեռու է . կենախուզ գատակ-  
 նիքդ մէկ օրէն մէկալը կրնայ տրուիլ , և դու  
 յանձն չես առնուր սիրոյ գործ մ'ալ կատարել : Ու-  
 բեմն պատասխան գրեմ . այն պէտք է որ պա-  
 տասխան գրեմ : — Բայց եթէ ձախողաբար թըղ-  
 թակցութիւննիս բռնուի , և որչափ որ մէկը  
 խրղճմտանքին հարցնելով չկրնայ դայն յանցանք  
 մը համարիլ , այսու ամենայնիւ ճշմարիտ չէ որ  
 սարսափելի պատիժ մը կը կրէ խեղճ Թրէմէ-  
 րէլլօ : Այս նկատումը միայն բաւական չէ՛ զիս  
 բացարձակապէս պարտաւորելու որ գաղտնի  
 թղթակցութեան ձեռք չզարնեմ :



## Գ Լ Ո Ւ Ս Լ Ե .

Բոլոր իրիկունք մասայուզութեան մէջ անցուցի . գիշերը շկրցայ աչքս գոցել . և այսչափ անստուգութեանց մէջ չէի գիտեր ինչ որոշում ընելիքս :

Դեռ չլուսցած՝ անկողնէս վար ցատկեցի , և պատահանիս վրայ ելայ ազօթելու : Դժուար պարագաներու մէջ մարդ պէտք մը կղզայ աստուածային իմաստութեան դիմելու , անոր ազդմունքը լսելու և ըստ այնմ վարուելու :

Անանկ ըրի ես ալ . երկար ազօթքէ մը ետե՛ վար իջայ , մժգուկները վանեցի , խայթուածներով ծածկուած երեսներս մեղմով մը շփեցի , և որոշումս եղած էր : Թրէմէրէլլօի պիտի իմացընէի իմ երկիրս թէ այս թղթակցութիւնն իր կորրստեանը պատճառ կրնար ըլլայ . և թէ վարաներ՝ ետ կենայի , իսկ և թէ անն երկիրս թիւն ցուցընէր՝ ընդունէի :

Պարտեցայ սենեակիս մէջ մինչև որ պայմանեալ երգին մրմունջը լսեցի : Թրէմէրէլլօ խանուէ կը բերէր ինձ :

Տարակոյսս յայտնեցի իրեն , և գինքը վախցընելու համար խօսք շխնայեցի : Տեսայ որ ան-

զրրոյութի կամք մ'ունէր ծառայելու, կրօնէր,  
 երկու շնորհակց: Այս հաստատման թիւնը  
 բնաւ չէր համաձայնէր անոր հագարի գէմ-  
 բին և Թրէմէրէլլօ անուան հետ՝ զոր կուտայինք  
 իրեն: Բնչ և իցէ, ես ալ հաստատ կեցայ որոշ-  
 մանս վրայ:

«Քիներս բեզ կը թողում, ըսի իրեն, թող թ-  
 բեր ինձ այս նամակագրութեան համար, և վրա-  
 տան եղիր որ բանալիներուն շառաշխներ լսած  
 ասեմս՝ երբ որ ձեր երգին մրմունջը շլակ մ'իսկոյն  
 ամեն կատկածելի բաները կը ջնջեմ:»

— Սհաասիկ ձեզ թերթ մը թող թ, այսու-  
 հետե ալ որչափ թող թ ուզէք՝ կուտամ, և բո-  
 լորովին վատան կըլլամ ձեր խոհեմութեանը  
 վրայ:»

Քիմքս այրեցի խանութս շառաշխ ըմպելու հա-  
 մար: Թրէմէրէլլօ գնաց, և ես նստայ գրելու:

Կաւ կրնէի արդեօք: Ըրած որոշումս ստու-  
 գիւ Սասունացին ազդեցութեամբ էր, և թէ ոչ՝ իմ  
 ձեռներէց բնաորութեանս և ինձ հանոյ եղա-  
 ծը դժնդակ զոհերէ նախապատիւ բռնելու հա-  
 կամխաութեանս մէկ յաղթանակն էր: Միան-  
 գամայն անձանօթին ինձ ցուցրցած յարգանացը  
 փոխարէն գոռոզ մարդահանութիւն մը չէր. խո-  
 հական լաութիւնը քիչ շատ վտանգաւոր թղթակ-  
 ցութեանէ մը նախապատիւ բռնելով վատասիրտ  
 երկնաբու երկիւղ մը չէր:

Ի՞նչպէս լուծելու էր այս տարակոյսնեքը : Մի-  
ամտու թեամբ յայտնեցի ասոնք բանտարկու-  
թեան ընկերիս գրած պատասխանւոյս մէջ . բայց  
աւելցուցի թէ , ըստ իմ կարծեաց , երբոր մէկը  
համոզուած է թէ արդար պատճառներով և  
խրղճմտանքին ներելովը կը գործէ , յանցաւոր  
դատուելէ վախնալու չէ . սակայն պէտք էր որ  
ինքն ալ ուշի ուշով խորհէր մեր ձեռք զարկած  
կարևոր գործին վրայ , և անկեղծութեամբ ըսեր  
ինձ թէ այս որոշումն ըրած ատենը որոնք էին  
իր անըրկեանութեան կամ երկխղի պատճառնե-  
րը . եթէ վերստին խորհելով՝ այս ձեռնարկու-  
թիւննիս չտփազանց յանդուգն գտնէր , պէտք էր  
որ ամեն ջանք ընելով և ալ կենայինք այս թղթակ-  
ցութեան մեզի խօստացած միտիթարու թիւննե-  
րէն , և գոհ ըլլայինք քանի մը խօսքերու փո-  
խանակութեամբ , որոնք թէ և կարճ էին , այ-  
սու ամենայնիւ խորին բարեկամութեան անջըն-  
ջելի գրաւականներ էին :

Չորս երես գիր գրեցի անկեղծ բարեկամու-  
թեան խանդով բոցավառեալ : Համառօտիւ  
պատմեցի բանտարկութեանս պատճառը . ըն-  
տանեացս և ուրիշ ինձ սիրելի եղող քանի մ'ան-  
ձանց վրայ խօսեցայ սրտազեղ գորովանօք , և  
ջանացի մինչև հոգւոյս խորերն անոր ծանօթա-  
ցրնել :

Մտիկունք նամակս տարուեցաւ : Առջի գիշերը

քնացած չըլլալուս' սաստիկ յոգնած էի . ուստի  
քունս շուտով տարաւ , և առաւօտուն արթըն-  
ցայ սթափ և ուրախ . սիրտս կը բարասէր մտա-  
ծելով թէ զուցէ քարեկամիս սպասասխանն սաս-  
նալու քաղցր վայրկեանը մտա էր :



Գ Լ Ո Ւ Խ Լ Զ .

Պատասխանը խահուէին հետ եկաւ : Յատկե-  
ցի Քրէմլէրէլլօի ճիտը փարթթուեցայ և ըսի զո-  
րովանօք . Սասունած վարձատրէ քու այսչափ  
բարեսրտութիւնդ » — Իրմէ և անձանօթէն ու-  
նեցած կասկածներս փարատեր էին , բայց չեմ  
կրնար ըսել ինչո՞ւ համար . անշուշտ անոր հա-  
մար որ ատելի էին ինձ . անոր համար որ միշտ  
զգոյշ կենալով քաղաքականութեան վրայ յի-  
մարարար խօսելէ , այն կասկածներն անօգուտ  
կը թուէին ինձ . անոր համար որ ամեն բան սե-  
տեմնելու Տակիտեան դրութեան անսխալութեա-  
նը շատ չէի հաւատար , թէպէտ և Տակիտոսի  
հանճարին վրայ կ'զմայլէյի :

Յուլիանոս' (թղթակիցս այս անունը կուտար  
ինքզինքին) նամակին սկիզբը խել մը քաղաքա-

վարական խօսքեր ինձ ուղղելէ ետև՝ կըսէր թէ  
 ինքը բնաւ երկխաղ չունէր մեր թղթակցութեան  
 նը վրայ : Ասկից տալի՛թ առած՝ զիս կը հեզնէր  
 վարանամանցս համար , առջի բերանը մեզմ , բայց  
 ետքը քիչ մը կ՛ծու կերպով : Աերջապէս անկեղ-  
 ծութեան վրայ հարտար գովեստ մ՛ընելէ ետև՝  
 ներում կը խնդրէր ինձմէ չը ծածկելու այն տը-  
 հանութիւնը որ կըզգար՝ անսնելով իմ վրաս «Նր-  
 կխաղած տատամտութիւն մը , քրիստոնէական  
 խղճմտանքի դիւրազգածութիւն մը , որ չէր կըր-  
 նար համաձայնիլ ճշմարիտ փիլիսոփայութեան  
 հետ » . և կաւելցընէր .

«Ձեզ միշտ պիտի յարգեմ , թէ և այս կէտիս  
 վրայ չկրնանք համաձայնիլ . բայց դառ ահա՛ ան-  
 կեղծութիւնս զիս կը հարկադրէ ըսելու թէ ևս  
 կրօնը չունիմ . անոնց ամենն ալ կատեմ . և հա-  
 մեատարար Յուլիանոս անունը առած եմ , որով-  
 հետև այս բարի կայսրը քրիստոնէից թշնամի  
 էր . բայց ես անկէ շատ աւելի հեռուն կերթամ :  
 Թագաւոր Յուլիանոսը կը հաւատար Աստուծոյ  
 և կեղծուպատիր ջերմեռանդութիւններ ունէր :  
 Ես անոնց մէկն ալ չունիմ . Աստուծոյ չեմ հա-  
 ւատար . և ըստ իս՝ ամեն առարկինութիւն՝ ճշ-  
 մարտութիւնը և զայն փնտոողները սիրելու և  
 ինձ հանոյ չեղողներն առելու վրայ կը կա-  
 յանայ : »

Այս բերնով կը շարունակէր . և առանց պատ-



ճառարանելու՝ բերնին եկածը թող կուտար  
քրիստոնէութեան դէմ. ազգու պերճարանու-  
թեամբ կը գովէր առանց կրօնքի առաքինու-  
թեան գերագանցութիւնը. յետոյ՝ կէս լուրջ կէս  
ժողովական ոճով Յուլիանոս կայսեր ուրացու-  
թիւնը և Աւետարանին հետքն անգամ ջնջելու  
վարդապետական ջանքը կը գովէր :

Յետոյ վախճանով որ իմ կարծիքներուս չա-  
փագանց դպեր էր, ներում կը խնդրէր ինձմէ,  
և խատիւ կը գանգատէր անկեղծութեան այնպէս  
յաճախ պակսելուն դէմ : Աւերջապէս նորէն կը  
կրկնէր ինձ հետ յարաբերութիւն տննելու մեծ  
փափաքը, և զիս ողջունելով նամակը կը վեր-  
ջացրնէր :

Ներքեւը սա յեւագրուէր ինն ըրեր էր. «Նթէ  
Խղճիս դպչելիք բան մը կայ, բաւական անկեղծ  
չըլլայն է : Աստի չեմ կրնար ձեզնէ ծածկել  
որ ձեր ինձ հետ բանեցուցած քրիստոնէական  
լեզուն կեղծիք մը կը թուի աչքիս, և սրտանց  
կը փափաքիմ որ այնպէս եղած ըլլայ : Աւրեմն՝  
դիմակնիդ վար առէք. ահա ևս օրինակը տուի  
ձեզ : »

Չեմ կրնար ըսել այս նամակին իմ վրայ ըրած  
կարգէ դուրս տպաւորութիւնը : Առաջին խօսքե-  
րը կարգալուս՝ տարփաւորի մը պէս սիրտս կը  
բարասէր. յետոյ ինձ այնպէս թուեցաւ թէ սա-  
ռուցեալ ձեռք մը սիրտս կը սեղմէր : Յղճմտան-

քիս զիւրազգածութեանը վրայ ըրած երգիծա-  
նութիւնը զիս վիրաւորեց: Ստրջացայ այսպիսի  
մարդու մը հետ յարաբերութեան մտնելուս վրայ,  
ես՝ որ շնականութիւնն այնչափ կարհամարհեմ,  
ես՝ որ զայն ամենէն անտպայ և փիլիսոսիայու-  
թեան ամենէն հակառակ բերում մը կը համարիմ.  
ես որ յոխորտանքը երբէք բանի տեղ չեմ դներ:

Նրբոր նամակին վերջին խօսքն աւարտեցի,  
ծալիցի զայն երկու ձեռքս բթամատին ու ցու-  
ցամատին մէջ, և ձախ ձեռքս վեր առնելով՝ ազու-  
վերէն վար իջուցի, այն կերպով որ նամակին  
կէսը մէկ ձեռքս, կէսն ալ միւս ձեռքս մնաց:



### Գ Լ ՈՒ Ս Լ Գ.

Նայեցայ այն երկու ծուէններուն և վայրկեան  
մը մտածեցի մարդկային իրաց յեղականութեան  
վրայ: — Ո՛րչափ եռանդուն փափաք մ'ու-  
նէի քիչ մ'առաջ այս նամակն ստանալու, և հի-  
մայ սրամտութեամբ կը սլատռեմ զայն: Ո՛րչափ  
բազցր էր քիչ մ'առաջ այս տարաբաղդութեան  
ընկերիս հետ ապագայ բարեկամութեան մը նա-  
խազգացումը. որչափ կենդանի վստահութիւն

մ' ունէի փոխադարձ միմի թարու թիւններու վրայ .  
 սրչափ եշմարխտ տրամադրու թիւն մ' ունէի զայն  
 գորովանօք սիրելու , եւ հիմա զայն ժպիրհ կը  
 կոչեմ : —

Նամակին երկու կտորներն իրարու վրայ զրի ,  
 և արդէն ըրածիս պէս երկու ձեռքիս ցուցամա-  
 տին ու բթամատին մէջ առնելով՝ նորէն ձախ  
 ձեռքս վեր առի և ազս շուտով վար իջուցի :

Նայն գործողութիւնը կրկնելու վրայ էի , նա-  
 մակին չորս կտորներուն մէկը ձեռքէս ինկաւ :  
 Մռայայտր առնում , և այս ծուրու և ելնելու կարն  
 միջոցին մէջ միտքս փոխուեցաւ , ուզեցի նորէն  
 ընթեռնուլ այն խրոխտ նամակը :

Նստայ , չորս կտորներն իրարու քով բերի Ս .  
 Գրքիս վրայ , և նորէն կարդալով հետևեալ խոր-  
 հըրդածութիւնն սկսայ ընել .


— Նթէ պատասխան չտամ , պիտի կարծէ թէ ես՝  
 ամօթանար կորացելը՝ չեմ համարձակիր այսպի-  
 սի հսկայի մը հետ նորէն չափուիլ . Պատասխա-  
 նենք իրեն . ցոյց տանք իրեն թէ չենք վախնար  
 վարդապետութիւններն իրարու հետ բաղձա-  
 տելէ : Լաւ կերպով ցուցնենք իրեն թէ նուա-  
 տութիւն չէ մարդուս իր խորհուրդներն հասուն-  
 ցընել . քիչ մը վտանգաւոր երեցած որոշումնե-  
 րու մէջ վարանիլ , մանաւանդ երբ որ մեզնէ աւե-  
 լի՝ ուրիշներու վտանգաւոր են : Թող սովորի թէ  
 եշմարխտ քաջութիւնն ուրիշի խղճմտանքին

վրայ ծիծաղելը չէ . հշմարխտ ազնուականութիւնն ամբարտաւանութեան մէջ չէ : Բացարեւը իրեն Քրիստոնէութեան սքանչելի իրաւունքը և անհաւատութեան անգորութիւնը :

Վերջապէս , եթէ այս Յուլիանոսն իմ կարծեացս բացարձակապէս հակառակ կարծիքներով կը պարծի , եթէ կծու երգիծանութիւններ կը շռայլէ ինձ , եթէ իմ սիրոյ զգացումս բանի տեղ չդներ , ասիկայ ապացոյց մը չէ՞ իր լրտես չըլլալուն : — Բայց թերևս խորամանկութեան նրբութիւն մ'է իմ ինքնասիրութիւնս այնպէս խըտախառն ծաղիկելը : — Սակայն ոչ . չեմ կրնար հաւատալ . ես չարամիտ մ'եմ որ անոր յանդուգն հեզութիւններէն վիրաւորուելով ինքզինքս համոզել կուզեմ թէ զանոնք ինձ ուղղոզն ամենացած մարդ մ'է : Թանձր չարամտութիւն , զոր հազար անգամ դատապարտած եմ այլոց վրայ , գուրս ել սրտէս : Այ , Յուլիանոս ինչ որ է՝ այն է , աւելի բան մը չէ . ժպիւրն մ'է , բայց ոչ լրտես : — Եւ ստուգիւ ունի՞մ իրաւունք անոր անկեղծութիւն կոչածը ժրպրհութիւն կոչելով կըշտամբելու : Այս է եղեր քու խոնարհութիւնդ , ո՞վ կեղծաւոր : Բաւական է որ մէկը մտքի մոլորութեամբ մը սուտ կարծիքներ պաշտպանէ և քու հաւատքդ այսպանէ , իսկոյն զայն նզովելու իրաւունք կընծայես քու անձիդ : — Աստուած գիտէ թէ քրիստոնէի մը սրտին մէջ տեսնուած

այդ կատարի խոնարհութիւնը՝ այդ չարակամ նախանձաւորութիւնը՝ այս անհաւատին յանդուգրն անկեղծութենէն վատթարագոյն չէ՞: Քերևս անոր սաստիկ ճշմարտասիրութիւնն իմինէս աւելի հաստատուն կրօնասիրութեան փոխուելու համար՝ շնորհաց ճառագայթ մը միայն կը պակասի իրեն: — Աւելի լաւ ըրած չէ՞ի ըլլար, եթէ փոխանակ բարեկանալուս և ինքզինքս անկէ լաւագոյն ենթադրելու՝ անոր համար աղօթէի: — Ո՛վ գիտէ, թերևս ես ասդին իր նամակը կատարարար պատռած միջոցիս՝ ան իմինս նորէն կը կարդար քաղցր բարեկամութեամբ, և իմ բարեւրտութեանս վատահելով՝ իր անկեղծ խօսքերէն վիրաւորուելու զիս անկարող կը կարծէր: Ո՛վ է մեր երկուքին մէջ վատթարագոյնը, այն՝ որ կը սիրէ և անկեղծաբար «Քրիստոնեայ չեմ» կըսէ. թէ այն՝ որ «Քրիստոնեայ եմ» կըսէ ու չսիրեր: — Մարդու մը հետ երկար ժամանակ կենակցելէ ետքն ալ դժուար է զայն ճանչել, և ես կուզեմ որ այս մարդը մէկ նամակով մը ճանչած ըլլամ: Այսչափ հաւանականութիւներու մէջ չի՞ կրնար ըլլալ որ այս մարդը՝ առանց ինքնիրեն խոստովանելու՝ իր անաստուածութեանը մէջ խաղաղ սիրտ չունենալով՝ իրեն հետ վիճարանելու զիս զրգռէ, յուսալով իր մտքին մէջ թէ իմ ցուցըցած փաստերէս կրնայ թերևս յաղթահարիլ: Ո՛հ, եթէ այսպէս է, Աստուած

մեծ, քու ձեռքիդ մէջ ամենէն անարժան գործիք-  
ները կրնան մեծ գործ կատարել. ընտրէ՛ զիս  
ուրեմն, ընտրէ՛ զիս այս գործին համար: Չօրու-  
ար և սուրբ ապացոյցներ ազդէ՛ ինձ, որպէս զի  
համոզեմ այս եզղկելին որ քեզ օրհնէ, և սովորի  
թէ քեզմէ հետո չկայ առաքինութիւն մը որ  
հակաառութիւն չըլլայ:



### Գ Լ Ո Ւ Թ Լ Ը .

Նամակին չորս կտորները մանր մանր պատ-  
ուցի՛ առանց ամենևին բարկութիւն տննաւորու-  
պատուհանը ելայ, ձեռքս դուրս երկնցուցի, և  
զիտեցի թէ հոմիս ո՛ւր կը տանի այն թուղթի կը-  
տորուանքը: Մէկ քանին եկեղեցւոյն կապար-  
եայ յարկին վրայ ինկան. ուրիշներն ալ՝ երկար  
ժամանակ օդին մէջ պտոյտկելէ ետև գետինն ին-  
կան: Վերջապէս այն կերպով յիշ ու ջան եղան  
որ մարդկաբոզ չէր զանոնք ժողովելու և անոնց  
պարունակութեանը հաստ ըլլալու:

Ետքը նստայ նամակ մը գրեցի Յուլիանոսի,  
ամեն գուշութիւն ընկելով որ գծումսութիւն չու-  
նենամ՝ և ոչ ալ երևցնեմ:

Նախ ծիծաղեցայ իր այն երկիւղին վրայ՝ որով  
 կը վախնար թէ ես խղճմտանքի դիւրազգածու-  
 թիւնն այն աստիճանի կը հասցընեմ որ չէր կըր-  
 նար համաձայնիլ փիլիսոփայութեան հետ, և  
 ազաչեցի զինքը որ գննէ այս կէտիս վրայ իր դի-  
 տողութիւնները դողրեցնէ: Քովեցի իր դուռ-  
 նած անկեզձու թիւնը. ասպահովցուցի զինքը  
 թէ այս մասին ես ալ իրեն պէս պիտի ընէի, և  
 աւելցուցի թէ ըսածիս ասպացոյց մը տալու հո-  
 մար՝ Քրիստոնէութիւնը ջատագովելու կը պատ-  
 րաստուէի, «Քաջ համոզուած ըլլալով, կըսէի,  
 որ ինչպէս ես ձեր ամեն կարծիքը բարեկամա-  
 բար լսելու միշտ յօժար եմ, դուք ալ խի՛ննե՛րս  
 հանդարտ ոգով լսելու վեհանճնութիւնը կու-  
 նենար: »

Ջատագովութիւնս քիչ քիչ ընդարձակելու  
 միտք ունէի: Այս գիտաւորութեամբ սկսայ  
 նախ Քրիստոնէութեան էութիւնը բացատրել.  
 — Աստուածագաշատ թիւն ասանց սնտագաշատու-  
 թեան. — Սզբայրութիւն մարդոց մէջ. — Առա-  
 քինութեան հասնելու մշտնջենաւոր փոյթ. — Սո-  
 նարհութիւն ասանց նուաստութեան. — Աւե-  
 հանճնութիւն ասանց գոռոզութեան. և ասանց  
 օրինակ Աստուածամարդ մը: Ասկէց աւելի մեծ,  
 աւելի փիլիսոփայական ինչ կրնար ըլլալ:  
 Յետոյ կը ջանայի հաստատել թէ ինչպէս այն  
 վսեմ իմաստութիւնը քիչ կամ շատ ազար կեր-

պով տարածուած էր այն մարդոց մէջ՝ որք բա-  
նականութեան լուսով ճշմարտութիւնը փնտուեր  
էին . բայց երբէք չէր տարածուած բոլորովին աշ-  
խարհի մէջ . և ինչպէս երկնաւոր Տիրոջ աշխարհ  
եկած ժամանակ ամենապայծառ կերպով ինքնին  
յայտնուեր՝ այն սքանչելի ծաւալումը մարդկա-  
յին ամենատկար միջոցներով կատարեր էր :

Այն բանն որ ամենէն մեծ փիլիսոփաները  
չկրցան կատարել , այն է՝ կռապաշտութեան  
կործանումն և եղբայրութեան ընդհանուր քա-  
րոզութիւնը , քանի մ'անշուք սաւաքեալներ  
կատարեցին : Այն ժամանակ զերեայ ազատու-  
թիւնն որ քան զօր աւելի յաճախեց , և վերջապէս  
ստանց զերութեան քաղաքակրթութիւն մ'երե-  
ւան ելաւ . ընկերութեան վիճակ մը՝ որ հին փի-  
լիսոփայներուն անհնար թուեր էր :

Վերջապէս Քրիստոսի գալուստէն ի վեր աշ-  
խարհի պատմութեան համառօտ բովանդակու-  
թիւն մ'ըրի ցուցընելու համար թէ ինչպէս Ա-  
նոր հաստատած կրօնքը միշտ համաձայն գրու-  
նուած է քաղաքակրթութեան ամեն հնարաւոր  
յառաջադիմութեանց հետ : Աերեմն սուտ էր այն  
կարծիքը թէ քաղաքակրթութիւնն իր յառա-  
ջագէմ ընթացքը շարունակելու որ ըլլայ՝ Աւետա-  
բանը պիտի դադրի անոր համաձայն գտնուել :

Նամակս խիստ մանր գրով և խիստ երկար զը-  
րեցի , բայց թուղթը հատնելուն համար չկրցայ



աւելի երկարել : Արկին և կրկին կարդացի նամակիս ներածութիւնը և տեսայ որ լաւ գրուած էր : Մէջը բնաւ Յուլիանոսի և բղիճանու թեանց դէմ խօսք չկար, ընդհակառակն լի էր բարեկամական խօսքերով որ սրտէս ներշնչեալ էին, որովհետև սիրտս արդէն կատարելապէս ներողամտութեան եկած էր :

Յուզարկեցի նամակը, և հետևեալ առաւօտուն անհամբերութեամբ պատասխանին կրպասէի :

Թրէմէրէլլօ ներս մտաւ ու ըստ .

«Պարտնը չկրցաւ պատասխան գրել ձեզ, բայց կազաչէ որ զուարեարանութիւնը շարունակէք :

— Զուարեարանութիւն մի, գոչեցի : Անիկա ատանկ բան ըսած ըլլալու չէ, դուք սխալ հասկըցեր էք :

Թրէմէրէլլօ տեսերը վեր անկելով. «Սխալ հասկըցեր եմ :

— Բայց աներկբայ էք զուարեարանութիւնը ըսելուն :

— Ինչպէս որ այս միջոցիս Ս. Մարկոսի գանգակին հնչումը լսելուս աներկբայ եմ :» (Ստուգիւ զանգակը կը հնչէր նոյն միջոցին) :

Սահուէս խմեցի և լուս կնցայ :

«Բայց ըսէք ինձ, այդ Պարտնը նամակս ծայրէ ծայր կարդացէ՞ր էր :

— Աարծեմ թէ կարդացեր էր, վասն զի կը ծի-

ճաղէր, խնթի պէս կը ծիծաղէր : յետոյ ձեր նամակը գնտակ մ'ընելով վեր կը նետէր և երբոր քոթի իրեն թէ չմտնայ զայն ջնջել, խկոյն պատրուակց :

— Շատ աղէկ : »

Սահուէիս գուաթը թրէմէիէլլօի տուի ըսելով թէ յայտնի կը տեսնուէր որ այս խահուէն Պէթթիմա տիկնոջ եփածն էր :

« Գէ՞շ էր :

— Զգուելի էր :

— Եւ սակայն ես եփեցի զայն, և հաւատացէր որ խիստ թանձր շինեցի և մէջը դիրտ չկար :

— Գուցէ բերանս համ չկայ այսօր : »

## Ք Լ Ո Ւ Խ Լ Ք

Բոլոր առաւօտը ճեմեցի սենեակիս մէջ դողալով : — Ի՞նչ տեսակ մարդ է այս Յուլիանոսը : Ինչո՞ւ նամակս գուարճաբանութիւն կը կոչէ : Ինչո՞ւ կը ծիծաղի վրան և զայն գնտակ շինելով կը խաղայ : Ինչո՞ւ տող մ'անգամ պատասխան չգրէր : Ասանկ են ամեն անհաւատները : Իրենց կարծեաց տկարութիւնն զգալով, երբոր մէկը զանոնք

հերքելու կեցնէ, ականջ չեն կատար, կը ծիծաղին, և իրենց բարձրագոյն հանճարը ցոյց կուտան որ ալ բան մը քննելու պէտք չունի: Թըշուսաներ: Եւ ե՞րբ եզեր է ինչիստիայութիւն մ'առանց քննութեան, առանց լուրջ վիճարանութեան: Եթէ ստոյգ է որ Նեմոկրիտէս միշտ կը ծիծաղէր, այն խեղկատակ մ'էր: Բայց արժանի էր այս ինձ: Ինչո՞ւ ձեռք զարնէի այս թըղթակցութեան: Ըսենք թէ առջի բերանը քաղցրը յոյսեր ունեցայ, ներելի էր: Բայց երբոր տեսայ թէ այս մարդը լիրբ խօսքեր կընէր, անմատթիւն չէ՞ր նորէն նամակ գրելս: —

Միտքս գրեր էի որ ալ բան չգրեմ անոր: Ճաշիս ժամանակը՝ Թրէմէրէլլօ գինիս առաւ, սըրուակի մը մէջ լցոյց և գրականը դնելով՝ «Աարձեմ թէ, ըսաւ, քովս թուղթ ունիմ ձեզ տալու: Եւ հանեց տուաւ:»

Երթալէն ետե քանի որ այն սպիտակ թուղթին կը նայէի, միտքս կը թելադրուէր վերջին նամակ մ'ալ Յուլիանոսի գրելու, և ժպրհութեան խայտառակութիւնը լաւ մ'իրեն հասկըցնելէ ետե յարարելութիւնը վերջացնելու:

— Նեղեցիկ թելադրութիւն, ըսի ետքը ես ինձ, անոր արհամարհանացը արհամարհութիւն հասուցանել. Քրիստոնէութիւնը առաւել ևս ատելի ընել անոր՝ ցուցընելով թէ ես քրիստոնէայ՝ անհամբերութեան ու ամբարտաւանութեան.

անձնատուր կը լլամ : — Այս, այս չվայլեր. թղթակցութիւնը բարբառովին դադրեցնենք : — Բայց եթէ այսպէս մէկէն 'ի մէկ կտրեմ, չըսե՞ր արդեօք թէ անհամբերութիւնն ու մեծամտութիւնն ինձ յաղթեցին : — Աէտք է նորէն անգամ մ'ալ նամակ գրեմ իրեն առանց դառնութեան : Բայց եթէ կրնամ առանց լեզուս գրել, աւելի լաւ չըլլար որ անգէտ ձեանամ իր ծաղրանայր և նամակիս պարզեամ զուարեարանութիւն մակդիրին : Աւելի լաւ չըլլար որ քրիստոնէութեան վրայ ջատագովութիւնս պարզաբար շարունակեմ : —

Քիչ մը խորհելէ ետե՛ս այս վերջին որոշումս ի գործ դնելու ձեռք զարկի :

Արիկունը նամակիս ծրարը ղրկեցի, և հետեւեալ առաւօտուն քանի մը ատղ շնորհակալութիւն ընդունեցի խիստ պաղ կերպով գրեամբ, սակայն մէջը կծու խօսք ամենևին չկար. բայց ոչ ալ ամենափոքր հաւանութեան խօսք մը և շարունակելու հրաւէր մը կար :

Այս սոմսակը հաճոյ չեղաւ ինձ, այսու ամենայնիւ որոշեցի մինչև ծայրը երթալ :


Ճտուելիք խնդիրս համառօտ չէր կրնար ըլլալ. ուստի հինգ կամ վեց և յիսար նամակներու նիւթեղաւ, որոց ամեն մէկուն քսկոնական շնորհակալութիւն մը պատասխան կընդունէի, հետն ալ նիւթէն գորս քանի մը խօսքեր : Մերթ իր թըշնամեաց անէծք կը կարդար, մերթ գանոնք ու

նիծելուն վրայ կը ծիծաղէր ըսելով թէ բնական  
է որ տկարները կը հարստանարուն զօրաւոր-  
ներէն, և կը ցաւէր իր հօօր չըլլալուն վրայ. և բ-  
րեմն ալ իր սիրահարութիւնները և անոնց իր և-  
րևակայութեան վրայ բանեցուցած իշխանութիւ-  
նը կը յայտնէր ինձ :

Սակայն, Քրիստոնէութեան վրայ զբաժն առն-  
ջին նամակէն և տե կըսէր ինձ թէ երկար պա-  
տասխան մը պատրաստելու ետեւէ էր : Շարա-  
թէն աւելի սպասեցի, և այն միջոցին ալ ամեն  
օր նամակ կը գրէր ինձ, բայց ուրիշ նիւթերու  
վրայ կը խօսէր և շատ անգամ անպարկեշտ նիւ-  
թերու վրայ :

Ազաջեցի իրեն որ ինձ գրելիք պատասխանը  
չմոռնայ, և ապսպրեցի որ յառաջ բերած փառ-  
տերս լրջաբար կ'ըսեյու մտադիր ըլլայ :

Սրտնեալ կերպով մ'ի՛նձ պատասխանեց,  
ինքզինքին փիլիսոփայ, աներկնիս մարդ, մարդ  
մը՝ որ փոստուրային շապտեր չըլլալը չեսնելու հա-  
մար մօտե կայելու պէտք չունի որ տաղտաները  
չռայելով : Յետոյ նորէն գայթակղական ար-  
կածներու վրայ խօսիլ սկսաւ զուարթութեամբ :



## Պ Լ Ո Ւ Թ Թ .

Ար համբերէի տառնց , որպէս զի կրօնամուլ ու  
աններող ըսել չտամ ինձ , և վասն զի տակաւին  
կը յուսայի որ այս տախտական խեղկատակու-  
թեանց տենդին վերջապէս լրջմտութիւնը կը յա-  
ջորդէր : Այսու ամենայնիւ զինքը կը յանդիմանէի  
կանանց նկատմամբ ունեցած անպատկառու-  
թեանը և սիրոյ չարաչար գործածութիւն ընե-  
լուն համար և կը ցաւէի այն դժբաղդներուն վրայ ,  
որք իրեն զոհ եղեր էին կըսէր :

Իմ այս տհաճութեանս չը հաւատալ կը ձևա-  
ցընէր ու կը կրկնէր . « Արչափ ալ տրանջելու ըլ-  
լաք անհամեատութեան դէմ , աներկբայ եւ որ  
ըրած պատմութիւններուս ձեզ կը դուարձացնեմ .  
ամեն մարդ ինձ պէս զուարճութիւնը կը սիրէ ,  
բայց ինձ պէս անպատրուակ խօսելու անկեղծու-  
թիւնը չունին . այնչափ պիտի խօսիմ այս նիւ-  
թիւ վրայ որ ձեզ պիտի սքանչացնեմ , և վերջա-  
պէս խղճմտանքովսիդ պիտի հարկադրիք զիս  
գովելու : »

Բայց շարաթները կանցնէին և այս ծանականաց  
վերջը չէր բերեր . իսկ ևս ամեն անգամ նամակ  
ստանալուս՝ յուսալով միշտ թէ բերանը փոխած  
կըլլայ , հետաքրքրութեամբ ծայրէ ծայր կը

կարգայի, և սիրտս՝ թէպէտ տակաւին չէր հրապուրուած, այսու ամենայնիւ կը խռովէր և ազնիւ ու սուրբ խորհրդածութիւններէ կը քեցէր: Բարքն աւրուած մարդոց ճեւտ խօսակցողին բարքը կարուի՝ եթէ սոսկական մարդոց առաքինութենէն՝ իմ առաքինութենէս զերագոյն առաքինութիւն մը չունենայ:

—Սհնա առիւր յանձնապատանու թեանդ պատիժը, կըսէի ես ինձ: Սհնա այս կըլլայ այն մարդուն շահը որ քարոզիչ ըլլալու կեղնէ՝ առանց անոր սրբութիւնն ունենալու: —

Օրին մէկը միտքս դրի սա խօսքերը գրել անոր. «Սինչև հիմա ամեն ջանք ըրի որ ձեզ ուրիշ նիւթերու զբաղեցընեմ, բայց դուք միշտ անհաճոյ պատմութիւններ կը դրկէք ինձ. արդէն անկեղծաբար ըսած եմ այս ձեզ: Եթէ ձեզ կը յարմարի աւելի արժանատի նիւթերու վրայ խօսակցիլ, շարունակե՛ք թղթակցութիւնն իս. ապա թէ ոչ՝ վերջին բարեր տանք մէկ մէկու, և իւրաքանչիւրս ինքն իրեն մնայ:»

Նրկու օր անպատասխանի մնացի, և առջի բերան ուրախ եղայ. —Ո՛հ, օրհնեալ առանձնութիւն, կը գոչէի, որչափ նուազ դատն ես քան առանց համակրութեան և ազնուութեան խօսակցութիւն մը: Փոխանակ անպարկեշտ խօսքեր կարդալով տագնապելու, փոխանակ մարդկութեան պարծանք եղող զգացմանց յայտարարու-

Թիւններով անոնց դէմ մաքառելու համար զուր տեղը յոգնելու, նորէն պիտի սկսիմ խօսակցել Սատուծոյ հետ, ընտանեացս և ճշմարիտ բարեկամներու քաղցր յիշատակին հետ: Նորէն պիտի սկսիմ Ս. Գիրքը յանախ կարդալ. խորհրդածու թիւներս սեղանին վրայ գրել՝ սրտիս խորը հետազօտելով և զայն լաւ ցնելու ջանալով. անմեղ տխրութեան մը քաղցրութիւնը ճաշակել, որ հեշտալի և մեղապարտ նկարագիրներէն հազարապատիկ նախամեծար է: —

Ամեն անգամ որ Թրէմէրէլլօ բանասկը մտնէր՝ «Դեռ պատասխան չունիմ» կըրէր:

— Բարի, կը պատասխանէի:

Երրորդ օրն ըսաւ ինձ. Պ. Ն. քիչ մը հիւանդ է:

— Ի՞նչ ունի:

— Չըսեր ինչ ունենալը, բայց շարունակ պառկած է անկողնին վրայ. չուտեր, չխմեր և սիրտը նեղցած է: —


Սիրտս շարժեցաւ մտածելով որ հիւանդ էր և մէկը չունէր որ զինք սփտիէր: Եւ այս խօսքը շրթունքէս կամ մանաւանդ սրտէս դուրս փախաւ. «Երկու տող զիր գրեմ իրեն»:

— Իրիկուան տանիմ, ըսաւ Թրէմէրէլլօ և դուրս ելաւ:


Սեղանին առջև նստած ժամանակս վարանման մէջ էի: — Ազէկ կընէ՞մ այս թղթակցութիւն-



նր նորէն սկսելով : Ես չէի որ բիչ մ'առաջ ա-  
ռանձնութիւնը կ'օրհնէի՝ իբրև վերստին ձեռք  
բերուած զանձ մը : Ի՞նչ փոփոխամտութիւն է  
իմս : Սակայն այս դժբաղդ մարդը չուտեր , չխը-  
մեր , անշուշտ հիւանդ է : Սաանկ պարագայի մը  
մէջ զայն լքանել կըլլայ : Վերջին նամակս խիստ  
էր . գուցէ ան ալ վշտացուցած պիտի ըլլայ զայն :  
Թերևս ինչ որ ալ ըլլայ մեր հարձեաց տարբե-  
րութիւնը , ան չպիտի խղէր երբէք մեր բա-  
րեկամութիւնը : Նամակս իրօք եղածէն աւելի  
չարակամ թուած պիտի ըլլայ անոր , և վերջին  
ու արհամարհան հրածեշտ մը համարած ըլ-  
լալու է զայն : —



### Ք Լ ՈՒ Թ Թ Ա .



Այսպէս գրեցի .  
«Վիճանամ որ ազէկ չէք , և շատ կը ցաւիմ :  
Սրտանց կուզէի ձեր բով ըլլալ և բարեկամի  
մ'ինկած ամեն խնամքը ձեզ ընել . կը յուսամ որ  
երեք օրէ ի վեր լուս կենանուդ միակ պատճառ  
ձեր տկարութիւնն եղած պիտի ըլլայ : Սակայն  
իմ վերջին նամակէս ալ վիրաւորուած չըլլաք :  
Հաւատացէք որ առանց ամենափոքր չարակա-

մութեան գրած եմ զայն, նախապէս ունենալով  
միայն որ աւելի լուրջ նիւթոց վրայ գրելու ձեզ  
յորդորեմ: Յթէ գրելու կարողութիւն չունիք,  
գոնէ ձեր առողջութեան վիճակին վրայ ճիշդ  
լուր ղրկեցէք ինձ. ես ամեն օր վարկարարազի  
քան մը կը գրեմ ձեզ՝ մտքերնիդ զբազեցնելու և  
ձեզ բարեկամ ըլլալս յիշեցնելու համար:»

Երբէք չէի սպասէր գրած նամակին պէս պա-  
տասխան մ'ընդունելու: Այսպէս կ'սկսէր իր նա-  
մակը. «Բարեկամութիւնս կը վերցընեմ վրայէդ.  
Եթէ դուն իմ բարեկամութիւնս չես յարգեր, ես ալ  
քուիդ չեմ յարգեր: Ես թշնամանաց ներող մարդ  
չեմ. անգամ մը մերժուելէ ետև՝ նորէն ետ դարձող  
մարդ չեմ: Արովհետև հիւանդ ըլլալս գիտես, նո-  
րէն կեղծաւորաբար ինձ կը կաշիս, յուսալով որ  
հիւանդութիւնն իմ ուղեղս կը տկարացընէ և քու  
քարոզներդ մտիկ կընեմ...»: Այսպէս կը շարու-  
նակէր իր նամակը չարաչար զիս նախատելով,  
հեզնելով, կրօնի և բարոյականի վրայ խօսած-  
ներս ծաղրելով, և վերջապէս յայտարարութիւն  
ընելով թէ միշտ նոյն պիտի ապրի և նոյն պի-  
տի մեռնի. այսինքն իր փիլիսոփայութենէն  
տարբեր ուրիշ ամեն փիլիսոփայութիւնները  
աատիկ տտելով ու արհամարհելով:

Ապշեցայ մնացի:

— Ահա ապիկ գեղեցիկ դարձ մը, կըսէի տըրտ-  
մութեամբ և դողալով: Աստուած վկայ է զիտա-

և որով թիւններուս անարատութեանը :

— Ո՛հ, այս թշնամանքներուն արժանի չեմ ես :

— Ուրեմն համբերութիւն . այս ալ նոր պատրանք մ'է : Թողունք այս մարդը եթէ ինք զինք թշնամանեալ կերևակայէ, որպէս զի չներկուբերկրութիւնն ունենայ : Ես պարտաւոր չեմ ըրածէս աւելին ընելու : —

Սակայն քանի մ'օր ետքը սրտմտութիւնս իջաւ, և մտածեցի որ այն կատաղի նամակը կըրնար կրից կարճատև գրգռութեան մ'արգասիք ըլլալ : — Թերեւս արդէն ամօթահար եղած է անոր վրայ, կըսէի ես ինձ . բայց մեծասիրտ է, ըրած պակասութիւնը չխոստովանիր : Հիմա որ ժամանակ անցած և կիրքը հանդարտած է, վեհանձնութիւն ըրած չեմ ըլլար եթէ նորէն նամակ մ'ալ գրեմ անոր : —

Եստ ծանր էր ինձ ինքնասիրութեանս այս մեծ զոհն ընել . սակայն ըրի : Ան որ կը խոնարհի առանց գձձութեան, որչափ անիրաւ արհամարհանք ալ կրելու ըլլայ՝ պատիւը չի կորսնցընէր :

Նամակ մը պատասխան ստացայ որ աւելի մեղմ էր, բայց դարձեալ թշնամանալից էր : Արսէր ինձ այս անողորջելին թէ իմ աւետարանական հեղութեանս վրայ կզմայլէր :

Վերստին սկսինք ուրեմն թղթակցութիւննիս, կըսէր, բայց յստակ խօսինք : Մեք իրար չենք

սիրեր, բայց զբօնելու համար թղթակցինք՝  
մտքերնուս անցածը ազատորար թուղթին վրայ  
թափելով, դուք ձեր Սերովբէական զազափար-  
ները, ես ալ հայհոյու թիւններս. դուք ձեր հի-  
ացմունքը մարդոց և կանանց արժանապատ-  
ու թեանը վրայ, ես ալ իմ պղծութեանցս  
անկեղծ պատմութիւնը, երկուքս ալ իրար  
դարձունելու յուսով: Սթէ այս պայմանիս հա-  
հիք, պատասխան տուէք ինձ:

Պատասխանեցի. «Ձեր այդ պայմանը պայ-  
ման չէ, զուարճարանութիւն է: Սս ձեզնէ բա-  
րեկամութիւն չխնայեցի: Հիմա խղճմտանքս ու-  
րիշ պարտք չղներ վրաս, բայց միայն ամեն հը-  
նարաւոր բարիք մաղթել ձեզ՝ թէ այս և թէ  
միւս կենաց մէջ:

Սյսպէս ըննցան այս մարդուն հետ ունեցած  
զաղտնի յարարերու թիւններս. . . . Ո՛վ գիտէ,  
թերևս չար մարդ մը չէր, բայց թշուառու-  
թիւնը զինքը դառնացուցեր և յուսահատութիւնն  
ալ մոլորեցուցեր էր:



## Ք Լ Ո Ւ Թ Թ Բ .

Նորէն անգամ մ'ալ անկեղծութեամբ օրհնեցի առանձնութիւնը , և ժամանակ մ'օրերս առանց նոր դէպքի մ'անցան :

Ամառն անցաւ , և սեպտեմբերի երկրորդ կէտին մէջ տաքը մեղմացեր էր : Հոկտեմբերն եկաւ և կուրախանայի որ սենեակս ձմեռը լաւ ըլլալու էր : Բայց ահա առաւօտ մը բանտապետն եկաւ ու ըսաւ ինձ թէ բանտս փոխելու հրաման եղած է իրեն :

« Եւ ո՞ւր պիտի դնեն զիս »

— Ասկէ քանի մը քայլ անդին աւելի զով սենեակ մը :

— Եւ ինչո՞ւ այդ բանը չմտածեցին երբոր ես տաքէն կը մեռնէի , և օդը մթեղներով ու անկողինս մլուկներով լի էր :

— Հրամանը հիմայ եկաւ :

— Համբերութիւն , երթանք : —

Թէպէտ և շատ նեղութիւն քաշեր էի այս բանտին մէջ , այսու ամենայնիւ տրտմելով ձգեցի , ոչ միայն անոր համար որ ձմեռը խիստ լաւ պիտի ըլլար , այլ ուրիշ շատ պատճառներու համար : Հոն էին այն մրջիւնները որ կը սիրէի և կը սնուցանէի այնպիսի խնամով մը՝ որուն հայ-

րական պիտի ըսէի եթէ այս խօսքս ծիծաղելի  
 չըլլար : Քանի մ'օրէ ի վեր , այն սիրուն սար-  
 դըն ալ՝ որուն վրայ արդէն խօսած եմ՝ գացեր էր ,  
 չեմ գիտեր ինչ պատճառաւ : Արսէի . — Ո՛վ գի-  
 տէ , թերևս պիտի յիշէ զիս , թերևս պիտի  
 դառնայ զայ : Ահ հիմա որ ես կերթամ , եկած  
 ժամանակ բանտս թափուր պիտի գտնէ . կամ ե-  
 թէ նոր հիւր մը գտնուի , թերևս սարդերու թըշ-  
 նամի մէկ մ'եղած կըլլայ , որ իր հողաթափովը  
 կը վերցընէ այս գեղեցիկ ոստայնը և խեղճ կեն-  
 դանին ալ կըսպաննէ , Սակէց զատ , այս տխուր  
 բանտը չգեղեցկացնու ինձ համար Մանձլի գորո-  
 վագթու թեամբը : Այս պատուհանին էր որ շատ  
 անգամ կը կրթնէր , և առատաբար քաքարի  
 փշրանք կը թափէր մըշիւններուս : Այս տեղ  
 սովորու թիւն ունէր նստելու . հոս կը պատմէր  
 ինձ այս բանը , հոն այն բանը . դարձեալ այս  
 տեղն էր որ սեղանիս վրայ ծռելով՝ ազատու-  
 թեամբ կարտասուէր :

Նոր դրուած սենեակս ալ կապարներուն ներ-  
 քէ էր , բայց հիւսիսի և արևմուտքի դէմ էր , և  
 երկու պատուհան ունէր , մէկը հիւսիսէն , միւսը  
 արևմուտքէն , մշտնջենաւոր հարբուխի և սար-  
 սափելի ցուրտի օթևան մը ձմեռուան խստաշունչ  
 սոսիսներուն մէջ :

Արևմտեան կողմի պատուհանը շատ մեծ էր .  
 հիւսիսայինը փոքր ու բարձր , և անկողնիս վրայ էր :

Նախ մեծ պատուհանէն դուրս նայեցայ, և տեսայ որ պատրիարքական Պալատին վրայ կը նայէր: Ուրիշ բանտեր ալ կրային իմինիս մօտ՝ աջ կողմէն քիչ մը տարածուած թևին և դիմացն երկնցած շէնքի մասին մէջ: Վերջի մասին մէջ երկու բանտ կար իրարու վրայ: Տակինը մեծ պատուհան մ'ունէր, որուն մէջէն կը տեսնէի որ շնորքով հագուած մարդ մը կը պտրտէր ներսը: Այն մարդը Պ. Քարթուալի տի Չէզէնան էր: Տեսաւ զիս, քանի մը նշաններ ըրաւ ինձ, և անուննիս իրարու ըսինք:


Ետքը ուզեցի հասկընալ թէ միւս պատուհանս ուր կը նայէր: Սեղանն անկողնիս վրայ դրի, սեղանին վրայ ալ աթոռ մը, և բազում դժուարութեամբ վրան ելայ նայեցայ որ պալատին տանեացը մէկ մասին զուգահաւասար էր սենեակս: Պալատէն անդին քաղաքին և լճին մէկ մեծ մասը կը տեսնուէր:

Երկար նկատեցի այն զեզեցիկ տեսքը, և թէ պէտ իմացայ որ դուռս կը բանային, սակայն չչարժեցայ տեղէս: Դուռս բացողը բանտապետն էր, երբոր զիս այնպէս օղին մէջ դարեալ տեսաւ, մտնալով որ անհնար էր ինձ մկան պէս անցնիլ դուրս ելնել վանդակաձողերուն մէջէն, կարծեց թէ փախչելու փորձ կընէի. շփոթելով ցատկեց անկողնիս վրայ ելաւ՝ առանց իր ազդեր յօդացաւը նայելու, և ոտքերէս բռնած զիս վար քաշել սկսաւ արծիւի պէս պոռալով:

«Բայց չէ՞ք տեսներ ըսի, ապուշ մարդ, որ այս վանդակաձողերը թող չեն տար ինձ փախչիլ: Չէ՞ք հասկընար որ ես լուի հետաքրքրութեան համար ելեր եմ հոս:

—Ար տեսեմ, Պարոն, կը տեսեմ... կը հասկընամ. բայց վար իջիք, վար իջիք, այդ բանը ձեզ փախչելու կրնայ թելադրել: —

Եւ որովհետեւ հարկէր, ծիծաղելով վար իջայ:



### Ք Լ Ո Ւ Խ Ք

Քովի բանտերուն պատուհաններէն ուրիշ վեց մարդիկ տեսայ որք ինձպէս քաղաքականութեան գործերու պատճառաւ բանտարկեալ էին:

Այսպէս ահա առաջինէն աւելի սամայաբնակ առանձնութեան պատրաստած ժամանակս տեսակ մ'ընկերու թեան մէջ գտայ ինքզինքս: Առջի բերան գոհ չեղայ: Պատճառը կէս մ'երկար ժամանակ առանձին մնալս էր որով անընկերատէր բնաւորութիւն մ'ստացեր էի, կէս շ'ալ Յուլիանոսի հետ ունեցած յարաբերութեանցս անհաճոյ ելքն էր որ զիս կասկածոտ ըրեր էր:

Սակայն շատ չանցաւ, անոնց հետ թէ՛ ձայ-



նով և թէ նշանացի ըրած համառօտ խօսակցութիւններս ինձ բարիք մը թուեցան . և եթէ ոչ ուրախութեան՝ զոնէ զբազանաց առիթ մը համարեցայ : Իսկ Յուլիանոսի հետ ունեցած յարաբերութեանցս վրայ՝ և ոչ մէկուն խօսք բացի . որովհետև պատուոյ վրայ երդում տուեր էինք իրարու որ այս գաղտնիքը մեր մէջ թաղուած մնայ : Եւ եթէ հիմա այս յիշատակագրիս մէջ անոր խօսքը կընեմ , պատճառն այս է որ եթէ երբէք մէկը կարգայ ասոնք , անհնար է որ այս բանտերուն մէջ փակուած այնչափ անձանց մէջ Յուլիանոսի ով ըլլալը կարենայ գուշակել :

Քանի մը բանտակիցներու հետ սկսած այս բարեկամական յարաբերութեան վրայ ուրիշ մ'ալ աւելցաւ որ նոյնպէս շատ քաղցր եղաւ ինձ :

Մեծ պատուհանէն նայած ատեն , դիմացս երկընցած բանտերուն ետևի կողմն անթիւ տանիքներ կը տեսնէի վրանին ծխնելոյզներով , հովանոցներով , զանգակատուներով և գմբէթներով , որոց երկար շարքը հեռուն երկինքին ու ծովուն հետ կը խառնուէր :

Ամենէն մօտ գտնուող տանը մէջ՝ որ Պատրիարքարանին մէկ թեր ձևացուցած էր , բարի ընտանիք մը կը բնակէր , որ իմ վրայ զգացած գութն իր ողջոյններովն ինձ յայտնելով՝ շնորհակալութեանս վրայ իրաւունք ստացաւ : Տարաբազմ մարդոց տրուած մէկ ողջոյնը , մէկ կա-

րեկցութեան խօսքը՝ մեծ գթութիւն է :

Այն տանը պատուհանին մէջ նախ տղայ մը տեսայ ինն տասն տարեկան, որ իր փոքրիկ ձեռքները դէպ ինձ կը վերցընէր, և լսեցի որ կը զոչէր :

Մայրիկ, մայրիկ, նա վերը կապարներուն մէջ մէկը դրեր են : Ահա բանտարկեալ, ու՛րեւ զոչ :

— Սիլվիօ Բէլլիքօն էմ » պատասխանեցի : Աւրիշ անկէ մեծկակ տղայ մ'ալ վաղեց պատուհանը և զոչեց :

« Դուն Սիլվիօ Բէլլիքօնն եմ :

— Այո, և դուք՝ սիրուն տղայք :

— Ես Անթօնիօ Ս. . . կը կոչուիմ, և եղբայրս Յովսէփ : »

Յետոյ անդին դարձաւ ըսելով. « Աւրիշ ի՞նչ կրնամ հարցնել : »

Տիկին մը՝ որ կարծեմ մայրերնին էր և կէս մը պահուրտած էր, քաղցր խօսքեր կը թելադրէր այն սիրուն տղայոց. անոնք ալ կը կրկնէին զանոնք ինձ. ես ալ սրտագին խանդադատանօք շնորհակալ կըլլայի :

Այս խօսակցութիւնները կարճ էին, և պէտք չէր երկնցընել, վասն զի բանտապետը կը պօռար. բայց ամեն օր կը ճորոզուէին, առաւօտուն ցերեկին և իրիկունսն, և շատ կը մխիթարուէի : Նրբոր ճրագները կը վառէին, տի-

կինը կը գոցէր պատուհանը , և տղայքը՝ Գիշեր  
բարի , Սիլվիո , » կը գոչէին ինձ : Մայրերնին  
ալ մութէն քաջալերուելով խոռովեալ ձայնով  
մը կը կրկնէր . « Գիշեր բարի , Սիլվիո , մի վը-  
հատիք : »

Երբոր տղայքը նախաճաշ կընէին կամ բան-  
մը կուտէին , կըսէին ինձ . « Ա՛հ , եթէ կարե-  
նայինք մեր կաթով խահուէէն քեզ ալ տալ : Ա՛հ ,  
եթէ կարենայինք մեր քաքարներէն քեզ ալ  
տալ : Այդ բանտէն ազատած օրդ՝ մի մոռնար , ե-  
կո մեզ տես . քեզի ազուր և տաք քաքարներ և  
հազար համբոյր տանք : »



**Գ Լ ՈՒ Խ Թ Թ Գ .**

Հոկտեմբեր ամիսն իմ տարեդարձներուս ա-  
մենէն դժնդակն է : Նոյն ամսոյն ԱՅին էր որ բըռ-  
նուէր էի նախընթաց տարին : Նոյն ամիսն ու-  
րիշ տխուր յիշատակներ ալ միտքս կը ձգէր : Եր-  
կու տարի առաջ , հոկտեմբեր ամսոյ մէջ , ըն-  
տիր մարդ մը որ շատ կը յարգէի , աղէտալիար-  
կածով մը թիչինօ զետին մէջ խղդուէր էր : Ե-  
րեք տարի առաջալ Օտտոյանտօ Պրիքէ տնունս պա-

տանի մը որ գաւկի պէս կը սիրէի՝ յակամայլոց  
ինքզինք սպաններ էր հրացանով մը : Պատա-  
նեկութեանս սկիզբներն ալ ուրիշ դժբաղդու-  
թիւն մ'եկեր էր զլիսուս հոկտեմբեր ամսոյ մէջ :

Թէպէտ ևս նանրահաւատ չեմ, սակայն այս-  
չափ դժբաղդութեանց ճախողակի նոյն ամսոյն  
մէջ հանդիպումը խորին ախրութիւն կը սլատ-  
նատէր ինձ :

Պատուհանէս այն սիրուն տղայոց և կալանա-  
կիցներու հետ խօսակցած ժամանակս՝ զիս  
զուարթ կը ցուցընէի . բայց խշտեակս մըտա-  
ծիս պէս՝ անպատակի թաղծութիւն մը կը ծան-  
րանար սրտիս վրայ :

Գրիչը ձեռքս կառնուի քանի մը տող շարագ-  
րելու կամ ուրիշ գրական նիւթոյ մ'ինքզինքս  
վարժեցնելու համար . բայց կարծես թէ անընդի-  
մակաց զօրութիւն մը զիս կը բռնադատէր ուրիշ  
բան գրելու : — Ի՞նչ : — Նրկար նամակներ որ  
չէի կրնար զրկել : Նրկար նամակներ սիրելի  
ընտանեացս ուղղուած, որոց մէջ սրտիս բոլոր  
զգացումները դուրս կը գեղուի : Սեղանին վրայ կը  
գրէի, և տքն ալ կը քերթէի : Գրածներս խան-  
դազատանաց ջերմ յայտարարութիւններ էին և  
երջանկութեան քաղցր յիշատակներ՝ զորս իմ այն-  
չափ ներողամիտ և այնչափ գորովասիրտ ծնո-  
ղացս և դրարցս և քերցս քով վայելէր էի : Զիս  
անոնց քաշող բաղձանքը՝ լսել մը խանդավառ

նիսթեր կազդէր ինձ : Ամբողջ ժամեր գրելէ ետեւ , տակաւին բացատրելիք ուրիշ զգացումներ ալ կը մնային :

Ըրածս՝ նոր ձևով մը կենսագրութիւնս նորէն շինել էր , և անցեալս նկարագրելով ու ձեռքէս ելած երջանիկ ժամանակին վրայ բռնաբար աչքըս կեցնելով՝ ինքզինքս խաբել էր : Բայց , Աստուած իմ , քանի քանի անգամ իմ ամենագեղեցիկ օրերուս պատմութիւնը կենդանի պատկերի մը մէջ ծրագրելէ ետեւ , ինքզինքս խօսակցած անձերուս հետ կարծելու չափ երևակայութիւնս արբեցրնելէս ետեւ , յանկարծ ներկայն միտքս գալով՝ զրիչը ձեռքէս կիյնար և սոսկամբ կը դողայի : Այն վայրկեաններն ստուգիւ սարսափելի էին : Արդէն այնպիսի վայրկեաններ կրեր էի երբեմն , բայց այս միջոցին կրած անձկութեանցս նմանները երբէք չէի կրած :

Այս յուզմունքն և այս սարսափելի անձկութիւններն զգացմանցս չափազանց զրգռուէն յառաջ եկած կը համարէի , որուն պատճառն ալ զրութիւններս նամակի ձևով ընելս և զանոնք սիրելիներուս ուղղելու սովորութիւնս էր :

Ուրիշ բան ընել ուզեցի և չկրցայ յաջողիլ : Ուզեցի գոնէ նամակի ձևը թողուլ , և անհնարին եղաւ ինձ : Երբոր զրիչը ձեռքս կառնուի ու զրբել կ'սկսէի , միշտ գորովալից և տխրագլեաց նամակ մը կ'արտագրէի :

— Մի թէ ես կամքիս ազատ տէրը չե՞մ, կըսէի  
 ես ինձ: Արդեօք ուղեղս խանգարե՞ր է որ չուզածս  
 ընելու կը հարկադրիմ այսպէս: Մինչև հիմա այս  
 բանը չէր պատահած ինձ: Այսպիսի վիճակ  
 մ'եթէ բանտարկութեանս առաջին օրերը պա-  
 տահէր, ըսելիք չկար. բայց հիմա որ միտքս  
 կատարելապէս հանդարտած պէտք էր ըլլալ,  
 հիմա որ բուռական սնեալ եմ փիլիսոփայական  
 և կրօնական մտածութիւններով, ի՞նչպէս գերի  
 եղեր եմ սրտիս կոյր բազմանայ: Ի՞նչպէս այս  
 աստիճան տղայամիտ կրնամ ըլլալ: Աւրիշ բա-  
 նի մտադիր ըլլանք: —

Աւստի կը ջանայի աղօթք ընելու. կ'աշխատ-  
 տէի որ գերմաներէն լեզուն սովրելու զբաղելով  
 յազթեմ մտքիս: Աւնայն ջանք: Յանկարծ կը  
 տեսնէի որ նորէն ուրիշ նամակ մը կը գրեմ:

---

Ք Ա Ռ Ի Խ Խ Ե .

---

Մտաց այսպիսի վիճակ մը հզմարիտ հիւան-  
 դութիւն մ'էր. չեմ գիտեր թէ տեսակ մը քնա-  
 շրջկութիւն էր չե՞մ կրնար ըսել: Անտարախոյս  
 երկար մտախոհութիւններէ ու քնհատութիւն-

ներէ յառաջ եկած տկարութեան մ'արդիւնք էր :

Աւելի հեռուն գացի : Քիշերները տենդ մը գալ սկսաւ . վրաս և չէի կրնար քնանալ : Նրկունները խահուէ խմելէ դադրեցայ , բայց օգուտ մը չեղաւ . քնհատութիւնս նոյն էր :

Աը թուէր ինձ թէ երկու կերպ մարդ կար վրաս . մէկը միշտ նամակ գրել կուզէր , միւսն ալ ուրիշ բան մ'ընել կուզէր :

— Ուրեմն , կըսէի ես ինձ , իրաւախոհ ըլլանք . նամակ գրէ , բայց գերմաներէն լեզուով . այս բանը միջոց մը կըլլայ գերմաներէն լեզուն սովրելու :

— Սկսայ այնուհետեւ ամեն բան ազաւաղ գերմաներէնով մը գրել , և այս կերպով գոնէ քիչ մը յառաջ գացի այն լեզուին մէջ :

— Առաւօտուն՝ երկար արթնութեանէ ետև՝ ուղեղս յոգնած՝ կերպ մը զգայազրկութեան մէջ կիյնայի : Այն ժամանակ երազներուս կամ մանաւանդ մտքիս դանդաղումներուն մէջ՝ հայրս , մայրս , կամ ուրիշ սիրելի անձ մը կը տեսնէի որ վիճակիս վրայ կուրար . կը լսէի անոնց ցաւազին հեծութիւնները և յանկարծ կարթննայի նոյնպէս հեծկլտալով և սարսափէ զարնուած :

Երբեմն այս կարճատև երազներուս մէջ կը թուէր թէ մօրս ձայնը կը լսէի որ միւսները կը հսիթարէր . յետոյ անոնց հետ բանաս մտնելով՝ ուրբ խօսքեր կընէր ինձ համբերութեան վրայ .

և նոյն միջոցին որ մեծապէս կուրախանայի իր  
և միւսներուն արիասրտութեանը վրայ, յան-  
կարծ արտասուել կսկսէր, և ամեն մարդ կու-  
լային: Անհնար է ըսել ինչպէս շարաշար կը  
տանջուէր նոզիս այն ժամանակ:

Այս տանջանքէն ինքզինքս ազատելու համար  
միտքս կը դնէի որ բնառ անկողին չմտնեմ:  
Կանգեղս բոլոր զիշերը վառ կը պահէի և սեղա-  
նիս առջև նստած կը կարդայի ու կը գրէի: Բայց  
ի՛նչ: Աուզար վայրկեան մը, ուր թէ և արթուն  
էի և կը կարդայի, բայց բան մը չէի հասկընար.  
և զլուխս բացարձակապէս անկարող էր իր խոր-  
հրդածութիւնները կանոնաւորելու: Այն ժա-  
մանակ կ'սկսէի հատուածներ օրինակել, բայց փո-  
խանակ օրինակածիս վրայ խորհելու, ուրիշ  
բաներու վրայ կը խորհէի, տարաբաղդութիւն-  
ներս կը մտածէի:

Եթէ անկողին մտնէի, աւելի գէշ էր: Ի՛նչ-  
պէս և ի՛նչ դիրքով որ պառկէի, ջղային սաստիկ  
ցնցումներով կը տատանէի, և հարկ կըլլար ելնել  
նստիլ: Կամ, թէ որ բիշ մը ննջէի, յուսահա-  
տական երազներն արթուն կենալէ աւելի կը  
չարչարէին զիս:

Աղօթքներս չոր ու ցամաք էին, այսու ա-  
մենայնիւ յաճախ կ'աղօթէի: Երկար խօսքեր  
չէի ուղղեր Երկնից, բայց սիրտս առ Աստ-  
ուած կը բարձրացնէի, առ մարդացեալն Աստ-



ուած՝ որ ամեն մարդկային վիշակերը կրեց՝  
 Այս ստակալի վիշե բնե բուն մէջ՝ երբեմն երևակա-  
 ժու թիւնս այն աստիճան կը բորբոքէր, որ թէ և  
 արթուն էի, այսու ամենայնիւ կը թաւէր ինձ թէ  
 մերթ հեծու թիւններ և մերթ մարած ծիծաղներ  
 կը լսէի բանտիս մէջ: Մանկութենէս ի վեր եր-  
 բէր հաւատք ընծայած չունէի վիճակներու և ո-  
 գիներու: Բայց հիմա այս հեծու թիւններն ու ծի-  
 ծաղները զիս կը պակուցանէին: Չէի գիտեր  
 ինչ մեկնութիւն տայի ասոր, և վերջապէս կը  
 հարցնէի ես ինձ թէ արդեօք անծանօթ և չար  
 զօրութեան մը խաղալիկ եղեր էի:

Քանի քանի անգամ ճրագն ասի դռալով և  
 նայեցայ որ անկողնիս ներքև մէկը պահուրտած  
 չըլլայ զիս ծաղրելու համար: Քանի քանի ան-  
 գամ կարծիք ըրի թէ գոցէ զիս առջի սենեակէս  
 վերցընելով հոն բերելնուն պատճառն այս էր որ  
 վերջինին մէջ գաղտնի դուռ մը կար գետնին վը-  
 րայ, կամ պատերուն մէջ գաղտնի ծակ մը, ուս-  
 կից կալանաւորներս կրնային իմ ամեն ըրածս  
 լրտեսել և անգթաբար զիս զարհուրեցնելով  
 զուարճանալ:

Սեղանիս առջև նստած ժամանակս՝ կը թուէր  
 ինձ երբեմն թէ քղանցս կը քաշէին. երբեմն  
 զիրքս կը հրէին որ գետինը կիյնար, երբեմն ալ  
 գիտես թէ մէկը ետևէս փչելով ճրագս մարել  
 կուզէր: Այն ժամանակ կը ցատկէի կելնէի, չորս

զիս կը նայէի, կասկածելով կը ստորտէի սե-  
նեկիս մէջ, և կը հարցնէի ես ինձ թէ խեղճ էի  
արդեօք թէ խելքս գլուխս էր: Ինչ որ կը տես-  
նէի, ամենուն մէջ ալ չէի կրնար խկուծիւնը  
պատրանքէն զանազանել և անձկութեամբ կը  
գոչէի:

«Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թո-  
ղեր զիս:»

### Գ Լ Ա Ի Խ Խ Զ .

Անգամ մը՝ արշալուսէն քիչ մ'առաջ պատկե-  
լով՝ աներկիւմիս գիտէի որ թաշկինակս բարձիս  
տակը դրած էի: Քիչ մը թմրութենէ ետև՝ ըստ  
սովորութեան արթընցայ և թուեցաւ ինձ թէ  
զիս կը խեղդէին: Պարանոցս պինդ մը կապ-  
ուած էր: Չարմանալի բան. թաշկինակս ա-  
մուր մը վզիս փաթթուած և քանի մը կապերով  
սեղմուած էր: Արնայի երդնուլ որ այն կապերը  
եւ չէի կապած, և թաշկինակիս անգամ ձեռք  
չէի դպցուցած քանի որ բարձիս ներքեր զրե-  
ր էի: Պէտք էր որ երազիս մէջ կամ մտքիս գա-  
ռանցմամբն ըրած ու բոլորովին մոռցած ըլլայի .  
բայց չէի կրնար հաւատալ ասոր, և այնուհետև

ամեն զիշեր կը վախնայի որ զիս պիտի խեղ-  
դէին :

Այս խենթութիւններն ուրիշներուն նրչափ  
ծիծաղելի պիտի երևին՝ կը հասկընամ . բայց ես՝  
որ զանոնք կզգայի , այնչափ զէշութիւն ու տագ-  
նապ կը կրէի անոնցմէ , որ տակաւին մինչև հի-  
մա միտքս զան՝ կը սոսկամ :

Առաւօտները կը փարատէին , և քանի որ ցե-  
րեկուան լոյսը տեւէր , այն ատիճան հոգիս զօ-  
րացած կզգայի այս արհաւիրքներուն դէմ՝ որ այ-  
նուհետև նորէն զիս վախցընելնին անհընար կը  
թուէր ինձ : Բայց արևը մարը մտնելուն պէս  
կ'սկսէի դողալ , և ամեն զիշեր առջի զիշեր-  
ներուն սոսկալի խօլականները կը նորագուէին :

Որչափ տկար էի զիշերուան մութին մէջ ,  
այնչափ ցերեկը զիս շուարթ ցուցնելու կը ջա-  
նայի երբոր կը խօսակցէի ընկերներուս , պատ-  
րիարքարանի երկու տղայոց և պահապաններուս  
հետ : Ըրած գուարճարանութիւններս լսողը չէր  
կրնար այնպիսի ողբալի տկարութեան մ'են-  
թակայ ըլլալս մտքէն անգամ անցունել : Այս  
ջանքով կը յուսայի սիրտս զօրացնել . բայց ա-  
մեն ջանք անօգուտ էին : Այն զիշերային երևոյթ-  
ները՝ որ ցերեկը խօլական ցնորքներ կը համա-  
էիր , իրիկուան զարհուրելի խկութիւններ կը լ-  
լային ինձ համար :

Եթէ համարձակէի , յանձնաժողովին պիտի

ազնայէի որ սենեակս փոխէր, բայց վրասս խըն-  
դացնելու երկիւղիւ չկրցայ ընել :

Վերջապէս ամեն խորհրդածութեանց, ամեն  
որոշմանց, ամեն պարապմանց և ամեն ազօթից  
անօգտա ըլլալը տեսնելով, Աստուծակէ բոլորո-  
վին և ընդ միշտ լքեալ ըլլալու ստակալի գաղա-  
փարը տիրեց վրաս :

Նախախնամութեան դէմ մտաբերուած այն  
ամեն թշուառ իմաստակութիւնները՝ որ քանի  
մը շարտթ առաջ մտքիս առողջ վիճակին մէջ  
յիմարտութիւն կը թուէին ինձ, մեքենաբար բըզ-  
զալ սկսան ուղեղիս մէջ, և ուշադրութեան ար-  
ժանի երևցան : Քանի մ'օր մաքառեցայ այս  
փորձութեան դէմ, բայց ետքն ունձնատուր եղայ :

Կրօնի բարութիւնը ժխտեցի : Ամենէն կտ-  
տաղի անատուածներուն պէս՝ ժամանակա-  
Յուլիանոսին ինձ գրածին պէս՝ ես ալ սկսայ ը-  
սել թէ կրօնքը մտքերը տկարացնելէ զատ ու-  
րիշ արգիւնը մը չունի : Ամբարտաւանութեամբ  
կարծեցի թէ զԱստուած ուրանալով միտքս  
իր զօրութիւնը նարէն պիտի գտնէր : Անմիտ-  
յոյս : զԱստուած կտրանայի և չար ու տնկերե-  
ւոյթ էակներուն գայութիւնը չէի կրնար ուրա-  
նալ, որք զիտես թէ բոլորաիքս առած իմ  
վիշտերէս իրենց ճարակ գտնել կուզէին :

Ի՞նչ անուն տալու է այս չարչարանքին : Բա-  
ւական է ըսել թէ հիւանդութիւն մ'էր : Կամ թէ

միանգամայն Աստուծոյ կողմէն պատուհաս մը  
չէ՞ր իմ ամբարհաւանութիւնս կտարելու և ինձ  
սովբեցնելու համար որ առանց լուսոյ կրնայի  
ես ալ Յուշիանոսի պէս անհաւատ և անկէ աւելի  
անմիտ ըլլալ :


Ինչ և իցէ, Աստուած զիս այս մեծ չարիքէն  
անահնկալ կերպով մ'ազատեց :

Առաւօտ մը, խահուէս խմելէս ետև սաստիկ  
խիթ և փսխում մը բռնեց զիս. կարծեցի թէ  
զիս թունաւորեր էին: Փսխումներէն յոգնելով  
քրտնեցայ և անկողին մտայ: Աէս աւուր մօտ  
հանգիստ քուն մը ննջեցի որ մինչև իրիկուն  
տևեց: Արթընցայ զարմանալով այնչափ եր-  
կար հանգստութիւն մը վայելելուս վրայ, և ա-  
աւելի ննջելու պէտք չզգալով՝ ելայ կանգնեցայ:

— Եթէ ոտքի վրայ ըլլամ՝ աւելի զօրաւոր  
կըլլամ իմ սովորական արհաւիրքներուն դէմ,  
ըթի ես ինձ: —

Բայց արհաւիրքները չեկան: Անպատմելի կե-  
ղաւ ուրախութիւնս, և շնորհակալութեանս ե-  
ռանդին մէջ Աստուածապաշտութեան զգացումս  
նորոգուելով՝ գեօինն ինկայ իրեն երկրպագե-  
լու և քանի մ'օր զինքը ուրանալուս համար թո-  
ղութիւն հայցելու: Այս ուրախութեան զեզումը  
զիս ուժամտափ ըրաւ, և քանի մը վայրկեան ծուն-  
կի վրայ աթոռակի մը կըրթնած մնալէ ետև՝ նորէն  
քունը զիս կոխեց, և այն զիրքին մէջ ննջեցի:

Մէկ կամ քանի ժամ ետքը (չեմ գիտեր որչափ) կէս մ'արթընցայ և հազիւ կրցայ ինքզինքս անկողնիս վրայ նետել առանց հանուելու . անմիջապէս քունս տարաւ և մինչև արշալոյս ննչեցի : Հետևեալ օրն ալ մինչև իրիկուն զգայագրկութեան վիճակի մէջ էի : Իրիկունը կանուխ պառկեցայ և գիշերն ի բուն ննչեցի : Չեմ գիտեր ինչ յանկարծական և բուռն ճիգ մ'էր որ բնութիւնը գործեր էր վրաս . բայց բժշկուեր էի :



### Գ Լ Ո Ւ Խ Խ Ե .

Այն ժամանակ դադրեցաւ ստամոքսիս նողկանքը որ երկար ժամանակէ ի վեր կը քաշէի . գլխուս ցաւը փարատեցաւ , և ախորժակս կարգէ դուրս կերպով բացուեցաւ : Կերածս խիստ ազէկ կը մարտէի և օր ըստ օրէ կը կազդուրէի : Սքանչելի Նախասխնամութիւն . զիս խոնարհեցընելու համար ուժս առեր էր , և հիմա նորէն կուտար . վասն զի դատաստաններուն ժամանակը կը մօտենար , և Խնքը չէր ուզեր որ մէկէն ի մէկ իմացած ատենս ընկնէի :

Նոյեմբեր 24ին , մեր ընկերներէն մէկը՝ Տօբ-

Թօր Ծօրէսթի՛ յանկարծ կապարներէն հանուեցաւ և չկրցանք իմանալ թէ ո՞ւր կը տանէին Բանտապետը կիներ և պահապանները ստաներէին : Մէկն ալ չէր ուզեր ինձ յայտնել այս գաղտնիքը :

« Ի՞նչ կուզէք իմանալ, կըսէր ինձ Թրէմէրէլլօ, եթէ բարի բան մը չկայ ձեզ իմացնելիք : Արդէն բաւականէն աւելին ըսի ձեզ, բաւականէ՛ն աւելին :

— Աւրեմն ինչ օգուտ ունի ձեր այդ լռութիւնը, ըսի դողալով, միթէ ես չհասկըցայ : Մահուան դատապարտութիւն է :

— Ո՞վ . . . ան . . . Տարթոր Ծօրէսթին . . . »  
Թրէմէրէլլօ կը վարանէր, բայց շատխօսութիւնն ալ իր գլխաւոր առարկինութիւններէն մէկն էր :

« Նարը չըսէք ինձ համար թէ շատախօս է, ես չէի ուզեր այս կերպ բաներու վրայ բերանս անգամ բանալ, դուք զիս բռնադատեցիք . ետքը չմտնաք :

— Այո՛, այո՛, ես բռնադատեցի ձեզ, բայց մի վախճաք, ըսէք ինձ ամեն բան : Ի՞նչ ըրին խեղճ Ծօրէսթիին :

— Ո՛հ, տէր, զինքը Սօբիրիի կամուրջէն անցուցին : Նդեռնագործներուն բանար դրուած է, Թէ ան և թէ ուրիշ երկու անձինք իրենց մահուան դատակնիքը լսեցին :

— Եւ այն դատակնիքն ի գործ պիտի դրուի . . .  
 Էրբ : Ո՛հ եղկելիները : Եւ ո՞վ են միւս երկուքը :

— Ասկէց աւելի բան մը չեմ գիտեր . . .  
 չեմ գիտեր . . . դատակնիքը դեռ չէ հրատարա-  
 կուած : Վենետիկի մէջ խօսք կայ թէ մէկ քանի  
 անձանց կեանքը պիտի շնորհուի : Աստուած տայ  
 մէկն ալ չմեռնի : Աստուած տայ որ եթէ ամենն  
 ալ մահուանէ չկրնան ազատիլ , գոնէ դուք ա-  
 զատիք . վասն զի ձեզ . . . ներեցէք համարձա-  
 կութեանս . . . եզրօր պէս կը սիրեմ : »

Եւ սիրտը շարժելով դուրս ելաւ գնաց : Ընթեր-  
 ցողը կրնայ երևակայել ինչ սաստիկ յագման  
 մէջ ինկայ այն օրը՝ հետևեալ գիշերն . և յաջորդ  
 քանի մը օրերը՝ առանց աւելի բան մ'իմանալու :

Սնատու գութիւնն ամիս մը տևեց : Վերջապէս  
 առաջին դատաստանին վերաբերեալ վճիռներն  
 հրատարակուեցան : Բազմաթիւ ամբաստան-  
 եալներ դատապարտութիւն կրեց էին , որոց ի-  
 նը մահուան , բայց յետոյ կեանքե ընին շնորհուե-  
 լով շղթայակապ բանտարկութեան դատապար-  
 տուեր էին , ոմանք քսան տարի , ոմանք տաս-  
 նեւհինգ տարի , և այս երկու կարգն իրենց պա-  
 տիժը Մօրավիայի Պրիւն քաղաքին մօտ Սբիլ-  
 պերկի բերդին մէջ պիտի կրէին , ուրիշներ ալ  
 քիչէն քիչ տասն տարի բանտարկութեան դա-  
 տապարտուէր էին , և այս վերջիններն ալ Կու-  
 պիանայի բերդը պիտի դրուէին :



Այս առաջին դասու դասապարտելոց պատժոյն  
 փոփոխութիւն շնորհուիլը՝ երկրորդ դասու դա-  
 տապարտելոց ալ կեանքը շնորհուելուն նշան  
 մ'էր . կամ թէ առաջինները՝ ծածուկ ընկերու-  
 թեանց դէմ ելած հրամանագիրներուն հրատա-  
 րակուելէն առաջ բռնուած ըլլալնուն համար՝  
 այս շնորհը միայն անոնց եղած էր . իսկ ետքէն  
 բռնուողներն օրինաց բոլոր խստութեամբը պի-  
 տի պատժուէին :

— Այս տարակոյսներուն լուծումը հետոս չկրր-  
 նար ըլլալ , կրտէի ես ինձ : Ուրեմն գոն թիւն  
 Երկնից , որ ինձ ժամանակ կուտայ մահը կան-  
 խառ տեսնելու և ինքզինքս պատրաստելու : —

Գ Լ Ո Ւ Խ Ե Ը .

Իմ միակ մտածութիւնս էր քրիստոնէաբար  
 և պատշաճ արիութեամբ մեռնիլ : Ասխաղանէն  
 ազատելու համար անձնասպանութեան խորհուրդ  
 ծագեցաւ մաքիս մէջ , բայց շատ փարատեցաւ :  
 Ի՞նչ ատուելա թիւն ունի ինք զինք ապանելը  
 դահի ձեռք սեռնելէ : Իր պատիւն ազատելու  
 միջոց մ'է : Է՛հ , ազայամտութիւն չէ արդեօք կար-

ծելը թէ դահճի խաղ խաղալը չխաղալէն աւելի սպառուաւոր է, երբ որ վերջապէս մեռնիլ հարկ է: Յնթադրելով իսկ թէ քրիստոնեայ եղած չըլլայի, անձնասպանութիւնը՝ լաւ մտածելով՝ անմիտ և անօգուտ գոհացում մը կը թուէր ինձ:

— Սթէ կենացս վախճանն հասած է, կըսէի ես ինձ, բաղդաւոր չեմ այս կերպով հասնելուն համար որ ինձ ժամանակ կը թողու մտախոհ ըլլալու, մարդոց արժանի փափաքներով և զըղջմամբ խղճմտանքս մաքրելու: Աամկին աչքին՝ կախազանի վրայ մեռնիլը մահուան ամենէն գէշ տեսակն է, բայց իմաստունին աչքին՝ այս կերպ մահը լաւագոյն է այն մահերէն որ հիւանդութեամբ կը հասնին՝ երբ որ մեր իմացականութիւնը տկարացած է և հոգինիս կարող չէ երկրաւոր խորհուրդներէ վեր բարձրանալու: —

Այս խորհրդածութեան ուղղութիւնն այնպիսի խորին տպաւորութիւն մ'ըրաւ մտքիս վրայ, որ մահուան և մինչև անգամ այս տեսակ մահուան մը սոսկումը բոլորովին փարատեցաւ: Սրկար մտածեցի սուրբ խորհուրդներուն վրայ՝ որ այն հանդիսաւոր վայրկեանին մէջ զիս պիտի զօրացնէին, և ինքզինքս բաւական համարեցայ անոնց ազդուութիւնն զգալու համար պէտք եղած տրամադրութիւններով զանոնք ընդունելու: Այն հոգւոյ բարձրութիւնը՝ որ ունենալ կը կարծէի, այն

խաղաղութիւնը, այն ներողամիտ սէրը մինչև  
անգամ ատելեացս վրայ, այն ուրախութիւնը՝  
որ կեանքս Աստուծոյ կամացը զոհելու կարողու-  
թեանս համար ունէի, այն ամեն բարի տրա-  
մադրութիւնները պիտի կրնայի սրահել թէ զիս  
մեռնելու տանէին: Աւագ, սրչափ հակասու-  
թիւն կայ մարդու վրայ: Մինչև անգամ վեր-  
ջին աստիճան սուրբ և հաստատուն թուած մի-  
տոյին՝ մէկ վայրկեանը բաւական է զայն տկա-  
րութեանց և սխալմանց մէջ զահալիծելու: Ու-  
րեմն պիտի կրնամ արժանապէս մեռնիլ. Աստ-  
ուած միայն զիտէ: Ես ասիկայ հաստատելու  
չափ համարում չունիմ վրաս:

Սակայն մահուան հաւանական մերձումն այն  
աստիճան երևակայութիւնս այս զազաւարին  
վրայ կը հաստատէր, որ մահը ոչ միայն հնա-  
րաւոր կերեւէր ինձ, այլ և կը թուէր թէ անվը-  
րիպելի նախազգացութիւններով ինձ կը յայտ-  
նուէր: Սիրտս բնաւ յոյս չէր ընդուներ այս  
վախճանէն ազատելու, և ամեն անգամ որ դուռս  
կը բանային, կըսէի ես ինձ. — Մի վախճար, ա-  
հա կուզան զիս տանելու որ մահուանս վճիռն  
ինձ կարգան: Մտիկ ընենք զայն ազնուական  
հանդարտութեամբ, և օրհնենք Տէրը: —

Ար խորհէի վերջին անգամ ընտանեացս, և  
մասնաւորապէս հօրս, մօրս, ամեն մէկ քերչս  
զրեւիքներուս վրայ, և խորին ու նուիրական ըզ-

զայցմանց բայտարու թիւնները մտքիս մէջ պը-  
տրտցընելով՝ սիրտս քաղցրագին խանդազատա-  
նօք կը շարժէր, և կուլայի . այն արտառքը չէր  
կրնար իմ համբերատար կամքս խախտել :

Ի՞նչպէս քնհատու թիւնը նորէն չպիտի գար :  
Բայց սրչափ տարբեր էր առաջինէն : Աչ հեծու-  
թիւն կը լսէի սենեկիս մէջ և ոչ խնդուլ, ոչ ալ  
պահուրտած մարդիկ կամ զևեր կե, ևակայէի : Գի-  
շերը ցերեկէն աւելի հեշտայի էր ինձ, վասն զի  
կեանքս օր քան զօր ազօթից մէջ կամփոփէի :  
Ժամը չորսին միջոցներն անկողին մտնելու սովո-  
րու թիւն ունէի, և երկու ժամու չափ խաղաղ  
քուն մը կը ննջէի : Երբոր կարթննայի, անկող-  
նէս չէի ելներ, որպէս զի հանգչիմ : Ժամը տասն  
և մէկին կելնէի :

Գիշեր մը սովորականէս քիչ մ'առաջ պատ-  
կելով՝ հազիւ քառորդի մը չափ քնացեր էի և  
անայանկարծ արթնցայ ու դիմացս պատին վը-  
րայ պայծառ լոյս մը տեսայ : Ար վախնայի որ  
նորէն զառանցանացս մէջ ինկեր էի . բայց տե-  
սածս ցնորք չէր : Աոյսը զլիտուս վերեն եղած  
հիւսիսակողման փոքր պատուհանէն ներս զար-  
կած էր :

Ար ցտակեմ վար կիջնեմ, սեղանը կառնում  
անկողնիս վրայ կը դնեմ, անոր վրայ ալ աթո-  
մը, և կելնեմ վեր. — Ար տեսնեմ ամենազեղեցիկ  
և ամենաաարաափելի տեսարան մը՝ որ չէի կըր-

նար երևակայել : Այն էր մեծ հրդեհ մը՝ մեր  
բանտէն հրացանի գնտակ հասնելու չափ հեռու :  
Արակը հասարակաց փուռերուն տունէն ելեր էր ,  
և զայն մոխիր գարծուց :

Գիշերը խիստ մութ ըլլալով , բոցերուն ու  
ծուխերուն ընդարձակածաւալ շեղջերն աւելի  
լաւ կը փայլէին՝ բռնաշունչ հովէ մը յուզուելով :  
Ամեն կողմ կայծեր կը թռչէին , և գիտես թէ  
հրեղէն անձրևի պէս երկինքէն վար կը տեղային :  
Մտակայ լիճը հրդեհն իր մէջ կը ցոլացընէր :  
Բազմաթիւ մակոյկներ կերթային կուգային :  
Հրկիզեալ և շրջակայ տուներուն բնակչաց սար-  
սափն ու վտանգը մտածելով կը գթայի անոնց  
վիճակին վրայ : Հեռուէն տրանց և կանանց ձայ-  
ներ կը լսէի որ իրար կը կանչէին , Թօկնիննա ,  
Մօլօլօ , Պէրբօ , Ծանձէ : — Ահա նորէն Ծան-  
ձէի անունը կը զարնէ աղանջիս : Աննետիկի մէջ  
հազարաւոր Ծանձէ կայ , այսու ամենայնիւ կը  
դողայի որ բանառապետին ազջիկը չըլլար , որուն  
յիշատակն այնչափ քաղցր էր ինձ : Գծբանդ  
ազջիկ , չըլլայ թէ հոն ըլլայ , և զուցէ բոցե-  
րուն մէջ պաշարուի : Ո՛հ , եթէ կարենայի յօգ-  
նութիւն սլանալ իրեն : —

Սրտիս շարժելէն սարսափէս և պակշումէս  
դողալով մինչև արշալոյս պատուհանը կեցայ :  
Յետոյ վար իջայ մահազին տրամու թեամբ մ'ընկ-  
նեալ : Սզած զնասը իրականէն շատ մեծ կը

կարծէի: Թրեմէրէլլօ ըսաւ ինձ թէ միայն փու-  
ռերն ու շրջակայ մթերանոցները և շատ մ'ալ  
պարկերով ալիւր և արակ եղեր էին այս հրդեհին:



### Ք Ա Ո Խ Խ Թ .

Քանի մ'իրիկուն ետքը, դեռ երևակայութիւ-  
թըս այն հրդեհին տեսարանէն պաշարուած, սե-  
ղանիս առջև նստեր, ցուրտէն սարսուլով  
կը կարդայի, և ահա մօտէն աղաղակ մը բրդաւ:  
Բանտապետը, կինը, իրենց տղայքը և պահա-  
պանները միաձայն կը գոչէին. Արակ կայ, կրակ  
կայ, Ռ'հ, Սուրբ Կոյս Մարիամ, պիտի կորնչիսիսի:

Իսկոյն սարսուռս կտրեցաւ: Աթոռիս վրայէն  
վար ցատկեցի, և արիւն բրտինք եղած ապին  
անդին նայեցայ թէ բոց կը տեսնե՞մ. և բան մը  
չտեսայ:

Սակայն հրդեհը պալատին մէջն էր. բանտե-  
րուն մօտ եղած գրասենեակները բռնկեր էին:

Պահապաններէն մէկը կը գոչէր. «Բայց, տէր,  
ինչ պիտի ընենք այս ամեն բանտարկեալները,  
եթէ հրդեհը ծառայի:»

Բանաստեղծան ալ կը պատասխանէր. « Ի՞նչ ար-  
տըս չներկեր թողուլ զանոնք որ այրին, սակայն  
բանտերն ալ առանց յանձնաժողովին հրամա-  
նին չեն կրնար բացուիլ. վագէ շտապով հրաման  
ուզէ: »

— Ահա կերթամ, տէր, բայց մինչև որ պա-  
տասխանը գոյ՛ հոն բանը բանէն կանցնի, ան  
ալ գիտէ՞ք: »

Անոր էր այն միջոցին իմ դիւցազնական համ-  
բերատարու թիւնս՝ որով ի մահ երթալու այն-  
չափի վատահ կը կարծէի ես զիս: Ինչո՞ւ համար  
ողջ ողջ այրելու գազափարը տե՛ղ կը պատճա-  
ռէր ինձ, որպէս թէ սբարանոցս ձեղմելով մեռ-  
նիլը՝ հրով այրելէն աւելի բերկրաւի էր: Այս  
խորհրդամ թիւնն ընելով ամէջայ տկարու-  
թեանս վրայ: Պիտի գոչէի սրահասարանին որ  
բանտիս գուռը բանտիս գթութիւնն ընէ, բայց  
ինքզինքս բռնեցի: Սակայն վտար զիս պաշա-  
րեր էր: Ահա այսչափ պիտի ըլլայ իմ արիու-  
թիւնս, կրսէի ես ինձ, եթէ կրակէն ազատե-  
լով սպաննուելու տարուիմ: Ինքզինքս պիտի  
բռնեմ, վատութիւնս որ իշնեցէն պիտի ծած-  
կեմ, բայց պիտի դողամ: Սակայն . . . քա-  
ղութիւն չէ՞ երկիրը ծածկելու ինքզինք աներ-  
կիւղ երեցրնելն ալ: Միթէ վահանձնութիւն չէ՞  
մէկու մը՝ ինքզինք այն աստիճան զսպել, որ տալ  
չուզած բանը յօժարութեամբ տայ: Միթէ մէկ

հարցի վրա սկսեալսցա խակ հնազանդեցաւ իմ ի հնազանդու-  
 թիւնս ըրած չըլլար : — արար իսկ զպատմեացս  
 Ազգեսկե ինչն շատի մեծ էր բանաստեղծութե տա-  
 յըստի՞ որ կը ցոցընէր թէ փոսանգը բանի կեց-  
 թար կը մեծնար : Մեզ դուրս հանելու համար  
 հրա կան թե թե թա գայող պահասքանն ալ կա չէր  
 գտնուար : Աւերակացիս ինձ թուելիսս որ ճայնը  
 լսելի : Մտիկ ըրի, բայց խօսքերը չէի կրնար  
 արտելալ : Անպատիվ կը չարամ, բայց անօգուտ  
 անգըր : Ասորց չէր գործը Հնար է որ մեզ կրակէն  
 բազանի չբռնէն : Բայց ի թէ հնար չկայ փոխ-  
 չելուսն ի թէ ի բանաստեղծանս ընտանիքը դուտ-  
 րա թխն կը բուշեն ինքնին թինն աղաւալ լաւ և  
 ինն ղն բանաստեղծանքը մտածող չկա՞յ : —  
 — Բնաց ար, կըսելի, այս ըրածս փոխառա-  
 յա թխն չէ : կրօնք չէ : Ատելի լաւ չըլլար որ  
 դպե թուն սենեակս գալ մտնելու որ զիս լախելը  
 ան անելու պատրաստութիւն : —

Սակայն ազմու կը կը հանգարտի, և թիչ թիչ  
 ճայնեքը բարբառիս կը լսեն : Արեւօք հրակ հիմ  
 մարկ լունն նշան մ' է այս : Աստ թէ փոխառի կըր-  
 ցազնեքը փոխան և միայն բանաստեղծանքը  
 թողուցան պէտքակ մահտան մը գտն ըլլալու :

Աստ թխն չարտեակել լալ արտա հանգար-  
 անցաւ : Հասկըցայ որ կրակը մարտը բարտու էր :  
 Երայ սրտակցայ, կրած և թեի զս փոստ թխն  
 համարել լալ զիս մեղադրելի, և հիմա որ այս



քերտն մէջ կորնելելու վտանգ չըկար, կը ցաւ էի  
հրոյ նարակ շըլալուս վրայ՝ փոխանակ բանի  
մ'օրէն մարդոց ձեռքով սօրմննուելու:

Եւ տեսալ առաւօտուն Թրեմբէլլօ պատմեց  
ինձ հրգեհին սարսազաները, և վախցած ըլլա-  
լուն վրայ ծիծաղեցայ. որպէս թէ իմ կրած եր-  
կաղսանքը կրածէն սակաւ էր կամ մանտանդ  
սակ լի շէք:

**Ք Լ Ո Ւ Թ Ծ**

1822 յունուար 11ին առաւօտուն ժամ իննին  
միջոցները Թրեմբէլլօ առիթ մը գտնելով ան-  
եակա եկաւ և շփոթեալ դէմքով մ'ըսաւ.

— Իստէք, Պարոն, որ Աննեաթիի մօտ Աան  
Միքէլէ աթ Մարանօ կղզւոյն մէջ բանալ մը կայ  
ուր թերևս հարիւրէն սակ լի ֆարսօնաւի կը գրա-  
նուին:

— Արդէն բանի մ'անգամ ըսած էք ինձ: Կ'  
ինչ ըսել կուզէք, շուտ բտէք, անունցիկ ոմանք  
դատապարտուե՞ր են:

- Այո:
- Արձնք:
- Զեմ գիտե՞ք:

— Սեղն Վարօնչէլլի բարեկամս ալ մեզերնին է :

— Ո՛հ պարոն, չեմ գիտեր, չեմ գիտեր որոնք են դատաւարութեաները : Եւ խոտիւալ որտով դուրս ելաւ՝ կարեկից նայուածք մը վրաս ներտելով :

Քիչ մը ետքը սենեակս մտան բանտապետը պահապանները և ուրիշ մարդ մը որ երբէք տեսած չէի : Բանտապետը շփոթած կերակր : Նոր եկողը բերանը բացաւ ու ըսաւ .

— Պարոն, յանձնաժողովը ձեզ կը հրամայէ որ հետս գաք :

— Երթանք, ըսի, և դուք սով էք, Պարոն :

— Սան Միքէլէի բանտերուն դռնապանն եմ, ձեզ հոն պիտի տանիմ :

Կապարներուն բանտապետն այս վերջինին յանձնեց իմ ստակս որ իր ձեռքն էր, Թոյլարուժիւն խնդրեցի և քիչ մ'ստակ առի պահապաններուն պարզե տալու համար, հանդերձներըս կարգի դրի. Ս. Գիրքս թեխա տակն առի և դուրս ելայ : Երբոր այն անհատնում սանդուղքէն վար կիջնէի, Թէրմէրէլլօ ձեռքս սեղմեց, և կը թռէր թէ ըսել կուզէր ինձ. « Սեղն մարդ, զործդ շնցած է : »

Լճին վրայ բացուած դռնէ մը դուրս ելանք, ուր մակոյկ մը կապառէր նոր բանտապետին երկու պահապաններուն հետ : Մակոյկը մտայ հարգա-

բուսնէկ հակառակ զգացումն քով : Աէկ կողմանէ  
կը ցաւէի կապարնէրէն մեկնելու վրայ , ուր  
շատ վիշտ քաշեր էի , բայց մէկը սիրեր էի հոն ,  
կամ մէկը զիս սիրեր էր : Միւս կողմանէ կը  
բերկրէի երկար ժամանակ նեղ սենեակի մը մէջ  
գոցուած մնալէ ետե զիս բայց օղի մէջ գտնե-  
լուս , երկինքը ջուրը եւ քաղաքը տեսնելու  
վրայ , առանց երկաթեայ ձողերէ շրջապատեալ  
ըլլալու : Ար յիշէի այն ուրախալի մակոյկը որ  
երջանկաւէտ ժամանակ մը զիս նոյն լճին վրայ  
կը պարտցընէր : Ար յիշէի Քօմօի լճին մակոյկ-  
ները , Մանհօրէ լճին մակոյկները , Բօ գետին  
վրայի թե թե նաւակները , Ռօն և Սօն գետերուն  
վրայինները . . . . Ո՛հ գեղազուարճ տարիներ՝ յա-  
ւիտենապէս կորսուած : Ո՞վ աշխարհիս մէջ ինձ  
չափ երջանկաւ թիւն վայելեր էր :

Գորովագու թ ծնողաց սրդի , այնպիսի պայ-  
մանի մը մէջ ծնած , որ աղքատութիւն չէ , եւ  
որ քեզ հաւասարապէս բացակայ պահելով հա-  
րուստէն ու աղքատէն , այս երկու վիճակն ալ ի-  
րենց ճշմարիտ դէմքովը կը ճանչցնէ քեզ , պայ-  
ման մը որ ամենէն նպաստաւորը կը համարէի  
սրտի բարի զգացումները մշակելու : Ընտանե-  
կան ամենաքաղցր խնամքներով անցած ման-  
կութենէ մը ետեւ՝ Վիոն գացի ժօրս մէկ ծեր  
հօրեղբօրորդւոյն քով . մեծահարուստ՝ բայց իր  
հարստութեանը արժանի մարդ մը , Հոն վայել-

չու թեան և սիրոյ անյագուստ բաղձանքով վառ-  
 եալ սիրտ մ'զմայլեցնող ամեն գուարեութիւն-  
 ներ՝ պատանեկու թե անա առաջին եռանդն սր-  
 բեցոնցէր էին : Սաքը Բարախտ գառնալով և ճառ-  
 դացո հետ Միլան երթալով , հոն շարունակէր  
 էի սեման ստորասիլ , ընկերութիւնն ու գիրքե-  
 րը սիրել , ընտիր բարեկամներ և բողոք գովա-  
 ներ՝ գտնելով ամեն տեղ : Մոնթի և Ծուբոլօ թէ-  
 ալտ և իրարու թշնամի , մի և նոյն բարեկա-  
 մութիւնն ունէին ինձ : Բայց ես առանկ յարած  
 էի մի քչինին , և այս ջոսկոտ մարդը՝ որ ին-  
 դաման խստութեամբը գրե թէ բողոք բարեկամ-  
 ներն իրմէ իր պաղեցընէր , ինձի հետ բողոքա-  
 բարոյ և մտերիմ էր : և ես ալ գ'բուխից մեծա-  
 բանօք զինքը իր յարգէի : Աւրիշ և բնելի գրա-  
 գէտներ ալ զիս իր սիրէին , և ես ալ նոյն տեղն  
 առնէի անոնց վրայ : Երբէք նախանձն ու զըր-  
 արարութիւնը չկրցան ինձ դալելի կամ եթէ  
 երբեմն դալելի ուղեցին , այնպիսի ստորին և հո-  
 մարտմէ զուրկ մարդոցմէ կուգային որ չէին  
 կրնար մնանել ինձ : Բարախտ թագաւորութեան  
 անկումէն ետե՝ հայրս նորէն տունը Թուրինօ  
 փոխադրեց էր , իսկ ես սիրելի ընտանեացս քով  
 երթալ նսանլու դիտաւորութիւն միշտ օր աւուր-  
 ձգելով , վ'րջապէս Միլան մնացէր էի , ուր եր-  
 շանկութիւնս այնչափ մեծ էր , որ անկէ բարձրի-  
 լըս չէր գար ընդուն ինտելլիգանս զմա՛մի ստույգ :

Լաւագոյն բարեկամներէս երեքը, Տ. Բիւթրօ  
 Պօրսիէրի, Մօնսինեօր Լօուսիլիքօ տի, Պրէմէ և  
 Լուիւնի Բօրրօ Լամպերթէնկի կամար՝ որ Միլան  
 էին, ուրիշ ամենը կը գերագանցէին արտիս մէջ:  
 Եւրքը աւելցաւ Խաւե Տէպէրիքօ Կօնֆօլօնիէրի  
 կամար: Բօրրօի որդւոց դաստիարակութիւնը վը-  
 բաս առած ըլլալով, տղայոց հետ հօր պէս էի  
 և հօրերնուն հետ ալ եղբօր պէս: Ս.յն տունը կը  
 յանձնէին ոչ միայն Միլանի բնակչոց ամենէն  
 ընտիր ծաղիկները, այլ և բազմաթիւ երևելի  
 ճանապարհորդներ և ճոն ճանչեցի Մթալ արկի-  
 նը, Ելէկէլ, Պայրըն, Տէյվիս, Զօլհարեզ,  
 Պրօմ և ուրիշ շատ նշանաւոր անձինք՝ որ Եւրո-  
 պայի զանազան կողմերէն Բաւարիա կուգային:  
 Ո՞չ, ասանկ մեծահանձար մարդոց ծանօթանալը  
 որչափ կը զուարթացնէ և ազնուանալու կը զըրգ-  
 ուէ մարդու սոգսն: Ս.յն, երջանիկ էի ես: Իմ  
 վիճակս թագաւորի մը վիճակին չէի փոխեր:  
 Արդ, ասանկ քաղցր վիճակէ մը յանկարծ բան-  
 տանդաններու ձեռք իյնալ, բռնուէ բանտ քաշ-  
 քը ուիղ, և ինքզնուէս ինդղամահ սայաննուիլ  
 կամ շղթաներու մէջ մտնիլ:



Գնահատելի մօտ և աստուար օճանով օգտիկ  
 և յոկարտի մօտ և օգտիկ օգտիկ և օգտիկ  
 օգտիկ և օգտիկ օգտիկ և օգտիկ օգտիկ  
 օգտիկ և օգտիկ օգտիկ և օգտիկ օգտիկ

ՍՅԱ ՄԱՍԻՍԻՍ ԹԻՄՈՒՆԵՐՆԵՐՆԵՐԻ ՄԱՆ ՄԻՔԷՂԷ

հասայ : Հոն զիս սենեկի մը մէջ փակեցին, որ  
բակի մը վրայ կը նայէր և փննու Մարանոսի  
զեղեցիկ կողին ալ առջնէն էր : Մարունչէլլիի  
վրայօք լուր խնդրեցի բանտապետէն կնոջմէն  
և շորս պահապաններէն : Բայց ասոնք համարօտ  
այցելու թիւներ կրնէին ինձ՝ կասկածոտ զգու-  
շաւորու թեամբ, և չէին ուզեր բան մ'ըսել :

Սակայն ուր որ հինգ վեց մարդ կայ, դժուար  
բաւ կը պատահի որ անոնց մէջ կարեկցու թեամբ  
ընդունակ և խօսիչ սիրող մէկը չգտնուի : Սյու-  
պիսի մէկը գտայ ասոնց մէջ, որ հետևեալ լու-  
րերը տուաւ ինձ :

Մարունչէլլի՝ երկար ժամանակ առանձին մը-  
նայէ ետև՝ Քամիլէ Լատերքի կոմսին հետ  
դուրէր էր : Սյու վերջինն անմեղ և անչուելով  
քանի մ'օր առաջ բանտէն էլեր էր և Մարէնչէլլի  
նորէն մինակ մնացեր էր : Մեր ընկերներէն տա-  
կաւին իբրև անմեղ արձակուեր էին Ճիան-Տո-  
մինիքօ Վոմանեօ դասատուն և Տօն Ճիօվաննի  
Արրիվապէնէ կոմսը : Բէժժիա հարիւրապետը և  
Քանօփա մէկ տեղ էին Քէտի դասատուն ալ այս  
երկու վերջիններուն կից բանտի մը էջ մահա-  
մերձ պառկեր էր :

— Աւրեմն բանաւն չե ընողներուն վե՛րան ալ  
 եկած է, ըսի : Եւ ինչո՞ւ չեն յայտներ : Թերեւ  
 կապասեն որ խեղճ Բէսսիւն մեռնի, կամ քիչ մ'ա-  
 ղէկի դառնայ որպէս զի կարենայ իր դատակ-  
 նիքը լսել այնպէս չէ՞ :

— Կարծեմ որ այդպէս է :

Ամեն օր լուր կը հարցընէի տարաբաղղ Բէս-  
 սիի վիճակին վրայ :

— Յօսիլը կորսնցուց : — Նորէն խօսիլ սկը-  
 սաւ, բայց կը զառանցէ և մարդ չճանչեր : Նեռ  
 կենդանու թեան նշաններ կերեխն վրան : — Յու-  
 ճախ արխն կը թքնէ և զառանցանքը կը շարու-  
 նակէ : — Բիչ մը լաւ է : — Աւելի գէշ է : — Հո-  
 գեվարք է : —

Բանի մը շարաթ շարունակ այս պատասխան-  
 ներն ստացայ, մինչեւ որ առաւօտ մը եկան ը-  
 սին ինձ թէ մեռաւ :

Արտասուեցի վրան, եւ ետքը ինքզինքս մը-  
 խիթարեցի խորհելով որ իր դատապարտու-  
 թիւնը չէր իմացած :

Հետեւեալ օրը, 21 փետրուար 1822, բանտա-  
 պետն եկաւ զիս տանելու : Ժամն առաւօտեան  
 տասն էր : Զիս յանձնած ողովին սրահը տարա-  
 ու ինքը դուրս ելաւ : Նախագահը՝ հարցաբըն-  
 նիչը եւ երկու օժանդակ դատաւորներն իրենց  
 աթոռներուն վրայ նստած էին : Ներս մտնելու օ-  
 պէս ամենն արեւան կանգնեցան :

Նախագահն ազնիւ ցաւակցութեամբ մը ըստ  
իմն թէ դատակնիքս եկեր էր եւ սարսափեցի  
էր. բայց կայսրը մեզմտցուցէր էր զայն.

Հարցաքննիչը կարդաց դատակնիքս.

— Ի՞նչ դատապարտեալք Յետոյ կոչուեցաւ  
կան հրամանագիրը կարդաց. — Մահաբան պա-  
տիժը պատնեւ հինգ ամսի. Սքիլպէրիի բերդին  
մէջ շղթայակապ բանտարկութեան իսխար-  
կեամբ քան զմեզ. — քան զմեզ քան զմեզ.

— Աստուծոյ կտակն ըլլայ քրտի.

— Եւ ճշմարտիւ դիտու որով թիւն առնէի այս առ-  
հարկն հայտաւածը քրիստոնէւարաց ընդունելու,  
եւ ու եւ իցէ մէկու մը դէմ յաչցուցընելու եւ ոչ  
իսկ տամելու.

Նախագահը գովեց իմ չափաւորութիւնս եւ  
յորդարեց որ միշտ սրանեմ, առնչցնելով թէ այս  
համբերատարութիւնս կրնար թեւելոյ երկու  
կողմ երեք ամսի ետքն առանել մեծ շնորհի մը  
զիտ արժանի ընելը. Փոխամեղ երկու կամ երեք  
տարիի՝ որիչ շատ տարիներ անցան ինչ որ իմ

Միւս դատաւորներն ալ միւս թարութեան եւ  
յնտոյ խօսքեր ըրին ինձ, բայց մէջեքնէն մէկը  
որ դատաւորանիս մէջ միշտ թշնամարար զարա-  
տելք էր ինձ հետ զեմ զիտ. որ ինչ քաղաքային  
բանան ինքի մը ըստ որչափ ծանր եկաւ ինձ  
Այն քաղաքայինութիւնն ինձ այնպէս թուեցաւ  
թէ աչուրները առտ կը հանէին, եւ կրնայի



երդնուլ թէ թշնամանիչ ուրախութիւն մը հը  
փայլէր անոնց մէջ :

Հիմա չեմ երդնուր այնպէս ըլլարուն վրայ եւ  
կարելի է որ խաւրով եի այն ժամանակ : Բայց  
արիւնս տակն ի վրայ եղաւ, եւ զժուարաւ կըր-  
ցի զայրոյթս զսպեր Յաճկեցի, եւ մինչ անոնք  
տակասին իմ բրիատոնէսկան համբերութիւնսկը  
գովին, եւ արդէն զայն կորուսեր էի սրտիս մէջ :

— Յաւ է մեզ, ըսաւ հարցարենիչը, ձեր դա-  
տակնի բը վաղը հրապարակաւ ձեզ ծանուցանել,  
բայց սլա տօնական արարողութիւն մ'է, չեմք  
կրնար զանց ընել :

— Այնպէս թող ըլլայ, սրատանխանցի :

— Այս վարկենէն, ըսաւ, կրնար ձեր բարե-  
կամին ընկերակցութիւնը վայելել :

— Եւ բանտապետը կանչելով զիս նորէն անոր  
յանձնեցին՝ հրաման ընելով որ Մարտչեւիկի  
հետ գնեն :



**Ք Լ Ո Ւ Ս Թ Ր**

Ո՛րչափ բազմաբարեկամիս և խիճ համար  
այն վայրկեանը որ իրար նորէն տեսանք՝ տասն  
և հինգ ամիս բաժնուելէ և այնչափ մեծամեծ

վիշաք քաշելէ ետև: Բարեկամութեան ուրա-  
խութիւնները վայրկեան մը մտցուցին մեզ մեր  
դատապարտութիւնը:

Սակայն շուտով Մարօնչէլլիի թեւերուն մէջէն  
բաժնուեցայ և գրիչը ձեռքս առի որ հօրս նամակ  
մը գրեմ: Ար վաւիարէի որ իմ ախար վիճակիս  
գոյժը ես տամ ընտանեացս և ոչ ուրիշները, որ  
պէս զի այն սիրելի սրտերուն զառն կսկիծը մեզ-  
մանայ իմ խօսքերու քրիստոնէական հանդար-  
տութեամբը: Դատաւորները խոստացան որ նա-  
մակս շուտով յուղարկեն:

Այնուհետև Մարօնչէլլի իր դատատանին անց-  
քերն ինձ պատմեց. ես ալ իմիններս պատմեցի  
անոր: Յետոյ մեր բանտարկութեան միջոցին  
մեզ պատահած արկածները պատմեցինք իրա-  
րու: Ետքը պատուհանն ելանք, և մեր բարե-  
կամներէն երեքը տեսնելով իրենց պատուհան-  
ներուն մէջ՝ ողջունեցինք: Ասոնք էին նախ Քա-  
նօվա և Րէժժիա որ մէկ տեղ դրուած էին,  
առաջինը վեց տարի շղթայակապ բանտարկու-  
թեան դատապարտեալ, երկրորդը երեք տարի,  
երրորդն էր Չէզարէ: Արմարի բժիշկը, որ բանի  
մ'ամիս առաջ կապարներուն տակը դրացիս էր:  
Ասոր դէմ վճիռ մը տրուած չէր, և բիշ օրէն ան-  
մեզ Ըանչուելով արձակուեցաւ:

Օրն ի բուն և իրիկունը խօսակցեցանք իրա-  
րու հետ, և այն խօսակցութիւնը հաճոյական

գրադանք մ'եղաւ մեզ : Բայց երբոր անկողին  
 մտանք , ճրագը մարեցաւ և լռութիւնը ախրեց ,  
 անհնար եղաւ ինձ ննջել : Գլուխս կրակի մէջ  
 էր , և սիրտս կը ճակէր երբոր ընտանիքս կը  
 մտածէի : — Խեղճ ծեր ծնողքս պիտի կրնան  
 դիմանալ այս մեծ դժբաղդութեան : Երեւց միւս  
 զաւակները բաւական պիտի ըլլան զիրենք մխի-  
 թարելու : Ամենն ալ ինձ չափ սիրելի էին եւ  
 աւելի արժանաւոր սիրելի ըլլալու : Բայց հայր  
 մը՝ մայր մը՝ իրենց մնացած զաւակներուն մէջ կո-  
 րուսեալին տեղը բռնելու բան մ'երբէք կը գտնեն :  
 Ա՛հ , եթէ միայն ծնողացս և ինձ սիրելի եղող  
 ուրիշ քանի մ'անձանց վրայ խորհէի , որոց յի-  
 շատակաւ սիրտս կը մորմոքէր և կը խանդա-  
 զատէր : Բայց վերը յիշուած դատաւորին կար-  
 ծեցեալ ուրախութիւնը , թշնամանիչ ծիծաղը ,  
 դատաստանս , դատապարտութեանս սրտճառը ,  
 քաղաքականութեան կիրքերը , և այնչափ բարե-  
 կամներու վիճակն ալ միտքս եկան . . . և այն  
 մամանակ անհնար եղաւ ինձ ներողամտութեամբ  
 դատելիս հակառակորդներս : Աստուած զիս մեծ  
 փորձի մը տակ կը դնէր : Իմ պարտքս էր այն  
 փորձը քաջութեամբ կրել . բայց ո՛չ այն քաջու-  
 թիւնն ունեցայ և ոչ կամքը : Ատելու հեշտու-  
 թիւնը ներելու քաղցրութենէն նախամեծար  
 բռնեցի : Աերջապէս այն զիշերը դժոխային զի-  
 շեր մ'եղաւ ինձ համար :

Աստուծոյն ազօթք չբի: Տիեզերք բարայն  
 թշնամի զօրութեան մը զօրծ կերէ: Ինձ:  
 Արդէն ուրիշ ա՛զամ ալ զրոգարտիչ եղէր էի: Աս-  
 տուծոյ, բայց երբէք չէի կարծեր որ սուանկ բիչ  
 ժամու մէջ նարէն կրնայի ըլլալ: Յուշիանոս ան-  
 զամ իր ամենէն սաստիկ մալ՛գնութեան ժամե-  
 րուն մէջ ինձ շա՛ի ամբարիշտ չէր կրնար ըլլալ:  
 Երբոր մէկն իր մարին մէջ ատելտ թեան խոր-  
 հուրդներ միայն յեղ յեղէ, մանաւանդ ամենամեծ  
 թշուառութեամբ զարնում մարդ մը՝ որ ընդ-  
 հակառակն աւելի բարեպաշտ պէտք էր ըլլալ,  
 այնպիսի մարդ մը՝ թէ և արդար ալ եղած ըլլայ,  
 մերջապէս շար կըլլայ, այն, թէ և արդար ալ ե-  
 զած ըլլայ կրակմ, վասն զի մէկ մարդ մը չկրնար  
 առանց ամբարտաւանութեան ատել: Ե՛ն ո՛վ ևս  
 դու, թշուառ մահկանացու, որ կը պահանջես որ  
 քու նմաներէդ ոչ մէկը քեզ խստիւ չդատէ. որ  
 կուշես որ մէկը չկրնայ բարի մտօք անգամ քեզ  
 վնասել՝ կարծե լով թէ ըրածն արդարութիւն մ'է.  
 որ կը տրանջես երբոր Աստուած թայլ կուտայ որ  
 դու նեղու թիւն քաշես այս կերպով մանաւանդ՝ և  
 ոչ այն կերպով:

Ինքզինքս թշուառ կ'զգայի չկրնայ ազօթ: Լուս  
 հասար. բայց որ ամբարտաւանութիւն կը տի-  
 բէ, հոն մարդ ինքզինքէն զատ ուրիշ Աստուած  
 չկրնար գտնել:

Կուզէի վշտահար ծնողքս գերագոյն միսի թար-

Յի մը յանձնեցի և ևս զապրեցի և իր անոր ևս  
ապարակ ձեռն սցար զի քան զիս զիս զիս զիս

՝ միտարար անցիցից յոս միտարար անցիցից

և զայն զայն զիս զիս զիս զիս զիս զիս զիս

և զիս զիս զիս զիս զիս զիս զիս զիս  
**Ք Ա Պ Ե Ա Ս Պ**

և զիս զիս զիս զիս զիս զիս զիս զիս

Առաւօտեան ժամն իննիս մեզ մակոյն մը զիս  
րին, Մարտիկի ա զիս, զիս զիս զիս զիս զիս

համար Մակոյնը Տոբին\* սուրբաբան մտն զիս և  
բանան և զիս: Մեզ այն անեակը զիս, ուր զիս

նի մ'որ տառ Պ. Քարտիսի: Կը նստէր: Չեմ  
զիս զիս զիս զիս զիս զիս զիս զիս

անան հարանաւոր նստած էին հոն մեզ սուրբա-  
նեյտ համար, և մեք ալ նեմ: Եւ զիս զիս զիս զիս

կըն և զիս զիս զիս զիս զիս զիս զիս  
Միտարար զիս զիս զիս զիս զիս զիս զիս

ախի և զիս զիս զիս զիս զիս զիս զիս  
կիս մեզ որ զիս զիս զիս զիս զիս զիս զիս

Ընդունել զիս զիս, և զիս զիս զիս զիս զիս զիս  
հոգածութեանը և մանաւանդ զիս զիս զիս զիս

մար որ զիս զիս զիս զիս զիս զիս զիս  
Այս բժիշկը Տոբինը Տոբին էր: Յետոյ հարա-

և զիս զիս զիս զիս զիս զիս զիս զիս

և զիս զիս զիս զիս զիս զիս զիս զիս

նաւորաց զլուխը քովերնիս եկաւ, երկաթեայ  
ձեռակապեր դրաւ մեզ և դուրս հանեց. միւս  
կարանաւորներն ալ քովերնուս կուգային :

Հսկայից հոյակապ տանդուղէն վար իջած ա-  
տեննիս՝ Մարինօ Յալիէրօ Տօժը միտքերնիս ե-  
կաւ որ այն տանդուղին վրայ զլիսատուեր էր :  
Մեզ այն մեծ կամարայարկ ճամբան մտցուցին  
որ պալատին բակէն Բիածէթթա հրապարակը  
կը հանէ : Հոն հասնելուս՝ ձախ կողմը դարձանք  
դէպի լիւր : Բիածէթթայի մէջ տեղը կառափ-  
նարանը բարձրացած էր, ուր պիտի ելնէինք :  
Հսկայից տանդուղէն մինչև կառափնարանը եր-  
կու կարգ աւսորիացի զօրական շարուած էր,  
անոնց մէջէն անցանք :

Կառափնարանին վրայ ելնելուս՝ բոլորափրնիս  
նայեցանք, և հոն գումարուած անթիւ ժողովրդե-  
կան վրայ սարսափ մը տիրած տեսանք : Հետուն  
ուրիշ զօրականներ կը տեսնուէին՝ որք խումբ  
խումբ բաժնուած հրապարակին զանազան կող-  
մերը կ'ապասէին : Ըսին մեզ թէ հոն էին թնդա-  
նօթները, լցուած, պատրաստուած, և պատրոյգ-  
ները վառած :

Այս Բիածէթթան էր ուր 1820 ին սեպտեմբե-  
րի մէջ՝ բանաւարկուելէս ամիս մ'առաջ՝ մու-  
րացկան մ'ինձ ըսեր էր. «Այս հրապարակն ա-  
ղետալի տեղ մ'է :

Այն մուրացկանը միտքս եկաւ և ըսի մտօքս

թէ գուցէ այն բիւրաւոր հանդիսատեսներուն  
մէջ էր և զիս կը նանչէր :

Աւտարիացի հարիւրապետը ստուաց մեզ որ  
պալատին կողմը դառնանք և աչքերնիս վեր վեր-  
ցընենք : Հնազանդեցանք, և տեսանք որ պալա-  
տին նեմելեաց ներքևի կամարներուն տակ դա-  
տաստանական պաշտօնատար մը կանգնած էր  
ձեռքը թուղթ մը բռնած, որ մեր դասավելիուն  
էր, և բարձր ձայնով կարդաց :

Յորին լուծիւն մը տիրեց մինչև այս խօսքը .  
Գասապարեալ ի վասն : Այն ժամանակն ընդհա-  
նոր կարեկցութեան շշնջիւն մ'ելաւ բազմու-  
թեան մէջ : Նորէն լուծիւն տիրեց ընթերց-  
ուածին մնացորդը լսելու համար, և նոր շշնջիւն  
մ'ելաւ երբոր այս խօսքերը կարդացուեցան .  
Շիրայակաս պանսարկուքեան դասապարեալ . Մա-  
րօնչիլի ֆասն սարի, եւ Բիլիֆօ սասն եւ հիկ  
սարի :

Հարիւրապետն աչք ըրաւ մեզ որ վար իջնենք .  
Մեք ալ վար իջանք՝ նորէն անգամ մ'ալ աչ-  
քերնիս մեր բոլորտիրին վրայ ստորացնելով :  
Մեզ նորէն բակը մտցուցին, սանդուղքէն վեր  
հանեցին ու վարջին անգամ դրուած սենեակնիս  
տարին : Վերջապէս ձեռակապերնիս հանեցին  
ու հոնկէց ալ Սան Միքէլէ տարին :



## Գ Լ Ո Ւ Ք Օ Գ.

Մեզնէ առաջ դատաւարտաւորներն արդէն  
Լուսիանա և Մբիլայէրի գացեր էին սասիկանու-  
թեան գործակալի մը հետ : Մեզ տանելու պաշ-  
տօնն ալ նոյն գործակալին յանձնուած ըլլալով ,  
ամիս մ'անոք ևս դառնալուն սպասեցինք :

Այս միջոցին բոլոր ժամանակս խօսակցութիւն  
ընելով կամ այլոց խօսակցութիւնը լսելով կան-  
ցունէի : Սակեց զառ, Մարօնչէլլի իր գրասուր աշ-  
խատու թիւններն ինձ կը կարդար, ևս ալ իմին-  
ներս անոք կը կարդայի : Երկուսն մը՝ սլաւոս-  
հանէս էսթեր Տ'Էնկասսի սգրերգութիւնս կարդացի  
Քանուպային Բէժժիային և Չէզարէ, Արմարիին ,  
հետևեալ իրիկունն ալ Ինիսիս Տ'Ասթիս կարդացի :

Բայց գիշերք կը դադայի , կուրայի , Բիշ կը  
ննջէի կամ բնառ չէի ննջեր :

Ար վախտեցի, բայց միանգամայն կը վախ-  
նայի գիտնալու թէ ծնողքս ինչպէս լսեր էին  
թշուառութեանս լուրը :

Վերջապէս հօրմէս նամակ մ'եկաւ : Արշալի  
մեծ եղաւ տրամու թունս երբ իմացայ թէ վերջին  
նամակս շուտով չէր զրկուեր , որուն համար  
այնչափ ազաւեր էի հարցարձնելիս : Տարալազ



հայրս՝ որ միշտ յոյս ունեցեր էր թէ, ևս անպարտ  
կ'արձակուիմ, օր մը Միլանի Անգէթ լրագիրն  
առնելով՝ դատապարտութիւնս կարդացեր էր  
մէջը: Այս գծնդակ գէպքն ինք կը պատմէր ինձ,  
և իր սրտին ս'ըջտօի կարտուած ըլլալն ալ ինձ  
կը թնդար երևակայէլ:

Ո՛հ. հօրս մօրս և բոլոր ընտանեացս վրայ  
զգացած անասնան կարեկցութիւնս ս'ըջտօի զիս  
կը գայրտցընէր նամակս ժամանակին զրկուած  
չըլլալուն վրայ: Այս յարստումն անշուշտ  
թշնամակուն գիտուորութեամբ չէր, բայց ինձ  
թուեցաւ թէ, գծախնային նենգութիւն մը կար  
անոր մէջ, վարպետ բարբարոսութիւն մը, գա-  
զանտեան բազմութիւն մը, սրտէս զի զիս զարնող  
չանթը մի և նայն սատակութեամբ անմեղ ըն-  
տանիքս ալ զարնէր: Առգէթ որ այս երևակայ-  
եալ անգթութիւնը պատժելու համար ծովու չափ  
սրիւն թափելու կարողութիւն ունենայի:

Հիմայ որ տասնց կրից կը խորհրդածեմ, այս  
բանն հաւանական չերևիր ինձ: Այն յարստումը՝  
անտարակայս անհագութենէ զստ ուրիշ սրատ-  
ճտա ունեցած չէ:

Սխառ զայրացած ըլլալուն՝ գողերայէքբոր լսե-  
ցի թէ ընկերներս Էմմայ կ'ընելէ առաջ իրենց  
Ջատիկը պիտի ընէին, և զգացի որ ևս ներկու-  
կամբ չունենալով պէտք չէր որ անոնց պէս ընէի:  
Ո՛հ, եթէ տուած ըլլայի այս գայթակգութիւնը:

## Գ Ա Ո Ւ Խ Ե Ն Ե

Վերջապէս աստիկանութեան գործակալը հաս-  
սաւ Քերմանիայէն և եկաւ մեզ ըստ թէ քիչ  
օրէն ճամբայ պիտի ելնէ ինք. և աւելցուց .

— Ուրախ եմ, որ ձեզ մխիթարական լուր մ'ալ  
տարու բազում օրու թիւնն ունիմ: Սրիպէրկէն  
դառնալուս՝ Վիէննայի մէջ Վ. Վայսրը տեսայ որ  
ինձ ըստ թէ ձեր բանտարկու թեան օրերը ասու-  
ներկու ժամ պիտի ըլլան և ոչ քանուչորս :  
Ըսել է թէ պատիժը կէսի իջած էր :

Այս լուրը ետքէն չհաստատուեցաւ պաշտօնա-  
կան կերպով. բայց գործակալն ալ սուտ ըսելու  
երևոյթ մը չունէր, մանաւանդ որ այս լուրը  
գաղտնի չէր տար մեզ, այլ յանձնածոզովին հա-  
ճու թեամբը :

Սակայն ևս չկրցայ ուրախ ըլլալ այս լուրին  
միայն : Իմ մտօքս ևօթն ու կէս տարի շրջթայտ-  
կապ բանտարկու թիւնն ալ տասնեկինգէն պակաս  
տակալի չէր. և ինձ անհնար կը թուէր այնչափ  
երկար ժամանակ ապրիլ :

Առողջու թիւնս աւրուած էր: Աւրժքս շատ կը  
նեղէր զիս. կը հազայի և կը կարծէի թէ թոքերս  
հիւանդացած են: Քիչ կուտէի, և այն քիչն ալ  
չէի մարսեր :

Մարտի 25էն 26 չուսնալու զիշերը նախայ ե-  
 շանք: Թոյլառութիւն եղաւ մեզ պագտուելու մեր  
 բարեկամ Տորթոր Չէզորէ Արմարիին հետ: Նաքը  
 կալանաւոր մ'աջ թէէն ձախ ոտքիս շղթայ մը  
 անցուց որ չկրնանք փախչիլ: Մակոյկ մը նըս-  
 տանք և պահապանները թիավարելով Ֆուզի-  
 նա տարին մեզ:

Հոն երկու պատրաստ կառք գտանք: Բէժ ծիա  
 և Քանովա մէկուն մէջ նստան, ևս ալ Մարօնչէլլի  
 հետ միւսին մէջ նստանք: Առաջինին մէջ գոր-  
 ծակալը նստած էր իր երկու բանտարկեալ-  
 ներովը. երկրորդին մէջ ալ իր երկրորդը նստած  
 էր մեր հետ: Աեց կամ եօթն աստիկանս թեան  
 զինուորներ՝ սուրելով և հրացաններով զինեալ՝  
 ուղեկից էին մեզ, ոմանք կառքերուն մէջ նստած,  
 ոմանք ալ կառավարին նստալանին վրայ:

Թէպէտ միշտ դառն է հայրենիքէ տարա-  
 բազդութեամբ մեկնելու հարկադրիլը, բայց  
 մեկնիլ շղթայակապ, սարսափելի կլիմաներու  
 տակ երթալ նստելու և տարիներով շարժարուե-  
 լու համար, կալանաւորներէ շրջապատեալ,  
 այն աստիճան դժնդակ բան է որ խօսքով չկըր-  
 նար նկարագրուիլ:


Ալպեան լեռները չանցած՝ ազգս ժամէ ի ժամ  
 աւելի սիրելի կըլլար ինձ. որովհետև ամեն տեղ  
 ամեն զէմերնիս ելլողները գութ կը ցուցընէին  
 եր վրայ, ամեն քաղաքներու և մինչև ամե-

նէն փոքրիկ գեղերու մէջ՝ ամեն մարդ մեր դա-  
տապարտութիւնը քանի մը շարաթէ, ի վեր իմա-  
ցած ըլլալով մեզ կոպտէին: Անանկ ակզեր  
եղան, ուր սասիկանութեան գործակալն ու պա-  
հապանները դժուարութիւն կը կրէին մեզ շրջա-  
պատող բազմութիւնը հեռացնելու: Զարմանա-  
լի բան էր մեր վրայ ցոյց տրուած համակրու-  
թիւնը:

Ուտիսէի մէջ անսկնկալ բայց քաղցր տեսակ-  
ցութիւն մը պահուած էր մեզ: Պանդակը հաս-  
նելնուս, սասիկանութեան գործակալը ժողո-  
վարդը հեռացրնելով՝ բակին դուռը գոցել տը-  
ւա: Մեզ համար ա՛նեակ մ'որոշեց և հրաման  
ըրա սպասաւորներուն որ մեր ճաշն և պատկե-  
րու համար ինչ որ պէտք էր՝ բերեն: Քիչ մը ետ-  
քը երեք մարդ ներս մտան մէկ մէկ անկողին  
շարկած: Միշտի մեծ եղաւ զարմանքնիս երբոր  
տեսանք որ այն երեք մարդոցմէն մէկը միայն  
պանդակին սպասաւորն էր, միւս երկուքը մեր  
ճանաթներն էին: Անանց օգնել ձեռքսցինք ան-  
կողինները վար առնելու համար, և զազանարար  
ձեռքերնին սեղմեցինք: Սրտաւորն ամենուս ալ  
սրտէն կը բղխէր: Ա՛հ, միշտի սրտերնիս ճմլե-  
ցաւ որ այն արտաքը համարձակ չէինք կրնար  
թափել և իրար թիկերնուս մէջ սեղմել:

Գործակալները ճնշմարեցին այս սրտաշարժ  
տեսարանը, բայց պահապաններէն մէկուն վրայ

Հասկանալ ըրի թէ գաղանիքը կաածեց, վասն զի  
բարեւիրա Տարիօին իմ ձեռքս սեղմելը տեսաւ:  
Այն պահապանը Աննետիկցի էր: Արկուքիս ալ  
երեսը նայեցաւ, գոյնը նեւեց և զիտեսս թէ վա-  
րանեցաւ որ պէ՛տք էր ձայն հանել թէ ոչ. բայց  
լուռ կեցաւ և չտեսներու զարնելով անգին նայե-  
ցաւ: Աթէ չկրցաւ գուշակել որ այն անձինքը  
մեր բարեկամներն էին, գոնէ կենթադրեց թէ  
մեզ ծանօթ սիրատու արներ էին:



Գ Լ Ո Ւ Խ Ս Շ Զ .

Աստուծոյն կանուխ մեկնեցանք Աւարիճէճն  
Ազնիւ Տարիօ արդէն սեղացն էր, վերաբերուին մեզ  
սիւսթ թուած: Նորէն մեզ ողջունեց ու խեր մը  
տեղ ետեւսու եկաւ: Ասաք մ'ալ տեսանք որ ե-  
տեւսու եկաւ երկու երեք մղոն տեղ, և մէջը  
տիկին մը կար որ թաշկինակը կերեքցընէր:  
Վերջապէս նորէն Աւարիճէ դարձաւ: Ո՛վ էր այն  
տիկինը, չկրցունք հասկընալ, բայց կտտիտեցինք:  
Ո՛հ, օրհնեալ ըլլան Աստուծակ այն ազնիւ սիր-  
տերը որ ամօթ չեն համարիր թշուառները սի-

րել: Ա՛հ, ասանկներուն յարգը լաւ կը նանչեմ,  
 վասն զի ճախորդութեանս օրերն այնպիսի վատ  
 մարդիկներ տեսայ որ զիս տրտցան և ինձ ուղ-  
 զուած թշնամանքներու արձագանք ըլլալէ բան  
 մը շահիլ կարծեցին: Բայց այս վերջինները  
 քիչուր էին, և առաջինները շատ:

Կը սխալէի մտածելով թէ Բտալիոյ մէջ ամեն  
 տեղ մեզ ցոյց տրուած կարեկցութիւնն օտար  
 երկիր մտնելնուս պէս պիտի դադրէր: Ա՛հ, բարի  
 մարդն ամեն տեղ դժբաղդներուն հայրենակիցն  
 է: Երբոր Աւստրիոյ Բլլիբիա գաւառը մտանք,  
 նոյն կարեկցութիւնը հոն ալ տեսանք. ամեն  
 մարդ կափառասար մեր վրայ՝ «Սե՛ղն պարտններ»  
 ըսելով:

Երբեմն նոր երկիր մը մտած ատեն կառքեր-  
 նիս կանգ առնելու կը պարտաւորուէին՝ իջևանի  
 տեղ որոշելու համար: Այն ժամանակ ժողովուր-  
 դը բռնորոտիքնիս կը խռնէր և մեզ կարեկցութեան  
 խօսքեր կընէր, որ ստուգիւ սրտէ բղխած խօս-  
 քեր էին: Այն ազգին բարեւրտութիւնն իմ հայ-  
 րենակիցներուս բարեւրտութենէն աւելի կը  
 շարժէր սիրտս: Ա՛հ, որչափ շնորհակալ էի ամե-  
 նուն ալ. ո՛հ, որչափ քաղցր էր մեր նմաններուն  
 գութը, և որչափ քաղցր է զանոնք սիրել:

Ասկէ գտած մխիթարութեամբս մինչև անգամ  
 թշնամիներս համարուած ունձանց դէմ ատելու-  
 թիւնս կը մեզմանար:

Ո՞վ գիտէ, կըսէի ես ինձ, եթէ ես անոնց երեւոր  
 և անոնք ալ իմա մօտէն տեսած ըլլայինք,  
 եթէ ես անոնց սրտին մէջը և անոնք ալ իմա կարգալու  
 կարող ըլլայինք, թե՛րևս կը հարկադրէի  
 համոզուելու որ անոնց քով ապիրատու թիւն չը-  
 կար, ինչպէս նաև անոնք ալ իմ քովս չալիտի  
 գտնէին: Ո՞վ գիտէ թէ այն ժամանակ չալիտի  
 մեղքընայինք իրար ու չալիտի սիրէինք:

Յիստ շատ անգամ, աւանդ, մարդիկ իրար չճան-  
 չեղնուն համար կատեն, երբոր քանի մը խօսք  
 փոխանակել բաւական էր իրարու բարեկամա-  
 կան ձեռք երկնցընելու համար:

Լուպիանա հասած ատենն իս' օր մը կեցանք, ուր  
 Քանովա և Քէծծիա մենէ զատուելով բերդը տար-  
 ուեցան, դիւրին է հասկընալ թէ այս անջատու մը  
 սրչտի դառն եզաւ չորսերնուս համար ալ:

Լուպիանա հասնելնուս իրիկունք և հետևեալ  
 օրը Պարոն մը քաղաքավարու թեամբ քովերն իս  
 եկաւ մեզ ընկերանայու: Ըսին մեզ թէ տեղւոյն  
 քաղաքական ժողովին քարտուղարն էր, բարե-  
 սիրտ մարդ մը՝ որ զգայուն լըջու թեամբ կրօնի  
 վրայ կը խօսէր: Ինձ թուեցաւ թէ քահանայ ըլլա-  
 լու էր: Աւատրիոյ մէջ քահանաներն աշխարհա-  
 կանի կերպարանքով են: Այս անձը յարգանք զը-  
 բառող բաց դէմք մը ունէր. ցաւեցայ որ անլի  
 երկար ծանօթու թիւն մը չկրցայ ունենալ անոր  
 հետ, և անլի կը ցաւ իմ որ անունը միտքս չապանեցի:

Ա՛րչախ քաղցր պիտի ըլլար ինձ նաև գիտնալ  
քաւանդ, սի՛ ծագկանաստի օրիորդ, որ Սթի-  
րիայ գիւղերուն մէկուն մէջ ետնեալ եկար  
բազմաթեան հետ։ Յրբոր մեր կառքը քանի մը  
վայրկեան կանգ առաւ, դա մեզ ողջունելիք  
երկու ձեռօք, և յետոյ մեկնեցար՝ թաշկի՛նակդ  
աչքիդ բռնած և պատանիի մը թևին կրթնած,  
որ իր խարտեաչ մագլերէն Քերմանացի կերեէր.  
բայց թերևս Վասիլիս Կանաղարհորգած ըլլալով  
մեր տարաշաղղ ազգին վրայ դարձաւից յիշա-  
տակ մը կը պահէր սրտին մէջ։

Ա՛րչախ քաղցր պիտի ըլլար ինձ գիտնալ ձեր  
ամէն մէկուն անունը, պատուական հայրեր ու  
մայրեր, որ այլ և այլ տեղեր քովերնիս մօտե-  
նալով կը հարցընէիք թէ ճնորդ ունէ՞ինք, և  
երբոր կխմանայիք թէ ողջ են, երեսներնուդ զոյնը  
դեղնելով կը գոչէիք. «Ա՛հ, Աստուած ձեզ շտաով  
այն խեղճ ձերերուն դարձունէ։»

### Գ Լ Ո Ւ Խ Ե Է .

Ապրիլ 10ին երթալու տեղերնիս հասանք։  
Պրիւն Վօրսովիայի մայրաքաղաքն է, և հոն կը



նասի ՄօրաՎիայի և Սլեզիայի գաւառաց կառա-  
 վարիչը : Գեղեցիկ նախի մը մէջ շինուած է , և  
 նոյն երկոյթ մը քանի : Բարձրաթիւ չափայի գոր-  
 ծարաններ կային հոն , որոնք այն ժամանակը  
 խիստ ծաղկեալ էին և յետոյ ինկան : Բնակչաց  
 թիւը երսուն հարար հոգիի չափ կար :

Քաղաքին պարխապներուն մօտ արեւմտեան  
 կողմը բլուր մը կայ՝ որուն վրայ բարձրացած է  
 Սրբիպէրկի չարաշուք գղեակը որ երբեմն Մօրա-  
 վիայի իշխաններուն պալատն էր , և Յիսուս Աւա-  
 տրիայ միապետութեան ամենէն խիստ արգելա-  
 նացն է : Այս գղեակը քաջաւոր բերդ մ'էր , բայց  
 գաղղիացիք Աւսթէրլիցի հռչակաւոր պատե-  
 րազմին ժամանակ ուժրակոծելով առին (Աւսթէր-  
 լից զեզը շատ հեռու չէ այս բերդէն) : Եւ ըր  
 վերստին ամրոց ըլլալու կ'ըստով չնորոգուեցաւ ,  
 այլ միայն պարսպին խարխալեալ մասը շին-  
 ուեցաւ : Երեք հարիւրի չափ թշուառ մարդիկ ,  
 մեծ մասը գող ու մարդասպան , հոն փակուած  
 են , ոմանք իսիս և միւսներն ալ խստագոյն քան-  
 ցարկարքեան դատապարտեալ : Խիստ քանցարկա-  
 րիւնն է աշխատութեան բռնադատուիլ , առ-  
 քերը շղթայ կրել , մեքի աախտակներու վրայ  
 ննջել , և ամենախեղճ ոտկիքով ապրիլ :  
 Խստագոյն քանցարկարիւնն է՝ աւելի գժնդակ կեր-  
 պով կապուիլ , երկաթէ գօտի մը մէջը և անկէց  
 շղթայ մը պատին գամուած , այն կերպով որ մարդ

մեծ դժուարութեամբ կրնայ դառնալ իրեն ան-  
կողին եզոզ տախտակին բարբառիքը: Աւտելիքը  
նոյն է, թէ և օրէնքը ջուր և հաց կը հրամայէ:

Մենք որ տ'ըտ թեան դէմ յանցաւոր դատուեր  
էինք՝ խիստ քակտելիքսն դատապարտուած  
էինք:

Բլուրէն վեր ելած 'ժամանակնիս' աչքերնիս  
ետեմնիս կը դարձընէինք աշխարհիս մնաս բարավ  
ըսելու համար, որովհետեւ շէինք գիտեր թէ այն  
վինը՝ որ մեզ ողջ ողջ պիտի կուլ տար՝ վերստին  
պիտի բացուէր մեզ համար: Բուրսէն հանդարտ  
կերեւէի, բայց ներսէն կը մռնչէի: Պարտաւ տեղը  
փիլիսոսիայութեան կը գիմէի սիրտս խաղաղե-  
լու համար. փիլիսոսիայութեան փաստերն ան-  
բաւական էին ինձ:

Վիէննայէն ճամբայ ելած ժամանակնիս տկար  
էի: Ճանապարհորդութիւնը զիս աւելի վատ վի-  
ճակի մէջ ձգեց: Բլուխս ու մարմինս կը ցաւէր.  
զերմը զիս կը լափէր: Սյս Ֆիլիքական ցաւէն  
բարկութիւնս աւելի կը զրգռէր. անտարակոյս  
բարկութենէս ալ Ֆիլիքական ցաւս կը բողբո-  
ղատէր:

Մեզի բերդին վերակացուին ձեռքը յանձնեցին,  
որ մեր անունը չարագործաց տումարին մէջ  
արձանագրեց: Աայսերական գործակալը մեզնէ  
բաժնուած ժամանակ կարեկից սրտիւ համբուրեց  
մեզ: — Մտնաւորապէս կապարեմ ձեզ, բառ,

որ հլու թիւն ընէ ք. վասն զի ամենափառքը կանա-  
նագանցութիւնը խստիւ կը պատժուի բերդին  
վերակացուն :

Յանձնարարութիւնը լիննալէ ետե, զիս ու Մա-  
րօնչէլլի ստորեւ ըկրեայ նրբաշատիղ մը տարին ,  
ուր իրարմէ զատ երկու մթին սենեակները բաց-  
ուեցան մեզ համար, և ամեն մէկս իր սրջին  
մէջ գոցեցին :



### Փ Լ Ո Ւ Թ Ս Ը .

Քիտտ դժնգակ բան է, երբոր մարդ մ'արդէն  
այնչափ սիրելիներէ բաժնուած է, երբոր երկու  
թշուտտ բարեկամ միայն մնացած են, ս'հ, այն,  
խիտտ դժնգակ բան է տակուին բաժնուիլ : Մա-  
րօնչէլլի ինձմէ զատուած ժամանակ կը տ'անէր որ  
հիւանդ էի, և կուլար մտածելով որ զիս յաւիտեան  
չպիտի տեսներ : Յս ալ Մարօնչէլլի վրայ կուլայի,  
այն առոյգ և պայծառ երիտասարդութեան ծաղ-  
կին վրայ՝ որ թեբևս յաւիտեան գրկուած էր արև-  
ուն կենսանորոգ ճառագայթներէն : Եւ այն ծա-  
ղիկը, ս'հ, ինչպէս անցաւ : Արդարեւ տեսաւ օր  
մը լոյսը, բայց աւաղ, ինչ վիճակի մէջ :

Երբոր զիս մինակ զատայ այն ստակայի անձաւին

մէջ սրուն դուռը փակազակներով զայնցին փրայէս, երբ որ վերէն նեղ պատուհանէ մ'եկած լուսով նշմարեցի ինձ անկողին ըլլալիք չոր տախտակն և պատին գտնուած ահագին շղթան, դողալով նստայ այն անկողնէն փրայ, շղթան ձեռքս առի, և երկայնութիւնը շափեցի մտածելով որ ինձ համար աշատբառուած էր:

Աէս ժամ ետքը բանալիներուն շնաչիւնը կը շտեմ, դուռը կը բացուի և բանտապանը սափոր մը շար կը բերէ:

— Այս խմելիքնիդ է, ըսաւ տխուր ձայնով մը, վաղն ալ հաց պիտի բերեմ:

— Շնորհակալ եմ, բարի մարդ:

— Ես բարի չեմ:

— Աւելի գէշ բեզ համար, ըսի ցտամամբ: Այս շղթան կարծեմ ինձ համար է:

— Այն, պարոն, և թէ հանդարտ չկենար, և թէ կտաղիք, և թէ գէշ խօսքեր ըսէք: Բայց և թէ խելօք կենար, այն ժամանակ միայն ոտքերնիդ շղթայ մը պիտի անցունենք: Գործաւորը զայն պատրաստելու գրազած է: —

Սե ծանր ծանր կը պարտէր սենեկիս մէջ՝ երկայնքին ու լայնքին՝ իր սոսկալի բանալիներուն արցակը հնչեցընելով ևս ալ զայրագին աչօք անոր ծեր վստուժ ու յաղթանդամ ոնձը կը դիտէի, և թէպէտ դէմքին գծագրութիւնը հասարակ չէր, այսու ամենայնիւ ինձ կը թուէր թէ

զաշանական խառնութեան մը նողկալի տարատ-  
րութիւնը կար իր վրայ :

Ա՛հ, սրչափ անիրաւ եւն մարդիկ երբոր մէկ բու-  
նըն ըստ երեսութիւնի և իրենց սոքայնաւան նու-  
խաղաշարմանը համեմատ կը դատեն : Այն  
մարդը՝ որ իմ կարծեօքս իրեն զուարեութիւն կը  
համարէր իր տխուր իշխանութիւնն ինձ զգացը-  
նելու համար բանալիներն հնչեցընել, այն մարդը՝  
որ երկար ժամանակ անգթութեան վարժուելով  
լրբացած կը կարծէի, կարեկցութեան մտած ու-  
թիւններով կը յուզուէր, և անշուշտ այս զգա-  
ցունն ինձմէ ծածկելու համար էր որ դաժան  
եղանակ մը կուտար իր խօստածքին : Թերեւս  
ծածկել կուզէր վախնալով որ տկար կերևի և ես  
այ իր գթութեանն անարժան կը գտնուիմ, բայց  
միանգամայն ենթադրելով որ ես կրնայի ստաւել  
զժրագր մէկ մը ըլլալ քան թէ յանցաւոր, ուզեց  
զայն նշմարել տալ ինձ :

Իր ներկայութեան և մանաւանդ տիրակալն  
դէմքէն ճանճրանալով մտածեցի զայն նուա-  
տացընել, և իշխանարար ըսի իրեն իբրև սպա-  
սաւորի մը. — Ձար մը տուր ինձ : —

Նրեւս նայեցաւ այնպիսի գէմքով մը որ ըսել  
կը թուէր. — Տո՛ւտդ, հաս պէտք է կորսնցընել  
հրամայելու սովորով :

Բայց լուեց, իր երկար քամակը ծռեց, սափորը  
զեռնէն ստաւ ու ինձ տուաւ : Տեսայ որ առած

Ժամանակը կը դադար. այն դադըն իր ծերութեանը տալով, գթոյ և միանգամայն ակնածութեան զգացում մ'եկաւ և գոռոշու թիւնս բարեխառնեց :

— Քանի տարեկան էք, ըսի իրեն քաղցրութեամբ :

— Եօթանասուն և չորս, Պարոն. ես արդէն շատ դժբաղդութիւններ տեսած եմ, թէ իմս և թէ ուրիշներունը : —

Այս վերջին խօսքը նորէն դողալով ըսաւ երբոր սափորը ձեռքէս կառնուր, և մտածեցի որ այս դողը ոչ միայն ծերութեան հետեանք կրնար ըլլալ, այլ և ազնուական գթութեան մ'արդիւնք : Այս գողափարը ջնջեց սրտէս այն ատելութեան տպաւորութիւնը՝ որ մարդուն առաջին տեսքն ազդեր էր ինձ :

— Բնչէ անուննիդ, ըսի իրեն :

— Բազղը զիս հեզնել ուզեց՝ մեծ մարդու մ'ունունը տալով : Անունս Շիլլէր է : —

Ասկէց սկսելով հասկըցուց ինձ համառօտիւ իր երկիրը, աշգատահմը, տեսած պատերազմները և առած վէրքերը :

Ազգաւ Ձուխցցեր էր, գեղացի ընտանիքէ : Ղինուորութիւն ըրեր էր Տաճկաց դէմ Լաւաոն գորապետին հրամանին տակ Մարիամ Թէրէզայի և Յովսէփ Բիօրով, ետքն ալ Բազղիոյ դէմ Աւստրիոյ ըրած ամեն պատերազմներուն մէջ գլխունուր էր մինչև Նարօլէտնի անկումը :

## Ք Ա Ո Խ Խ Ս Թ .

Երբ որ առաջ գէշ կարծած մարդու մը վրայ  
 լաւագոյն կարծիք մ'ունենալ կ'սկսինք, այնու-  
 հետեւ անոր դէմքը կերպարանքը և շարժմունքը  
 գիտած ժամանակն իսկ գիտես թէ պարկէ շտու թե ան  
 անսխալ նշաններ կը գտնենք: Այս գիւտն ստոյգ  
 է: Շատ կը կասկածիմ որ մտքի պատրանք մ'ըլ-  
 լայ. վասն զի նոյն դէմքը, նոյն կերպարանքը,  
 նոյն ձայնը, նոյն շարժմունքն առաջ ալ չարու-  
 թեան անսխալ նշաններ կը թուէին մեզ: Բա-  
 րոյական հանգամանաց վրայ մեր գատումը փո-  
 խելնուս պէս՝ մեր խտրադիմայական գիտութեան  
 հետեւութիւններն ալ կը փոխենք: Որչափ դէմ-  
 քեր կան որ կը յարգենք՝ վասն զի գիտենք որ  
 անոնց տէրերը բարի մարդիկ էին, մինչդեռ նոյն  
 դէմքերն ուրիշ մարդոց վրայ տեսած ժամանակ-  
 նիս բնառ յարգանք ազդելիք յատկութիւն մը  
 չալիտի գտնէինք. նմանապէս ասոր անդրադարձը:  
 Օր մը շատ խնդացի տիկնոջ մը վրայ, որ Աատի-  
 լինայի արձանին զլուխը Աողլատինոսի զլուխը  
 կարծելով, Աուկրետայի մահուան համար Աող-  
 լատինոսի զգացած վսեմ տրտմութիւնն անոր  
 վրայ նկարուած կերևակայէր: Եւ սակայն այս  
 պատրանքներն հասարակ բան մ'են:

Ըսել է թէ շէն գտնուիր այնպիսի պարկեշտ մարդոց՝ դէմքեր՝ որք յայտնապէս բարութեան նկարագիրը կը կրեն իրենց գծազրութեան վրայ, և չար մարդոց դէմքեր՝ որք նայնպէս քաջայայտ կերպով շարութեան նկարագիրը կը կրեն, բայց կը հաստատեմ թէ շատեր ալ կան որոց նկարագիրը խիստ երկրայելի է:

Աերջապէս, ծերունին Շիլլեր քիչ մը համարումը շտկելով իմ առջև, սկսայ տաաջուանէն աւելի ուշադրութեամբ դիտել զինքը, և դադրեցաւ ինձ անհանդիս ըլլալէ: Ըշմարտանքս ըսելով իր խօսուածքն ալ երբեմն ազնիւ հոգւոյ մը նըշաններ ունէր իր խոտութեանը մէջ:

— Զինուորութեան մէջ յիսնապետ էի, կըսէր իբրև հրամարման քոմիտէ՝ ինչպէս որ կը տեսնէք՝ ըանտապանի տխուր սլաշածեր տուին ինձ՝ գիտէ՛ Սատուած որ աւելի սիրելի էր ինձ կեանքըս վտանգի մէջ դնել պատերազմի դաշտերուն վրայ: —

Զղջացի այնպէս գոռոզարար իրմէ շուր ուզելուս վրայ: — Սիրելի Շիլլեր, ըսի ձեռքը սեղմելով, դուք պարտապ տեղը կուրանար, ևս կը տեսնեմ որ դուք բարի մարդ մ'էք, և որովհետեւ այս փորձութիւնը պիտի գայ եղեր զխոստ, փառք կուտամ Սատուծոյ որ ձեզ ինձ պահապան տուած է: —

Մտիկ ըրաւ այս խօսքս, գլուխը շարժեց, և



պատասխան տուաւ. ձեռքը նակտին վրայ պը-  
տրացընելով իրրեւ դժնդակ մտածութիւն մ'ու-  
նեցող մէկը :

— Ես չար եմ, Պարոն, ինձ երդում մը ընել  
տուած են որ երբէք չեմ կրնար անել. իմ ամեն  
բանտարկեալներու հետ մի և նոյն անաչառու-  
թեամբ վարուելու հարկադրեալ եմ՝ առանց ա-  
նոնց աստիճանին նայելու, առանց որ և է կանո-  
նագանցութեան թոյլտուութիւն ընելու, մանա-  
ւանդ տէրութեան դէմ յանցանքով բանտարկ-  
եալներուն: Ասյսրը զիտէ իր ըրածը. և իմ պար-  
տականութիւնս անոր հնազանդիլ է :

— Բուք քաջ մարդ մ'էք, և ես ալ կը յարգեմ  
ձեր այդ խղճմտանքի պարտականութիւն հա-  
մարածը: Այն որ անկեղծ խղճմտանքով կը զոր-  
ծէ, կրնայ երբեմն խարտիլ, բայց Աստուծոյ  
տաջև անմեղ է :

— Ինչո՞ւ Պարոն, համբերութիւն ըրէք և մի  
նեղանաք ինձ: Ես երկաթի պէս խիստ եմ իմ  
պարտականութիւններս կատարելու մասին.  
բայց սիրտս... սի, սիրտս շատ կը ցաւի որ չեմ  
կրնար թշուառաց օգնութիւն ընել: Այս էր որ  
բանի կուզէի ձեզ:—

Երկու քիս ալ սիրտը ելած էր: Աղաչեց ինձ որ  
հանդարտ ըլլամ, չզայրանամ ուրիշ շատ դատա-  
պարտելոց պէս, և զինքը հարկադրեմ ինձ խըս-  
տութիւն ընելու:


Յեառոյ, ձայնը խստացուց որպէս թէ սրաին  
էլնելը ինէ ծածկելու համար, և ըսաւ .

— Հիմա պէտք է որ երթամ :

Ետքը դարձաւ հարցուց ինձ թէ երբե՞ն ի վեր  
էր որ ունեցած թշուառ հագս կը տնէր, և մեծ-  
կակ յիշոյ մ'արձակեց բժշկին դէմ՝ որ նոյն իրի-  
կունն ինձ այցելու թեան շէր գար :

— Պարոն, դուք ձիու տենդ ունիք, ըսաւ . ևս  
կը ճանչեմ: Ձեզ գոնէ խոտէ անկողին մը պէտք  
է. բայց մեր առանց բժշկին հրամանին չեմք  
կրնար տալ :

Իսկուհի, դուք գոցեց, և ես տարածուեցայ  
կարծր տախտակին վրայ՝ սաստիկ տենդէ և  
կուրծքի ցաւէ անզուելով . բայց առջի չափ  
գրգռեալ, առջի չափ մարդոց թշնամի չէի, ոչ  
այ Աստուծակ, այնչափ հեռացած :



### Պ Լ Ա Ի Ծ Կ .

Իրիկունը բերդին վերատեսուչն եկաւ խու-  
զարկու թիւն ընելու, Շիլլէրին՝ մէկ ուրիշ յիս-  
նապետի և երկու զինուորի հետ :

Ամեն օր երեք անգամ խուզարկու թիւն կը լլար .  
առաւօտուն իրիկուան և կէս զիշերին: Բանտիս

ամեն կողմն աչքէ կանցունէին . ամենափոքր  
բաները կը քննէին : Յետոյ ստորակարգեալները  
դուրս կելնէին , և վերատեսուչը՝ որ առաւօտուն  
և իրիկուան չէր պակասէր բնաւ այցելութենէն՝  
քիչ մը կը կենար ու հետս կը խօսակցէր :

Առաջին անգամ որ այս փոքրիկ խումբը տեսայ ,  
կարգէ դուրս մտածութիւն մ'եկաւ ինձ : Քեռ  
անձանօթ ըլլալով այս անհաճոյ սովորութեան ,  
և տենդի զառանցանքէն երևակայութիւնս շիտ-  
թած , կարծեցի թէ զիս խողխողելու կուգային ,  
իսկոյն քովս կեցած երկար շղթան ձեռքս առի որ  
քովս մօտեցողին զանկն անով զախշախեմ :

— Ի՞նչ կընէք , ըսաւ ինձ վերատեսուչը : Մեք  
քեզ մնաս մը չունինք . ասիկա լոկ կանոնական  
այցելութիւն մ'է որ ամեն բանտերուն մէջ կը-  
նենք՝ ապահով ըլլալու համար թէ ամեն բան  
կարգին է : —

Ար վարանէի հաւատարու . բայց երբոր տեսայ  
Շիլլերը որ քովս մօտեցաւ և բարեկամաբար ձեռքն  
ինձ երկնցուց , իր հայրական տեսքը զիս քաջալե-  
րեց : Վար ձգեցի շղթան և անոր ձեռքը բռնեցի :

— Ա՛հ , կրակի պէս տաք է ձեռքը , ըսաւ վերա-  
տեսչին : Եթէ կարելի է գոնէ խոտէ անկողին մը  
տրուէր պարոնին : —

Այս խօսքերն այնպիսի տրտում կերպով և  
համակրութեամբ մ'ըսաւ որ սիրտս խանդաղա-  
տեցաւ :

Վերապետուչը բազկերակս զննեց և կարեկ-  
ցութիւն ցուցուց ինձ: Բաղաքաւար մարդ մ'էր,  
բայց չէր համարձակեր ինքիրմէ բան մ'ընելու:

— Հոս ամեն բան խտուժիւն է, մինչև ան-  
գամ ինձ համար, ըստ... եթէ ինձ տրուած հրա-  
հանգը բառ առ բառ չկատարեմ, պաշտօնէս վը-  
ռնտուելու վաանգի մէջ կիյնամ: —

Շիլլէր շրթունքը կախեց, և գրաւ կը դնեմ որ  
մտքէն կըսէր. — Եթէ ես վերապետուչ ըլլայի,  
այսչափ երկիւղ չէի ունենար. և եթէ այսպէս  
հարկին պահանջամբն արդարանալիք և տէրու-  
թեան շանուն բնաւ վնաս չունեղող որոշում  
մ'ընէի, մեծ յանցանք մ'ըրած չէի կրնար եր-  
բէք համարուիլ:

Նրբոր մինակ մնացի, սիրտս՝ որ քանի մ'օրե-  
ի վեր աստուածաբաշտութեան խորին զգացում  
մունենալու անկարող էր, շարժեցաւ և աղօթք  
ըրի: Ըրած աղօթքս օրհնութիւն մ'էր Շիլլէրի .  
յետոյ առ Աստուած ուղղելով կ'աւելցընէի. —

Այնպէս ըրէ, Աստուած իմ, որ ուրիշներուն վը-  
րայ ալ մէկ մէկ բարեմասնութիւններ գտնեմ ո-  
րով սիրելի ըլլան ինձ: Բանտին ամեն չարչա-  
րանքը կընդունիմ, բայց զոնէ թոյլ տուր որ սի-  
րեմ, և ազատէ զիս, Աստուած իմ, նմաններս  
ատելու տանջանքէն: Կէս զիշերուն ոտքի ձայն  
լեցի նրբաշաղին մէջ: Բանալիները շունչեցին,  
դուրը բացուեցաւ և յիսնապետը երկու պահա-

պանսով ներս մտաւ այցելու թիւն ընելու:

— Ո՞ր է իմ ձեր Շիլլերս, գոչեցի արտմա լից  
ճայնիս: Շիլլեր նրբաշաղին մէջ կեցեր էր:

— Հոս եմ, հոս եմ, պաասսիսանեց: Եւ ներս  
մտնելով քովս եկաւ նորէն, բազկերակա զննեց,  
և անձկու թեամբ վրաս ծռեցաւ երեսս նայելու  
համար, ինչպէս հայր մ'իբ հիւանդ որդւոյն մահ-  
նին վրայ:

— Եւ հիմա որ կը յիշեմ, վաղը հինգշաբթի է,  
մամռաց քթին տակէն այն, վաղը հինգշաբթի է:

— Ի՞նչ բսել կուգէք ասով:

— Ըսել կուգեմ թէ բժիշկը սովորաբար երկու-  
շաբթի, չորեքշաբթի և ուրբաթ ասուօաները  
կուգայ, և դժբաղդարար վաղը չպիտի գայ:


— Ասոր համար սիրա մի հասցունէք:

— Սիրա չհասցունեմ միս Քաղաքին մէջ ամեն  
մարդ ձեր հոս հատնելուն վրայ կը խօսին, ան-  
շուշտ բժիշկն ալ իմացած է: Ինչո՞ւ համար ան-  
գամ մ'աւելի չգար: Այնչափ մեծ աշխատա-  
թիւն մ'է:

— Ո՞վ գիտէ, թերևս վաղը կուգայ, թէ և հինգ-  
շաբթի ըլլայ: —

Մերունին որիշ խօսք չըբաւ: Բայց ձեռքս  
սեղմեց այնպէս ուժգնու թեամբ որ կարծեցի թէ  
կոտրուեցաւ. և թէպէտ սասափից ցաւեցաւ, բայց  
ևս զուարճութիւն զգացի, այն զուարճութիւնը  
որ տարփաւոր մը կ'զգայ երբոր պարելու ատեն

սիրունին զիպուածով իր ոտքին վրայ կոխէ :  
Ասանկ զիպուած ի մը մէջ մարդ փոխանակ ցուէն  
պուալու՝ կը ժպտի իր սիրունայն և զինքն երջա-  
նիկ կը սեպէ :



### Գ Լ Ո Ւ Խ Ե Ա .

Այն զիշերը մեծ տառապանօք անցուցի : Հինգ-  
շաբթի առաւօտ ինքզինքս տկարացած, ոսկերքս  
տախտակներէն կոտրուած և մարմինս քրտինքի  
մէջ թաթխուած գտայ : Այցելու թիւնն եղաւ,  
բայց վերատեսուչը հետ չէր : Ժամն իրեն յարմար  
չըլլալուն համար՝ ետքը քիչ մ'ուշ կուգար :

Ըսի Շիլլէրին . — Ձեռքդ մարմինիս դպցու և  
տես ինչպէս քրտնած եմ : Արդէն քրտինքս պա-  
ղիլ սկսած է մարմնոյս վրայ, և հարկ է որ շա-  
պիկս շուտով փոխեմ :

— Այդ անհնարին է, գոչեց վայրագ ձայնով  
մը : —

— Բայց կամացուկ մը նշան ըրաւ ինձ աչքովե  
ու ձեռօքը : Յիսնապետն ու պահապանները եր-  
թալէն ետե երկրորդ նշան մ'ըրաւ ու գուռը գո-  
ցեց զնաց :

Վայրկեան մ'ետքը եկաւ իր շապիկներէն

մէկը բերելով, որ իս երկայնու թիւնս ունէր :

— Քիչ մ'երկայնէ ձեզ համար, ըսաւ, բայց առ այժմ հոս ուրիշ շապիկ չունիս : — Շնորհակալ եմ ձեզմէ, բարեկամ. բայց ես սնտուկ մը լեցուն կտաւիք բերած եմ Սբիդպէրի, կը յուսամ որ իմ շապիկներու ազորածու թիւնը չեն զլանար ինձ. կը խընդրեմ երթայիք մէկ հաս մ'ուզէիք վերատեսչէն :

— Ձեր կտաւիքը ձեզի թողուլ արգիլուած է : Ամեն կիրակի այս տանը շապիկներէն հաս մը պիտի տրուի ձեզ, ինչպէս ուրիշ դատապարտելոց ալ :

— Բարի ծեր, ըսի իրեն, կը տեսնէք ինչ վիճակի մէջ ըլլալս : Հաւանական չէ որ ես այս տեղէս ողջ դուրս ելնեմ : Աւստի չպիտի կրնամ երբէք այս ըրած բարիքներնուդ փոխարէն երախտագիտութիւնս յայտնել :

— Քաւ լիցի, պարոն, քաւ լիցի, գոչեց. վարձատրութեան խօսք մի՛ ընէք այնպիսի մարդու մը՝ որ ծառայութիւն մը չկրնար ընել, և որ շատ շատ՝ հիւանդի մը մարմնոյն վրայ վազած քրտինքը սրբելիք կտաւ մը միայն — փոխ կրնայ տալ գաղտնարար : —

Եւ իրերկայն շապիկն ուսիս վրայնետեւում գնաց մոմապով, և մտեզին զզորդամբ դուռը գոցեց :

Երկու ժամու չափ ետքը կտոր մը սև հաց բերաւ :


— Ահա երկու աւուր հացդ, ըսաւ :





հրամայեց ինձ համար, և պատուիրեց որ այն  
 ստորերկրեայ տեղէն զիս անպատեհառ հանեն և  
 վերի դատիկոնը դնեն: Այս վերջինը քսածն անհր-  
 նար էր. վերի դատիկոնը տեղ չկար. բայց տե-  
 ղեկագիր լ' այս բանիս համար գրուելով Մորա-  
 վիայի և Սէպիայի գաւառաց կառապարիչ Միթ-  
 րօվարի կոմսին որ Պրիւն կը նստէր, կամար  
 պատասխանեց թէ: հիւանդու թիւնը ծանր ըլլա-  
 յալն համար թ՛ շէին հրամանը կատարել լակ աք էր:  
 Ինձ տրուած երկրորդ սենեկին մէջ քիչ մը  
 լոյս կը մտնէր, և նեղ պատուհանին երկաթեայ  
 վանդակաձողերուն զաշե լով կրնայի տեսնել յեր-  
 դին առջևի ձորը, Պրիւնի հովտին վեկ մասը,  
 արուարձան մը յետքրիկ պալատէ գնե լով, գերեզ-  
 մաննոցը, Չէրթօզայի լեակը, և այն անտառա-  
 խիտ ըլնորները որ Սևսթէ ըլլիցի դաշտերը մեզնէ  
 կը բաժնէին:

Այս տեսքը զիս կզմայլեցընէր: Ա՛հ, որչափ  
 ուրախ պիտի ըլլայի ե թէ կարող ըլլայի գայն  
 Մարտիչէլի հետ վայելել:



—

## Փ Լ Ո Ւ Խ Ս Ս Ի Ր .

Այս միջոցին մեր բանտարկելոյ հազուստը  
կը պատրաստուէր, և հինգերորդ օրն իմս բերին:

Այս հազուստն էր՝ հաստ կտաւէ տափաստ մը,  
որուն աջ կողմը մոխրագոյն էր և ձախ կողմը  
շէկ. երկայն պատմութեան մը նոյն գոյներով.  
բաճկոն մը նոյնպէս երկգոյն, բայց հակադարձ  
կերպով շինուած, ձախ կողմը մոխրագոյն և աջ  
կողմը շէկ: Գուլպաները թանձր բուրդէ էին.  
շապիկը խժուժի կտաւէ ըլլալուն՝ խայթոցներով  
լի էր և խորդէ մը տարբերութիւն չունէր. նոյն  
կտաւէն փողպատ մը: Առջիկներն աններկ մորթէ  
էին և խրացաւոր Փեղոյրը գերմակ էր:

Այս համազգեստը կատարեալ ըլլալու հա-  
մար ոտքերնիս շղթայ մը՝ որ մէկ սրունքէն  
միւսը կերթար և որուն ծայրի օղակները սալի  
վրայ տափարակեալ բևեռներով զամուեցան:  
Այս գործողութիւնն ինձ ընող գործաւորը կար-  
ծելով թէ ես գերմաներէն չէի հասկընար, ըսաւ  
պահապաններէն մէկուն. — Հիւանդ ըլլալուն  
համար այս խաղը կրնար խնայուիլ իրեն: Նրկու-  
ամիս չանցած՝ մահուան հրեշտակը պիտի գայ  
ազատէ այս ողորմելին:

— Աստուած տայ, ըսի անոր Քերմաներէն,  
 ձեռքս կամայց մ'ուսին զարնելով:

Խեղճ մարդը վեր ցատկեց և կարմրեցաւ յե-  
 տոյ ըսաւ ինձ.

— Ար յուսամ որ մարգարէ չեմ ըլլար, և կը  
 իմաստաբիմ որ ուրիշ հրեշտակ մ'ազատէ ձեզ:

— Ասանկ տարելուս տեղ՝ մահուան հրեշտա-  
 կին զալն ալ հանոյ չթուիր ձեզ, ըսի:

— Գլխովն շայն ըսաւ, և վիճակիս վրայ զը-  
 թարով զնաց:

Եւ արդարև յօժարու թեամբ յանձն կանուխ  
 մեռնիլ, ըայց ինքզինքս սպաննելու կամք չու-  
 նէի: Ար յուսայի որ թորելուս տկարութիւնն օր  
 քան զօր աւելնարով զիս կը չմնցընէ: Բայց Աստ-  
 ուած չիամեցաւ: Ծանազարհորդութեան խոն-  
 ջու թե՛նէն հիւանդութիւնս ծանրցեր էր, հանգըս-  
 տութիւնը քիչ մը զիս սիրտեց:

Գործաւորին դուրս ելնելէն քիչ մ'ետքը նորէն  
 կռանի հարուածներ լսեցի գետնայարկէն: Շիւքը  
 տակաւին դուրս ելած չէր սենեակէս:

— Մտիկ ըրէք սա կռանահարութիւնը, ըսի  
 անոր: Անշուշտ խեղճ Մարօնչէլլիի շղթաները  
 կը զամեն: —

Եւ այս խօսքն ըսած ժամանակս՝ սիրտս այն-  
 պէս ճմլեցաւ, որ գողգոջեցի, և եթէ բարի ձերը  
 զիս չբռնէր՝ կիյնայի: Աէս ժամէն աւելի մնացի  
 այնպիսի վիճակի մը մէջ՝ որ մարելու կը նմանէր,

բայց չէր: Չէի կրնար խօսիլ, բազկերակս հազիւ կը զարնէր, սլաղ բրտինք մը զիս կողողէր զլիւն, մինչև ոտու ընկերս: այսու ամենայնիս Շիլլերի ամեն խօսքերը կը լսէի, և անցեալին յիշատակն ու ներկային զգացումը բնաւ կորուսած չէի:

Վերատեսչին հրամանն և պահնորդներուն աշարջութիւնը մինչև այն ժամանակ բոլոր շրջակայ բանտերուն մէջ լռութիւն պահեր էին: Միայն երեք չորս անգամ իտալերէն երգերու ձայն լսեր էի, բայց անմիջապէս պահնորդները գոչելով լռեցուցեր էին:

Բազմաթիւ պահնորդներ ունէինք մեր պատուհաններուն առջևի բարձրաանդակին վրայ և մինչև մեր բանտերուն նրբաշառղին մէջ, պահնորդ մ'ալ կար որ շարունակ կը պրտրտէր նրբաշառղին մէջ՝ գոներուն ահանջ գնելով և ծակերէն ներս նայելով, որպէս զի ձայն չհանուի:

Օր մը՝ իրիկուան գէմ՝ (ամեն անգամ որ միտքս բերեմ, այն վայրկեանին կրած սրտիս բարախումը կը նորոգի), բարեբաղդ դիպուածով մը պահնորդներն ու շարքութիւն չընելով, քովի բանտէս երգի ձայն մը լսեցի որ մեղմ աւաչով շարունակեց:

Ո՛հ, ինչ ուրախութիւն, ինչ յանկարծական սրտի շարժում մը գրաւեց զիս այն վայրկեան:

Ելայ անկողնէս, ահանջ դրի, և երբ որ ձայնը լռեց, չկրցայ արտասուքս բռնել:

— Ո՛հ, սվեա դու, տարաբաղդիկ մարդ, գոչե-

ցի, ո՞վ ևս, ըսէ ինձ անունդ : Ես Սիլվիո Բէլ-  
լիքօն եմ :

— Ո՞վ Սիլվիո, պատասխանեց գրացիս, քեզ  
անձամբ չեմ ճանչեր, բայց շատոնց ի վեր կը  
սիրեմ : Պատուհանին քով եկա, և խօսակցին ք'  
առանց պահնորդներուն ահանջ կախելու :

Պատուհանին քով գացի, անունն ըսաւ ինձ,  
և քանի մը խօսք փոխանակեցինք :

Անթօնիօ Օրօպօնի կոմսն էր, Բօլիկօլէ ձօռ  
Ֆրաթթա գեղը ծնած, քսան և ինն տարու երի-  
տասարդ մը :

Աւանդ, պահնորդները շուտով խօսքերնիս կրտ-  
րեցին իրենց սպանալից գոչաւններովը. նրբա-  
շաւ զին մէջ պտըտող պահնորդն ալ իր հրացանին  
կոխն ուժգնու թեամբ մերթ իմ դրանս, մերթ  
Օրօպօնի գրանը կը գարնէր : Մեր չէինք ուզեր,  
չէինք կրնար հնազանդիլ, Սախայն պահնորդ-  
ներուն սպանալիքն այն առտիճան շատցան որ  
մտիկ ընելու պարտաւրեցանք՝ խօսք տալով ի-  
րարու թէ պահնորդները փոխուելու ըլլան՝ նօ-  
րէն սկսինք :

Գ Լ Ո Ւ Թ Կ Պ

Կր յուսայինք, ինչպէս որ և զաւ ալ, թէ սեւ ի  
մեզմ ձայնի խօսելով կրնայինք իրարու խօսք

լսել, և թէ երբեմն կարեկից պահնորդներ կրնային գտնուիլ որ մեր խօսակցիլը չնշմարել ձեռացրնէին: Շատ փորձեր ընելէ ետե, վերջապէս յաջողեցանք այն աստիճան մեզմով խօսելու, որ ձայներնիս իրարու աղանջի կը հասնէր և ուրիշներէն չէր լսուէր կամ անլսելի կրնար համարուիլ: Քէպէտ երբեմն կը պատահէր որ պահնորդներուն մէջ սուր աղանջ ունեցողներ կը զըտնուէին, կամ մեք մոռնարով ձայներնիս քիչ մը ամուր կը հասնէինք: Այն ժամանակ պահնորդներուն զոչիւնը, դռներնուս հրացանի կոթով հարուածները, և որ աւելի գէշն էր՝ խեղճ Շիլլէրին եւ վերատեսչին բարկութիւնը նորէն կ'սկսէր:

Քիչ քիչ մեր ամէն նախազգուշութիւնները կատարելագործեցան: Աստե՛հ ժամերը, այս կամ այն պահնորդին ներկայութիւնը դիտելով ընտրել սովորեցանք, և միշտ ալ խիստ մեղմ ձայնով կը խօսակցէինք: Չեմ գիտեր թէ մե՞ք աւելի վարպետ էինք մեր զգուշութիւններուն մէջ, կամ թէ պահնորդները քիչ քիչ մեզ աչառութիւն ընելու վարժուեցան: Այս ստոյգ է որ ամէն օր բաւական երկարօրէն կը խօսակցէինք իրարու հետ, և տեսուչներէն մէկն ալ առիթ չունեցաւ այնուհետեւ մեզ բռնելու:

Յանդակաթ սիրով կապուելեցանք իրարու հետ: Մէկուս վիշտը կամ մխիթարութիւնը միւսին

վիշտ կամ մխիթարութիւն էր : Ա՛հ . որչափ  
 փոխադարձ քաջալերութիւններ կուտայինք ի-  
 րարու : Ա՛րչափ անգամ ես կամ ան՝ զիշերն ան-  
 բուն անցունելնէս ետե , առաւօտուն պատուհա-  
 նը ելած ժամանակնիս , իրար ողջունած ժամա-  
 նակնիս , իրարու սիրելի խօսքերը լսած ժամա-  
 նակնիս , սրտերնուս տխրութիւնը կը մեզմա-  
 նար և քաջալերութիւննիս կաւելնար : Նրկուքս  
 ալ ինքզինքնիս իրարու կարեւոր կը հանչէինք ,  
 և այս համոզմամբ սրտերնուս մէջ քաղցր պէտք  
 մը կ՛ զգայինք սիրելի ըլլալու , և այն բերկրու-  
 թիւնը որ մարդ կզգայ մինչև անգամ ծանր վը-  
 տանգներու մէջ երբոր կրնայ իր նմանին օգնու-  
 թեան հասնիլ : Ամեն մէկ խօսակցութիւննիս նո-  
 րէն սկսելու պէտք մը կը թողուր և բացատրու-  
 թիւն հրաւիրէր : Անդանարար խթան մ՛ էր մեր  
 մտքին՝ երևակայութեանը՝ յիշողութեանը և  
 սրտին :

Բսկրան՝ Յուլիանոսը միտքս բերելով՝ այս նոր  
 բարեկամիս հաստատամտութեանը վրայ կը կաս-  
 կածէի : Մինչև հիմա , կըսէի ես ինձ , կարծեաց  
 անհամաձայնութիւն չունեցանք , բայց մէկ օրէն  
 միտք կրնամ անհանդի ըլլալ իրեն որ և է բանի մը  
 մէջ , և այն ժամանակ երես կը դարձունէ ինձմէ :

Այս կասկածս շուտով փարատեցաւ . մեր կար-  
 ծիքներն ամեն էսկան կէտերու վրայ կը համա-  
 ձայնէին : Միայն թէ , բարեկամս՝ ազնիւ զգա-


ցումնս ըստ վատուած և ճախարհութենէ չյաղթը-  
ւող վե՛ն սրտի մը հետ՝ քրիստոսնէ, ահան ամենա-  
մաքուր և ամենազատարեալ հաւատք մ'ունէր ,  
մինչդեռ իմ քուքս այն հաւատքը ժամանակէ մ'ի-  
վեր խիստ տկարացած էր և երբեմն բոլորովին  
շիջած կը թուէր :

Օրօպօնի իմ տարակոյսներս ուղիղ խորհրդ-  
գածութիւններով և եռանդուն բարեկամութեամբ  
կը ցրէր : Ա՛զգայի որ իրաւունք ունէր , և կը  
խոստովանէի , բայց տարակոյսները դարձեալ  
կուգային : Այսպէս կըլլայ այն ամեն անձանց՝  
որք Աւետարանը սրտերնուն մէջ շունին , սրբ ի-  
րենց նմանները կ'առնեն , և իրենց անձին վրայ  
կը փքանան : Հոգին վայրկեան մը կը նշմարե-  
ճ շմարտութիւնը , բայց իր քմացը յարմար չգրա-  
նելով գայն՝ հետեւեալ վայրկենին կը սլաղի անկէ ,  
և կը ջանայ որ իշ կողմ նայի :

Օրօպօնի խիստ յաջողակ էր ուշադրութիւնս  
հաստատելու այն պատճառներուն վրայ՝ որով  
մարդ իր թշնամիներուն ներքաւմիտ պէտք է ըլ-  
լայ : Նրբոր ինձ ստեղծի եղօղ մէկու մը վրայ խօսք  
ընէի , կ'սկսէր վարպետութեամբ մը զայն պաշտ-  
պանել , ոչ միայն խորհրդածութիւններով , այլ և  
օրինակներով : Շատ մարդիկ վնաս հասուցեր էին  
իրեն . կը ցաւէր , բայց ամենուն ալ կը ներէր .  
և եթէ կրնար անոնց մէ մէկուն մէկ բարի գոր-  
ծը պատմել՝ յօժարութեամբ կը պատմէր :



Մտքիս մէջ ծագած գրգռութիւնը՝ որ դատա-  
պարտութենէս ի վեր զիս անկրօն ըլեր էր՝ տա-  
կաւին քանի մը շարատի տակց, յետոյ բոլորովին  
դադրեցաւ: Օրօպօնիի առաքինութիւնը՝ զիս  
զրաւեր էր, անոր հասնելու ճգնելով՝ գոնէ ինք-  
զինքս անոր շաղագը վրայ գրի: Երբոր նո-  
րէն զօրութիւն ունեցայ ամեն մարդոց համար  
անկեղծութեամբ ազօթելու և մէկու մը դէմ ա-  
տելութիւն չտածելու, հաւատոյ վրայ ունեցած  
տարակոյսներս փարատեցան: Աւր գրութիւն եւ  
սէր կայ, հոն Աստուած կայ:



Գ Լ Ո Ւ Խ Կ Գ

Ճշմարիտ խօսելով, թէպէտ կրած պատիժնիս  
չստ խիստ և գրգռիչ էր, սակայն այս հազուա-  
գիւտ բարեբաղդութիւնն ալ ունէինք որ բոլոր-  
տիքնիս եզտղները բարի մարդիկ էին: Մերգա-  
ռն վիճակն ուրիշ կերպով չէին կրնար դիւբայը-  
նել՝ բայց միայն բարեսրտութեամբ և ակնածու-  
թեամբ, այս ակնածութիւնն ամենուն քով ալ  
կրտեսնէինք: Եթէ քիչ մը խստութիւն կար  
ձեր Շիլլերի վրայ, սրտին ազնուութիւնը կը

փոխարինէր զայն : Մինչև անգամ խեղճ Քունտա  
 (դատաւարտեալ մը որ օրն երեք անգամ մեր ու-  
 տելիքն ու ջուրը կը բերէր) կրցած ինչ չափ կա-  
 բեկցութիւն կը ցուցընէր մեզ : Շարաթը երկու  
 անգամ սենեակնիս կաւէր : Առաւօտ մը երբոր  
 կաւէր, տեսնելով որ Շիլլէր սենեակին դռնէն  
 երկու քայլ հեռացեր էր, կտոր մը ճերմակ հաց  
 սուսա ինձ : Չընդունեցի, բայց գորովանօք ձեռ-  
 քը սեղմեցի : Այս բարեկամական ցոյցս խանդա-  
 դատեցուց զայն, և ազաւազ զերմաներէնով մը  
 (ինքը Աէ՛հ էր) ըսաւ ինձ . — Պարոն, այնչափ  
 քիչ ուտելիք կուտան ձեզ, որ հարկաւ կը տան-  
 ջուիք անօթու թե՛նէ : —

Հաստատեցի թէ ոչ . բայց հաստատածս ան-  
 հաստատի էր :

Բժիշկը տեսնելով որ մեզնէ և ոչ մէկը կրնար  
 վարժուիլ մեզ տրուած ուտելիքին, հրամայեց որ  
 ֆառորդ քածիկն ըսուած կանոնով կերակրուինք,  
 այն է հիւանդանոցի կանոնով : Թրք երեք անգամ  
 փոքրիկ և թեթեւ թան մը, ամենափոքրիկ կը-  
 տոր մը խորոված գառի միս՝ որ մէկ սրատառ մը  
 կրնար ըլլալ, և երեք ունկիի չափ ճերմակ հաց :  
 Առողջութիւնս օր քան զօր կազդուրելուն, ախոր-  
 ժակս ալ կաւելնար, և ֆառորդ քածիկն ստուգիս  
 խիստ քիչ կուգար ինձ : Ազեցի առողջներուն  
 կերակուրէն ուտել, բայց անհնար եղաւ . այն  
 անստիճան կը գտնէի որ բերանս չէի կրնար դնել :

Ուստի հարկադրեցայ քառորդ բաժինով զոնք ըլլալ : Տարիէն աւելի ժամանակ անօթութեան տանջանքն ինչ անտանելի բան ըլլալը հասկըցայ :

Այս տանջանքն աւելի դժնդակ եկաւ մեր ընկերներէն շատերուն, որոնք ինձմէ աւելի քաջառողջ ըլլալով աւելի առատ ուտելիքի վարժուած էին : Շատերը զխտեմ որ հաց ընդունեցին Շիլէրէն, մեր ծառայութեանը յատկացած երկու պահնորդներէն և մինչև անգամ խեղճ Քունտայէն :

— Քաղաքին մէջ կըսեն թէ այս պարտններուն խիստ քիչ ուտելիք կը տրուի, ըսաւ օր մը սափրիչը, որ դեռահասակ պատանի մ'էր և մեր վիրարոյժին աշկերտն էր :

— Ըշմարիտ է ըսածնին, պատասխանեցի ընտանեացիս :

Հետևեալ շաբաթ օրը (սափրիչն ամեն շաբաթ օրերը կուգար), ուղեց բաւական մեծութեամբ ճերմակ հաց մը տալ ինձ գաղտնաբար : Շիլէր տեսաւ, բայց չտեսնել ձեռացուց : Եթէ ստամոքսիս հարցընէի, պէտք էր որ ընդունէի, բայց չընդունեցի, որպէս զի խեղճ տղան ուրիշ անգամ ինձ հաց նուիրելու փորձ չընէ, որն որ երթալով կրնար իրեն ծանրութիւն մ'ըլլալ :

Նոյն պատճառաւ կը մերժէի նաև Շիլէրի նըշէրները : Քանի մ'անգամ խարշած միւս բերաւ ինձ

ազատելով որ ուտեմ , և երդում կընէր որ իրեն  
 պէտք չէր , իր ճաշէն սուրճած էր , և եթէ ևս  
 չընդունէի՝ ուրիշի մը պիտի տար : Սրդարև մեծ  
 փափաքանօք կը յօժարէի առնուլ և ուտել այն մը-  
 սին կտորը . բայց կը մտածէի որ եթէ զայն ըն-  
 դունէի՝ Շիլլէր ամեն օր ինձ ուտելիք տալու  
 պիտի փափարէր : Սակայն օր մը պնակ մը կե-  
 ոսա , օր մ'ալ քանի մը տանձ բերելով ինձ ,  
 չկրցայ այն պտուղներուն տեսքին դիմանալ և  
 ընդունեցի : Բայց զղջացի , վասն զի այնուհետև  
 չէր դադրեր ինձ պտուղ նուիրելէ :



Գ Լ Ո Ւ Խ Ե Ծ .



Առաջին օրերէն որոշուեցաւ որ ամեն մէկս  
 շաբաթն երկու անգամ մէկ մէկ ժամ ճեմելու հան-  
 ուինք : Նորը այս միտի թարմ թխնը երկու օրն  
 անգամ մը շնորհուեցաւ մեզ . և աւելի ետքը ա-  
 մեն օր , բայց ՚ի տօնի օրերէ :

Բարաքանչիւրս զատ զատ ճեմելու կերթայինք  
 երկու հրացանաւոր պանտրղներով : Ոմբանաս  
 նրբաշաղին մէկ ծայրն ըլլալով , երբոր ճեմելու  
 ելնէի , քաղաքական պատճառաւ զանապարտ-

և ալ բոլոր խաւաղացոց բանտերուն առջեւն կանցնէի, բայց ի Մարտնչէլլիի բանտէն՝ որ վարի յարկըն էր:

— Գեղեցի՛կ ճեմք, կըսէին ամեն մէկը քրթմընջելով իրենց դրանը ծակէն. բայց ինձ թոյլ չէր տրուեր կանգ առնուլ և մէկը ողջունել:

Սանդուղէ մը վար կիջնէինք, բակէ մը կանցնէինք և հարաւի կողմը նայող բարձրաւանդակի մը վրայ կը հասնէինք, ոսկից կը տեսնուէր Պրիւմ քաղաքն և շրջակայ երկրին մեծ մասը:

Վերը յիշուած բակին մէջ բազմաթիւ հասարակ դատապարտեալներ կային՝ որ կերթեւեկէին իրենց աշխատութեանցը համար, կամ խումբ խումբ խօսակցելով կը ճեմէին: Մէջերնին քանի մը խաւաղացի գաղեր կային՝ որ զիս մեծ յարգանքով կողջունէին ու իրարու կըսէին. — Սյս մարդը մեզի սէս սրիկայ չէ, սակայն իր բանտարկութիւնը մերինէն խիստ է: —

Սւարդարեւ իճմէ շատ աւելի արգատութիւն ունէին: Արլսէի այս խօսքերն և ուրիշ շատ խօսքեր, և ողջոյննին սիրով կը հատուցանէի: Ասոնցմէ մէկն ըստ ինձ անգամ մը. — Ձեր ողջոյնն ինձ բարիք կընէ: Անշուշտ երեսն նայած ատեննիդ կրնաք հասկընալ որ սրիկայի դէմք չունիմ: Իժրազզ կիրք մը զիս սեփ մը գործելու առաջնորդեց. բայց, ո՛չ, Պարտն, ո՛չ, ևս սրիկայ չեմ:

Նւ սկսաւ արտասուել. ձեռքս իրեն երկընցուցի, բայց չկրցաւ սեղմել. պահապաններս զայն ետ մղեցին, չէ թէ չարակամութեամբ, այլ իրենց տրուած հրահանգին հնազանդելով: Պատուէր եղած էր իրենց որ բնաւ մէկը չմտեցնեն քովս: Այս դատապարտեալները շատ անգամ ինձ ուղղած խօսքերնին իրարու ըսել կը ձեացնէին, և եթէ պահապաններս նշմարէին որ այն խօսքերն ինձ ուղղուած էին, կը լռեցնէին:

Այն բակին մէջէն նաև զանազան վիճակէ անձինք կանցնէին, որք բերդին բնակիչներէն էին, և միայն կուգային վերատեսուչը կամ մատրանապետը կամ յիսնապետը և կամ տասնապետներէն մէկը տեսնելու:

— Ահա իտալացիներէն մէկը, կըսէին մեզմէս, և կը կենային ինձ կը նայէին: Քանի մ'անգամ ալ այս խօսքը լսեցի որ զերմաներէն լեզուով կըսէին, կարծելով թէ չէի հասկընար:

— Այս խեղճ պարոնը չպիտի կրնայ ձերանալ. արդէն մահը երեսին վրայ է: —

Ստուգիս՝ առողջութիւնս քիչ մը ժամանակ շտկուելէ ետև նորէն տկարացայ՝ ուտելիքս խիստ քիչ ըլլալուն և յաճախ ալ ջերմէ բռնուելու պատճառաւ:

Մեծ դժուարութիւն կը քաշէի ճեմելու հանուած ժամանակ շղթաս կրելու, և բարձրաւանդակին վրայ հասած ատենս՝ զալարիներուն վրայ կ'իյ-

նայի և շատ անգամ հոն նստած կը մնայի մինչև որ հեմե լու ժամանակս լրանար :

Պահնորդները ոտքի վրայ կը կենային կամ բովս նստելով հետս կը խօսակցէին : Մէկը որ Քրաւ կը կոչուէր՝ Առհեմիացի էր, և թէպէտ խեղճ գեղացի ընտանիքէ մը ծնած էր, սակայն քիչ մը կը թու թիւն առած և ինքնիրեն ալ կըրցած ինչ ասի կատարելագործած էր՝ ողջ մտու թեամբ խորհրդաժեշտով աշխարհի իրերուն վրայ և ձեռքն անցած ամեն գիրքերը կարդալով : Քլօբս թօք, Վիէլանտ, Կէօթէ, Շիլլէր և ուրիշ շատ մը գերմանացի ընտիր հեղինակներ ծանօթ էին իրեն : Այս գիրքերէն շատ մը հատուածներ գոց գիտէր, և հանճարով ու զգացմամբ կարտասանէր : Միւս պահնորդը՝ Լեհացի մ' էր Քուպիճքի անունով, տղէտ, գայց սիրտը և տկնածու : Ասոնց ընկերակցութիւնը սիրելի էր ինձ :

Գ Լ Ո Ի Խ Կ Զ .

Բարձրաւանդակին մէկ ծայրը վերատեսչին բընակարանն էր, միւս ծայրը կը բնակէր տասնապետն իր կնոջն և փոքրիկ տղու մը հետ : Երբոր

մէկը դուրս կելնէր այն բնակարաններէն, ոտք  
կելնէի, քովը կամ քովերնին կը մտնեայի, և  
յարեկցութեան ու գորովոյ նշաններ կը շայ-  
լէին ինձ :

Անբաւարան ինքնը երկար ժամանակէ 'ի վեր  
հիւանդ էր և օր ըստ օրէ կը հիւժէր : Երբեմն ինք-  
զինք դուրս հանել կուտար բազմոցով : Չեմ կրնար  
ըսել որչափ գորովանօք մեր ամենուս վրայ զգա-  
ցած գութը կը յայտնէր : Նայուած քը զարմանա-  
լի կերպով քաղցր ու երկչու էր, և թէպէտ երկ-  
չուա, այսու ամենայնիւ երբեմն աշխոյժ ու հե-  
տաքրքիր վստահու թեամբ մ'իրեն հետ խօսողին  
աչքին մէջ կը նայէր :

Օր մ'ըսի իրեն մ'ստեղծով. — Իստէք, տիկին, ար-  
եա սիրելի մ'ունէի, քիչ մ'անոր կը նմանիք  
դուք :

Աարմրեցաւ, և լուրջ ու սրտաշարժ պարզմտու-  
թեամբ մը պատասխանեց. — Արեմն զիս միմտու-  
նար երբոր մեննիմ. ազօթեցէք իմ խեղճ հոգւոյս  
և աշխարհի վրայ թողուցած դժբաղդ մանր որ-  
գեկացս համար :

Այն օրէն ետև շիրցաւ անկողնէն ելնել, և ալ  
չտեսայ զինքը : Քանի մ'ամիս հիւանդութիւն քա-  
շէլէ ետև մեռաւ :

Երեք արտէ զաւակ ունէր սիրուն ու գեղեցիկ,  
ուրիշ մ'ալ դեռ ստնդիւ Տարաբաղդ կինը շատ  
անգամ իմ առջև կը սիրէր զանոնք և կըսէր. —



Ո՞վ գիտէ որ կիներ մայր աղիտի ըլլայ ասոնց  
ինձմէ կտես Ո՛հ, ով որ ալ ըլլայ, Սատուած մայր-  
րական աղիք տայ անոր մինչև անգամ իրմէ չծը-  
նած ազայոց համար : — Եւ կուլար :

Հազար անգամ յիշեցի անոր աղօթքն ու արտ-  
ասւքը :

Մեռնելէն կտես երբեմն կը համբուրէի աղայքը ,  
և խանդադատանօք կը կրկնէի այն մայրական  
աղօթքը : Կը յիշէի մայրս և անոր զորովագու թ-  
արակէն անշուշտ ինձ համար երկինք ուղղուած  
աղօթքները , և հառաչանօք կըսէի . — Ո՛հ , ա-  
ւելի երջանիկ է այն մայրը որ իր զաւկընէրը տը-  
ղայ հասակի մէջ թողլով կը մեռնի , քան այն  
մայրը՝ որ անթիւ նեղու թիւններով զանոնք մեծ-  
ցընելէ կտես կը տեսնէ որ ձեռքէն կը քաշեն կառ-  
նուն :

Երկու քարեմիտ սրահունէր սովորու թիւն ու-  
նէին ազայոց քով կենարու . մէկը վերատեսչին  
մայրն էր , միւսը հօրաքայլը : Ասոնք իմ պատմու-  
թիւնս իմանալ ուզեցին , ևս ալ համառօտիս պատ-  
մեցի :

— Ո՛րչափ դժբաղդ ենք , կըսէին անկեզծ ցա-  
ւակցոս թեամբ մը , որ չենք կրնար ծառայու-  
թիւն մ'ընել ձեզ : Բայց աներկբայ եղիք որ  
ձեզ համար կաղօթենք , և եթէ օր մը ձեզ ազա-  
տութիւն շնորհուի , մեր ընտանեաց համար տօ-  
նի օր պիտի ըլլայ :

Այս երկու պատուաներէն ստաշինը՝ որ անլի-  
յաճախ կը տեսնէի, մխիթարու թիւն տալու հա-  
մար սքանչելի նարտարիտու թիւն մ'ունէր :  
Ըրած մխիթարական խօսքերը որդիական շը-  
նորհակալութեամբ մտիկ կընէի, և արտիս մէջ  
կը դրոշմուէին :

Բարեսիրտ տիկինն այնպիսի բաներ կըսէր ինձ  
որ ևս արդէն գիտէի, սակայն նոր բաներու պէս  
ինձ ազդեցութիւն կընէին : Արսէր թէ ճախոր-  
դութիւնը մարդս չնուստացընէր՝ եթէ արդէն  
նուստացած չէ, այլ ընդհակառակն զայն կը  
բարձրացընէ : Եթէ կարող ըլլայինք Աստուծոյ  
խորհրդոցը խելամուտ ըլլալու, շատ անգամ յաղ-  
թողները բարեբաղդները հարուստները՝ յաղթ-  
եալներէն տառապեալներէն դժբաղդներէն և տը-  
նանկներէն անլի ապերշանիկ պիտի գտնէինք :  
Մարդացեալ Աստուծոյ դժբաղդներուն ցուցուցած  
յատուկ համակրութիւնը ծանրակշիռ բան մ'է,  
և պէտք է փառաւորինք այն խոչով զոր իր աստ-  
ուածային ուսերուն վրայ կըրեց :

Գանք որ, այս երկու բարեսիրտ պատուաները՝  
զորս տեսած ատեն բերկրութիւն մը կըզգայի,  
շատ չանցաւ՝ ընտանեկան պատճառներով Սբիլ-  
պէրիէն մեկնեցան : Տղայքն ալ դադրեցան այ-  
նուհետև բարձրաւանդակին վրայ գալէ : Այս կո-  
րուստներն որչափ վշտացուցին զիս :



## Գ Լ Ո Ւ Խ Ե Կ Է .

Ոտքիս շղթաներէն կրած նեղութիւնս արգելք կըլլար ինձ ննջելու, և նեղութեամբ տառաջութիւնս աւելի խանգարելու պատճառ կըլլար: Շիլլէր կուգէր որ բողոք ընեմ, և կը հաստատէր թէ բժշկին սարսքն էր շղթայները ոտքէս հանել տալ:

Ժամանակ մ'աւանդ չկատեցի խօսքին, բայց ետքը հարկադրեցայ մտիկ ընելու. ազաշեցի բժշկին որ քիչ մը հանգիստ ննջելու համար շղթաներս գոնէ քանի մ'օր հանել տայ:

Բժիշկը պատասխանեց թէ տենդս այն աստիճան սաստկացած չէր որ կարող ըլլար այս խընդրոյս կատարմանը ջանալու, և ըստ թէ հարկ էր շղթայներուն վարժուիլ:

Այս պատասխանը զիս բարկացուց և սարժացայ այս անօգուտ խնդիրն ընելուս վրայ:

— Ահա ըսի Շիլլէրին, ձեր խորհուրդին հետեւելով ըրած շահս:

Ճշմարիտը խօսելով, քիչ մը խստութեամբ ըսի այս խօսքը. վասն զի այն բարի մարդը՝ որ նոյնպէս խիստ էր բնութեամբ, վիրատրեցաւ այս խօսքէս:

— Զեղի ծանր կուգայ, ըսաւ, մերժողական

պատասխան ընդունիլ . ինձ ալ ծանր կուգայ ձեր  
այդպէս խրոխտարար հետս վարուիլը :—

Այս բերնով շարունակեց խօսքը և ինձ քարոզ  
մը տուաւ . — Գոռոզ մարդիկը , ըսաւ , եթէ բան  
մ'ուզեն չզլացուելու , եթէ բան մ'իրենց տրուի  
չընդունելու և հազար կերպ չնչին ու անտեղի բա-  
ներ իրենց ամօթ համարելու վրայ կայացած կը  
կարծեն իրենց մեծութիւնը : Անմտութիւն , սուտ  
մեծութիւն , ճշմարիտ պատկառանաց տգիտու-  
թիւն : Ճշմարիտ պատկառանքը մեծ մասամբ  
չար գործերէ ամաչելու վրայ կը կայանայ :—

Ըսաւ ու դուրս ելաւ՝ դժոխային շառաչմամբ  
բանալիները հնչեցընելով :

Եփոթեցայ մնացի : Եւ ստիպան այս գեղջուկ  
անկեղծութեան կը հաւնիմ , ըսի ևս ինձ , վասն  
զի իր նուէրներուն խրատներուն և գթութեա-  
նը պէս սրտէն կը բղխի ճշմարիտ չէ՞ր ըսածը :  
Ո՞րչափ տկարութիւններ կան որ պատիւ և պատ-  
կառանք կը կոչենք , բայց իրօք ամբարտա-  
նութիւն են :

Ճաշի ժամանակ , Եփլէր դատաւարտեալ  
Քունտան ներս դրկեց ջրով և երկու մանր պը-  
նակներով , և ինք դրանս սեմին վրայ կեցաւ :  
Ներս կանչեցի :

— Ժամանակ չունիմ , ըսաւ սրազ կերպով մը :

Վար իզայ անկողնէս , մօտը գացի և ըսի .

— Եթէ կուզէք որ ճաշս հանդարտ սրտով ու-

տեմ , դէմքերնիդ այդպէս տգեղ կերպով մի' ծամածռէք :

—Նւ ի՞նչ տեսակ դէմք պէտք է ցուցընել ձեզ , հարցոց , և դէմքը զուարթ սցաւ :

—Ուրախ մարդու մը , բարեկամի մը դէմք , պատասխանեցի :

—Աեցցէ՛ որախտ թիւն , գոչեց . և եթէ հանդիատ ճաշ ընելու համար խաղալս ալ կուզէք , ահաւասիկ :

Նւ իր փատուծ ու երկայն սրունքներովն սկսաւ ցատկըտել՝ այնպէս զուարճալի կերպով , որ խընդալէն ճաթեցայ : Ար ծիծաղէի՞ և սիրտս շարժած էր :

---

## Ք Լ Ո Ւ Խ Կ Ը .

---

Իրիկուն մը , ես իմ պատուհանս էի , Օրօպօնի ալ իրը , և երկուքս ալ անօթութե՛նէ տանջուելնուս վրայ կը գանգատէինք իրարու : Չայներնիս քիչ մը բարձրացուցինք և պահնորդները գոչեցին : Նոյն միջոցին դժբաղդարար վերատեսուչն անցնելով՝ Շիլլերը կանչել տուաւ և խոտիւ յանդիմանեց որպէս թէ մեզ լուս պա-

հելու համար պէտք եղած հսկողութիւնը չէր  
ընէր :

Շիլլէր եկաւ բարկոտ թեամբ գանգատեցաւ ինձ  
և պատուիրեց որ այնուհետև անգամ մ'ալ չխօ-  
սիմ պատուհանէս : Առաջէր որ խօսք տամ :

— Աչ, ըսի, չեմ ուզեր խօսք տալ ձեզ :

— Ա՛հ, չն՛ր սասանայ, չն՛ր սասանայ, գոչեց,  
տես ինչպէ՞ս պատասխան կուտան. «Չեմ ուզեր»  
կըսեն ինձ որ այս Պարոնին պատճառաւ նը-  
զոված յանդիմանութիւն մը լսեցի հիմա :

— Ետտ կը ցաւիմ, բարի Շիլլէրս, ձեր լսած  
յանդիմանութեան վրայ, ճշմարիտ կը ցաւիմ,  
բայց չեմ ուզեր այնպիսի խոսամունք մ'ընել ձեզ,  
որ՝ ազէկ գիտեմ՝ չպիտի բռնեմ :

— Եւ ինչո՞ւ չպիտի բռնէք :

— Վասն զի չպիտի կրնամ. վասն զի այս շա-  
բունակ առանձնութիւնն այնպիսի անազորուն  
տանջանք մ'է ինձ համար, որ չպիտի կրնամ  
երբէք դիմանալ քանի մը խօսք կոկորդէս դուրս  
թափելու և դրացիէս պատասխան մ'առնելու  
հարկին : Եւ եթէ դրացիս պատասխան չտայ,  
պատուհանիս վանդակածողերուն հետ, աչքիս  
առջևի բլուրներուն հետ, օդին մէջ սլացող թըռչ-  
նոց հետ պիտի խօսիմ :

— Չն՛ր սասանայ : Հիմա դուք չէ՞ք ուզեր խօսք  
տալ :

— Աչ, ոչ, գոչեցի :

Բանալիներուն շառաչուն արցակը գետինը նե-  
տեց, չա՛ր սասանայ, չա՛ր սասանայ, խօսքը կըրկ-  
նելով. յետոյ վրաս վազելով եխտս ինկաւ ու զիս  
համբուրեց :

— Աւրեմն պէտք է որ մարդկու թենէ հրաժա-  
րիմ այս սինը որ բանալիներուն համարս Պարոն,  
դուք իմ սիրած մարդս էք, և զո՛հ եմ որ չէք ու-  
զեր այնպիսի խտտմունք մ'ընել որ պիտի չը-  
կրնար բռնել : Ես ալ նոյնը պիտի ընեմ : —

Բանալիները գետնէն վերուցի և իրեն տուի :

— Այս բանալիները, ըսի, ձեր ըսածին չափ  
սիկնո՞ւ չեն, որովհետեւ ձեզ պէս համեստ յիս-  
նապետը չկրցան շար կալանաւոր մ'ընել :

— Եթէ խելքս կարէր որ հարող էին ընելու,  
ըսաւ, կառնուի մեծերուս կը տանէի ու կըսէի.  
« Եթէ ձեր ինձ տալիք հացը դահճի հաց պիտի  
ըլլայ, կերթամ մտքացկանու թիւն կընեմ : »

Այս ըսելով զրպանէն թաշկինակը հանեց,  
աչքերը սրբեց, յետոյ դէպ յերկինք բարձրա-  
ցուց և ձեռքերն իրար կցեց աղօթելու դիրքով :  
Ես ալ ձեռքերս իրար կցեցի և անոր պէս լռու-  
թեամբ աղօթեցի : Ար հասկընար որ իրեն հա-  
մար կը բարեմաղթէի, ինչպէս որ ես ալ քու  
զիտէի թէ ան ալ ինձ համար կը բարեմաղթէր :

Բացած տանը մեղմով մ'ըսաւ ինձ .

— Երբոր Օրօսլօնի կոմսին հետ խօսիք, հնար  
եղածին չափ ցած ձայնով խօսեցէք : Ասով երկու

լաւ բան մէկէն ըրած կըլլար. այսինքն թէ զիս  
վերապահեալին գոռումէն կանխայէք, և թէ ձեր  
խօսքերը չեն լաւիր, որք, հարկ է ըսել, եր-  
բեմն այնպիսի նիւթոց վրայ են, որ եթէ իմաց-  
ուելու ըլլան, ձեզ պատժողն ամէլի ևս կը զըր-  
զրուեն: —

Աստահացուցի զինքը թէ մեր բերնէն բնա-  
ջելներ այնպիսի խօսք մը՝ որ ոչ է իցէ մէկու մը  
սկանզը հոսնելով՝ կարենայ մեզ վնասարեւր  
ըլլալ: —

### Ք Ն Ո Ւ Ս Ե Ք .

Սրդարե այս զգուշութիւնն ընելու համար  
ազգարարու թեան պէտք չունէինք: Երկու բան-  
տարկեալ իրարու հետ հազորդակցու թեան մասած  
ժամանակնին խիստ վարպետ են նոր լեզու մը  
հնարելու, որով ամեն բան կրնան ըսել առանց  
ուրիշ լսողներէ համկցուելու:

Առաւօտ մը պտըտելէ ետ կը դառնայի. օգոս-  
տոս ամսոյն Եօթն էր: Օրօղօնի թանտին գուար  
բաց մնացեր է թէ Շիլլէր ալ որ ներսն էր՝ իմ գալս-  
էր լսեր: Պաշտօրդներս կուզեն առաջ անցնիլ  
ու դուռը զօցել, ևս անոնցմէ առաջ անցնելով



բանաւէն ներս վազեցի և ինքզինքս Օրօւօնի թեկերուն մէջ գտայ :

Շիլլէր շփոթեցաւ մնաց . — Չմտաւսնայ , զոչեց և մատուցի ինձ սպառնացաւ . բայց աչքն արտասուօք լցուեցաւ և հառաչեալով զոչեց . Տէր Աստուած , ոգորմէ այս խեղճ և բխտասարգներուն , ինձ և ամեն զժրագոյններուն , դու որ զժրագոյն զար աշխարհիս յիբայ :

Նրիտ պահնորդներն ալ հուլային : Նըրբաշաղին մէջի պահնորդն ալ ներս վազելով՝ ան ալ սկսաւ լալ : Օրօւօնի Պըսէր ինձ . Սիլվիօ , այս օրը հենացս ամենաքաղցր օրերէն մէկն է : Չեմ գիտեր ինչ պատասխանն տուի : Աստուած թխնն աւրարեկամութիւնը զիս այլ յայլմէ բրեր էին :

Նրոր Շիլլէր պազատեցաւ մեզ որ բաժնուինք իրարմէ , և պէտք էր հնազանդիլ , Օրօւօնի սիրտը օրհճեցաւ ու լալով ըսաւ ինձ . — Մէկ մ'ալ պիտի տեսնենք իրար այս աշխարհիս մէջ :

Նւ արդարեւ շիրցայ տեսնել զինքը : Քանի մ'ամիս ետքը իր բանտը գատարի էր , և Օրօւօնի պատկած էր պատուհանիս առջևի գերեզմանատան մէջ :

Այս հարձատե տեսակցու թեան օրէն ետե կը թուէր թէ մեր բարեկամութիւնն առաջուանէն աւելի քաղցր էր և ջերմ : Արհար ըսուիլ թէ առաւել հարկատրեզած էինք իրարու :

Օրօւօնի գեղեցիկ և ազնու աղէմ և բխտասարգ

մ'էր, բայց դեղնած և առողջութիւնը սաստիկ  
խանգարած: Միայն աչքերը լի էին կենդանո-  
ւթեամբ: Վրան ունեցած սէրս կաւելնաբիր  
նիհարութեանն ու դժգունութեանը վրայ զգացած  
զթուխ: Նոյն զգացումն ունէր ան ալ իմ վրաս-  
երկուքս ալ կ'զգայինք թէ շատ հաւանական էր  
որ շատ չունցած՝ մեզնէ մէկը միւսին վրայ աստ-  
րելու տարաբաղդութիւնը պիտի ունենար:

Քանի մ'օր ետքը Օրօւօնի հիւանդացու: Նս-  
տերիչ բան չէի ընեք՝ բայց միայն կողայի և կա-  
ղօթէի անոր համար: Քանի մ'անգամ տենդէ  
չարչարուելէ ետե՛քիչ մ'աժ առաւ և նորէն  
կրցաւ պատուհանն ելնելով հետս խօսակցիլ:  
Ո՛հ, ի՛նչ մեծ միսիթարութիւն կ'ըսէ ինձ նորէն  
իր ճայնին քողցր հնչիւնը լսելս:

— Ինքզինքդ մի խաբեր, կըսէր ինձ, այս տե-  
սակցութիւննիս քիչ ժամանակի համար է: Զօրա-  
ցի՛ր և պատրաստուէ՛ զիս կորսնցընելու: քու  
արիութեամբդ զիս ալ արիացու:

Նոյն միջոցին մէք բանտերուն պատերը ներ-  
մակ կրով ծեփել ուզեցին, և այս պատճառաւ  
մեզ ստորերկրեայ բանտերն իջուցին: Քեշն  
ան էր որ մեզ իրարու մօտ բանտերու մէջ չը-  
ղբին: Շիլլէր կըսէր թէ Օրօւօնի առողջ էր,  
բայց կը կասկածէի որ նշմարիտը չէր ըսել ինձ:  
կը վախնայի որ Օրօւօնի առողջ խիտ տկա-  
րացած առողջութիւնը բողբոլին պիտի վատ-

Թարէր այն ստորերկրեայ նկուղներուն մէջ :

Գոնէ այս առ թիւ իմ սիրելի Մարօնչէլլիիս մօտ ըլլալու բարեբաղդու թիւնն սենեայի : Սակայն ձայնը լսեցի : Իբար ողջունեցինք երգելով՝ առանց պահնորդներուն աղագակը մտիկ ընելու :

Այն օրերը Պրիւնի բժշկասպետը մեզ այցելութեան եկաւ՝ հաւանականաբար վերատեսչին Ալէէննա զրկած տեղեկագրերուն պատճառաւ, որք կերակրոց անբաւականութենէն մեր վերջին ծայր տկարացած ըլլալը կիմացընէին, կամ թերևս բանտին մէջ սկորրիտի ախար ճարակած ըլլալուն պատճառաւ :

Այցելու թեան պատճառը չգիտնալուս, կարծեցի թէ Օրօպօնի նորէն հիւանդացած ըլլալով անոր համար եկեր էր : Զայն կորսնցընելու երկիւղս անպատմելի մտատանջութիւն մը կուտար ինձ : Այն ժամանակ խորին սեւամազձութիւն և մեռնելու իղձ մ'եկաւ վրաս : Անձնասպանութեան խորհուրդը նորէն կը ներկայանար ինձ : Ար մարտնչէի այս չար խորհրդին գէմ. բայց կը նմանէի այն պարտասեալ ճանապարհորդին՝ որ թէ և իր նպատակին հասնելու պարտականութիւնը կը յիշէ, բայց միանգամայն անյաղթելի սքեւք մը կ'զգայ զեանին վրայ տարածուելով հանգչելու :

Իմացեր էի թէ ժամանակաւ այն խաւարչտին որջերէն մեկուն մէջ ծեր Պոհեմիացի մը գլուխը

պատերուս զարնելով ինքզինք սպաններ էր :  
 Անոր պէս ընելու թելադրու թիւնը չէի կրնար  
 մարէս վանել : Չեմ գիտեր թէ զտրանցանքս  
 մինչև այն կէտը չպիտի հասնէք , և թէ ումայ մը  
 արիւն թքնելով չկարծէի թէ մահս մտնեցէր էր :  
 Փառք տուի Աստուծոյ որ ինքն այս կերպիւ  
 զիս մեռցրնելու կամք ընելով , կը խնայէր զիս  
 յուսահատական գործէ մը՝ որուն խելքս հանու-  
 թիւն չէր տար :

Բայց Աստուած ընդհակառակն զիս ազատել  
 ուզեց : Արիւն թքնելովս թե թեցան ցաւերս : Այս  
 միջոցին զիս նորէն վերի բանտը տարին , և հոն  
 տեսնուած սրայծառագոյն լոյսն և Օրօտօնիի դը-  
 րացնու թիւնը նորէն կեանքը սիրելի ըրին ինձ :



**Ք Ն Ո Ւ Ս Է .**

Իրակ բաժնուէլն ետև կրած ստահալի մե-  
 յամազձու թիւնս պատմեցի իրեն : Ըստ ինձ  
 թէ ինքն ալ անձնատապանու թեան մտածու թիւն-  
 ներու դեմ մարտեր էր այն օրերը :

— Օգուտ քաղենք , կըսէր , մեզ տրուած բիշ  
 մը ժամանակէն , և կրօնի օգնութեամբ իրար

կազմուրենք : Աստուծոյ վրայ խօսինք , զայն սիրելու յորդորենք իրար , յիշեցընենք իրարու թէ նա արդարութեան իմաստութեան բարութեան զեղեցիութեան և ուրիշ ամենաբանչելի մեամութեանց լրումն է : Զշմարխտ կրսեմք , մահն ինձմէ հետու չէ : Յուստեան երախտապարտ կըլլամք , եթէ ինձ նապաստես այս վերջին օրերս նշնչափ բարեպաշտ ըլլալու՝ օրչափ պէտք էր ըլլայի բոլոր կենացս մէջ :

Այնուհետև մեր խօսակցութիւնները քրիստոնէական փիլիսոփայութեան վրայ միայն կը դառնային , և զայն զգայականաց խեղճ մարդապետութիւններուն հետ կը բաղդատէինք : Նրկուք յաւերջանիութիւն , մէք քրիստոնէութեան և ողջմտութեան մէջ այնչափ համաձայնութիւն գտնելնիս : Նրկուքս ալ այլ և այլ տեստարանական և կեղեցիները բաղդատելով՝ կը ճանչէինք թէ կաթուղիկէ և կեղեցին է միայն որ իրօք կրնայ դիմանալ քննադատութեան , և թէ այս և կեղեցին ամենամարտը հաւատք և ամենամեծ բարոյական մը կուսուցանէ , և ոչ մարդկային ազխտութեան թշուառ գաղմբէր :

— Այլ թէ անհատապարի դիպուածով մը մարդկային ընկերութեան մէջ մտնելու ըլլանք , կրսէր Օրօւօնի , աւետարանը , չդուանելու չափ մատկրնանք ըլլալ : Արնանք վատարար ակնառութիւն ընել մարդոց , եթէ մէկը ելնէ ըսէ թէ

բանտը մեր խելքը տկարացուցեր է, և խելքի տկարութեամբ աւելի կրօնատէր եղեր ենք:

— Սիրելի Օրօսօնի, ըսի իրեն, քու այդ հարցումդ՝ պատասխանդ ալկը յայտնէ ինձ, և այդ պատասխանն իմա ալ է: Վատութեան յետին ծայրն է ինքզինք ուրիշի դատողութեանցը գերի ընել, երբ որ անոնց ստութեանը համոզումած ենք: Ես չեմ հաւատար ուրիշու կամ ես այդ վատութիւնն երբէք զննենանք: —

Այս սրտի զեղումներուն մէջ յանցանք մ'ըրի: Երդում ըրեր էի Յուլիանոսին որ իրեն հետ ունեցած յարաբերութիւններս և իր բուն անունը երբէք չյայտնեմ մէկդէ մը: Օրօսօնիի պատմեցի, ըսելով. «Աշխարհի մէջ այսպիսի բան մը չկրնար փախչիլ շրթունքէս. բայց հոս գերեզմանին մէջն ենք, և եթէ դուրս ելնես ալ, զիտեմ որ քու հաւատարմութեանդ կրնամ վրատահիլ:»


Այն համեատ հողին լուռ կեցաւ:

— Ինչո՞ւ պատասխան չես տար, ըսի:

Վերջապէս սկսաւ զիս ծանրապէս կշտամբել զաղտնիք մ'երևան հանելուս համար: Ըրած յանդիմանութիւններն արդար էին: Բնու որ և է բարեկամութիւն մը՝ որչափ մտերմական ըլլայ, որչափ առարկինութիւններով զօրացեալ ըլլայ, այսպիսի ուխտադրժութիւն մ'ընելու հրաման չկրնար տալ:

Բայց որովհետև յանցանքը գործուած էր, Օրօսօնի անկէց բարիք մը ծնուց: Ինքը նանչեր էր Յուլիանոսը և անոր մէկ քանի բարի գործերը զիտէր, զորս ինձ սրտմելէ ետև աւելցուց. «Այս մարդն այնչափ քրիստոնէական գործեր ըրած է, որ իր կրօնատեաց մոլեգնութիւնը չկրնար մինչև իր գերեզմանը հասնիլ: Յուսանք, յուսանք որ այնպէս ըլլայ, և դուն ալ, Սիլվիօ, սրտանց ներողամիտ և զիր անոր սրտի դառնութեան զաւազան քներուն, և աղօթէ անոր համար: »

Օրօսօնի խօսքերը սուրբ էին ինձ:



### Գ Լ Ո Ւ Խ Ջ Ս.

Այս ամեն խօսակցութիւններս՝ մերթ Օրօսօնի, մերթ Շիլլէրի և մերթ ալ ուրիշներու հետ՝ օրիս քսան և չորս ժամերուն խիստ փոքր մէկ մասը կը գրաւէին: Հաստ անգամ ալ կը սրտանէր որ առաջինին հետ խօսակցութիւն մ'ընել անհնար կըլլար:

Ի՞նչ կընէի այս երկար միայնութեան մէջ:

Ահաատիկ այն ժամանակը վարած կեանքս: Արշալոյսին կեչնէի, և անկողնիս սնարը կանգ-

նաժ' պատուհանին երկաթները կը բռնէի և ազօթքս կըսէի: Օրօսլօնի ալ արդէն իր պատուհանն էր, կամ շատ չանցած հոն կուգար: Բրար ողջունելէ ետև երկուքս ալ լռութեամբ մտքերնիս առ Աստուած կ'ամբառնայինք: Արչալի բանտերնիս սոսկալի էր, այնչափ դուրսէն աչքերնուս առջև սրարզուած տեսարանը գեղեցիկ էր: Արկինքը, դաշտերն ու լեռները, ձորին մէջի կենդանի արարածոց հեռուոր շարժումը, գեղեցիկ աղջկանց ձայները ծիծաղներնու երգերը մեզ կը դուարթացընէին, և աւելի քաղցր կերպով կ'զգայընէին մեզ Անոր ներկայութիւնը՝ որ այնչափ վսեմ էր իր բարութեանը մէջ և որուն օգնութիւնն այնչափ հարկաւոր էր մեզ:

Յետոյ կուգար պահնորդներուն առաւօտեան այցելութիւնը: Սենեակիս չորս կողմն աչքերնին կը պտըտցընէին՝ տեսնել ու համար թէ ամեն բան կարգին էր, և շղթայիս ամեն մէկ օղերը զատ զատ կը քննէին հասկընալու համար թէ դիպուածով կամ չար դիտաւորութեամբ կտորած չըլլայ, կամ մանաւանդ (վասն զի անհնար էր այն շղթան խզել) իրենց տրուած հրահանգին հաւատարմարար հնազանդելու համար: Յիշե՛ք թժրշկին գալու օրն էր, Շիլլէր կուգար կը հարցընէր թէ զայն տեսնելու պէտք ունե՞նք, և կը նշանակէր:

Այս գործը ընկընելէ ետև, Շիլլէր նորէն կու-



գար Քունատայի հետ՝ որ սենեակներն մարքերու պաշտօնն ունէր :

Քիչ մ'ետքը նախաճաշիկնիս հը բերէին, որ կէս ամանով կարմրորակ հեղուկ մ'էր՝ երեք ամենարարակ շերտ հացով. ես հացը կուտէի առանց հեղուկը խմելու :

Յետոյ զրոյց ընթերցման հը պարտադէր Մարտիկէլի շատ գիրք բերեր էր. Նոտալիայէն միւս ընկերներնիս ալ քիչ շատ բերեր էին, և ամենը մէկէն փոքրիկ բայց ընտիր մատենադարան մը հը կազմէին : Աը յուսայինք ալ որ կրնայինք անոնց թիւն աւելցընել մեր դրամովը : Ազերասպիւր գրեր էինք կայսեր որ թոյլատու թիւն շնորհէ մեր գիրքերը կարգաւոր և ուրիշներ գնելու, պատասխանը դեռ չէր եկած, բայց Արիւնի կառավարիչն առժամանակեայ կերպով թոյլատու թիւն ըրեր էր ամեն մէկուսերկերկու գիրք քովերնիս ունենալու, և ուզած մամուսակնիս փոխելու : Ժամը իննին միջոցները վերատեսուչը կուգար, և և թէ քիչին ուզուած ըլլար՝ անոր հետ կուգար :

Այս միջոցէն մինչև ժամը տասնեակէ հը որ ճաշիս ժամանակն էր՝ տակաւին միջոց հը մնալինձ ուսման պարտադէր :

Այնուհետև մինչև արևուտ մարը մտնելը մարդ չէր գար սենեակս : Այն ժամանակ Եիլլէր և Քունատա կուգային ջուրս փոխելու. քիչ մը ետքն ալ

վերապահուցից կուգար քանի մը պահնորդներով ,  
և սենեակս ու շղթայներս մանրամասնաբար  
աչքէ կանցունէր :

Օրուան ժամերէն մէկը, մերթ ճաշէն առաջ  
և մերթ ետքը, ըստ հաճոյից պահնորդներուն՝  
հեմելու կելնէի :

Նրիկուան այցելու թեւէն ետև, որ հիմա յիշեցի,  
Օրօպօնի և ես խօսակցելու կելնէինք, և  
ուրիշաբար մեր ամենէն երկար խօսակցութեանց  
ժամանակն այն էր Նրբեմն առաւօտներն  
ալ կամ ճաշէն անմիջապէս ետքը կը խօսակցե-  
լինք, բայց շատ անգամ խիստ կարճ կերպով:


Նրբեմն պահնորդները գթալով, «Պարոններ,  
քիչ մը աւելի ցած ձայնով խօսեցէք, կըսէին,  
սպա թէ ոչ՝ մեզ պատժել կուտար :»

Նրբեմն ալ չտեսնելու կուգային. յետոյ երբոր  
յիսնապետին գալը կը տեսնէին, կաղաչէին մեզ  
որ լռենք՝ մինչև որ երթայ, և երբոր երթար՝ կը-  
սէին. «Պարոններ, կընար հիմա խօսակցիլ, բայց  
հնար եղածին չափ ցած ձայնիւ :»

Մինչև անգամ կը պատահէր որ պահնորդներէն  
ոմանք մեզ հետ խօսակցելու կը համարձակէին,  
մեր հարցմանցը կը պատասխանէին և Նոսալիոյ  
վրայ լուրեր կուտային :

Նրբեմն այնպիսի խօսքեր կընէին որ պատաս-  
խան չէինք տար և միտյն կաղաչէինք որ լռեն :  
Պը կասկածէինք, ինչպէս որ բնական էր, թէ

անոնց խօսքերը միշտ աննենգ սրտի յայտարարութիւններ չէին կրնար ըլլալ, և կը վախնայինք թէ մեր սրտին խորհուրդը հասկընալու վարպետութիւն մը չըլլային: Սակայն անելի կը յօժարիմ հաւատալ թէ այն բարեմիտ մարդիկն անկեղծ էին:



### Գ Լ Ո Ւ Խ Ք Չ Բ .

Նրիկուն մը խիստ ներողամիտ պահնորդներուն նուազով, ես ու Օրօսյօնի իրարու հետ խօսած ժամանակն իս ճայներն իս շափաւորելու փոյթ չէինք ընել: Մարօն չէլի իր ստորերկրեայ բանտին պատուհանին վաթթուելով իմացաւ մեր խօսակցիլը և ճայնս ալ կրցաւ ճանչել: Չկրցաւ ինքզինք բռնել, և երգելով ողջունեց զիս: Արհարցըներ ինձ թէ ի՛նչպէս եմ, և ինձ հետ մէկ անգ զրուելու շնորհը դեռ չկրնալ ձեռք բերելուն վրայ զգացած սաստիկ տրտմութիւնը սրտաշարժ խօսքերով կը յայտնէր: Այս շնորհը ես ալ խնդրել էի, բայց ոչ Սբիլպէրկի վերատեսուչն և ոչ Պրիւնի կառավարիչը չէին համարձակել իրենց մէջ շնորհելու: Մեր այս փափուքը կայսեր հա-

դորդուեր էր, բայց դեռ պատասխան մը չէր  
եկած :

Այն օրէն ի վեր որ ստորերկրեայ բանախն մէջ  
իրար ողջուներ էինք, և բղելով, վերի բանան  
ելնելէս ևտե քանի մ'անգամ Մարօնչէլլիի երգե-  
լը լսեր էի, բայց խօսքերը չէի կրնար հասկընալ,  
և երկար ալ չէր տներ, վասն զի թող չէին տար  
չարուեանկել :

Այս անգամ ճայնն տելի բարձրացուց, և շու-  
տով ալ շարգիլուելուն' ամեն ըսածը լսեցիս Չեմ  
կրնար բացատրել նրչափ սիրտս շարժեցաւ :

Պատասխանեցի իրեն, և քառորդի մը չափ  
խօսակցեցանք: Դժբաղդարար, բարձրաւանդա-  
կին վրայի պահնորդները փոխաւեցան և նոր և-  
կողներն այնպէս հաճոյակատար չէին: Նորէն  
երգել սկսանք, բայց պահնորդներուն կատաղի  
զոչխններնու հայնոյտ թխնները մեզ լսեցուցին:

Երեակոյտ թեանս առջե կը բերէի Մարօնչէլ-  
լի' երկար ժամանակէ ի վեր պառկած այն ստու-  
րել կրեայ մտ թ բանախն մէջ' որ խմինիս հետ  
բաղդատելով խիստ դժնդակ էր: Ար մտածէի  
անոր կրած անբմբերելի տխրութիւնը, առող-  
ջութեանն ևզամ վեատը, և սիրտս խորին տրտ-  
մտ թեամբ կը ճմլէր :

Աերջապէս սկսայ լալ, բայց թափած արտ-  
տաքս չկրցաւ զիս աստիկել: Սաստիկ տենդ մ'ե-  
կաւ վրաս' սարսափելի գլխու ցաւով մը: Չը-

կրնալով ինքզինքս ոտքի վրայ բռնել, յարդէ  
խաշակակիս վրայ ինկայ: Յուզմունքս աւելցաւ.  
կուրծքս շարաշար կը ցաւէր և ջիղերս սոսկալի  
կերպով կը ձկտէին: Այն գիշերը կարծեցի որ  
պիտի մեռնիմ:

Հետևեալ օրը տենդս դադրած էր և կուրծքիս  
ցաւը մեղմացած. բայց ուղեղս կրակի մէջ էր,  
և չէի կրնար գլուխս շարժել առանց դժնեայ ցաւ  
մը գրգռելու:

Վիճակս Օրօպօնիի հասկցուցի: Ան ալ իր  
սովորականէն աւելի հիւանդ ըլլալն իմացուց ինձ:

— Բարեկամ, քսաւ, օրը շատ հեռու չէ, որ  
երկուքէս մէկը շախտի կրնայ պատուհանն ել-  
նել: Ամեն անգամ որ հոս կուգանք իրար ողջու-  
նելու, կրնայ վերջինն ըլլալ: Ուրեմն երկուքս  
ալ պատրաստ կենանք, մէկս մեռնելու, մէկս ալ  
մեր բարեկամին վրայ տարելու: —

Իր ձայնը խռոված էր, իսկ ես չէի կրնար  
պատասխանել իրեն: Քիչ մը ժամանակ լուռ կե-  
ցանք. յետոյ շարունակեց. — Ո՛րչափ երջանիկ  
ես որ գերմաներէն գիտես, գտնէ կրնաս խոստո-  
վանիլ: Ես խոսիլ բէն գիտցող բանանայ մը խնդրե-  
ցի և չկայ ըսին: Բայց Աստուած կը տեսնէ  
իմ փափաքս, և ճշմարիտը խօսելով՝ չեմ  
կարծեր որ վերջին անգամ Վենետիկ եղած ժա-  
մանակս խոստովանելէս ի վեր մեծ բեռ մ'ունե-  
նամ խղճմտանքիս վրայ:

— Ես, ըսի, ընդ հակառակն Ալեքեարիկ Եղամ  
մամանակս խոստովանեցայ, բայց քինալից սըր-  
տիւ։ Այս բրտածս սուրբ խարհուրդները շընդու-  
նելէ զէշ է։ Բայց եթէ հիմայ քահանայ մը  
տան ինձ, հաւատան որ սրտանց կը խոստովանիմ  
և ամենուն կը ներեմ։

— Երկինք օրհնեն քեզ, զոչեց. մեծ մխիթա-  
րութիւն մը կուտան ինձ։ Երկուքս ալ ինչ որ  
կրնանք՝ ընենք՝ այն ընենք. որպէս զի յաւիտենա-  
պէս միանանք երջանեկութեան մէջ, ինչպէս որ  
դժբաղդ օրերնուս մէջ միացեր ենք։

Հետեւեալ օրը զայն սպասեցի սրատուհանը, և  
ջեկաւ։ Իմացայ Շիլլերէն թէ ծանր հիւանդ էր։

Աթ համ տասն օր ետքը քիջ մը լուցաւ և պա-  
տուհանն Ելնելով զիս ողջունեց։ Ես ալ հիւանդ  
էի, բայց զեռ կրնայի ինքզինքս բռնել։

Քանի մ'ամիս, ան ալ ես ալ, մէկ մ'աղէկ՝ մէկ  
մը զէշ՝ անցուցինք։



Գ Լ Ո Ւ Խ Ե Զ Պ.

Այսպէս կրցայ շարունակել մինչև 1825 յուն-  
ուար 11։ Առաւօտուն թեթև գլխու ցաւով մը

անկողնէս ելայ , բայց մարելիք կուգար վրաս :  
Սրունքներս կը դողային և դժուարաւ շունչ  
կառնուի :

Օրսպօնի ալ քանի մ'օրէ ի վեր գէշ էր և ան-  
կողնէն չէր ելներ :

Թան բերին ինձ , հազիւ դրգալ մը կերայ և մա-  
րեցայ ինկայ :

Քիչ մ'ետքը նրբաշաւղին պահնորդներէն  
մէկն ըստ դիպաց դրանս ծակէն ներս նայելով՝  
զիս գետինը տարածուած և թանին սկահը քովս  
զլորած կը տեսնէ , և մեռած կարծելով Շիւէրը  
կը կանչէ :

Վերատեսուչն ալ կուգայ . իսկոյն բժիշկը  
կը կանչեն , զիս կը վերցընեն անկողնիս մէջ  
կը դնեն , և դժուարաւ խելքս գլուխս կուգայ :

Բժիշկը կեանքս վտանգի մէջ գտնելով՝ շղթա-  
ներս հանել տուաւ , չեմ զիտեր ինչ զօրացու-  
ցիչ դեղ մը գրեց , բայց ստամոքսս բան չէր  
ընդուներ : Գլխուս ցաւն ալ զարհուրելի կերպով  
կը սաստկանար :

Այս վիճակիս վրայ իսկոյն տեղեկագիր մը  
Վիէննա դրկելով՝ զիս ինչ կերպով դարմանելու  
վրայ հրահանգ խնդրեցին : Պատասխան եկաւ  
որ զիս հիւանդարանը չտանին , այլ բանտիս մէջ  
դարմանեն հիւանդարանի կանոնով : Ասկէց զատ  
հրաման կը տրուէր վերատեսչին որ իր խո-  
հարանէն թան և արգանակ տայ ինձ՝ որչափ

ժամանակ որ հիւանդութիւնս ծանր ըլլայ :

Այս վերջին զգուշութիւնն առջի բերան անօգուտ եղաւ ինձ: Ոչ մէկ ուտելիք, ոչ մէկ ըմպելի բերնէս վար չէր երթար: Շարաթ մը շարունակ վիճակս ծանրացաւ, և զիշեր ցերեկ կը զանանցէի :

Քրալ և Քուպիցքի հիւանդատան արուեցան ինձ. երկուքն ալ զօրութալից կարեկցութեամբ մը կը նայէին զիս :

Ամեն անգամ որ քիչ մը խելքս զլուխս կուգար, Քրալ կըսէր. — Պարոն, յոյսդ Աստուծոյ վրայ դիր. Աստուած միայն բարի է :

— Անդրէ Անկէ ինձ համար որ զիս չբժըշկէ, կըսէի, այլ իմ դժբաղդութիւնս ու մահս իբրև մեղացս բառութիւն ընդունի : —

Յորդորեց զիս որ վերջին թռչակ խնդրեմ :

— Մինչև հիմա չխնդրելուս պատճառը զլխուս տկարութիւնն էր, ըսի. բայց մեծ միտի թարութիւն կըլլայ ինձ սուրբ խորհուրդներն ընդունիլ : —

Քրալ այս խօսքս վերատեսչին խմացուց. ան ալ բանտերուն մատրանապետը զրկեց :

Սոստովանեցայ հազորդուեցայ և վերջին օժտմ ընդունեցի : Շատ զոհ եղայ այն քահանայէն: Անունը Աթուրմ էր: Այնպիսի խորհրդածութիւններ ըրաւ ինձ Աստուծոյ արդարութեանը, մարդոց անիրաւութեանը, ներելու պարտաւիտ-



նութեան և աշխարհային իրաց ունայնութեան վրայ որ հասարակ մտածութիւններ չէին: Բարձր ու մշակեալ մտքի մը և Սատուծոյ ու ընկերին նշմարիտ սիրոյն կենդանի զգացման մը տալաւ որութիւնն ունէին:



### Գ Լ Ո Ւ Ս Է Գ.

Սուրբ խորհուրդներն ընդունելու համար ըրած ուշադրութեան ջանքս՝ առջի բերանը կենացս մնացորդն ալ սպառելու պէս թուեցաւ, բայց ընդհակառակն ինձ օգուտ ըրաւ՝ խոր թմբութիւն մը վրաս բերելով, որով ննջեցի:

Երբոր արթնցայ, ցաւերս բիշ մը թեթեցած էին, և Քրայ ու Շիլլէր քովս տեսնելով, ձեռքերնին լռնեցի ու շնորհակալ եղայ ինձ տարած խնամքնուն համար:

Շիլլէր ըսաւ. — Իմ աչքս հիւանդ տեսնելու վարժուած է: Քրաւ կը դնեմ որ դու չպիտի մեռնիս:

— Ձեռ կարծեր որ այդ ըրածդ տխուր զուշակութիւն մ'է, ըսի:

— Ոչ, պատասխանեց: Ահնայ թշուառութիւնները մեծ են արդարեւ, բայց այն որ ազնուական սրտով և համբերութեամբ կը տանի, միշտ օգուտ կը տեսնէ ապրելէն:

Եւ աւելցուց. — Նթէ դուք ապրիք, կը յուսամ որ քիչ օրէն մեծ մխիթարութիւն մը պիտի տեսնանք: Մարօնչէլլին տեսնել կուզէիք, այնպէս չէ:

— Քանի քանի անգամ խնդրեցի, բայց ի զուր, և ալ չեմ համարձակիր յուսալ:

— Յուսացէք, յուսացէք, Պարոն, և խնդրուած քնիդ նորոգեցէք: —

Արդարեւ նոյն օրը նորոգեցի: Աերատեսուչն ալ նոյնպէս յոյս տուաւ ինձ, և աւելցուց թէ ոչ միայն Մարօնչէլլի հետ տեսնուիլս հնարաւոր էր, այլ և իբրև հիւանդապահ քովս կրնար դրուիլ և ետքն ալ անբաժանելի ընկեր ըլլալ ինձ:

Քաղաքական պատճառաւ բանտարկեալներուն ամենուն ալ առողջութիւնը քիչ շատ խանգարած ըլլալով, Արիւնի կառավարիչը խնդրեր էր Աիւննայէն որ մեզ երկերկու հոգի մէկ տեղ դնեն, որպէս զի օգնենք իրարու:

Նմանապէս թոյլտուութիւն խնդրեր էի վերջին մնաք բարով մը ծնողացս գրելու:

Երկրորդ շաբթուն վերջերը յեղափոխութիւն մ'եղաւ հիւանդութեանս մէջ և վտանգը փարատեցաւ:

Սկսեր էի ոտք ելնել, առաւօտ մը սենեակս բացուեցաւ և վերատեսուչը Շիլլէր և բժիշկն ուրախագին դիմօք ներս մտան: Վերատեսուչն ինձ դիմեց ու ըսաւ. — Հրաման եղած է մեզ որ Մարօնչէլլին ձեզ ընկեր տանք և ծնողացդ նամակ մը գրելու թոյլտուութիւն ընենք: —

Ուրախութենէս շունչս կտրեցաւ և մտրեցայ ինկայ: Աեզե վերատեսուչը՝ որ իր բարի սրտին անհամբերութեամբը խոհեմութիւն չէր բանեցուցեր, կարծեց թէ մեռայ:


Երբոր խելքս գլուխս եկաւ, ինձ տրտած աւետիսը յիշելով աղաչեցի որ այս մեծ շնորհը չուշացրնեն: Բժիշկը հաճութիւն տուաւ, և Մարօնչէլլի քովս բերուեցաւ:

Ո՛հ, ինչ բաղցր վայրկեան էր այն: — Տակաւին սողես, գոչեցինք իրարու, բարեկամ, եղբայր, ինչ երջանիկ օր ունինք եզեր տեսնելիք: Փնօք Աստուծոյ: —

Սակայն մեր անսահման ուրախութեանը վրայ անսահման կարեկցութիւն մը տեւեցաւ: Մարօնչէլլի այնչափ չպիտի զարմանար զիս վերջին աստիճան վատած տեսնելուն վրայ. վասն զի զիտէր ծանր հիւանդութիւն քաշած ըլլալս: Բայց ես, թէ և կը մտածէի կրած նեղութիւնը, այսու ամենայնիւ առաջուան տեսածէս այն աստիճան իտխուած ըլլալը չէի կրնար երևակայել: Հազիւ կրնար ճանչուիլ: Այն

զեղեցիկ և առոյգ դէմքը թօշներ, տխրութենէն  
անսթու թենէն և խաւարչուտ բանտին ապակա-  
նեալ օդէն հալեր էր :

Սակայն քիչ մը կազդուրիլ սկսանք իրար տես-  
նելով, իրար շնորհով, և մէկմէկու ըսելով թէ ալ  
չպիտի բաժնուինք իրարմէ . ո՛հ, նրչափ բաներ  
ունէինք իրարու ըսելու, յիշեցնելու, կրկնելու :  
Ի՛նչ քաղցր բան էր միասին լալ : Ո՛րչափ ներ-  
դաշնակութիւն կարմեր մմեն զազափարներուն  
մէջ : Ո՛րչափ գոհ էինք համամիտ ըլլալնուս վրայ  
կրօնքի մասին, տղիտութիւնն ու բարբարոսու-  
թիւնն տտելու մասին, բայց նոյնպէս մարդիկ  
չատելու, ազէտներուն ու չարերուն վրայ զթալու  
և անոնց համար աղօթելու մասին :



## Գ Լ ՈՒ Խ Ե Զ Ե .

Թերթ մը թուղթ և կաղամար մը բերին ինձ  
որ ծնողացս նամակ գրեմ :

Որովհետև նամակ գրելու թոյլտուութիւնը  
տիրապէս օրհասականի մը շնորհուած էր որ վեր-

զին բարեմք տալ կուզէր իր ընտանեաց, կը վախնայի որ հիմայ նամակս ուրիշ կերպ գրուելուն համար զրկել չուզեն։ Աւստի բաւական սեպեցի միայն խանդակաթ գորովանօք ազաչել ճնողքս եղբայրներս ու քոյրերս որ համբերատար ըլլան վիճակիս, ինչպէս որ ես ալ համբերութեամբ կը տանէի :

Այս նամակս զրկուեր էր, ինչպէս որ ետքը իմացայ՝ երբոր շատ տարիներէ ետև հայրենի յարկս տեսայ։ Այս նամակս էր միայն որ երկարատև բանտարկութեանս միջոցին խեղճ ճնողքս կրցեր էին ստանալ։ Իսկ ես բնաւ նամակ չեմ ստացած անոնցմէ։ Գրած նամակնին միշտ արգիլուեր մնացեր էին Աիէննա։ Տարտաբաղգութեան ընկերներս ալ նոյնպէս իրենց ընտանեաց հետ յարաբերութենէ զրկուած էին։

Շատ անգամ շնորհ խնդրեցինք գննէ ուսման համար թուղթ և մեղան ունենալու և մեր զըրամովը զիրքեր գնելու։ Մեր խնդրուածքը երբէք լսելի չեղաւ։

Սակայն Պրիւնի կառավարիչը միշտ թոյլ կուտար մեզ ունեցած զիրքերնիս կարդալու։

Նմանապէս մեր ուտելիքն ալ լաւ ցընել տուաւ, բայց, աւանդ, շատ չտևեց։ Թոյլ տուեր էր որ մեր ուտելիքը փոխանակ բանտին խոհարանէն ելնելու՝ վերատեսչին խոհարանէն ելնէ, և ասոր համար աւելի գումար մը յատկացուցեր էր։ Այս

բարի տնօրէնութիւններն հաստատ չմնացին .  
բայց քանի որ տեղին , բաւական օգուտ տեսայ :  
Մարօնչէլլի ալ քիչ մը կազդուրեցաւ : Եւսկ տու-  
րարազդ Օրօպօնիի համար ժամանակն անցած էր :  
Այս վերջինին ընկեր տրուեր էր նախ Սօլէրա  
փաստաբանը , յետոյ Տ . Փօրթիինի քահանան :


Երբոր մեզ ասանկ երկերկու հոգի դրին բան-  
տերուն մէջ , պատուհաններէն խօսակցելու ար-  
գելքն ալ նորոգեցին , սպառնալով որ չհնազան-  
դողը նորէն առանձին բանտի մէջ պիտի դրուէր :  
Այս արգելքը , շխտակը խօսելով , երբեմն լուծե-  
ցինք իրար ողջունելու համար . բայց երկար խօ-  
սակցութիւններ մէկ մ'ալ չեղան :

Մարօնչէլլիին ու իմ բնաւորութիւնս իրարու  
քաջայարմար էին : Մէկիս արիւթիւնը միւսը կը  
զօրացընէր : Նթէ մէկս տխրութիւն ունենար և  
իբ վիճակին խատութեանը վրայ բարկանար ,  
միւսը զուարճարանութիւններով կամ յարմարա-  
դէպ խորհրդածութիւններով իր բարեկամը կը  
զուարթացընէր : Քաղցր ժպիտ մը կուգար միշտ  
և մեր տխրութիւնը կը բարեխառնէր :

Քանի որ զիրքեր ունէինք , թէ և այնչափ  
շատ կարդացէր էինք որ զոց զխոէինք , սրտեր-  
նուս համար քաղցր ճարակ մ'էին . ինչու որ  
այն զիրքերն անապառ ազբիւր մ'էին նորանոր  
դատումներու , նորանոր քննութիւններու , նո-  
րանոր բազդատութիւններու և նորանոր ուղղու-

Թեանց : Օրուան մեծ մասը կը կարդայինք և  
լուսթեամբ կը խորհրդածէինք . միայն ճաշի և  
պարտելու ժամանակ և իրիկունները կը խօսակ-  
ցէինք :

Մարօնչէլլի իր ստորերկրեայ նկուղին մէջ  
շատ մը գեղեցիկ ոտանաւորներ գրեր էր , զա-  
նոնք կը կարդար ինձ , և նորեր կը շինէր : Նս-  
ալ կը շինէի ու անոր կը կարդայի , և յիշո-  
ղութիւննիս զանոնք պահելու կը վարժուէր :  
Ասանկով սքանչելի դիւրութիւն մ'ստացանք  
երկար բանաստեղծութիւններ մտքովնիս յօրի-  
նելու , անհամար անգամ յղկելու և թուղթի  
վրայ գրուածի կատարելութեան հասցընելու :  
Մարօնչէլլի այս կերպով քիչ քիչ և միտքը պա-  
հելով հազարաւոր քնարերգական ու դիւցազներ-  
գական տողեր յօրինեց : Նս ալ *L'Kunihero su*  
*Sorposna* ողբերգութիւնը և ուրիշ այլ և այլ րս-  
տեղծարանութիւններ յօրինեցի :



## Ք Լ Ո Ւ Խ Զ Ձ .

Օրօսօնի ձմեռն ու գարնան հիւանդութիւն  
քաշելէ ետև՝ ամառն աւելի գէշցաւ : Արիւն կը  
թքնէր և կը ջրգողէր :

Ընթերցողին կը թողում մտածել՝ սրչափ դա-  
ւըն եղաւ մեր հսկիծը՝ երբոր խեղճ Օրօսօնի  
կը շիջանէր մեր մօտը, և մեր չէինք կրնար  
ծակել այն անագորուն սպառ որ մեզ կարգե-  
լուք զայն տեսնելէ և ձեռքերնէս եկած սպասն  
անոր մատուցանելէ :

Եիլէր չուր կը բերէր անկէ : Հէզ երիտաւար-  
ըր դժնեայ չարչարանքներ քաշեց. բայց ցաւը  
չկրցաւ անոր քաղասրտութիւնը տկարացնել :  
Հոգևոր օգնութիւնները մատրանասպետէն ըն-  
դունեց, որ բարեբաղդաբար գաղղիւրէն գիտէր :

1825 յունիս 15ին՝ որ իր տօնին օրն էր՝ մե-  
ռաւ : Վախճանէն քանի մը ժամ առաջ իր ութ-  
արնամեայ հօրը վրայ խօսեցաւ, և սիրտը փրզճ-  
կելով լացաւ : Յետոյ ինքզինք ժողվեց ըսելով .  
— Բայց ինչո՞ւ հուշամ իր սիրելիներուս ամենէն  
բաղդաւորին վրայ, որ յաւիտենական խաղա-  
ջութեան մէջ հետս զալու միանալու վրայ է :—

Իր վերջին խօսքերն ասոնք եղան .



— Իբրևսր սրաէ կը ներեմ թշնամիներուս —

Տ. Պօրթինի գոցեց անոր աչքերը: Այս քահանան Օրօսոնի մանկութեան բարեկամն էր, և բարեպաշտութեան ու գթութեան անձնաւորութիւնն էր:

— Ահա Օրօսոնի ինչ մահաբեր ցուրտ մը ծաւալեցաւ երակներնուս մէջ՝ երբոր եկան ըսին մեզ թէ մեռաւ, երբոր լսեցինք անոր մարմինը վերցընելու եկողներուն ձայնն, ու քալուածքը, և երբոր պատուհանէն տեսանք զայն գերեզման տանող կառքը: Այն կառքը երկու հասարակ դատապարտեալներ կը քաշէին և չորս պահնորդ ալ ետեւէն կերթային: Այս տխուր յուղարկաւորութեան աչքովնիս ընկերացանք մինչև գերեզմանատունը: Կառքը դռնէն ներս մտաւ և անկիւնի մը քով կեցաւ Հոն էր փոսը:

Քանի մը վայրկեան ետքը՝ կառքը դատապարտեալներն ու պահնորդները ետ կը դառնային: Ասոնց մէկը Քրուպիցքին էր որ ըսաւ ինձ (ազնիւ խորհուրդ՝ որ այսպիսի հասարակ մարդու մը վրայ զարմանալի էր), — Թաղուած տեղը խնամով նշան դրի, որպէս զի եթէ օր մ'իբ մէկ ազգականը կամ բարեկամը թոյլատուութիւն ստանայ ոսկրներն հոնկէ վերցընելու և իր երկիրը փոխադրելու, ուր հանգչած ըլլալը կարենայ գտնել: —

Ո՛րչափ անզամ Օրօսոնի պատուհանէն գերեզ-

մանատան վրայ նայելով ըսեր էր ինձ. — Պէտք է որ սա տեղը երթալ փոփոխելու զաղափարին վարձուիմ, սակայն կը խոստովանիմ որ այս զաղափարը կը սոսկացընէ զիս: Աը թուի ինձ թէ այս երկրին մէջ թաղուողը մեր սիրելի թերակողիին մէջ թաղուածի պէս հանգիստ չըլլար: —

Յետոյ ժպտելով կը գոչէր. — Տղայամտութիւն. երբոր զգեստ մը հինցած է և թողուլ պէտք է, ուր կուզեն թող հոն նետեն: —

Աւրիշ անգամ ալ կըսէր. Ամեն օր մեռնելու կը սպասրաստուիմ, բայց աւելի սիրով յանձն կառնուի եթէ վայրկեան մը հայրենի տունս մտնէի, հօրս ծունգը պագնէի, օրհնու թեան խօսք մը բերնէն լսէի և յետոյ մեռնէի: —

Եւ հառաչելով կտակըրնէր. — Եթէ այս բաժակը չկրնար ինձմէ հեռանալ, Աստուած իմ, քու կամքդ թող ըլլայ: —

Իր կենաց վերջին ատուօտն ալ Քրալ խաչելութիւն մ'իրեն ներկայացընելով, Օրօպօնի զայն համբուրեց ու ըսաւ.

— Դու որ Աստուած էիր, դու ալ սոսկացիր մահէն և ըսիր, Երե հեար ե' աւցցե բաժակս այս յիկնէ: Ներե, Աստուած իմ, եթէ ես ալ նոյնը ըսեմ, բայց կուզեմ նաև քու միւս խօսքերդ ալ կրկնել. բայց ոչորպէս ես կաւիմ, այլ որպէս դու:



## ԳԼՈՒԽ ԷԷ.

—

Օրօսօնիի մեռնելէն ետև նորէն հիւանդացայ: Ար հարծէի որ վախճանեալ բարեկամիս քովը պիտի երթայի, և անհամբեր եռանդով մահուան հըր բաղձայի: Միայն թէ պիտի կրնայի առանց կըսելի՞ Մարօնչէլիէն բաժնուիլ: Շատ անգամ, երբ ան իր խոտէ անկողնին վրայ նստած զիրք հըր կարդար կամ հըր տաղաչափէր, կամ թերևս ինձ պէս ընթերցմամբ զբաղիլ հըր կեղծէր և մեր թըշտառութեանցը վրայ հըր մտածէր, և ստիսբողգած սրտիւ անոր հըր նայէի և ինքնիրենս կըսէի. — Ո՛րչափ տելի տխուր պիտի ըլլայ քու կեանքդ երբոր մահուան շունչն ինձ գայի, երբոր այս սենեակէն զիս վերցընել տանելնին տեսնեա, երբոր աչքդ զերեզմանատան վրայ յառելով ըսես. Սիլվիօ՛ ալ հոնէ: Եւ սիրտս հըր շարժէր այն խեղճ ապրեալին վրայ, և հըր մաղթէի որ անոր յարգն ինձ պէս ճանչելու կարող ընկեր մը դրուէր քովը, կամ Աստուած չարչարանքս երկնցնելով՝ այն տարարողին ալ չարչարանքը վշտակցութեամբ մեղմացնելու քողցը պաշտօնն ինձ թողուր:

Չեմ նշանակեր քանի անգամ հիւանդութիւն-  
ներս զայցին ու նորէն երեսն ելան: Անոնց տևո-  
ղութեան միջոցին Մարտնչէլլիին ինձ տարած  
խնամքն ամենասիրելի եղբօր մը խնամք էին:  
Գիտէր որ ժամանակ իր խօսքերը կրնային զիս  
սիրելի, և այն ժամանակ հոգւոյս արամադրու-  
թեանը յարմար նիւթ մը կը գտնէր, և միշտ կը  
ջանար կամ անոնց ուժ տալու, կամ քիչ քիչ գա-  
նոնք փոխելու: Անոր սրտէն աւելի ազնիւ սիրտ  
մ'երբէք տեսած կամ ճանչած չէի. իսկ հաւա-  
սարը խիտ քիչ: Մեծ արդարասիրութիւն մը,  
մեծ ներողամտութիւն մը, մեծ վստահութիւն  
մը մարդոց տաքինութեան ու Աստուծոյ օգ-  
նութեանը վրայ, նուրբ զգացում մ'արուես-  
տից մէջ գեղեցիկը ճանչելու և սիրելու, բանաս-  
տեղծութեամբ ճշիւ երևակայութիւն մը, մէկ  
խօսքով՝ մտաց և սրտի ամենէն սիրուն ճիրքե-  
րը միացած էին՝ զայն ինձ սիրելի ընելու համար:

Չէի մտնար Օրօլօնին. ալ ամեն օր կը հեծէի  
անոր մահուանը վրայ. բայց շատ անգամ սիրտս  
ուրախ կըլլար խորհելով որ այն սիրելի բարե-  
կամս՝ հիմա ամեն վիշտերէ ազատ և Աստուծոյ  
գիր'ը երջանիկ՝ պէտք էր գոն ըլլար զիս իրեն  
չափ սիրելի բարեկամի մը հետ տեսնելով:

Ար թուէր թէ սրտիս մէջ ձայն մը կը հաւատտէր  
թէ Օրօլօնի քառութեան կայանէն ելած էր.  
այսու ամենայնիւ չէի չաղրեր անոր համար ա-

ղօթելէ : Քանիցս անգամ երազիս մէջ տեսայ զինքը որ ինձ համար կաղօթէր, և կը սիրէի հաւատալ թէ այն երազները դիտաց արգասիք չէին, այլ անոր պատկերին ստոյգ յայտարարութիւններն էին որ Սատուած թոյլ կուտար զիս մխիթարելու համար : Պիտի ծիծաղեցնէի ընթերցողներս՝ եթէ ջանայի նկարագրել այն երազներու և կենդանութիւնը և օրերով իմ վրայ թողուցած նշմարիտ հիացումը :

Բայց կը օնական զգացումներն և Մարօնչէլլիի մտերիմ բարեկամութիւնն օր քան զօր վշտացս ծանրութիւնը կը թեթևցնէին : Բոլոր երկիւղս այս էր, որ այն տարաբազդ երիտասարդը՝ որուն առողջութիւնն այնչափ խանգարեր էր, թէ և ինձ չափ տկարացած չէր, ինձմէ առաջ գերեզման կերթայ : Ամեն անգամ որ կը հիւանդանար, կը սարսափէի : Նրբոր կը տեսնէի լաւութեան դառնալը ուրախութիւնս անպատմելի էր :

Զայն կորսնցնելու երկիւղս՝ աւելի մեծ ուժ մը կուտար վրան ունեցած գորովանացս . նոյն ազդեցութիւնը կընէր անոր վրայ ալ՝ զիս կորսընցընելու երկիւղը :

Ա՛հ, միակ մնացած սիրելւոյ մը համար երկիւղի և յուսոյ փոփոխակի զգացման մէջ անճառելի քաղցրութիւն մը կայ : Մեր վիճակն ստուգիւ աշխարհի վրայ եղած ամենաթշուառ վիճակներէն մէկն էր, և սակայն իրարու վրայ

ունեցած անսահման բարեկամութիւննիս ու  
 վարկութիս՝ մեր տառապանացը մէջ կերպ մը  
 երջանկութիւն կը կազմէր, և հշմարտն ըսե-  
 լով՝ լաւ կ'զգայինք :



### Փ Լ Ո Ւ Ս Զ Ը .

Ըզձալի էր ինձ որ բանտին մատրանապետը՝  
 որմէ շատ զոհ եղեր էի առաջին հիւանդութեանս  
 ժամանակ՝ մեզ խոստովանահայր տրուէր, և  
 ժամանակ ժամանակ կարենայինք զայն տեսնել,  
 թէ և ծանր հիւանդ չըլլայինք : Փոխանակ անոր  
 յանձնելու այս պաշտօնը, հայր Մկրտիչ անու-  
 նով Օգոստինեան կրօնաւոր մը մեզ ցուցըցին,  
 մինչև որ Վիէննայէն ուրիշ մէկը որոշուէր կամ  
 այս քահանային համար հաւանութիւն զար :

Աը վախնայի որ այս փոփոխութեան մէջ կո-  
 րուստ պիտի ընէի, ըսոյց կը սխալէի : Հայր  
 Մկրտիչ՝ սիրոյ և զթութեան հրեշտակ մ'էր. իր  
 շարժմունքն ու կերպերը խիստ քաղաքավար և

վայելուչ էին, և խիստ նուրբ կը խորհրդածէր մարդկային սլարտեաց վրայ:

Ազաչեցինք իրեն որ յաճախ այցելութիւն ընէ մեզ: Աւտի ամիսն անգամ մը և և թէ կարենար անելի յաճախ կուգար: Քանի մը գիրք ալ կը բերէր մեզ կառավարչին թոյլտուութեամբը, և կըսէր իր մեծաւորին կողմէն թէ վանքին գրատունը մեր տրամադրութեան ներքե էր: Այս մեծ բարիք մը պիտի ըլլար մեզ' և թէ անէր: Սակայն քանի մ'ամիս օգուտ քաղեցինք:

Պատուականութենէն ետև՝ երկար կը նստէր ու հետերնիս կը խօսակցէր: Սուրբուն միջ ուղիղ վսեմաստի և մարդու մեծութեանն ու որրութեանը տարիացող հոգի մը կը տեսնուէր: Տարի մը բարեբաղդութիւն ունեցանք իր լոյսն ու բարեկամութիւնը վայելելու, և երբէք չվրիպեցաւ: Սրբէք վանկ մը շէլու բերնէն, որ զինքը՝ փոխանակ հոգևոր պաշտօնէի՝ քաղաքականութեան պաշտօնեայ երեցընէր: Սրբէք շտեմանք ամենափոքր սրակասութիւն մը՝ ամենափափուկ ակնածութեանց մէջ:

Առաջ, հշմարիտը խօսելով, կը կասկածէի անկէ. կ'սպասէի որ իր մտաց նրբութիւնը տարադէպ հետազօտութիւններու գործածէ: Աետակոն բանտարկեալի մը համար խիստ բնական է այս կասկածը: Բայց ս'ըջափ կը միաթարուի մարդ' երբոր այս կասկածը կը փարա-

տի, և Աստուծոյ թարգմանին վրայ Աստուծոյ  
և մարդկութեան դատէն դատ ուրիշ բանի փոյթ  
չտեսներ:

Հ. Մկրտիչ մխիթարելու յասուկ կերպ մ'ու-  
նէր խիտ ազդու: Օրինակի համար, բանտին  
կանոններուն անտանելի խստութեանը դէմ ժա-  
մանակ ժամանակ զայրանալու համար ինքզին-  
քըս կամբաստանէի խոստովանութեանս մէջ: Հ.  
Մկրտիչ՝ նախ զուարթութեամբ եւ ներելով՝  
նեղութիւն քաշելու հարկին վրայ կը բարոյա-  
խօսէր. յետոյկ սկսէր իմ վիճակէս տարբեր վի-  
ճակներու թշուառութիւնները կենդանի գոյնե-  
րով նկարագրել: Ինքը երկար ժամանակ քաղա-  
քին մէջ և գեղերը կեցեր էր, մեծերն ու փոքրե-  
րը ճանչեր էր, և մարդկային անխրաւութեանց  
վրայ մտածեր էր. ընկերութեան զանազան կար-  
գերուն կիրքերն ու բարքերը գերազանց կեր-  
պով կը նկարագրէր. ամեն տեղ հզօրներ ու տը-  
կարներ, հարստահարողներ ու հարստահարեալ-  
ներ կը ցուցընէր ինձ. ամեն տեղ հարկ կը ցու-  
ցընէր կամ մեր նմաններն ատելու, կամ ազնուա-  
կան ներդամութեամբ և քաղցր կարեկցու-  
թեամբ սիրելու: Թշուառութեան ընդհանրակա-  
նութիւնը և ճախորդութենէ բարի արդիւնք  
բազելու կարելիութիւնն ինձ յիշեցնելու համար  
պատմած օրինակները կարգէ դուրս բաներ չէին.  
Ընդհակառակն՝ ըստ պատահման յիշուած իրո-




զուժիւններ էին, բայց պատմած ժամանակն իր  
խօսքերն այնպիսի ուղղադատութիւն մը, այն-  
պիսի զօրութիւն մ'ունէին, որ իր պատմու-  
թեանց եզրակացութիւններն ազդուութեամբ  
զգայի կրնէին ինձ:

Ա՛հ, այո՛, ամեն անգամ որ անոր զորովայնց  
յանդիմանութիւններն ու ազնիւ խրատները կը  
լսէի, առաքինութեան սիրով կը բորբոքէի.  
մէկու մը դէմ ստեղծութիւնս չէր մնար. նման-  
ներուս ամենէն յետինին համար կեանքս զոհե-  
լու յօժարութիւն կ'զգայի. և կօրհնէի զԱստուած  
որ զիս մարդ ստեղծեր էր:

Ա՛հ, թշուառ է այն մարդը որ խոստովանու-  
թեան վսեմութիւնը չճանչեր. վայ այն մարդուն  
որ ոամիկ չերենալու համար զայն ծաղր ընելու  
պարտաւորուած կը կարծէ ինքզինք: Արովհետեւ  
ամեն մարդ զիտէ թէ բարի ըլլալ պէտք է, ուս-  
տի բարի ըլլալու յորդորանքն անօգուտ և մեր  
անձնական խորհրդածութիւններն ու ճահաւոր  
ընթերցումները միայն բաւական են ըսելը ճշ-  
մարիտ չէ: Ա՛հ, մարդուն կենդանի խօսքն այն-  
պիսի զօրութիւն մ'ունի, որ ոչ մեր ընթեր-  
ցումներն և ոչ մեր սեփական մտածութիւնները  
չեն կրնար ունենալ: Կենդանի խօսքով մարդու  
սիրտն աւելի լաւ կերպով կը շարժի, և ընդու-  
նած տպաւորութիւններն աւելի խոր կըլլան:  
Եղբօր մը խօսքին մէջ կենդանութիւն և ճահաւոր

բուժիւն մը կայ, որ շատ անգամ ունայն տեղը  
կը փնտռէ մարդ գիրքերու և իր սեփական մը-  
տածութեանց մէջ :



### Գ Լ Ո Ւ Խ Զ Փ.

—

1824ին սկիզբները, վերատեսուչը՝ որուն գը-  
րատենեակը մեր նորաշաւղին մէկ ծայրն էր՝  
ուրիշ տեղ փոխադրեց իր բնակութիւնը, և դի-  
ւանին սենեակներն և ուրիշ հոն գտնուածները  
բանաթի փոխուեցան : Հասկըցանք, աւարդ, որ  
Եսալիայէն նոր պետական բանաւորիկեալներ  
կային գալիք :

Յիրաւի շատ շանցաւ երրորդ դատաստանու  
դատասպարտեալներն հասան, ամենն ալ ինձ  
բարեկամ կամ ծանօթ : Ա՛հ, երբոր անուններն  
իմացայ, սիրտս տակն ի վերայ եղաւ : Աօրախե-  
րի իմ ամենէն հին բարեկամներէս մէկն էր .  
Քօնֆալօնիէրիի հետ անկէ ետքը բարեկամա-  
ցեր էի, բայց բոլորով սրտիւ : Նի՛մ, կարող ըլ-

չայի դժնգակագոյն բանտարկութեան կամ ուրիշ  
որ և է տանջանաց ինքզինքս դատապարտել  
տալով անոնց սրաախժը ես կրել և զիրենք ա-  
զատել, զիտէ Աստուած որ կընէի: Չեմ ըսեր  
թէ միայն կեանքս անոնց համար կուտայի,  
վասն զի, սն, ինչ է կեանքը տալը. տառապիլն  
անկէց աւելի է:

Այն ժամանակն էր որ Հ. Մկրտիչին մխիթա-  
րութիւնները մեծապէս պիտանի կրնային ըլ-  
լալ ինձ, դժբաղդաբար մէկ մ'ալ թոյլ չտըր-  
ուեցաւ իրեն քովերնիս գալ:

Նորէն հրաման եկաւ որ բանտին կանոններն  
ամենախիստ կերպով ի գործ դրուին: Այն բարձ-  
րաւանդակը որ մեր հեմելիքն էր, նախ ցցա-  
պատ որմով մը գոցուեցաւ, այնպէս որ մարդ  
չէր կրնար մեզ տեսնել և ոչ իսկ հեռուէն դի-  
տակով և այսպէս ջրզակայբլուրներուն ու քա-  
ղաքին գեղեցիկ տեսարանէն զրկուեցանք: Բայց  
այս բաւական չէր, այն բարձրաւանդակը երթա-  
լու համար, ինչպէս արդէն ըսած եմ, բակէն  
պէտք էր անցնիլ, և բակին մէջ շատ մարդ կըր-  
նար մեզ տեսնել: Այս տեսնելը չըլլալու համար՝  
բարձրաւանդակին վրայ պտըտելնիս արգիլուե-  
ցաւ, և ուրիշ խիստ փոքր տեղ մը որոշուեցաւ  
մեր նրբաշաւղին կից և սենեակներնուս պէս  
արևմուտքի դէմ:

Չեմ կրնար բացատրել յորչափ սիրտս կ'օտրեց

այս փոփոխութիւնը : Բարձրաւանդակին մեզ  
ընծայած ամեն միսթարու թիւնները չեմ պատ-  
մած, վերատեսչին որդեկաց տեսքը, անոնց պարզ  
և գորովալից համբոյրները նոյն իսկ այն տեղ  
ուր իրենց խեղճ հիւանդ մայրը տեսէր էի իր  
վերջին օրերը. ըրած մէկ քանի խօսակցութիւն-  
ներս դարբինին հետ՝ որ նոյնպէս հոն կը բնա-  
կէր . կիթառ զարնող տասնապետի մ'ուրախա-  
լից երգերն ու երաժշտական տաղանդը . վեր-  
ջապէս այն անմեղ տարփանքը՝ ոչ իմ կամ ընկե-  
րիս՝ այլ բարեմիտ Հունգարուհւոյ մը՝ որ տաս-  
նապետի մը կին էր և պտուղ կը վաճառէր :  
Այս կինը զարնուէր էր Մարօնչէլլիի :

Արդէն , Մարօնչէլլիի հետս դրուելէն առաջ՝  
Հունգարուհին և ան՝ ամեն օր իրար տեսնելով  
բարեկամութիւն մը հաստատուէր էր մէջերնին :  
Մարօնչէլլի այնչափ համեատ ազնիւ և անմեղ  
հոգի մ'ունէր, որ բնաւ չէր զիտեր խեղճ Հուն-  
գարուհւոյն սէր ազդած ըլլալը , և ես հասկը-  
ցուցի իրեն : Առաջ չուզեց հաւատալ խօսքիս .  
բայց վախճալով որ ես իրաւունք կունենայի ,  
տեղի պաղ կերպով վարուիլ սկսաւ անոր հետ :  
Այս զգուշութեան առաւելութիւնը՝ փոխանակ  
կնուջ տարփանքը մարելու , կը թուէր թէ կար-  
ծարձէր :

Նր սենեակին պատուհանը բարձրաւանդակին  
գետնէն քիչ վեր ըլլալով, քանի մը լաթ արեւին


չորցընելու կամ ուրիշ որ և է գործ մ'ընելու պատճառանօր մեր կողմը կը ցատկէր, ու հոն կեցած մեզ կը նայէր, կամ եթէ առիթ մը գրտնէր՝ խօսակցութիւն կը բանար :

Մեր խեղճ պահնորդները՝ զիշերները ընհատ մնալէ յոգնած, առիթ գտնելնուն պէս՝ բարձրաւանդակին այն խորշը կուգային, ուր առանց մեծերնէն տեսնուելու կրնային խոտին վրայ նստիլ ու նիրհել :

Մարօնչէլլի մեծ տազնապի մէջ կիյնար այն ժամանակը, վասն զի տարարազդ կնոջ կիրքը քաջայայտ կերևէր: Աս ալ անկէ աւելի կը տազնապէի: Այսու ամենայնիւ այսպիսի տեսարանները՝ որ կրնային բաւական ծիծաղաշարժ ըլլալ եթէ կինը մեզ ակնածութիւն չազդէր, մեզ համար լուրջ և կրնամ ըսել սրտաշարժ էին: Թըշուտու կիսնն այն տեսակ դէմք մ'ունէր, որուն վրայ առաքինութեան սովորոյթն ու յարգանաց պէտքը նկարուած կերևէին: Պեղանի չէր, բայց սոյնպէս ազնուական պատկեր մ'ունէր, որ երեսին քիչ մ'անկանոն զծագրութիւնը զխտես թէ իր ամեն մէկ ժպիտէն, մկաններուն ամեն մէկ շարժումէն կը գեղեցկանար :

Եթէ հոս սիրոյ վրայ խօսելու միտք ունենայի, շատ բան կար խօսելիք այն առաքինի ու դժբաղդ կնոջ վրայ, որ հիմա մեռած է: Բայց բաւա-

կան է ինձ մեր բանտարկութեան դժուարագէտ  
անցքերէն մէկն այսչափ մը նշանակած ըլլալ:



## Ք Լ Ո Ւ Ս Զ

Սատութեանց անշնալն՝ օր քան զօր աւելի  
միօրինակ և հետևաբար ճանճրալի կընէր մեր  
կեանքը: Ի՞նչպէս անցան 1824, 1825, 1826,  
1827 տարիները: Գիրքերնիս գործածելու ազա-  
տութիւնը՝ որ Պրիւնի կառավարիչն առժամա-  
նակեայ կերպով մեզ շնորհեր էր՝ արգիլուեցաւ:  
Այ այնուհետև բանտը մեզ համար ճշմարիտ գե-  
րեզման մ'եղաւ, որուն մէջ գերեզմանի անդոր-  
րութիւնն անգամ չէին թողուր մեզ: Ամեն  
ամիս, անորոշ օր մը, ոստիկանութեան վերա-  
տեսուչը՝ տեղակալի մը հետ և զինտրով մը  
կուգար խիստ խուզարկութիւն մը կընէր: Մեզ  
բոլորովին կը մերկացընէին, հանդերձներնուս  
ամեն կարանները կը քննէին որպէս զի մէջը  
թուղթ մը կամ ուրիշ բան մը պահած չըլլանք:  
մեր խոտէ անկողիները կը քակէին և մէջը կը

զննէին: Թէպէտ և պահած բան մը չկրնային  
զտնել մեր բոյ, սակայն այսպէս թշնամարար և  
միշտ կրկնուած քննութիւն մը չեմ գիտեր ինչ  
նողկալի բան մ'ունէր որ զիս կը բարկացընէր,  
և ամեն անգամ ինձ տենդ կը պատճառէր:

Բանտարկութեանս առաջին տարիները՝ որ  
այնչափ անտանելի երկցեր էին ինձ՝ հիմա կըս-  
կըծալով կը յիշէի իբրև սիրելի քաղցրութեանց  
ժամանակ մը: Ուր էին այն ժամերը ուր Ս.  
Գրոց կամ Հոմերոսի ընթերցման կը պարա-  
սէի: Հոմերոսի բնագիրը կարդալով կարդալով  
յունարէն լեզուին ունեցած թեթե ծանօթու-  
թիւնս ընդարձակեր էր, և սիրահարեր էի  
այն լեզուին: Ա՛րչափ տրամեցայ այս ու-  
սումը չկրնալ շարունակելուս վրայ: Տանթէ,  
Պայրըն, Բէթրարքա, Շէքսպիր, Շիլլէր, Վալ-  
թէր-Սըօթ, Աէօթէ և ուրիշ ինչ բարեկամներ  
ձեռքէս առնուեցան: Այս գիրքերուն հետ քանի  
մ'ալ տւտարանական բարոյականի գիրքեր  
կային, Պուրտալու, Բասքալ, Նմանութիւն Յի-  
սուսի, Ֆիլօթէա, և այլն, և այլն, որքէթէ կար-  
դացուին այն բժախնդիր և աններող քննադա-  
տութեամբ՝ որ կիրթ ախորժակի թերութիւն  
մը կամ խախուտ խորհրդածութիւն մը տեսնե-  
լուն պէս կը պոռայ, մէկդի կը ձգուին և ալ ձեռք  
չեն առնուիր. բայց երբոր մէկը բարեմտութեամբ  
և առանց տկար կողմերէն զայթակղելու կար-

դայ, իր սիրտն ու միտքը կազդուրող բարձր  
փիլիսոփայութիւն մը կը զանէ անոնց մէջ:

Այս կրօնական գիրքերուն մէկ քանին կտքը  
ընծայ զրկուեցան մեզ կայսրէն. բայց ընծային  
հետ միանգամայն բացարձակ արգելք կար բա-  
նասիրական ուսմանց ծառայող ամեն կերպ  
գիրքերու:


Այս հզնաւորական զրոյց ընծան 1825 ին կըսու  
մեզ դադմատեցի խոստովանանք մը ձեռք որ  
Վիեննայէն զրկուեր էր և անունը Հ. Ստեփան-  
նոս Բաւրովիչ էր. այս քանանայն երկու տարի  
կտքը Քաթարօի կալիսկոպոս անուանեցաւ:  
Նայն քանանային միջնորդութեամբը նաև պատա-  
րագ լսելու բարեբազդութիւն ունեցանք. շնորհ  
մը՝ որ մինչև այն ժամանակ զլացուեր էր միշտ՝  
պատճառանօք թէ չէին կրնար մեզ կէզեզեցին  
տանիլ և հոն երկերկու հոգի բախուած պահել՝  
ինչպէս որ պատուէր եղած էր:

Այսպիսի բացարձակ բաժանում մ'անհնար  
ըլլալով, երեք խումբ բաժնուած կերթայինք  
պատարագի: Մէկ խումբը երգեհոնի բեմին վրայ  
կը կենար, մէկը տակը, այն կերպով որ իրար  
չէին տեսներ. երրորդն ալ փոքրիկ սղօթարանի  
մը մէջ՝ որ վանդակով մը կէզեցւոյն մէջ կը նայէր:

Մարօնչէլի և ես ընկեր ունէինք մեզ այն ժա-  
մանակը վեց դատաւարտեալ՝ որոյ դատավճիտը  
մերինէն հին էր: Բայց մէկ զոյգը միւսին հետ



չէր կրնար խօսիլ: Այս վեց դատարարուց երկուքն ինձ գրացի եղած էին Վենետիկի Կապարներուն տակ: Երկու պահնորդ մեզ եկեղեցի կը տանէին մեզ յատկացեալ տեղը, և պատարագէն ետե ամեն մէկ զոյգն իր բանար կը դարձունէին: Պատարագ ընողը քարուչին մ'էր, որ ամեն անգամ պատարագին վերջը ազօթք մը կըսէր, խնդրելով Աստուծմէ որ մեզ ազատէ մեր շրջթայներէն, և այն ժամանակ ձայնը կը փղծկէր: Երբոր խորանին առջեւն կը դառնար, կարեկից աչք մը կը ձգէր մեր ամեն մէկ խումբին վրայ, և տխրու թեամբ գլուխը կը ծռէր ազօթելով:



### Ք Ա Ո Խ Ե Չ Ա .

1825ին Շիլլէր ծերու թեան խօթութիւններէն խիստ տկարացած երևնալով, տրիշ բանտարկեալներ յանձնեցին իրեն, որոց պահպանութիւնը մեզ չամ աչալուրջ հսկողութեան կարօտ չէր թուեր: Ա՛հ, ո՛րչամի դժնդակ եղաւ մեզ Շիլ-

լէրին քովերնէս հեռանալը . ո՛րչափ ինքն ալ  
արտամեցաւ մեզնէ, բաժնուելուն վրայ :

Անոր տեղը զրուեցաւ նախ Քրալ, որ բարե-  
արտութեան մասին անկէ վար չէր մնար : Բայց  
չատ չանցաւ՝ այս ալ ուրիշ գործի մը զրուեցաւ,  
և տեղն ուրիշ մ'եկաւ, որ եթէ չար չէր՝ նեղ-  
սիրտ էր, և գորովական զգացում մը յայտնելու  
անկարող :

Այս փոփոխութիւնները զիս դառնապէս կը  
վշտացնէին : Եկէր, Քրալ և Քուպիցքի, մա-  
նաւանդ առաջին երկուքը մեզ այնպէս լաւ խո-  
նամեր էին մեր հիւանդութեանց մէջ, որ հայր  
մը և եղբայր մ'անկէց աւելին չէին կրնար ը-  
նել : Պարտազանցութիւն ընելու անկարող էին,  
բայց առանց դժնէութեան կը կատարէին Նրենց  
արտաքին ձևերուն մէջ խստութիւն մը կար-  
թէ և, բայց զրեթէ միշտ աղամայ էր, և մեզ  
փորձով յայտնած բարեարտութիւնովնին լիա-  
պէս կը փոխարինէին : Նրբեմն կը զրգռէի ա-  
նոնց դէմ. բայց ի՛նչպէս արտանց կը ներէին ինձ.  
Ինչպէս կը փութային մեզ համոզելու թէ մեր  
վրայ կարեկցութիւն ունէին : Ո՛րչափ ուրախ  
կըլլային մեր ալ այնպէս համոզուելուն և զի-  
րենք բարի մարդիկ հանչելնուս վրայ :

Մենէ հեռու ապրելէն ի վեր՝ Եկէր քանի  
մ'անգամ հիւանդացեր ու առողջացեր էր : Հի-  
ւանդ եղած ժամանակը որպիսութեանը վրայ

անդադար լուր կը հարցընէինք որդիական հոգածութեամբ: Երբոր ապաքինիլ սկսէր, կուզար երբեմն մեր սպասուհաններուն ներքև կը նեմէր: Աինքը ողջունելու համար կը հազայինք. ան ալ վեր կը նայէր տրամախառն ժպիտով մը, և մեզ լսելի ըլլալու կերպով կը սէր պահնորդին. «Ասոնք իմ զաւկներս են»:» :

Սեղն ծերունի, ո՛րչափ սիրտս կը կսկծէր երբոր կը տեսնէի քեզ՝ որ չէիր կրնար հիւանդ մէջքդ քաշել, և ես ալ չէի կրնար թեւդ մտնելով քեզ բռնել :

Երբեմն խոտին վրայ կը նստէր կը կարդար : Ինձ իոխ տուած գիրքերն էին կարդացածը. իմ միտքս ձգելու համար անոնց մակագիրը կը կարդար պահնորդին, կամ մէջէն քանի մը հատուած ամուր ձայնով կարտասանէր : Շատ անգամ տարեցոյցի առասպելներ, կամ գրական արժէք մը չունեցող՝ բայց բարոյական իմաստ մ'ունեցող վէպեր էին :

Քանի մ'անգամ կաթուածահար ըլլալէ ետե՛ ինքզինք զինուորական հիւանդանոցը իոխադրել տուա : Հոն հասած ժամանակ յուսահատ վիճակի մէջ էր, և շատ չանցաւ՝ մեռաւ: Քանի մը հարիւր Քիօրին ստակը ելաւ, որ երկարժամանակեայ խնայութեան մը պտուղ էր: Այս ստակն իր զինուորակից բարեկամներուն իոխ տուեր էր: Ատխճանին մօտ օրերը բարեկամները քովը

բերել տուաւ ու ըսաւ . «Ես ընտանիք կամ ազգական չունիմ . ուստի քովերնիդ ունեցած ստակըս ձեզ ըլլայ : Միայն կը խնդրեմ ձեզնէ որ աղօթէք ինձ համար» : Բարեկամներէն մէկը ասանկով տարաւ դուստր մ'ունէր որ Շիլլերի սանն էր . Սեռնէլէն քանի մը ժամ առաջ՝ բարի ծերունին զայն քովը բերել տուաւ : Արդէն կարող չէր որոշ կերպով խօսք մ'արտասանելու : Մատէն արժաթ մատնի մը հանեց որ իր վերջին հարստութիւնն էր , և ազգական մատը դրաւ . յետոյ լալով համբուրեց զայն : Խեղճ ազգիկը բարձրաձայն կուրար և արտառքովը զայն կողողէր : Շիլլեր թաշկինակովը կը օրբէր այն արտառքը : Յետոյ ազգական ձեռքը բռնեց ու իր աչացը վրայ դրաւ . . . : Աչքերն յաւիտեան գոյտեր էին :



## Գ Լ Ո Ւ Խ Զ Բ .

Այսպէս մէկ մէկու ետևէ մարդկային մխիթարութիւնները կը սկսեալին մեզնէ , և վիշտերն հեռոզեալէ կ'աւելնային : Ինքզինքս Աստուծոյ

կամացը կը յանձնէի, բայց հեծելով, և սիրտս  
փոխանակ թշուառութեամբ խստանալու՝ կը  
թուէր թէ օր քան զօր աւելի ցաւագին կեր-  
պով կ'զգար զայն :

Անգամ մը Աւհղաղուրդի Աագէթ լրագրին մէկ  
թերթը գաղտնարար ինձ բերին, մէջը՝ բոյրերէս  
մէկուն սքեմ առնելը ծանուցանելու առթիւ՝ ինձ  
համար ալ զարմանալի լուր մը կար. «Օրիորդ Մա-  
րիամ Անճիօլա Բէլլիքօ, դուստր և այլն . . . ին,  
այսօր . . . կրօնաորի քօղ առաւ Թուրինօի Ալի-  
դիթաճիօնէ վանքին մէջ : Յիշեալ օրիորդին և դ-  
բայր է Յրանչեւսա սա Բիւնիսի հեղինակ Սիւլիօ  
Բէլլիքօ, որ այս օրերս Սրիլպէրդի բերդէն ար-  
ձակուեցաւ Ա. կայսեր ներողութեան շնորհիւ,  
որ առատասիրտ վահապետի մ'արժանավայել  
գթութեան զործ մ'է, և որուն վրայ համայն  
Բաալիա ուրախացաւ, և այլն . . . »

Այս խօսքերէն ետե իմ վրաս ներբող մը կար :

Չէի կրնար երևակայել ինչ նազատակաւ հնար-  
ուեր էր իմ ներում գտնելուս լուրը : Յմբազրա-  
կան սարգ կատակ մ'էր ըսել՝ անհաւատալի կը  
թուէր ինձ : Թերևս Աւստրիական ոստիկանու-  
թեան կողմէն մտածուած վարպետութիւն մ'էր :  
Բայց Մարիամ Անճիօլա անուններն իմ կըրտ-  
սերագոյն քրոջս անուններն էին, որ անշուշտ  
Թուրինօի Աագէթ լրագրէն ուրիշ լրագիրներու  
մէջ անցեր էին : Արեւմն սուտ չէր կրնար ըլլալ

այն ազնիւ օրիորդին կրօնաւոր ըլլալը : Ա՛հ ,  
 թերևս ծնողքը մեռած ըլլալով , ինքն ալ այս  
 վիճակն ընտրեր է : Խեղճ ազգիկ , չէ ուզեր որ  
 միայն ես տառապիմ բանտին մէջ . ինքն ալ մի-  
 այնու թեան մէջ փակուիլուզեր է : Աստուած՝ ինձ-  
 մէ աւելի համբերութեան ու անձնուրացութեան  
 առաքինութիւն տայ անոր : Արդեօք սրչափ ան-  
 ցամ իր խցիկին մէջ զիս պիտի մտածէ այս հը-  
 րեշտակը : Ո՛րչափ անգամ խտամբեր ճգնու-  
 թիւններ պիտի ընէ խնդրելու համար Աստուծմէ  
 որ իր եղբօրը տառապանացն սփոփանք շնորհէ :

Այս մտածութիւնները սիրտս կը շարժէին ու  
 կը ճմլէին : Աւանգ , իմ դժբաղդութիւնս կրնար  
 հօրս կամ մօրս կամ թերևս երկուքին ալ կեանքը  
 կարճել : Քանի կը մտածէի ոտոր վրայ , այնչափ  
 ինձ անհնար կը թուէր որ Մարիէթ-թա քոյրս՝  
 առանց այսպիսի կորուստ մ՛ընելու՝ հայրենի  
 յարկէն ելնէր ու կուսանայ վանքը քաշուէր :  
 Այս գաղափարն իրրև ստուգութիւն կը ծանրա-  
 նար սրտիս վրայ , և անազորուն թաղմութեան  
 մը մէջ զիս կ'ընկզմէր :


Մարօնչէլլի ալ ինձ չափ խտովեցաւ : Քանի մը  
 օր ետքը բանաստեղծական ողբ մ՛սկսաւ շա-  
 րագրել բանտարկելոյն քրոջը վրայ , և գեղեցիկ  
 քերդուած մը յօրինեց որ տխրութիւն և կսկիծ  
 կը ընչէր : Աւարտելէն ետև կարդաց ինձև Ո՛հ ,  
 սրչափ շնորհակալ եղայ բարեկամիս այս փա-

փուկ խորհրդածութենէն : Կրօնաորուհեաց վը-  
 րայ շինուած հազարաւոր տաղաչափութիւննե-  
 րու մէջ հաւանականաբար այս քերդուածն էր  
 միայն որ բանտի մէջ յօրինուած էր՝ կրօնաու-  
 րուհւոյն եղբօրը համար , անոր կալանակից  
 ընկերներուն մէկէն :

Ահա այսպէս բարեկամութիւնը կը մեղմացը-  
 նէր իմ վիշտերս : Ա՛հ , այն օրէն ետև օր մը  
 չանցաւ որ մտօքս երկար ժամանակ կուսանայ  
 վանքի մը բոլորտիքը չղստնայի , անոր մէջ  
 փակուած կոյսերէն մէկ հատը գորովագին կա-  
 րեկցութեամբ չնկատէի , և ջերմագին եռանդով  
 չաղաչէի զԱստուած որ անոր միայնութիւնը գե-  
 ղազարգէ , և չթողու որ երեակայութիւնը չափա-  
 զանց սոսկալի գոյներով նկարէ իրեն իմ բանտս :



Ք Լ Ո Ւ Ն Ձ Ք .



Արագրին գաղտնաբար ձեռքս գալէն չը կար-  
 ծուի թէ յաճախ լուր կրնայի անուշ աշխար-  
 հէս : Ոչ . շուրջս գանուողներուն ամենն ալ բարի

այն ազնիւ օրիորդին կրօնաւոր ըլլալը : Ա՛հ ,  
 թերևս ծնողքը մեռած ըլլալով , ինքն ալ այս  
 վիճակն ընտրեր է : Ան՛ղն ազգիկ , չէ ուզեր որ  
 միայն ես տառապիմ բանտին մէջ . ինքն ալ մի-  
 այնու թեան մէջ փախուիլ ուզեր է : Աստուած՝ ինձ-  
 մէ աւելի համբերու թեան ու անձնու բացու թեան  
 առաքինու թիւն տայ անոր : Արդեօք նրչափ ան-  
 գամ իր խցիկին մէջ զիս պիտի մտածէ այս հը-  
 րեշտակը : Ո՛րչափ անգամ խտամբեր նզնու-  
 թիւններ պիտի ընէ խնդրելու համար Աստուծմէ  
 որ իր եղբօրը տառապանացն սիրտիանք շնորհէ :

Այս մտածու թիւնները սիրտս կը շարժէին ու  
 կը նմէին : Աւանդ , իմ դժբաղդու թիւնս կրնար  
 հօրս կամ մօրս կամ թերևս երկուքին ալ կեանքը  
 կարճել : Քանի կը մտածէի ասոր վրայ , նյնչափ  
 ինձ անհնար կը թուէր որ Մարիէ թ թա քոյրս՝  
 առանց այսպիսի կորուստ մ՛ընելու՝ հայրենի  
 յարկէն ելնէր ու կուսանաց վանքը քաշուէր :  
 Այս գաղափարն իբրև ստուգու թիւն կը ծանրա-  
 նար սրտիս վրայ , և անազորուն թաղծու թեան  
 մը մէջ զիս կ՛ընկղմէր :

Մարօնչէլլի ալ ինձ չափ խռովեցաւ : Քանի մը  
 օր ետքը բանաստեղծական ողբ մ՛սկսաւ շա-  
 րագրել բանտարկելոյն քրոջը վրայ , և զեղեցիկ  
 քերդուած մը յօրինեց որ տխրու թիւն և կսկիծ  
 կը շնչէր : Աւարտելէն ետև կարդաց ինձ : Ա՛հ ,  
 նրչափ շնորհակալ եղայ բարեկամիս այս իա-

մարդիկ էին, բայց ամենն ալ երկխղով կաշկանդուած էին: Նթէ երբեմն թե թե կանոնազանցութիւն մը գաղտնապէս գործուէր, ան ալ միայն այն ժամանակ կրնար ըլլալ՝ երբոր իմացուելու վտանգ մը չէր տեսնուեր: Բայց շատ դժուարին բան էր վտանգէ ազատ մնալ այնչափ սովորական և անսովոր խուզարկութեանց մէջ:

Նս չկրցայ երբէք ծածկարար լուր մ'առնուլ ընտանիքէս, որ՝ աւանդ՝ խիստ հեռու էր ինձմէ, բայց ՚ի քրոջս վերաբերեալ խօսքէն զոր հիմա պատմեցի:

Ծնողացս մեռած ըլլալուն վրայ ունեցած կասկածս քիչ մը ժամանակ ետքն աւելցաւ մանաւանդ՝ քան թէ պակասեցաւ՝ երբոր ոստիկանութեան վերատեսուչն եկաւ ինձ ըսաւ թէ ընտանիքս ողջ առողջ էին: —

— Ա. կայսրն հրաման կընէ ինձ, ըսաւ, ծանուցանել ձեզ, թէ Քուրինօսի մէջ ունեցած ծընողքնիդ ողջ առողջ են: —

Սայտայցի բերկրութենէս ու հիացումէս երբոր այս լուրն ինձ տրուեցաւ, որ մինչև այն ժամանակ եղած բան չէր, և աւելի մանրամասն տեղեկութիւններ խնդրեցի:

— Նս հայր մը, մայր մը, եղբայրներ ու քոյրեր թողուցի Քուրինօ, քսի վերատեսուչին. աւենն ալ ճշջ են: Ա՛հ, եթէ անոնց մէկէն նամակ մը ունիք, կաղուչեմ ցուցընէք ինձ:



— Չեմ կրնար ձեզ բան մը ցուցընել, պէտք է որ այսչափով գոհ ըլլաք: Այս մխիթարական զրոյցը ձեզ հազորդելո հայսեր բարեւարտութեանն աստացոյց մ'է: Այս բանը զեռ ուրիշ մէկու մեզած չէ:

— Այո՞, կը խոստովանիմ որ հայսեր բարեւարտութեանն աստացոյց մ'է, բայց կրնար զգալ որ այսպիսի տարտամ խօսքերէ մխիթարութիւն մը գտնել անհնար է ինձ: Ո՞րք են այդ ողջ առողջ ընտանիքս, մէջերնէն մէկը մեռած չէ արդեօք:

— Պարոն, կը ցաւիմ որ ինձ հրամայուածէն աւելի բան մը չեմ կրնար ըսել ձեզ: —

Արդարեւ այս լուրն ինձ արուելուն նախատակը զիս բիշ մը սփռիւն էր: Բայց ես ընդհակառակն կարծեցի թէ կայսրն ընտանիքէս ոմանց թախանձանացը զիջանելով՝ այս լուրն ինձ տալութոյլտութիւն ըրած ժամանակ միանգամայն հրամանըրեր էր որ երբէք նամակ չցուցընեն ինձ, որպէս զի ընտանեացս մէջ մեռած կամ պակասած եթէ կար՝ չկրնայի իմանալ:

Քանի մ'ամիս ետքը նորէն այս կերպ լուր մը բերին ինձ առանց նամակի և առանց բացատրութեան:

Տեսան որ այսպիսի մեծ շնորհէ մը գոհ չէի ըլլար, և մանաւանդ արտմութիւնս աւելի կը մեծնար, ալ մէկ մ'ալ ընտանեացս վրայ խօսք չըրին ինձ:

Արևակայէի թէ ծնողքս մեռած ըլլալու էին,  
 նոյնպէս եղբայրներս ալ, նոյնպէս միւս սիրելի  
 քայրս ճուղէբինա . թերևս Մարիէ թ թա ալ՝ ոչ  
 միայն ողջ մնացեր էր՝ քիչ ժամանակէն պիտի  
 շիջանէր առանձնութեան չարչարանքներուն և  
 ճգնութեան խատամբերու թիւններուն մէջ : Այս  
 մտածութիւնս զիս օր քան զօր կանջատէր կեան-  
 քէս :

Նրբեմն սովորական ջաւերս դժնդանց կերպիւ  
 նորոգուելով, կամ հիւանդութիւններ վրաս գա-  
 լով, զոր օրինակ քօլէքայի դժնեայ նշաններ ու-  
 նեցող սարսափելի խիթ մը, կը յուսայի մեռնիլ-  
 այն, եիշդ կըսեմ, կը յուսայի :

Նւսակայն, իմ մարդկային ճակատութեանցս,  
 երբոր աչքս նուազեալ ընկերիս վրայ կը ձգէի,  
 սիրտս կը կտրտէր զայն մինակ թողլու մտածու-  
 թենէս, և նորէն կը բաղձայի սպրիլ :



### Գ Լ Ո Ւ Ս Զ Գ .

Նրեք անգամ Վիեննայէն բարձրատիճան ան-  
 ծեր եկան բանտերնիս աչքէ անցընելու և հաս-

կրնայու թէ կանոնաց դէմ բան մը կը գործուէր:

Առաջին այցելու թիւն ընողն եղաւ Վօն Միւնխստեպուհը, որ մեր քիչ լոյս տեսնելուն վրայ գըթալով՝ խօսք տուաւ խնդրելու որ օրերնիս քանի մը ժամ երկնցնեն՝ բանտերուն դռնակին դուրսը կանդեղ մը դնելով: Վօն Միւնխստեպուհին այցելու թիւնը 1825ին եղաւ Տարի մը ետքը անոր բարի գիտաւորութիւնն ՚ի գործ գրուեցաւ, և նոյն ժամանակէն ետե՛ այն գերեզմանտկան տղօս նշոյլին շնորհիւր կրնայինք բանտին սլատերը տեսնել, և առանց զլուխնիս տեղ մը դարնելու ստըտիլ:

Երկրորդ այցելու թիւնն ըրաւ Վօն Վօկէլ ստեպուհը: Այս սլ առողջութիւնս ողբալի վիճակի մէջ գտաւ. և իմանալով որ բժիշկը՝ թէ և գիտէր որ խահուէն ինձ օգուտ կրնար ընել, բայց անբազանց ծախուց նիս թ մ՝ ըլլալուն համար հրամայելու չէր համարձակեր, հաւանութեան խօսք մ՝ ըրաւ և այնտե՛ տե՛ ինձ խահուէ տրուիլ սկսաւ:

Երրորդ այցելուն եղաւ արքունեաց աւագանիներէն չեմ գիտեր ո՞վ, յիսուն վաթսուն տարեկան մարդ մը, որ իր կերպերովն ու խօսքերովը խիստ ազնուական կարեկցութիւն մը ցոյց տուաւ մեզ:

Չէր կրնար բարիք մ՝ ընել մեզ, բայց ցուցըցած քաղցր կարեկցութիւնը բարիք մ՝ էր արդէն, և շնորհակալ եղանք իրմէ:

Ո՛հ, որչափ եռանդով բանտարկեալ մը կը

բաղձայ իրեն նման արարածներ տեսնելու :

Քրիստոսնէական կրօնքը՝ որ խիստ հարուստ է մարդասիրութեամբ, չմտաջաւ ողորմութեան գործոց կարգը դասել բանտարկելոց այցելու թիւնը :

Տարաբաղդութեանդ վրայ գթացող մարդոց տեսքը, թէ և այն մարդիկը կարող չըլլան իրական միջոցներով քեզ մխիթարել, կրած վիշտդ կը դիւրացընէ :

Բացարձակ միայնութիւնը թերևս ոմանց սիրտըն ուղղելու կը նպաստէ, բայց կարծեմ որ ընդհանրապէս աւելի օգտակար կրնայ ըլլալ և թէ վերջին ծայրը չըշուի, և թէ ընկերութեան մերձաւորութենէն բոլորովին չզատեն: Գոնէ ևս այնպէս եմ: Նթէ նմաններս չտեսնեմ, սէրս խիստ քիչ անձերու վրայ կամփոփեմ, և մնացեալները սիրելէ կը դադրիմ. իսկ և թէ կարող ըլլամ տեսնել՝ չեմ ըսեր շատ՝ բայց պատշաճ թուով մարդիկ, եռանդուն սէր մը կ'զգամ ընդհանուր մարդկային ազգին վրայ :

Հազար անգամ տեսնելով սիրտս՝ որ խիստ սակաւաթիւ անձերու վրայ սէր ունէր և մնացեալները կտատէր, կը զարհուրէի: Այն ժամանակ պատուհանը կելնէի նոր դէմք մը տեսնելու. փափաքով, և երջանիկ կը համարէի զիս և թէ պահնորդը՝ պարտած ժամանակ՝ բանտիս ներքևի պատին խիստ մօտէն շանցնէր, և թէ բացէն անցնէր ու զինքը տեսնէի, և թէ հազայի՝ վեր նա-

յէր, և թէ պարկեշտ դէմք մ'ունենար: Երբոր  
կարեկցութեան նշոյլ մ'անոր դէմքին վրայ նըշ-  
մարէի, քաղցր բարախում մը կ'զգայի սրտիս  
մէջ, որպէս թէ այն անձանօթ զօրականը մը-  
տերիմ բարեկամս էր: Եթէ նեռանար, գորովա-  
լից տատամսութեամբ մ'ետ դառնալուն կ'սպա-  
սէի, և եթէ ինձ նայելով ետ դառնար՝ կուրա-  
խանայի որպէս թէ մեծ բարիք մ'ըրած էր ինձ:

Կսկ երբոր շերենալու կերպով անցնէր, կը  
տրտմէի, իբրև մարդ մը որ կը սիրէ՝ բայց կը  
տեսնէ որ սիրելին անսիրտ է իր վրայ:



### Ք Լ Ո Ւ Խ Յ Զ Դ.

Մեր քովի բանտին մէջ՝ ուր Օրօսօնի նստեր  
էր, հիմա Տ. Ֆօրթինի քահանայն և Պ. Անթօ-  
նիօ Վիլլա կը նստէին: Այս վերջինը՝ որ առաջ  
Հերակլէսի պէս հուժկու էր՝ առջի տարին շատ  
տանջուեր էր անօթութենէ. և երբոր ուտելիքը  
քիչ մ'աւելցաւ, մարտելու կարողութիւն չունէր:

Երկար ժամանակ տառապելէ ետև՝ երբոր  
տկարութեան վերջին կէտն հասաւ, աւելի օղա-  
ւէտ բանտ մը խնդրեց և ստացաւ: Նեղ նկուզի մը

վաստառողջ օղն անշուշտ խիստ մաստակար էր իրեն՝ ինչպէս ուրիշ ամենուն ալ . բայց խնդրած տեղն ալ անբաւական էր : Նրուած ընդարձակ սենեակին մէջ տակաւին քանի մ'ամիս ապրեցաւ , և վերջապէս քանի մը անգամ արիւն փոխելէ ետև մեռաւ :

Վերջին կրօնական նախատներն ըրին իրեն Տ . Յօրթինի՝ իր կալանակիցը , և Հ . Բուլովիչ քահանայն՝ որ Վիլլայի մերձ ի մահ ըլլալը Վիէննա խմացուելուն պէս՝ վազեր եկեր էր :

Թէպէտ և Օրօպօնիի շափ մտերիմս չէր , այսու ամենայնիւ իր մահը մեծ կակիծ տուաւ ինձ :

Գիտէի որ կաթոգին սիրելի էր ծնողացն ու կնոջը : Դակ ինք առաւել նախանձելի էր քան թէ կակծալի . բայց իր վրայ տարողնէ՛րը . . . :

Վենետիկի Վապարներուն տակն ալ ինձ զրացի էր : Թրէմէրէլլօ անոր մէկ քանի տաղաչափութիւնները բերեր էր ինձ , և իմիններս ալ անոր տարեր էր : Ինձ զրկած տողերուն մէջ երբեմն խորին զգացում կար :

Մեռնելէն ետև նշմարեցի որ կենդանութեան ժամանակ կարծածէս ամէլի կը սիրեմ եզեր զինքը՝ երբոր խմացայ պահնորդներէն թէ որչափ շարշարանքով մեռեր էր : Նզկելին չէր կրնար համբերել մեռնելու , թէև խիստ բարեպաշտ էր :

Վերջին աստիճան ստակում կզգար այն անաւոր անցքէն , բայց միանգամայն չէր զսպրեր

Տէրը օրհնելէ և արտասուօք անոր զոչելէ . « Ձե՛մ  
կրնար իմ կամքս քու կամացդ համաձայնեցնել ,  
Աստուած իմ , և սակայն կուզեմ : Գործէ՛ այդ  
հրաշքն իմ վրայ : »

Օրօպօնիի արիութիւնը չունէր , բայց անոր  
նմանեցաւ՝ իր թշնամեացը ներելով :

Նոյն տարւոյն (1826) վերջը , իրիկուն մը նըր-  
բաշաղին մէջ բազմաթիւ մարդոց մեղմ ոտնա-  
ձայն լսեցինք : Ականջնիս քաջափարժ էր ամեն  
կերպ ձայներ սրուելու . Գուռ մը բացուեցաւ ,  
այն էր Սօլէրա փաստարանին բանտին դուռը :


Երկրորդ մը բացուեցաւ , որ էր Ծօրթինիի  
բանտին դուռը : Քանի մ'անձինք ներս կը մըտ-  
նեն ու ցած ձայնով կը խօսին . ոտիկանու թեան  
վերատեսչին ձայնը կրցանք զանազանել —

Ի՞նչ պիտի ըլլայ այս , կըսէինք . ստանկ ու շ  
ժամանակ խուզարկութիւն , ինչ բանի համար :

Բայց շատ չանցած դուրս կելնեն , և ահա բա-  
րեմիտ Ծօրթինիի ձայնը կը լսենք որ կըսէր .  
Ո՛հ , վնայ ինձ . ներեցիք , ժաւագրֆիս մեկ հա-  
սորը ներսը մոռցայ :

Նւ վազելով ետ դարձաւ , յետոյ դուրս ելաւ  
միւսներուն քով հասաւ : Սանդուղքին դուռը բա-  
ցուեցաւ , և մինչև վարի ծայրը ոտնաձայննին  
լսեցինք : Հասկըցանք որ այս երկու երանելեաց  
ազատութիւն շնորհուեր էր . և թէպէտ շատ  
տրտմեցանք որ անոնց հետ մեզ ալ ազատութիւն

չշնորհուեցաւ, սակայն անոնց բարեբազդու թեա-  
նը վրայ ուրախ եղանք :



## Գ Լ Ո Ւ Խ Յ Ե .

Մեր երկու ընկերաց ազատութիւնը մեզ հա-  
մար ալ հետեանք մը չսպիտի ունենար :

Ի՞նչպէս կեղնէին անոնք՝ որ մեզ պէս մե-  
կը քսան և միւսը տասնեհինգ տարի բանտար-  
կութեան դատաստարտուած էին, առանց նոյն  
շնորհը մեզ և ուրիշ շատերու համար ալ փայ-  
լելու :

Ուրիշ չարձակուածներն աւելի յանցաւոր դա-  
տուած էին . կամ թերևս ամենս ալ արձակելու  
միտք ունէին, բայց զոյգ զոյգ և իրարմէ քիչ  
տարբեր միջոցի մէջ, թերևս ամսէ ամիս, թե-  
րևս երկու կամ երեք ամիսն անգամ մը :

Ժամանակ մ'առանկ երկրայութեան մէջ մը-  
նացինք, և երեք ամսէն աւելի ժամանակ անցաւ՝  
առանց մէկու մ'ազատութիւն տրուելու :

1827 ին վերջերը մտածեցինք որ դեկտեմբեր  
ամիսը կրնար ազատութեան շնորհի տարեդարձ



ընտրուած ըլլալ. բայց ղեկավարներն անցաւ և ձայն մը չեղաւ: Մեր ակնկալու թիւնը երկարեցինք մինչև 1828ին ամառը, ուր բանասերկութեանս եօթն ու կէս տարին կը լրանար, փոխարէն տասն և հինգի, ինչպէս որ կայսրը խոստացեր էր, բայց պէտք էր որ ամբաստանու թեանս սկիզբէն համրուէր: Իսկ եթէ դատաստանի ժամանակը հետ չառնուէր (և այս ալ հաւանականագոյն են թաղրու թիւնն էր), այլ դատավճռոյն հրապարակաւ ընթերցումէն համրուէր, եօթն ու կէս տարին 1829ին կը լրանար:

Ամեն հաշուելի պայմանաժամերն անցան և ազատութեան շնորհը չեկաւ: Սակայն Վօլէրայի և Վօրթիինի երթալէն առաջ՝ Մարտինի ձախ ծունգն ուռոյց մը գոյացեր էր: 'Ի սկզբան ցաւը թեթեւ էր և միայն կը կաղացներ զայն: Յետոյ դժուարաւ կրել սկսաւ իր շղթան, և հազիւ երբեմն դուրս կելնէր: Աշնան առաւօտ մ'ուզեց հետս դուրս ելնել քիչ մ'օդ շնչելու համար: Արդէն ձիւն եկած էր, և զինքը չբռնած մէկ ձախորդ միջոցիս սայթաքեցաւ ինկաւ: Այս անկումէն ծունգին ցաւն անբարեբեւի կերպով սաստկացաւ: Վերուցինք անկողնին վրայ տարինք, վասն զի քալելու կարող չէր: Երբոր բժիշկը զայն աեսաւ, շղթաներն հանել առաւ: Վերջապէս ուռոյցն օր քան զօր մեծցաւ և ցաւն ալ ծանրացաւ: Այն սասիճան կը տանջուէր խեղճ

հիւանդը որ չէր կրնար հանգիստ գտնել ո՛չ անկողնին մէջ՝ և ո՛չ անկողնէն դուրս:

Նրբոր շարժիլը ելնելը կամ պառկիլը պէտք ըլլար, ամենայն զգուշութեամբ և մեղմով հիւանդ օտքը կը բռնէի և կամացուկ մ'իբ ուզածին պէս կը տեղաւորէի: Նրբեմն իբ դիրքն ամենադոյզն փոփոխութիւն մը կրած ատեն՝ ողջոյն քառորդ մը շղային ցնցում զինքը կը բռնէր օտքին անտունելի ցաւէն:

Տգրուկները, խարանները, դժոխաքարը, շոր կամ թաց սպեղանիները, ամենն ալ ի գործ դրուեցան բժշկէն: Ասոնք ալ պարզապէս յաւելում մ'էին ցաւին՝ և ոչ ուրիշ բան: Դժոխաքարին դրուելէն ետև ուռոյցն հասունցաւ և վերք մ'եղաւ. բայց չէր սլզտիկնար, և խզխայթումն ալ ցաւը չէր մեղմացնէր:

Մարօնչէլլի ինձմէ հազարապատիկ աւելի թշուառ էր, և սակայն ես ալ անոր հետ կը տառապէի: Հիւանդապահի պաշտօնը քաղցր էր ինձ՝ այնպիսի ընտիր բարեկամի մը քով. բայց ունոր երկար և անազորուն չարչարանքով հալիլը տեսնել, հասկընալ որ ծունգն անբուժելիէր, տեսնել զայն որ մեռնելուն աւելի համոզուած էր քան թէ բժշկութեանը, և ուրիշ բան մը չկրնալ ընել՝ բաց ի շարունակ զմայլելէ անոր արիութեանն ու զուարթութեանը վրայ, ո՛հ, ասոնք օիրտս աննկարագրելի կերպով կը տրորէին:

## Ք Լ Ա Խ Խ Չ Չ.

Այս ողբալի վիճակին մէջ տակաւին ոտանա-  
ւորներ կը տողէր, կերգէր, կը ճառէր, և ամեն  
ջանք կընէր զիս յուսադրելու և իր կրած ցաւե-  
րուն մէկ մասն ինձմէ ծածկելու: Մարտոզու-  
թիւնն ու քունը կորուսեր էր, և զարհուրելի  
կերպիւ կը վատէր: Յաճախ մարելիք կուգար  
վրան, սակայն երբեմն կենդանու թիւն կառնուր  
և ինձ սիրտ կուտար:

Ինն ամիս շարունակ քաշած չարչարանքն  
տնննար է նկարագրել: Աերջապէս բժշկական  
խորհրդակցութիւն մ'ընելու հրաման տրուե-  
ցաւ: Բժշկապետն եկաւ, իր արհեստակցին փոր-  
ձած դարմաններուն հաւնեցաւ, և ստանց իր  
կարծիքը յայտնելու հիւանդութեան ծանրու-  
թեանն ու այնուհետև պէտք եղած դարմանին  
վրայ, մեկնեցաւ գնաց:

Քիչ մ'ետքը վերատեսչին փոխանորդն ե-  
կաւ ու Մարտիկի ըսաւ. — Բժշկապետն իր  
կարծիքը ձեր առջև ըսել չուզեց՝ վախնալով որ  
ճանաչանելիք դժնդակ հարկը լսելու քաշաւր-

տուժիւնը չունենար: Ես ըսի անոր թէ ձեր վրայ արիութիւն չսպասիր:

— Ար յուսամ, ըսաւ Մարօնչէլլի, որ այս չարչարանքն անորտունջ կրելով քաջաարտութեանս փորձը տուած եմ: Արդեօք ինձի պիտի առաջարկեն որ . . .

— Այո՛, պարոն, ոտքերնիդ կտրուի: Միայն թէ բժիշկը ձեր մարմինը տկարացած գտնելով կը վարտնի առաջարկելու: Ուստի այդ տկար վիճակնուդ մէջ անդամատութեան դիմանալու զօրութիւն կզգասք ձեր վրայ. կուզէ՞ք ինքզինքնիդ վտանգի մէջ դնել . . . :

— Մեռնելու . . . և չպիտի մեռնիմ քիչ ժամանակէն՝ եթէ այս չարչարանքիս վերջ մը չարուի:

— Ուրեմն տեղեկագրով մը Վիէննա խնայրենեմ, և ձեր ոտքը կտրելու հրամանն իսկոյն . . . :

Ի՛նչ, հրամանն ալ պէտք է:

— Այո՛, պարոն: —

Ութ օր ետքը հրամանն եկաւ:

Հիւանդը մեծկակ սենեակ մը տարուեցաւ: Խնդրեց որ ես ալ հետն երթամ:

— Արնայ ըլլալ որ, ըսաւ, գործողութեան ժամանակ մեռնիմ, գոնէ բարեկամիս թևերուն մէջ մեռնիմ: —

Այս խնդիրն ընդունուելով հրամանն եղաւ ինձ որ քովը կենամ:

Հ. Ուրախ քահանայն (Բաւլովիշին յաջորդէր

էր) եկաւ սուրբ խորհուրդները մատակարել  
ճէր բարեկամիս: Այս կրօնական գործը կա-  
տարուելէ ետե վիրաբայժներուն սպասեցինք,  
և չէին գար: Մարօնչէլլի սկսաւ տակաւին  
երգ մը նուագել:

Վերջապէս վիրաբայժներն եկան: Երկու հո-  
գի էին, մէկը բանտին սովորական վիրաբայժն  
էր, այսինքն մեր սափրիչը: Երբոր վիրաբու-  
ժական գործողութիւն մ'ընել պէտք ըլլար, ի-  
րաւունք ունէր իր ձեռօքն ընելու, և չէր ու-  
զեր այս փառքն ուրիշի թողուլ: Միւսը երիտա-  
սարդ վիրաբայժ մ'էր Վիէննայի բժշկական  
դպրոցին աշակերտներէն, և արդէն մեծ համ-  
բաւ հանած էր իր ճարտարութեամբը: Արիւնի  
կառավարիչէն դրիուեր էր գործողութեան օ-  
ժանդակելու, և կուզէր իսկ ինքնին կատարել  
գայն, բայց հարկադրեցաւ միայն կատարմանը  
հսկելու:

Հիւանդն անկողնին եզերքը նստուցին, ոտ-  
քերը վար կախուած, և ես ալ թևերուս մէջ  
բռնեցի զինքը: Ծռնոգէն վեր, զստին այն կողմը  
ուրկէ վեր առողջ էր՝ կապ մը ըրին կտրելու  
տեղը նշանակելու համար: Ծեր վերաբայժը  
բոլորի միտերը մատնաչափ խորութեամբ կը-  
տրրտեց, յետոյ կտրտած միտերն ետ քաշեց ու  
մերկ մկաններն սկսաւ կտրել: Արիւնն ուղիւօ-  
րէն կը վազէր երակներէն, բայց անոնք ալ

չուտ մը կապուեցան մետաքսեայ թելերով .  
հուսկ յետոյ ոսկրը սղոցեցին :

Մարօնչէլլի բնաւ չպոռաց : Նրբոր իր կըտ-  
րած սորքը տանելնին տէսաւ , կարեկից աչքով  
մը վրան նայեցաւ , յետոյ կարող վիրաբոյժին  
դառնալով ըսաւ .

— Դուք զիս թշնամիէ մը ազատեցիք , բայց  
ձեր այդ ծառայութիւնը փոխարինելու միջոց մը  
չունիմ :


Պատուհանին վրայ վարդմը կար գաւաթի մը  
մէջ :

— Վաղաչեմ, սա վարդը բեր, ըսաւ ինձ :

Տարի տուի իրեն , և ինքն ալ ձեր վիրաբուժին  
տուաւ ըսելով .

— Ենտրհակալութիւնս յայտնելու համար ու-  
րիշ բան մը չունիմ ձեզ նուիրելու :

Վիրաբոյժն առաւ վարդը և արտասուեց :



### Ք Ղ Ո Ւ Խ Ձ Է .

Վիրաբոյժները կարծեր էին թէ Սրիլաէրիկի  
հիւանդարանին մէջ տմեն պէտք եղածը կար՝

բաց ի վիրաբուժական գործիքներէ որ խրենք  
 բերեր էին։ Բայց անդամատուժիւնը կատար-  
 ուելէ ետե տեսան որ այլ և այլ անհրաժեշտ  
 նիւթեր չկային, խժաղանգ կտաւ, սառոյց, ե-  
 րիզներ, և այլն։

Սեղն անդամատեալը պարսաւորեցաւ երկու  
 ժամ սպասել մինչև որ սստեք քողաքէն բեր-  
 ուեցան։ Աերջասպէս տարածուեցաւ անկողնին  
 վրայ, և սառոյցը կտրուած զստին վրայ դրուե-  
 ցաւ։

Հետևեալ օրը նոյն կտրուած տեղին վրայի  
 մտկարդեալ սրիւնը ջնջեցին, լուացին, մորթը  
 յառաջ քաշեցին, և երիզներով կապեցին։

Քանի մ'օր կէս գաւաթ արզանակ և հուկթի  
 մը հարած դեղնուցը միայն տուին հիւանդին։  
 Բայց անդամատուժենէն ետե գալիք տենդին  
 վտանգն անցնելուէ ալէս, սկսան ուելի մենդա-  
 րար ուտելիքով մը զայն քիչ քիչ կազդուրել։  
 Վայսրն հրաման քրեր էր որ մինչև ուժը տեղը  
 զայ, վերատեսչին խոհարանէն լաւ կերակուր-  
 ներ տան։

Բժշկութիւնը քանսուն տուր մէջ կատար-  
 ուեցաւ, և մեզ նորէն մեր բանտը դարձուցին։  
 Այս անգամ զայն մեծցուցեր էին սլատը ծակե-  
 լով և քովի սենեակին ճեռ միացնելով, ուր բը-  
 նակեր էր նախ Օրուգոնի և յետոյ Ախլլա։

Ես անկողինս Օրուգոնիի անկողնին տեղը միտ-

խաղրեցի, աւր վերջի շունչը վիշեր էր :

Տեղւոյն նոյնու թիւնն ինձ շատ սիրելի եղառ :

Ար թուէր թէ իրեն մօտ էի : Յաճախ երազ  
կը տեսնէի անոր վրայ, և կը կարծէի թէ նո-  
գին իսկապէս կերևէր ինձ և երկնային մխիա-  
թարու թիւնն թով սիրտս կը խաղաղէր :

Մարտնչէլիի կրած չար չարանքնե բուն սակալի  
տեսարանը՝ թէ ոտքը կարուելէ թառաղ, թէ այն  
գործողութեան ժամանակ և թէ յետոյ՝ հոգիս  
զօրացուց, Աստուած՝ որ բարեկամիս հիւան-  
դութեան ժամանակ իմ խնամքս անոր հարկաւոր  
ըլլալուն համար՝ բաւական տառաջութիւն տը-  
ւեր էր ինձ, այն գօրութիւնն առաւ վրայէս եր-  
բայր Մարտնչէլի նեցուկներով նեմեջ սկսաւ :  
Բազմաթիւ գեղձաւոր այտուցներ եքան մարմնոյս  
վրայ, որք շատ աստաղեցացին զիս : Անոնք  
անցան, կուրծքի ցաւ մ՝ սկսաւ՝ որ արդէն ժա-  
մանակաւ կրած էի, բայց այս անգամ տելի  
դժնեայ կերպով շունչս կը հեղձուցանէր : անոր  
հետ մէկ տեղ գլխու պտոյտ, թանջ, և ջղային  
ձկտուժ ունէի :

— Հիմա կարգն ինձ եկաւ, կը տէր ես ինձ .  
բայց բարեկամիս շատ համբերութիւն պիտի  
կրնամ ունենալ :

Նւ սկսայ կրցած իս շատ անոր ոտաքինու թեա-  
նը նմանելու ջանալ :

Մարդկային ամեն վիճակ պտրտակամու թիւն-



ներ տնի տնչուչտ կատարելիք : Հիւանդին պարտականութիւններն են համբերութիւն արիութիւն և բովր մօտեցողներուն անհանոյ չըլլալու ջանք :

Մարօնչէլլի՛ իր խեղճ նեցուկներովն՝ առջի դիւրաշարժութիւնը չունէր, և վախնալով որ չէր կրնար արագութեամբ ինձ ծառայել՝ կը տրամէր : Ար վախնար նաև որ իրեն աշխատութիւն չտալու և շոգնեցընելու համար՝ պէտք եղածին չամի յանախ իր ծառայութիւնը չէի խնդրեր :

Սե արդարև երբեմն կը պատահէր այս, բայց ամեն ջանք կրնէի որ չկռահէր :

Թէպէտ և ուժը նարոզուեր էր, բայց ցաւակրութիւնը բոլորովին չէր անցած : Ինչպէս որ ամեն ձեռքը լամ ոտքը կտրած անձանց կըլլար, Մարօնչէլլի ալ ցաւ կ'զգար ջիղերուն մէջ՝ որպէս թէ մարմնոյն կտրած մասը գեռ կենդանի էր : Կորսուած ոտքը արունքը և ծունգը կը ցուէին : Աւելցուր ասոր վրայ նաև ոսկրին լաւ սրղացուած չըլլալը, որ վրան եկած նոր միտերուն մէջ մխելով՝ յանախ վէրք կը գոյացընէր : Աերջապէս ծունգին կտրուած տեղը հազիւ մէկ տարիէն կրցաւ բաւական կարծրանալ և բացուել գաղբիլ :



## Գ Լ Ո Ւ Խ Ձ Ը .

Բայց նոր հիւանդութիւններ եկան խեղճին վրայ, գրեթէ անընդհատ կերպով: Նախ յօղացաւ մը սկսաւ ձեռացը յօղուածներէն և յետոյ բոլոր մարմինն ամիսներով շարժարեց: Ենկէ ետե սկորբիտէ բռնուեցաւ: Այս վերջին պատուհասը քիչ ժամանակի մէջ կապոյտ բիծերով մարմինը ծածկեց, և սարսույի կը պատճառէր:

Ինքզինքս միտիթարել կը ջանայի ըսելով. — Արտփնեաւ այս տեղ մեռնելու ենք, ուրախ ըլլանք որ մեկերնիս սկորբիտէ բռնուեցանք. վասն զի այս հիւանդութիւնը տարախոխիկ ըլլալով երկուքս ալ գերեզման պիտի տանի, եթէ ոչ ի միասին՝ զոնէ իրարմէ՝ քիչ ժամանակ ետքը: —

Նրկուքս ալ մեռնելու կը պատրաստուէինք խաղաղ սրտով: Իննամեայ բանտարկութիւնն ու կրած անազորուն տուապանքնիս՝ մեր երկու աւերեալ և հոնգչելու տենչացող մարմիններուն բոլորովին քայքայմանը զաղափարին մեզ ընտելացուցեր էին: Հոգինիս՝ Աստուծոյ բարութեանը յանձնուած՝ կը յուսային միանալ այն տեղ,

ուր մարդկային ամեն ստեղծութիւնները կը դադարին, և կը խնդրէինք. Սատուձմէ որ օր մը հոն մեր քով կռչէ մեզ չսիրողները՝ ամեն սխալալուծութիւններէ մերկացեալ:

Նախքնթաց պարիներն սկորրիտը խիտ դըժբնդակ կերպով նարակեր էր այս բանտերուն մէջ: Երբոր կառավարութիւնն իմացաւ Մարօնչէ Աիի այս սարսափելի տխրէն բռնութիւնը, վախցաւ որ նորէն կը նարակի բանտերուն մէջ, և հաւանութիւն տուաւ բժշկին խնդրանացը, որ կըսէր թէ բաց օդէ զատ ուրիշ ազդու դեղ մը չկայ: Մարօնչէ Աիի համար, և խորհուրդ կուտար որ հնար եղածին շափ քիչ մնալու էր սենեկին մէջ:

Սա ալ իբրև անոր սենեկակից, և մարմնոյս մէջ ալ հիւթային անբարեխառնութիւն մը ունենալով՝ նոյն արտօնութիւնը ես ալ վայելցի:

Արչափ ժամանակ որ հեմ ելաւ տեղերնիս ուրիշ մարդ չէր գտնուեր՝ դուրսը կը կենայինք, այսինքն արևուն ծագելէն կէս ժամ առաջ սկըսեալ երկու ժամու շափ. յետոյ նաշին ժամանակը՝ եթէ ուզէինք, և ապա իբիկուան դեմ ելերք ժամու շափ՝ մինչև արեուն մարը մտնելէն ետև այս ալ հասարակ օրերը: Բսկ տօն օրերը՝ որովհետև ուրիշները չէին կրնար պարտիլ, առաւօտէն մինչև իրիկուն դուրսը կը կենայինք՝ բաց ի նաշի ժամանակէն:

Աւրիշ տարաբաղդ մ'ալ՝ որ եօթանասուն տարեկանի շափ կար և առաջութիւնը բողորովին խանգարած էր, մեզ ընկեր տրուեցաւ՝ յուսալով որ բաց օդն անոր ալ կրնար օգտակար ըլլալ։ Այս անձն էր Քօսթանթինօ Մունարի, սիրուն ծերունի մը, գրականութեան ու փիլիսոփայութեան սիրահար, որուն ընկերակցութիւնը շատ հաճոյ եղաւ մեզ։

Պատժոյս սկզբնաւորութիւնը՝ ոչ թէ ձերբակալ ըլլալուս՝ այլ դատաւարատութեանս թուականէն հաշուելով, եօթն ու կէս տարին 1829 յուլիս ամսոյն առաջին օրերը կը լրանար՝ եթէ կայսեր ստորագրութեան ժամանակէն հաշիւ ըլլուէր, կամ օգոստոս 22 ին կը լրանար՝ եթէ դատաւճեռին հրատարակութենէն համրուէր։

Բայց յուլիան ու օգոստոսն ալ անցաւ, և ամեն յոյս մարեցաւ։

Մինչեւ այն ժամանակ Մարօնչէլլի Մունարի և ես՝ մերթ ընդ մերթ յոյս կընէինք տեսնելու զաշխարհ, մեր սիրելի Բատլիան, մեր ծնողքն ու ընտանիքը, և այս յոյսը՝ կարօտով գլծով և սիրով լի խօսակցութեանց նիւթ մ'էր մեզ համար։

Երբոր տեսանք որ օգոստոսը սեպտեմբերը և բոլոր տարին անցաւ, ուլ աշխարհիս վրայ մեր փոխադարձ բարեկամութեան անայլաբան լի շարունակութենէն և մեր երկարատե երաշխեպիւն

ճնացորդն արժանապէս լրացնելու համար Աստուծոյ օժանդակութենէն զատ բնաւ արիշ բան ճը չյուսալու վարժեցանք :

Ահ, բարեկամութիւնն ու կրօնքը երկու անկըշտելի բարիք են, որք մինչև անգամ ազատութեան յոյսը կորսնցնող բանտարկելոց ալ ժամ երբ կը գեղաշարդեն : Աստուած հշմարտիւ տառապելոց հետ է, այն տառապելոց՝ որ գինքը կը սիրեն :



**Գ Լ Ա Ն Ի Ս Յ Ք .**

Աիլլայի մեռնելէն ետեւ, Հ. Յասրայիչ Եսթրակտանն ձեռնադրուելով, անոր տեղ խոստովանահայր կարգեցաւ Մորավիացի Հ. Աւրուա քահանայն՝ որ Աոր կտակարանի դասատու էր Արիւնի մէջ, և Աիէննայի հոգևորական բարձրագոյն գալրտղէն ելած էր :

Այս գալրտղը միաբանական ուխտ մ'էր մեծանուն Հ. Յրինթէն հաստատուած, որ այն ժամանակ արքունեաց խոստովանահայր էր Այս աւխտին անդամներն ամենն ալ քահանայ են, որք արդէն սաստուածարանութեան զամուսներն

յաջորդութեամբ աւարտելէ կտես' հոն կը մտնեն  
 և ծայրագոյն հմտութիւն ստանալու կգրադին'  
 խիստ հրահանգներու ներքե : Հիմնադրին դի-  
 տաւորութիւնն սքանչելի էր : Ուզեր էր այնպի-  
 սի վարժոց մը հաստատել , որ իբրև անսպաս  
 ադրիւր մը՝ զօրաւոր և ճշմարիտ հմտութիւն  
 ծաւալէր Գերմանիոյ կաթողիկէ կղերին մէջ , և  
 այս դիտաւորութիւնն ընդհանրապէս կը կատա-  
 րուի :

Ուրպա՛ Պրիւն նստելուն համար՝ կրնար Բաւ-  
 լոնիէէն աւելի ժամանակ ունենալ մեզ նուիրե-  
 լու : Հ . Մկրտիչ ինչ որ եղեր էր մեզ համար՝  
 Ուրպա ալ նոյնն (եղաւ) միայն թէ չէր կրնար  
 անոր պէս գրքեր փոխ տալ մեզ : Շատ անգամ  
 երկար խօսակցութիւններ հետը կընէինք խիստ  
 օգտակար , զոնէ իմ կրօնական համոզմանցս հա-  
 մեմատ այնպէս կը թուէր ինձ , և մեծ մխի-  
 թարութիւն կը քաղէի այն խօսակցութիւն-  
 ներէն :

1829ին հիւանդացաւ . յետոյ նոր սրտախօսներ  
 վրան առնելով՝ չկրցաւ մեր քով զարը շարու-  
 նակել : Այս բանը մեզ շատ տրտմեցուց , բայց  
 մեր բաղդէն , Ուրպայի յաջորդեց Զիարք փոխա-  
 նորդը՝ որ հմտաւ ու նշանաւոր քահանայ մ'էր :

Մեզ խոստովանանայր կարգուած բոլոր գեր-  
 մանացի քահանայներուն մէջ Հակոսանք բնաւ  
 չար մարդ մը , Հակոսանք մէկը (և խիստ դիւրին

ալ է հանչել) որ քաղաքականութեան գործիք  
 ըլլալ ուզէր: Ընդհակառակն ամենն ալ ընդարձակ  
 գիտութիւն կատարեալ հաւատք և խորին փիլի-  
 սոփայութիւն ունեցող անձինք էին: Ահ, սրչափ  
 յարգելի ևն եկեղեցւոյ այսպիսի պաշտօնեայնէրը:

Այս հանչած մէկ քանի քահանայներս խիստ  
 բարի համարում մ'ազդեցին ինձ զերմանացի  
 կղերին վրայ:

Հ. Չխար ալ նոյնալէս երկար կը խօսակցէր  
 մեզ հետ իր օրինակը՝ վիշտերս զուարթութեամբ  
 տանելու զիս կը կրթէր: Շարունակ կը տառա-  
 պէր սելոայի կոկորդի և ականջի ցաւով, բայց  
 ժպտաւ երբէք չէր սակսէր շրթունքներուն վը-  
 րայէն:

Սակայն բաց օդն անզգալարար անհետ ըրաւ  
 սկորրիտի բիծերը Մարօնչէլլիի մարմնոյն վը-  
 րայէն, և Մունարի ու Էս ալ շաւաղոյն վիճակի  
 մէջ էինք:

Ք Ա Ո Ւ Ս Ա

Օգոստոսի տասնչին օրը ծագեցաւ: Տասն տարի  
 էր սր ազատութիւնս կորուսեր էի, և ութ տարի  
 ու կէս էր որ խիստ բանտարկութիւն կը կրէի:

Վիրակի օր մ'էր, ուրիշ տօն օրերու պէս մեր  
 սովորական պարտելու տեղը գացինք: Մեզ շրջ-  
 քառասունք որմին վրայէն անգամ մ'ալ դիտեցինք  
 բերդին ստորուտը տարածուած դաշտը և գերեզ-  
 մանատունը՝ ուր Օրօպօնի և Վիլլա խաղաղու-  
 թեամբ կը ննջէին, և խօսեցանք այն հանգստու-  
 թեան վրայ որ օր մը մեր սակերքն ալ պիտի  
 գտնէին հոն նստանք մեր սովորական նստարու-  
 նին վրայ՝ սարսելու որ խեղճ դատապարտեալ-  
 ները պատարագի երթան, սրն որ մերինէն ա-  
 ռագ կը կատարուէր: Ասոնց ալ տեղն այն փոք-  
 րիկ աղօթարանն էր՝ ուր մեք կերթայինք յա-  
 ջորդ պատարագին ներկայ գտնուելու: Մեր  
 պարտելու տեղին կից էր:

Չերմանիոյ մէջ ընդհանուր սովորութիւն է,  
 որ պատարագի ժամանակ ժողովուրդը բամկա-  
 կան լեզուով կ'երգէ: Սէ որովհետեւ Աւստրիոյ  
 կայսրութիւնը Չերմանացիներէ ու Սքլավոններէ  
 խառն երկիր մ'է, և Սքլավերկի բանտերուն  
 մէջ գտնուող դատապարտեալներն ալ այս երկու  
 ցեղերուն մէկէն կամ միւսէն են, երգերը մէկ  
 կիրակի կամ տօնի օրը գերմաներէն՝ և միւս կի-  
 րակի կամ տօնի օրը սքլավոններէն կերգուին:  
 Նմանապէս ամեն կիրակի կամ տօնի օր երկու  
 լեզուով ալ քարոզ կը արուի: Մեզ համար խիստ  
 բազմր էր լսել այն երգերն և անոնց ձայնակցող  
 երգեհոնը:



Վանայք ալ կերգէին, և ասոնց մէջ այնպիսի-  
ներ կային՝ որոց ձայնը խիստ սրտաշարժ էր :  
Յղկելիները, մէկ քանին դեռ մանկամարդ էին :  
Տարփանքը, նախանձութիւնը, շար օրինակը,  
զանոնք և զեռնագործութեան առաջնորդեր էին :  
Նորէն լսեցի անոնց սրտարուխ և գողարիկ  
աւաչը՝ որ հոգւոյս մէջ կը հնչէր երբոր Սուրբ,  
Սուրբ, Սուրբ կը կարդային : Ասած ժամանակս  
նորէն արտասուեցի :

Ժամը տասնին կանայք զուրս ելան գացին և  
մեր կարգն եկաւ. պատարագի երթալու : Նորէն  
անգամ մ'ալ տեսայ մեր տարարադրութեան ըն-  
կերները՝ որ երգեհոնի բեմին վրայ կեցած պա-  
տարագ կը լսէին : Մեզնէ խաղխամով մը միայն  
զատուած էին, ամենն ալ դեղնած, ծիւրած, ծըն-  
գած և հազիւ շղթաներնին կրելու կարող :

Պատարագէն ետե սենեակնիս դարձանք : Քա-  
ռորդ մ'ետքը հաշ բերին մեզ : Սրբոր սեղան-  
նիս կը պատրաստէինք, որ էր փոքրիկ տախ-  
տակ մը դնել մեր խշտեակին վրայ և փայտէ  
դրգալնիս առնուլ, բանտին երկրորդ վերատե-  
սուչը Պ. Աէկրաթ ներս մտաւ :

— Եստ կը ցաւիմ ձեր հաշն անհանգիստ ընե-  
լուս վրայ, ըսաւ, բայց հաճեցէք հետս գալու :  
Ոստիկանութեան Պ. տնօրէնը հոս մօտի սենե-  
ակն է : —

Եւ որովհետեւ օստիկանութեան տնօրէնը սովո-

քարար զժպնի պատճառներով կուգար, այսինքն  
խուզարկութիւններ կամ հարցափորձեր ընելու,  
ուստի մեծ դժգոհութեամբ Պ. Վէկրասթի հետ  
ունկնորութեան սենեակը գացինք:

Հոն գտանք սատիկանու թեան տնօրէնն և բան-  
տին վերատուչը: Առաջինը սովորականէն աւելի  
յարգանօք մեզ ողջունեց:

Թուղթ մ'առաւ ձեռքը, և ընդհատեալ խօսքե-  
րով ըսաւ, վախնալով անշուշտ որ և թէ յստակ  
խօսելու ըլլար, մէկէն ի մէկ սոստիկ այլայլու  
թիւն մը կրնար պատճառել մեզ:

— Պարոննե՛ր . . . բերկրութեամբ սրտի . . .  
պատիւ անձին կը համարիմ . . . իմացընել ձեզ  
թէ Վ. կայսրը . . . շնորհ մ'ալ ըրաւ:

Նւ կը վարանէր ըսելու ինչ կերպ շնորհ ըլլա-  
լը: Վարձեցինք թէ պատիժնիս մեզմացընելու  
տնօրէնութիւն մ'եղեր էր, այսինքն աշխա-  
տութեան ձանձրութենէն ազատ ըլլալու կամ  
քանի մը զիջք ստանալու և կամ նուազ նոզկալի  
կերակուրնէր մեզ արուելու:

— Բայց մի թէ չէ՞ք հասկընար, աւելցուց ար-  
նօրէնը:

— Այ, պարոն, բարեհաճեցէք մեզ հասկըցնե-  
լու թէ ինչ կերպ շնորհի վրայ է խօսքը:

— Զեր երկուքին ազատութեանը վրայ է, և  
ուրիշ մէկումը՝ որ հիմա պիտի համբուրէք:

Ար թուի թէ այս լուրին վրայ մեծ ուրախու-

Թիւն պէտք էր յայտնէինք: Բայց մեր մտածու-  
թիւնն իսկոյն մեր ծնորդացն ու ընտանեաց վրայ  
դարձաւ, որոցմէ երկար ժամանակէ ի վեր  
լուր մը չունէինք: Պատի կրնայինք զանոնք աշ-  
խարհի վրայ գտնել: Այս կասկածն այնպէս բուռն  
կերպով ներկայացաւ մտքերնուս, որ ազատու-  
թեան լուրէն զգալիք բերկրու թիւննիս բոլորո-  
վին ոչնչացաւ:

— Համբ էք, ինչ էք, ըսաւ ոստիկանութեան  
տնօրէնը. ես կարգէ դուրս ուրախութիւն մը  
կ'սպասէի ձեզնէ:

— Աաղաչեմ, ըսի, որ մեր շնորհակալութիւնը  
հաղորդէք կայսերո Բայց եթէ մեր ընտանեացը  
վրայ լուր մը չարուի մեզ, անհնար է որ չվախ-  
նանք թէ մեր ամենասիրելիներուն մէջ կորու-  
սածներ ունինք: Այս անստուգութիւնը մեզ  
կ'ընկճէ՝ մինչև անգամ այս վայրկեանիս որ մեծ  
ուրախութիւն բերելու էր մեզ:

Ասոր վրայ՝ ոստիկանութեան տնօրէնը Մա-  
րօնչէլլիի նամակ մը տուաւ՝ եղբորմէն գրուած,  
որ մխիթարեց զայն: Ինձ ալ ըսաւ թէ ընտա-  
նիքէս նամակ չկար. ասով կասկածի մէջ ինկայ  
թէ դժբաղդութիւն մը համդիպած ըլլալու էր  
ընտանեացս:

— Դարձէք սենեակնիդ, ըսաւ, և շատ չանցած  
ձեր բով զրկեմ այն անձը որ ձեզ հետ ազա-  
տութիւն ստացած է: —

Գացինք սենեակնիս, և անձկալից սարսեցինք  
մեր ազատակցին: Յանկալի էր մեզ որ մեր ան-  
մեն կարանակիցներն ալ ազատութիւն գտած  
ըլլային, բայց մէկէն աւելի չէր: Տայր Աստուած  
որ խեղճ Մունարին ըլլար, սա ըլլար, նա ըլ-  
լար, կըսէինք, և մէկը չկար որուն համար չըղ-  
ձանայինք:

Վերջապէս դուռը բացուեցաւ, և տեսներ որ  
Պ. Անտրէա Թօնէլին էր:


Համբուրեցինք իրար: Ճաշերնիս չէինք կըր-  
նար ուտել:

Մինչև իրիկուն խօսակցեցանք, կարեկից ըլ-  
լալով մեզնէ ետքը մնացած բարեկամաց լիճակին:

Արևուն մտած ժամանակ ոտիկանութեան  
տնօրէնն եկաւ այն թշուառութեան վայրէն մեզ  
հանելու: Սրտերնիս կը հեծէր մեր այնչափ սի-  
րելի բարեկամաց բանտերուն առջևէն անցած  
ժամանակնիս, զորս չէինք կրնար հետերնիս  
աանիլ: Ո՞վ գիտէ տակաւին որչափ ժամանակ  
հոն պիտի տառապէին: Քանի՞ն արդեօք երկարա-  
տանջ մահուան մ'որս պիտի ըլլային հոն:

Բարարանջիւրիս վրայ մէկ մէկ զինուորի վե-  
րարկու ձգեցին, և զլուխնիս ալ մէկ մէկ զլխարկ  
դրին, և այսպէս դատապարտեալի հագուստով  
բայց շղթայազերծ վար իջուցին մեզ Սբիլ-  
պէրկի ազատակից բլուրէն, և քաղաքին ոտի-  
կանութեան բանտը տարին:

Կռանի զիչերասրայծառ լոյս մը կար: Փողոցները, տուները և դէմերնիս ելած մարդիկը խիստ նորանշան և քաղցր կերեւէին ինձ՝ այնպիսի տեսարան մը շատ տարիներէ ի վեր տեսած չըլլալուս պատճառաւ:



**Ք Ա Ո Ւ Ս Ղ Ա**

Ոստիկանութեան բանտին մէջ կայսերական զործակալի մը գալուն սպասեցինք, որ Վիլենայէն պիտի գար ու մեզ Բիէմոնթէի սահմանազրուիսը տանէր: Մեր առջի զգեստներն ու կրտաւիքը փաճառուած ըլլալով, այս սպասման միջոցին նոր զգեստ և կրտաւիք հայթայթեցինք և բանտի հագուատը ձգեցինք:

Հինգ օրէն կայսերական զործակալն եկաւ և ոստիկանութեան տնօրէնը մեզ անոր յանձնեց: Միանգամայն անոր յանձնեց մեր Սրիբալէրկ գացած ստեն քովերնիս գանուած ստակը և մեր փաճառուած հանդերձներուն ու գրքերուն զինը, որ ետքը մեզ արուեցան երբոր սահմանազրուիսն հասանք:

Մեր ճանապարհորդութեան ծախքը կայսեր

վրայ էր, և բան մը չխնայուեցաւ մեր հանգիստ  
ուղեորու թեանը համար :

Աայսե րական գործուկայն էր՝ ոստիկանու թեան  
պաշտօնատան քարտուղարներէն Պօ Աօն Նօէ,  
բարեկիրթ և ազնուարարոյ անձ մը: Մինչև վեր-  
ջը խորին յարգանօք և ակնածու թեամբ վարուե-  
ցաւ մեզ հետ :

Պրիւնէն մեկնած ժամանակս շնչառութեան  
սաստիկ դժուարութիւն ունէի: Ասուքին ցնցումէն  
հիւանդութիւնս աւելի սաստկացաւ, այնպէս որ  
իրիկունքը զարհուրելի կերպով կը հեայի, և կը  
վախցուէր որ վայրկեանէ վայրկեան կը խզուիմ:  
Ասկէց զստ բոլոր գիշերը տապալագին տենդ մը  
ունեցայ, և հետևեալ առաւօտուն գործակալը չէր  
գիտեր թէ պիտի կրնայի ճանապարհորդութիւ-  
նըս շարունակել մինչև Աիէննա: Ըսի իրեն թէ  
կրնամ, և ճամբայ ելանք: Յուսա ուժգնութիւնը  
վերջին աստիճան էր չէի կրնար՝ ոչ ուտել, ոչ  
խմել և ոչ խօսիլ:

Աիէննա հասայ կիսամեռ: Մեզի լաւ սենեակ  
մը տուին ոստիկանութեան պաշտօնատունը, և  
զիս անկողին դրին: Բժիշկ մը կանչուեցաւ, և  
արիւն առնուեցաւ ինէ: Ասոր վրայ քիչ մը հան-  
գրատացայ: Աւթ օր բացարձակ պահք բռնելով և  
միայն խաշած մատանետունկի (տիժիթուլ) ջուր  
խմելով անցուցի և բժշկեցայ: Բժիշկս էր Պ.  
Մինճէր, որ սիրալիր խնամք մը տարաւ ինձ:

Մեծ անհամբերութեամբ կուզէի նանբայել-  
 նել, մանաւանդ որ Փարիզի մէջ ծագած յեղափո-  
 խութեան լուրը մինչև մեր ակամօզը հասեր էր :  
 Կայսրը նոյն իսկ յեղափոխութեան ծագած  
 օրը մեր ազատութեան հրովարտակն ստորա-  
 գրեր էր : Անշուշտ հիմա ետ չէր առնել տուած  
 հրովարտակը, բայց հաւանական ալ էր որ Փար-  
 իզի յեղափոխութիւնը բոլոր Երուսայի ազդե-  
 ցութիւն ընելով՝ Բուալիոյ մէջ ալ յեղափոխական  
 շարժումներ կատարածուէր, և հետևաբար Աւստ-  
 րիոյ կառավարութիւնը չուզէր այն միջոցին  
 մեզ թողուլ որ հայրենիքն իս դառնանք : Թէպէտ  
 համոզուած էինք որ մեզ նորէն Սրիլոկերկ չէին  
 դարձունել, բայց կը վախնայինք որ մեզ Բուա-  
 լիայէն հեռու քաղաք մ'աքսորելու կը թելագ-  
 րէին կայսրը :

Թէպէտ և հիւանդութիւնս անցած չէր, բայց  
 ես ինքզինքս լաւցած ցուցընելով կաղաչէի Պ.  
 Վօն Նօէ որ մեր երթալուն հրամանն ստանայ :  
 Նոյն միջոցին կը փափաքէի երթալ ներկայանալ  
 Թուրինօի արքունեաց կողմէն Վիէննա զեսպան  
 նստող Պ. Բրալօրանօ կոմսին, որ մեծ բարերա-  
 րութիւններ ըրեր էր ինձ : Ազնուական յարու-  
 տեութեամբ աշխատել էր ազատութիւնս ձեռք  
 բերելու : Բայց մարդու հետ տեսնուիլն արգիլ-  
 ուած ըլլալով ինձ, զեսպանին համար ալ բացու-  
 տութիւն չկրցաւ ըլլալ :

Հազիւ ասպարիներ էի, մարդասիրտերս կատր  
 մը դրկոնեցաւ մեզ քանի մ'աւար համար, թող  
 սրտեւոյ որ Վիեննայի մէջ քիչ մը պարտինք :  
 Գործակալին հրամանե եղեր էր որ մեզ ընկերա-  
 նայ և չթողու մէկու մը հետ խօսիլ : Ս. Ստեփան-  
 նոսի զեզեցիկ և կեղեցին գայինք տեսանք, քա-  
 դարին զմայլելի ճեմելիները, Լայխթէնշթէնի  
 մտակայ պարտէզը և Շեօնպրունի կայսերական  
 պարտէզը ստորեցանք :

Երբոր Շեօնպրունի գեղազուարճ ծառուղիներ-  
 րը կը պարտէինք, կայսրն և կատանցաւ, ցործա-  
 կար մեզ հետացուց հանկէ, վախնալով որ մեր  
 նիհար և գծուծ երկայթը զինքը կը տրամեցընէ :



**Գ Լ Ո Ւ Ս Ղ Ք**

Վերջապէս համբայ կյանք Վիեննայէն և  
 կրցայ մինչև Պրուքինքզինքս բռնել : Հօն շրն-  
 չարգելու թիւնս նորէն սաստկացաւ և բիշկ  
 բերուեցաւ : Պ. Ժուլիանն անուստով հարտար



բժիշկ մէք : Արիւն առաւ ինձմէ, զիս անկողին  
զրաւ, և մտտանեւտու նկը շարունակեց : Երկու  
օր և արքը նարեկն խնդրեցի որ համբայնիս շարու-  
նակենք :

Անցանք Աւստրիոյ և Սթիւրիոյ գաւառները և  
անիւսա Քարինթիոս հասանք : Բայց Քրակեն-  
փուրթի մօտ Ծէլաքիւրխէն անուն զեղ մը հաս-  
նելնուս՝ հրաման եկաւ որ հոն մնանք մինչև որ  
նոր հրաման մը գայնաւ արտաքին մէքոյ մը :

Ընթերցողիս կը թողուամ մտածել որչափ արի-  
տեղնիս կոտորեց այս դէպքը : Յո այն ցառն ալ  
ունէի, որ երկու ընկերներս իմ երեւէա այս  
մեծ մնասը կը կրէին : Վասն զի իմ շարաքատա  
հիւանդաւ թեյանս սրանտառաւ էր որ անանք ալ  
էին կը շէր հասիլենի քնին ժամանել :

Ինչ օր Ծէլաքիւրխէն կեցանք, և այն հինգ  
առուր մէջ գործակալն ում են շանք ըրաւ մեզ  
զբօսընելու համար : Ան դճ կտտակերգակներու  
փոքրիկ թատրոն մը կար, հոն տարաւ մեզ :  
Արիւշ օր մ'ալ որսով զբօսուց մեզ : Արսորդնե-  
րն էին մէք օթեանին տէրը, քանի մը տեղացի  
երկտասարդներ և զեղեցիկ անտառի մը տէրը :  
Մեք ալ յարմար տեղ մը կենալով այն տեսարա-  
նը կը վայելէինք :

Աերջասպէս Վիէննայէն սուրհանդակ մ'եկաւ  
հրաման բերելով գործակալին որ մեզ տեղեր-  
նիս տանի : Սյո քաղցը չուրը զիս և ընկերներս

որ քախառ թեամբ չցուց . բայց միանգամայն ևս  
 կը գողայի տեսնելով որ ճախող գաղանիք մը  
 յայտնուելու ժամանակը կը մերձենար ինձ հա-  
 մար , այն ժամը որ ինձ պիտի իմացընէր թէ  
 հայրս կամ մայրս և կամ ո՞վ գիտէ ուրիշ որ սի-  
 բեշինէրս մեռած էին :

Աւտարու թիւնս կանէր քանի որ Բուսալիոյ կը  
 հետեւնայինք :

Սյն կողմէն Բուսալիա մտնելը գուարեալի չէ :  
 Գերմանիոյ անհասպարար դաշտերէն Բուսալիոյ  
 դաշտերն իջնելու համար ամուլ ու արաարսիմ  
 ճանրայնութե կանցնուի . այնպէս որ մեր թե-  
 րակողին զեռ տեսած չեղող ճանապարհորդներն  
 անկէց անցած ժամանակ կը ծիծաղին Բուսալիոյ  
 գեղեցիկ թեւն մասին ունեցած գաղափարներն  
 վրայ և կը կարծեն թէ գայն չստիպանց գո-  
 վողներէն խաբուած են :

Երկրին վայրենի տեսքն ալ ավարու թիւնս կա-  
 լելցընէր : Տեսնել մեր կրկինքը , մարդկային  
 դէմքերու հանդիպիլ որք հիաստահանաց ձեր  
 շունէին , ամեն շրթոնքներէ մեր թեզուին խօս-  
 քերը լսել , սասնք գիւ կը խանդադատեցնէին .  
 բայց այս խանդադատանքը գիւ ամելի կը տրտ-  
 մեցընէր քան թէ կուրախացնէր : Արչաի ան-  
 գամ կառքին մէջ ձեռքս երեսս կը ծածկէի  
 ննդել ձեռքընելով և կուլայի . Արչաի գիշերներ  
 կանցումէի անանց աչքս փակելու , սաստիկ



... անկողնի մեջ զարթոնալով և հարկազանք ընդհանրապես  
... անկողնի մեջ զարթոնալով և հարկազանք ընդհանրապես

**Գ Լ Ո Ւ Ս Չ Գ**

... անկողնի մեջ զարթոնալով և հարկազանք ընդհանրապես  
... անկողնի մեջ զարթոնալով և հարկազանք ընդհանրապես


Բօրտեհօնէ, Բօնէլիանօ, Օսրէտալէթթօ,  
Վիշէնճա, Աէրօնա, Մանթօփա շատ բաներ կը  
յիշեցնէին ինձ : Առաջինին մէջ ծնած էր տա-  
ղանդաւոր պատանի մը՝ որ իմ բարեկամս Եղեբ  
էր և Ռուսիոյ պատերազմներուն մէջ մեռեր էր :  
Բօնէլիանօ այն բազարն էր որ Օւնճէ տար-  
տեր էր՝ Կապարաց բանտարաններուն խօսքին  
նայելով : Օսրէտալէթթօի մէջ ամուսնացեր էի  
հրէշտակազեղ և դժբաղդ օրիորդ մը, որ հիմա  
մեռած է, զոր երկար ժամանակ յարգեր էի և  
տակաւին կը յարգէի : Աէրջապէս այս ամէն  
տեղերը քիչ շատ սիրելի յիշատակներ կը ձգե-  
ին միտքս, մանաւանդ Մանթօփա : Արթուէր  
ինձ որ դեռ երէկ էր որ հոն գացեր էի Կօտօփի-  
քօի հետ 1815 ին. երէկ էր որ հոն գացեր էի  
Բօրքօի հետ 1820 ին : Նոյն փողոցները, նոյն  
հրապարակները, նոյն դարատները, և այնչափ  
փոփոխութիւն ընկերութեան մէջ, այնչափ ծո-  
նօթ անձինք մեռած, այնչափ ուրիշ ունձինք

աքաղաղած . երիտասարդներու . սերունդ մը որ  
 աղայ տեսեր էի : Եւ չկրնա՛լ վազել երթալ այս  
 կամ այն տունը , չկրնա՛լ մէկու մը հետ խօսիլ  
 այն կամ այն անձին վրայ : Եւ զայս անգամ  
 Եւ ի լրումն թող թեանս , Մանթօղայի մէջ  
 պիտի բաժնուէի Մարտնչէլլիին : Երկուքս ալ  
 տմեկանախոր զիշեր մ'անցուցինք : Դատարար-  
 տութեան վճար շտապ վրայ կողմ մտրոյ մը  
 պէս վրդոված էի : Եւ զայս անգամ իմ անգամ  
 Առաջօրէն երեսն լուսնի , Ահայելին նայե-  
 ցայ տեսնելու համար թէ լուսնը ըլլա՞ր կրնա՞ր  
 հասկըցա՞իք Արցածիս շուրջ գաւարի եւ հանդարտ  
 դէմք մ'առի : Համառօտ աղօթք մ'ըրի Աստու-  
 ծոյ , բայց ճշմարիտը խօսելով միտքս գրազած  
 էր . լսելով Մարտնչէլլիի ձայնը , որ իր նկրուկ-  
 ները շարժելով ծառայներուն կը խօսէր , գացի  
 թեկերուն մէջ ինկայ : Երկուքս ալ քաշասիրտ կը  
 թուէինք մեր բաժանմանը վրայ : Ամուր  
 ձայնով մը կը խօսէինք , թէ և քիչ մը խռոված :  
 Աստիկանու թեան զինուորաց պաշտօնակալը՝ որ  
 զայն Առնանիայի սահմանագլուխը պիտի տա-  
 նէր՝ եկաւ . պէտք էր երթալ : Հազիւ գիտէինք  
 մէկ մէկու ըսելիքն ինչ : Գրկաստանու թիւն մը ,  
 համբոյր մը , նորէն գրկաբխառնու թիւն : Աստքը  
 հարտաւ որ աչքիս առջևէն աներկոյթ կողու : Հոն  
 ինքզինքս կորուսած մտացի :

Դարձայ սենեակս , ծունգի վրայ եկայ :

դժբարեղ անդամակորոյսին հասնար աղօթեցի, և  
բարեկամէս բամբուելուս վրայ սկսայ լալ մ  
ճեծեծել:

Ետտ նշանաւոր մարդիկ հանջեցի, բայց Մա-  
րոնչէլլիի շափր բողբո ընկերասէր, անոր շափ-  
րարեկիրթ ու քաղաքաւար, անոր շափր հեղա-  
համբոյր մէկը շտեասայ, որ միշտ յիշեր թէ անու-  
քինու թիւն ընեբողամա ու թէ ան վեհանձնու թեան  
և ողջամիտ դատման անդու կիրաւու թեամբը  
կը կազմուի: Այլ իմ քաղամակայ վշտացս ըն-  
կեր, երկինք օրհնեն քեզ որք և գոնախ, և այն-  
պիսի բարեկամներ քեզ պարզեն: Եր ինձ շափ-  
րեզ սիրեն, և ինձմէ աւելի բարեսիրտ ըլլան:



**Ք Լ Ո Ւ Մ Զ Բ.**

Նայեառաջուն մէք աշխարհք ելանք Ման-  
թավայէն Պրեւշիա երթալու համար: Հոն ազնա  
թողուեցաւ իմ միւս կուրանակիցս Սնարէա Թո-  
նէլլի: Սյս տարաբարողը հոն իմացաւ իր մար-  
մեռնիլը, և իր յուսահատագին ողբերկն ձիրտս  
կարտուեցաւ ի վրէժն, սկսմէն շտեպով

Թէպէտ ե զիրտու հազարումէկ անձկու թիւն  
նեքոն հարակեղամ էր, ինչպէս որ իրաւունք  
այ տնէր ըլլալու, հետեւեալ պատմելիքս զիս  
քիչ մը ձիծագեցայ:

Պանդակին մէջ սեղանի մը վրայ թափրոնի ձա-  
նուցում մը կար, առի ու կարդացի, Ծրանչեւսա  
սա Տիւնիկի, թափրերգ, և այլն:

— Արո՞ւ շինածն է այս թափրերգը, ըսի սպա-  
սաւորին:

— Հեղինակն ու եղանակը շինողը շեմ գիշ  
տեքոն բայց վերջապէս սմ ենուն հանցած Ծրան-  
չեւսա սա Տիւնիկին է:

— Սմ ենուն հանչա՞ծը մի սխալ ըլլալու էր,  
եւ որ Գերմանիայէն կուգամ, ինչպէս կուզէք որ  
ձեր Ծրանչեւսաները հանչեմ:

Այս խօսքիս վրայ, սպասաւորը՝ որ բուն  
Պրեւշտացի մ'էր քիչ մը խրոխտադէմ, արհա-  
մարհատ գթու թեամբ մ'երեսս նայեցաւ:

— Ի՞նչպէս կուզեմ մի հոս երտուն ու վեց  
Ծրանչեւսայի խօսք չկայ, այլ միայն մէկ Ծրան-  
չեւսա սա Տիւնիկի մը, որ Սիրլիօ Բէլլիքօի շի-  
նած ողբերգութիւնն է: Հաս թափրերգի փոխած  
են գայն՝ քիչ շատ խանգարելով, բայց միշտ նոյն  
ողբերգութիւնն է:

— Ա՛, Սիրլիօ Բէլլիքօ՛, Կարծեմ որ այդ տնունը  
տեղ մը լսած եմ, այն խեղճատակը չէ՞ որ ա-  
կէց ու թէ կամ ինն տարի առաջ մանուտն և յետոյ

խիստ բանտարկու թեան դատադարտուեցաւ : »  
 Երանի թէ ըրած չըլլայի այս կատակը : Սարս-  
 սաւորը չորս կողմը նայեցաւ : յետոյ երսունու  
 երկու զեղեցիկ ակռաները կրետեղով երկու նա-  
 յեցաւ , եւ թէ տանաձայն չլսէր , անշուշտ եւ՛ որ  
 զիս կը կռփէր :

Զգեց գնաց « խեղկասնկը » մամաւորի : Բայց իմ  
 մեկնելէն առաջ խնայաւ ուլ ըլլալն : Այլ չէր կըր-  
 նար՝ ոչ բան հարցնել , ոչ պատասխանել , ոչ  
 գրել , ոչ բալել : Այլ միայն երեսու կը նայէր ,  
 ձեռքերը կը շփէր , եւ առանց պատեհաւի ամե-  
 նուն Այն Պարուն , Այն Պարուն , կըսէր՝ փունզտա-  
 ցող մարդու մը պէս :

Երկու օր ետքը՝ սեպտ. 9ին՝ Միլան հասայ  
 գործակալին հետ Քաղաքին մօտեցած ժամանակ-  
 կըս , երբոր տեսայ գմբ թը , երբոր տնայալ Լօ-  
 բէ թ թօի ծառուղին որ իմ սովորական սիրելի տե-  
 մելիքս էր , երբոր արևելեան դռնէն ներս մտայ ,  
 հրապարակաւ հասայ , տուները , ապահարները ,  
 փողոցները տեսայ , ամենաքաղցր եւ միանգու-  
 մայն ամենատխտիւր զգացում մը կրեցի : այն է՝  
 մէկ կողմանէ բուն իզձ մը քանի մ'օր Միլան  
 կենայտու եւ տակաւին հոն մնացած բարեկամներս  
 տեսնելու , ողջագուրելու , միւս կողմանէ խո-  
 բունկ ցաւ մը կ'զգայի միաքս բերելով այն բա-  
 բեկամներս որ Սքիլդէրկ մնացեր էին , անոնք  
 որ օտար երկիրներու մէջ կը թափառէին եւ ու-




նոնք որ մեռեր էին Միանգամայն ջերմ շնորհա-  
կալութիւն մը կ'զգայի՝ բոլոր Միլանցոց ինձ  
ցուցած սէրը յիշելով, — և թեթեւ զայրոյթ մը  
կ'զգայի զիս զրպարտող քանի մ'անձանց դէմ՝ որ բ-  
խմ յարգանքս ու բարեկամութիւնս վայելէր էին:

Գացինք իջանք Պէլլա Վէնէժճիա պանդոկը:

Հոն քանի քանի անգամ բարեկամներու հետ  
խնճոյք ըրեր էի. հոն շատ տկանաւոր օտարադ-  
զիներու հետ տեսակցեր էի. հոն պատուական  
տիկին մը՝ հասկրնայով որ էթէ Միլան մտայի՝  
զիսուս փորձու թիւն մը պիտի գտր, շատ թան-  
խանձեր էր զիս որ հետք թորանա երթամ,  
բայց ևս մտիկ չէի ըրեր: Ա՛յ արտայայտ յիշա-  
տակը, ո՛վ բերկրութեամբ և վշտօք խտուն և  
երազախոյս անցելոյ մը յիշատակ:

Պանդոկին սպասաւորներն խնայանով ըլլաւու-  
շուտով լաքր տարածեցաւ, և իրիկուան դէմ  
շատ մարդիկ տեսայ որ հրապարակը կը կենա-  
յին և պանդոկին պատու հանձնէրն ի վեր կը նայե-  
ին: Տիկին մը՝ որ չեմ գիտեր ով էր՝ կը թուէր  
թէ զիս նանչեց, և երկու ձեռքը վեր վերցրնե-  
լով սղոյնեց:

Ո՞ր էին, ո՞նչ, Բորբոսի որդիքը, գառակներս  
ինչո՞ւ համար չտեսայ զանոնք:



## Գ Լ Ո Ւ Խ Ղ Ե .

Գործակալը զիս ուտիկանութեան պաշտօնա-  
րանը տարաւ վերստուսչին ներկայացնելու: Ար-  
չափ անցեալ վիշտեր միտքս եկան: Ահ, չեմ  
կրնար առանց խանդաղատելու յիշել քեզ, ով  
Մէլքիոր ձօյտ, բանափղ նեղ որմերուն մէջ եր-  
կայնքին ու լայնքին շուտ շուտ քալուած քդ, այն  
երկար ժամերը որ անշարժ կանցունէիր սեղա-  
նին առջև՝ ուր ազնիւ մտածու թիւններդ կը գրե-  
իր, թաշկինակովդ ինձ նշան տալդ, և երբոր հե-  
տքս նշանացի խօսակցիլդ արգիլուեցաւ՝ տխու-  
թեամբ ինձ նայիլդ: Եւ զերեզմանդ մտածեցի որ  
թերևս քեզ սիրողներուն շատին անձամօթ է,  
ինչպէս ինձ, և աղօթեցի Աստուծոյ քու հոգւոյդ  
հանգստեանը համար:

Յիշեցի նաև փոքրիկ համրը: Մագղաղիներն  
արտառու ճայներ, սրտիս բարասիւմունքը, անոր  
վրայ զգացած գութս, գոզ դրացիներս, ինքնակոչ  
Լուդովիկոս եօթնամեան ընտրողը, դժբաղդ դատա-  
պարտեալը որ նամակովս բռնուեցաւ և դառա-  
զանին ներքև արձակած լալագին ազադակն ա-  
կանջս հասաւ:

Այս և ուրիշ շատ յիշատակու թիւններ՝ տխուր  
երազներու պէս զիս կը ճնշէին, բայց ամենէն  
առելի այն երկու այցելութիւնները՝ որ տասն

տարի առաջ խեղճ հայրս եկեր բրեր էր ինձ այս  
բանտին մէջ : Ինչպէս բարի ծերունին ինքզինք  
կը խարէր յուսալով թէ քիչ ժամանակէն կրնա-  
յի թուրին՝ զառնար : Պիտի կրնար զխանար էր-  
բոր մտածէր թէ իր սրդին տասն տարի բանտի  
մէջ՝ և ինչպէս բանտի մէջ՝ թաղուած պիտի տես-  
նէր : Եւ այց երբոր այն պատիւ յոյսերը վարա-  
տած ըլլային, կարող պիտի ըլլար ինքը, կարող  
պիտի ըլլար մայրս, այնպիսի դառնակակիծ ա-  
ղետի մը գէ՛մ մաքրուելու : Պիտի կրնամ տակա-  
ւին երկուքն ալ տեսնել, մէկը տեսնել, և ո՞րը :  
Ո՞վ որտա՞տանջ և մշտանանորոգ կուսկած :  
Գրե՛ թէ հայրենի տանս դուռը հասեր է՞ի և դեռ  
չէ՞ի գիտեր թէ ծնողքս ո՞ղջ էին, ընտանիքէս  
մէկ հոգի մը ողջ մնացեր էր :  
Աստ ինտնու թեանս վն ըստե սու չը զիս քաղա-  
քաւարու թեամբ ընդունեց, և մտխամասկ զիս ու-  
րիշ տեղ պանելու թոյլ տուաւ որ Պեղաւ Վեհե՛ծ-  
ծիսս պանդոկը կենամ կայսե ըսկան գործակալին  
հետ : Եւ այց պատուիրեց որ մէկու մը չե ընամ :  
ասոր համար որոշեցի ետևելալ որը մեկնիլ Մի-  
լանէ՛ն : Միայն թոյլտու թիւն ստացայ Քիւ՛մնս  
թէ ի հիւպատոսը տեսնելու որպէս զի ծնողացս  
վրայ լոր մ'առնուի : Պիտի երթայի զայն տես-  
նելու, բայց տեսգէ բռնուելով և անկողին մտնե-  
լու հարկադրուելով՝ մարդ զրկեցի հիւպատո-  
սին աղանջելու որ ինք ինձ գայ : Եւ այսպէս յայն

Հանձնեցաւ զուստով ինձ զայլու, և նորչափի շնորհակալ և զայ իրեն:


Բարի լուրեր տուաւ ինձ հօրս և մեծ և զբօրս վրայ: Բայց մօրս, և ընկրորդ և զբօրս և երկու քերջըս վրայ անազարուն անասող զու թեան մը մէջ մնայի:

Ահա մը քաջալերուած, բայց ոչ ըստ բնականին, կուզէի հիշատակելն հետ խօսակցութիւնս երկարել: Չիմայեց ինձմէ իր մարդասիրական շնորհը, բայց վերջապէս պարտաւորեցաւ բովէս մեկնելու:

Երբօր մինակ մնացի, կուզէի լալ, բայց արտասուքս ընտեր էր: Բնչո՞ւ համար արդեօք երբեքն տրտմութիւնը զիս կը լացընէ, և երբեքն ալ (կրնամ ըսել շատ անգամ) երբոր կը թուի թէ արտասուք քաղցր մխիթարութիւն մը պիտի ըլլայ ինձ՝ լալ կուզեմ ու չեմ կրնար: Ահա տոհմիս լալ անհնարութիւնը անհոգ կը ծանրացընէր, սասանիկ գլխու ցաւ մ'ունէի:

Չուր ուզեցի Մթաւնալէրիէրէն: Այս անձը Աիէննայի սատիկանութեան համեմատ զիս որ մ'էր, որ գործակալին քով սպասուորի սրահածն կը կատարէր: Մեր չէր, բայց գիպուածն ուզեց որ ինձ զուր տուած ժամանակ ձեռքը դողդոջեց: Այս դողդոջումը Շիլլերը միտքս ձգեց, երբօր Արիպէրի հասնելուս առաջին օրը ջութին սափորը խորտաբար ուզեցի ու դողդոջելով ինձ տուաւ:

Տարօրինակ բան այս յիշատակու թիւնք միս-  
ներուն վրայ տեւնալով սրտիս սպասածը խոր-  
ասակեց և արտառքս թորիչ սկսաւ :



Գ Լ Ո Ւ Խ Զ Զ Զ .

Սեպտեմբեր 10 ին առաւօտուն ազնիս գործա-  
կալս ողջագութեցի և ճամբայ ելայ Նրար ամիս,  
մ'ի վեր միայն կը հանչէինք, բայց տրդէն հի-  
նաւորց բարեկամի մը պէս էր ինձ համար :  
Սիրար գեղեցկին ու բարւոյն զգացմամբ լի էր՝  
տաանց կեղծութեան թեան և տաանց արուեստա-  
կութեան . թէպէտ խորամանկ ըլլալու համար  
խելք ունէր, բայց կը սիրէր այն ազնիս պար-  
զութիւնը որ ուզիղ մարդոց վրայ կը տեսնուի :

Նանասարի որդու թեանս միջոցին իջեան ըրած  
տեղերնէս մէկուն մէջ մէկը գաղտնաբար ըսաւ  
ինձ. «Մի վստահիք այդ պահապան հրեշտակին .  
եթէ սե տեսակէն չըլլար, ձեզ չէին տար :

— Ծառ կը սխալիք, ըսի, բազ համոզուած  
եմ որ կը սխալիք :

— Ամենէն խորամանկները նոյն իսկ այն  
մարդիկն են որ ինքզինքնին կրնան խիտ պարզ  
երեցընել, ըսաւ :

— Եթէ այդպէս է, ալ մէկու մը առաքինութեանը հաւատարմ չէ:

— Ընկերութեան մէջ տեսակ մը պաշտօններ կան, ուր կատարեալ բարեվայելուչ ձևեր կը տեսնուին, բայց առաքինութիւն, երբէք, բնաւ երբէք:

Սյս խօսքին ուրիշ պատասխան չտուի, բայց միայն. — Զափազանցութիւն, սիրելի պարօն, շափազանցութիւն:

— Իմ այս դատումս ուղիղ հետեութիւն մ'է, բնաւ: Բայց նոյն միջոցին ուրիշ մարդեկաւ վերայ, և Ա. Ե. յանցի զգուշացիք հետեւորքիւն հանողներէնը յիշեցի:

Շատ մարդիկ այս սխալ և աննուէր տրամաբանութեամբ կը խորհրդածեն:

« Ես Ա. դրօշակին ետեւէն կերթամ, որ տարակոյս չունիմ թէ արդարութեան դրօշակն է: Գրացիս Բ. դրօշակին ետեւէն կերթայ, որ նոյնպէս տարակոյս չունիմ թէ անխրտութեան դրօշակն է, ուրեմն գրացիս շատ մարդ է: »

Ե՛հ, այդպէս չէ: Կատղի տրամաբաններ. ինչ դրօշակի ներքե ալ ըլլաք, այդպէս տմարդութեամբ մը խորհրդածէք: Յիշեցէք որ ձախող կարծիքէ մը համբայ ելնելով (և ուր տեղ կայ ընկերութիւն մը կամ անհատ մը որ ասանկներ չունենայ), և անողոքելի խտութեամբ մը հետեւութեանէ հետեւութիւն երթալով, ամենուն ալ


դիւրին է սա եզրակացու թեան հասնիլ. «Մեր  
չորսէն դատ՝ ուրիշ ամեն մարդիկ ողջ ողջ  
այրելու արժանի են ։ Եւ մինչև անգամ ե-  
թէ մեյի խիստ ընտրութիւն մ'ըլլուի, այն  
չորսին ալ ամեն մէկը պիտի ըսէ թէ «Ինձ-  
մէ զատ ամեն մարդ կենդանւոյն այրելու ար-  
ժանի են ։»

Այս սամկական խտտութիւնը տիրապէս հա-  
կառակ է փիլիսոփայութեան ։ Զաւիաւոր կաս-  
կածի մէջ խոնականութիւն կրնայ ըլլալ, բայց  
չափազանցին մէջ երբէք ։

Այս պահասպան հրեշտակիս համար ինձ եզած  
ազդարարութեան վրայ՝ տուտունէն աւելի մը-  
տադիր եղայ զործակալս ընկելու, և օր քան զօր  
համոզումս կը հաստատուէր անոր անխառն և  
ազնիւ բնաւորութեան վրայ ։

Քիչ շատ լաւ հարգմամբ որ և իցէ ընկերու-  
թեան մը մէջ, ընկերական ամեն պաշտօնները  
որ ընդհանուրին խղճմտանքէն ամօթապարտ  
չեն դատուիր, այն ամեն ընկերական պաշ-  
տօնները որ ազնուաբար հասարակաց բար-  
ւոյն նպատամատոյց ըլլալ կը խոտանան, և  
որոց խոտանման շատ մարդիկ կը հուստան,  
այն ամեն պաշտօնները՝ որոց մէջ համեատ մար-  
դիկ գտնուիր կարելի չէ առանց անտեղութեան  
ուրանալ, կրնան միշտ համեատ մարդիկնէրէ  
կատարուիլ ։

Տեղ մը կարդացեր եւ թէ Քուէյքըրը (\*) մը սաստիկ կը զարշէր զինուորներէն : Անգամ մը զինուոր մը տեսեր է որ Թամիզ գետը նետուելով՝ խղղուելու վրայ եղող դժբաղդ մը ազատեր է, ըսեր է ինքնիրեն. « Թէպէտ ես միշտ Քուէյքըր եմ և Քուէյքըր պիտի մնամ, բայց զինուորներն ալ բարի արարածներ են : »



### Ք Լ ՈՒ Ք Ղ Ե .

Սթունապէրկէր հետս եկաւ մինչև կառքը, որուն մէջ նստայ ոստիկանութեան զինուորացի պաշտօնակալի մը հետ՝ որ ինձ պահապան տրորուեր էր :

— Պարոն լաւ փաթ-թուեցէք վերարկուիդ մէջ, ըսաւ Սթունապէրկէր. զլուխնիդ լաւ ծածկեցէք, և ջանացէք որ հիւանդ չերթաք տուներնիդ : Թեթե պատճառով մը կրնաք պաղ տունուլ : Շատ կը ցաւիմ որ չեմ կրնար մինչև Թուրինօ հետերնիդ գալ ու ձեզ ծառայել :

(\*) Անգղիոյ մէջ տեսակ մը բողոքական աղանդաւորք, որ երեքականք կրսուին :



Այս խօսքերը սրտագին անկեղծութեամբ և խռոված ձայնով մ'ըսաւ և սեւեռաց՝

— Այսուհետեւ, Պարոն, թերևս բնաւ Քերմանացի մը չպիտի ունենաք քովերնիդ. թերևս մէկ մ'ալ չպիտի լսէք այն լեզուն զոր Բտալացիք խիստ խորթ կը գտնեն, և հաւանականաբար ալ փոյթերնիդ չպիտի ըլլայ: Այնչափ տառապանք կրեցիք գերմանացւոց մէջ, որ մեծ բազմանք մը չպիտի ունենաք մեզ յիշելու: Եւ սակայն ես, որու անունը շուտով պիտի մոռնանք, ես չպիտի դադրիմ, պարոն, ձեզ համար աղօթելէ:

— Ես ալ ձեզ համար, ըսի, ձեռքը վերջին անգամ սեղմելով:

Այս խեղճ մարդը տակաւին անգամ մ'ալ գոչեց. — Ողջոյն, բարի նանապարհ, երթանք բարով: Ասոնք եղան գերմաներէն լեզուով լսած վերջին խօսքերս, և խիստ քաղցր հնչեցին սկանզիս՝ իրրե իմ մայրենի լեզուիս խօսքերը:

Աստուծոյն կը սիրեմ իմ հայրենիքս, բայց ուրիշ ազգերն ալ չեմ ստեր: Քաղաքակրթութիւնը, հարստութիւնը, փառքը զանազան են այլ և այլ ազգաց մէջ. բայց ամենուն մէջ ալ հաւատարիմ հոգիներ կան մարդու բարձր կոչմանը, որ սիրելու արգահատելու և օգտակար ըլլալու վրայ կը կայանայ:

Հետս ընկերացող պաշտօնակալը պատմեց ինձ թէ իմ դժբաղդ Քօնֆալօնիէրի բարեկամս ձեր-

բազմալ ընողներէն մէկն ալ ինքն էր: Պատմեց  
ինձ ինչպէս բարեկամս փախչելու փորձ ըրեր  
էր, ինչպէս վրիպեր էր, ինչպէս հարկ եղեր էր  
իր կնոջը թեւրուն մէջէն քաշել առնուլ, ինչպէս  
Քոնֆալթնիէրի և իր կինը սրտայոյզ բայց ազնուա-  
կան համբերատարութեամբ իրենց դժբաղդու-  
թիւնը կրեր էին:

Գլուխս տենդէ կը բորբոքէր քանի որ կը լսէի  
այս ցաւազին պատմութիւնը, և սիրտս երկա-  
թէ ձեռքով մը կը սեղմուէր:

Պատմիչը՝ որ բարեմիտ և վստահ մարդ մ'էր,  
չէր նշմարեր, որ թէ և ո՛ր մը չունէի իրեն դէմ,  
բայց չէի կրնար առանց սոսկալու նայիլ այն  
ձեռքերուն որ բարեկամս կալ և կապ ըրեր էին:

Պոֆֆալթորա հասնելուս՝ նախանձաշ ըրաւ  
բայց ևս հիւանդ ըլլալուս համար բան մը չկերայ:

Ժամանակաւ, շատ տարիներ կան, երբոր  
Քորրօ կոմսին որդւոցը հետ Ս. Երլունօ գեղը կեր-  
թայի պտըտելու, երբեմն կը սխալուէր որ սը-  
տայտքս մինչև Պոֆֆալթորա կը հասցընէի թիշի-  
նօի եզերքէն:

Ուրախ եղոյ երբոր գետին վրայի գեղեցիկ  
կամուրջն ստարտած տեսայ, որուն նիւ թերը ցան  
և ցիր տեսեր էի գետին Արմալարտեան եզերքը,  
և հասարակաց հետ ևս ալ կարծիք ըրեր էի թէ  
այս շինութիւնը շախտի ըլլալու Մայտացի ուրա-  
խութեամբ երբոր գետին վրայէն անցայ և Քիւէ-

մօնթէի հողը կոխեցի: Ա՛հ, թէ և մանն ազգե-  
րը կը սիրեմ, և Ետալիոյ սիրահարն ևմ, բայց  
զիտէ Աստուած որ Ետալիոյ սրիշ մանն էր-  
կիրներէն քաղցր է ինձ Բիէմօնթէի անունը, որ  
նախանեացս երկիրն է:

Պ Ա Ո Ւ Ս Ղ Ը .

Պուֆֆալօրայի զիմացն է Սան Մարթինօ:  
Հոն Լոմպարտացի պաշտօնակալը քանի մը խօսք  
բառ Բիէմօնթէցի հրացանատարներուն: յետոյ  
զիս ազգունեց և նորէն կասեց զինն միւս կողմն  
անցաւ:

— Երթանք Նովարա, բաւ կառավարին:

— Հաճեցէք փայրիկան մը սպասել, ըստ հր-  
րացանատարներէն մէկը:

Հասկըցայ որ զեռ ազատ չէի, և վախայայ որ  
հօրս տունը հասնիլս պիտի ուշացընեն:

Ամբողջ քառորդ ժամէ մ'ետե պարուն մ'եկու  
և խնդրեց որ հետս գայ Նովարա: Քիչ մ'առաջ  
ելած կատքին չէր հասեր, և հիմա ալ իմինէս ու-  
րիշ կատք չըլլայով՝ երջանիկ պիտի ըլլար և թէ  
իմ կատքս առնուի զինքը, և այլն:

Այս ծպտեալ հրացանատարը գուարթարարոյ

մարդ մ'էր, և լաւ ընկերութիւն մ'ըրաւ ինձ  
մինչև Նովարա: Հոն հասնելնուս, մեզ պանդոկ  
մը տանելու պատրուակաւ հրացանաւորներու  
զօրանոցի մը առաջքը տարաւ կառքը, և հոն ը-  
սաւ ինձ թէ պաշտօնակալի մը սենեկին մէջ ան-  
կողին մը կար ինձ համար, և հոն բարձրագոյն  
հրամաններու պէտք էր սպասէի:

Ար կարծէի որ հետևեալ օրը կրնայի ճանբայ  
ելնել: Անկողին մտայ և զիս հիւրընկալող պաշ-  
տօնակալին հետ քիչ մը խօսակցելէ ետև, խո-  
րունկ քուն մը ննջեցի: Յրկար ժամանակ կար  
որ այնպէս լաւ քնացած չունէի:

Առաւօտուն արթնցայ, շուտ մը անկողնէս ե-  
լայ, և առաջին ժամերը խիստ երկար եկան ինձ:  
Նախաճաշ ըրի, խօսակցեցայ, սենեկին մէջ և  
բարձրաանդակին վրայ ճեմեցի, հիւրընկալի  
զիրքերն աչքէ անցուցի: Վերջապէս խնայուցին  
ինձ թէ մէկը զիս տեսնել կուզէ:

Պաշտօնակալ մը քաղաքավարութեամբ եկաւ  
հօրս վրայօք ինձ լուր տալու. ըսաւ թէ հօրմէս  
նամակ մը կար Նովարա եկած և ինձ պիտի բե-  
րէին: Չափազանց շնորհակալ եղայ իր ազնիւ  
մարդասիրութենէն:

Քանի մը ժամեր ալ անցան՝ որ ինձ տարինե-  
րու շափ երկար թուեցան, և վերջապէս նամակը  
հասաւ:

Ա՛հ, ինչ անպատում ցնծութիւն զգացի երբոր

այն ամենասիրելի տառերը տեսայ . ինչ որ ա-  
խուժիւն երբոր իմացայ որ մայրս՝ ազնիւ մայ-  
րս՝ կենդանի էր . իմացայ որ երկու եզրարքս և  
մեծ քոյրս , Մարիէ թթա , որ Վիզիթաժիօնէի  
վանքը մտեր էր , ինչպէս որ գաղտնարար լուր  
առեր էի բանտիս մէջ , ինն ամսէ ի վեր մեռեր էր :

Քաղցր է ինձ մտածել թէ ազատութիւնս այս  
սիրելիներուս շնորհիւն էր , որք անգագար կ'ա-  
ղօթէին Աստուծոյ ինձ համար , մանաւանդ այն  
քրոջս՝ որ հրեշտակային բարեպաշտութեան մը  
մէջ մեռեր էր : Աստուած վարձատրէ այն ամեն  
անձկութիւնները որ անոր սիրար կրեր էր իմ  
չարարատութեանցս համար :

Օրերը կանցնէին և Նովարայէն մեկնելու  
թոյլտուութիւնը չէր գար : Սեպտեմբեր 16 ին  
առաւօտուն վերջապէս հրամանը տրուեցաւ ինձ ,  
և այն ժամանակ հրացանաւորներուն պահապա-  
նութեանն ազատեցայ : Ա՛հ , որչափ տարի էր որ  
ուզած տեղս չէի կրցեր երթալ՝ առանց պահա-  
պաններու ընկերակցութեան :

Քիչ մը դրամ ստացայ , հօրս ծանօթ եղող  
անձի մը քաղաքավարական այցելութիւնն ըն-  
դունեցի , և կէս օրէն երեք ժամու չափ ետքը  
համբայ ելայ : Հետս ընկերունէի տիկին մը ,  
վաճառական մը , քանդակագործ մը և երկու դե-  
ռահասակ պատկերհան , որոց մէկը խուլ համբ  
էր : Այս պատկերհաններն Հոռմէն կուգային և



բերկրու թեամբ իմացայ որ Մարտոնչէլլի ընտա-  
նիքը կը հանչէին Քանիք քաղցր է մեր սիրած  
անձերուն խօսքն ընել զանոնք հանչող անձանց  
հետ :

Քիչերը Վերչէլլի անցուցինք : Վերջապէս  
ոնպատեմբեր 17 ին երջանիկ օրը ծագեցաւ ճան-  
բանիս շարունակեցինք : Ա՛հ, սրչափ ծանր կեր-  
թային կատրեբը : Վրիկունը Քուրինօ հասանք :  
Ա՛յ կրնայ, ո՛վ կրնայ երբէք նկարագրել սր-  
տիս ուրախութիւնը, այն սրաշտելի սրտերուն  
ուրախութիւնը, երբոր տեսայ, երբոր ողջագու-  
րեցի հայրս, մայրս, եղբայրներս : Սիրելի ձու-  
ղէբբինա քոյրս պահաս էր՝ Քիչերի մտալու հար-  
կադրեալ ըլլալով. բայց Քուրինօ հասնելուն եր-  
ջանիկ լուրն առնելուն պէս՝ զիտ թացաւ եկաւ  
քանի մ'օր հետերնիս անցանելու : Եւ այս հինգ  
գորովագին սիրելեացս քով վերադառնալէս ետև,  
մահկանացուաց ամենէն նախանձելին էի և եմ :  
Ա՛հ, թէ անցեալ տարաբաղդութեանցս և թէ  
այսուհետև ինձ գալիք ամեն բարեաց և շարեաց  
համար օրհնեալ ըլլայ Նախախնամութիւնը :  
Մարդիկ և իրերը՝ ուզեն չուզեն՝ անար ձեռքին  
մէջ որանչելի գործիքներ են, զորս իրեն արժու-  
նի վախճաններու համար գիտէ գործածել :



Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Էջ	Սխալ	Ուղիղ
54	տրտրնելուց	տրտնչելու
68	ոսկարեաններ	ոսկարեաններ
68	ժամանակ որ	ժամանակ մը
73	պուրպանեան	Պուրպոնեան
120	ևս ալ	ես ալ
165	կը համաէիք	կը համարէի
174	սեռնելէ	մեռնելէ
184	բանտի մը էջ	բանտի մը մէջ
186	Թեւերս	Թերեւս
197	Մարօնչէլլի հետ	Մարօնչէլլիի հետ
197	տուրելով	տուրերով
201	մենէ	մեզնէ
204	Մեզի	մեզ
214	չունեցող	չունեցող
217	իս երկայնուԹիւնա	իս կրկին երկայնուԹիւնա
219	Մարօնչէլլի	Մարօնչէլլիի
224	կապուելցանք	կապուեցանք
225	իսկբան	ի սկզբան
231	Պրիւս	Պրիւն
251	իձմէ	ինձմէ
233	բայց	բայց
250	տեսնել ու	տեսնելու
255	խշտէակիս	խշտեկիս
256	ընենք	ընենք.
260	Մարօնչէլլի	Մարօնչէլլիի
266	իր սիրելիներու	իս սիրելիներու
269	ԹշառուԹեանցը	ԹշուառուԹեանցը
270	Յրօպօնին . ալ	Յրօպօնին ալ .
336	շատ մարդ է	վատ մարդ է
336	այդպէս չէ : Պատղի տըրտմարաններ .	այդպէս չէ . կապաղի տրտմարաններ .
343	իմացայ որ երկու եղբարքս և մեծ բոյբս , ՄարիէԹԹա	իմացայ որ երկու եղբարքս և մեծ բոյբս կենդանի էին : Աւանդ , կրտսեր բոյբս՝ ՄարիէԹԹա՝

ԶԲ. Գլխահամարն երկու անգամ դրուած և այնպէս շարու-  
նակուած է մինչև վերջը :









2680

2013

